

ՆԱԲ ԵՐԶԱՆ.

II ՏԱԼԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 4

Ա. Պ Ր Ի Լ

1902

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Գրաց Հրատ. Ենկերութեան.
1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 4

1.	ԱՐԱՋԸ, պատմութեան Ա. Ահարոնեանի	5
2.	ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Ա. Իսահակեանի	37
3.	ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, Վէպ Հանրի Բորգի, թարգմ. Հ. Առաքելեանի.	39
4.	ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՆԵՐԸ. Տ. Աբգարեանի	54
5.	ԸՆԹԵՐՅՈՂԸ, պատմութեան Մարսիմ Գորկիյի, թարգմ. Ե. Ս.	61
6.	ԿԵԱՆՔԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ, պատմութեան Ս. Տեր-Մելիքեանի	79
7.	ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ, Ե. Ֆրանգեանի	102
8.	ԸՆԿԱԾԸ, պատմութեան Ս. Մ.-Շահնազարեանի.	109
9.	ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՅ, բանաստեղծութիւններ Ալ. Ծա- սուրեանի.	116
10.	ԱՂՋԻԿ, առողջապահական և բարոյագիտական էտիւդ բժպ. Վ. Արժունու.	118
11.	ՀԱՅՆԵՐԻ ԹԻՒՆ ԹՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ, Լ. Սարգսեանի	141
12.	ՀԷՆՐԻԿ ԻԲՍԷՆ, յօդ. Վ. Նալբանդեանի	144
13.	ՄԱՏՆՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—14) Գէօթէ՝ «Յաստա», թարգմ. Գ. Բարխուդարեանի, Լ. Ս.—15) Վ. Արժունի՝ «Վարա- կիչ հիւանդութիւնները և նրանց թոյնը», Լ. Ս. —16) Ե. Թ.՝ «Սահակ Պարթև», Լ. Ս.—17) Հ. Վիտտօֆ «Թմիկիկը», Լ. Ս.—18) Rohrbach «In Turan und Armenien», Ե. Թ.	172
14.	ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՅ, † Գրիտապոլսի Վարա-Մուրդա. —«Երարատի» մի սովորութիւնը.—Գ. Բաշինջազեանի պատկերահանգէսը.—Թատրոնական գործը ալժմ և տառը տարի առաջ.—«Հայոց զրամատիկական ընկե- րութեան» հաստատութիւնը. Լ. Ս.	181
15.	ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. † Գլէբ Ոսպենսկի.—Գիւղացիներ ի աղատութեան 41-րդ տարեդարձը.—Բարձրագոյն հաստատուած առանձին խորհրդակցութիւն գիւղատն- տեսական արդիւնաբերութեան կարիքների մասին. —Տնայնագործական համաժողովի աւիթով.—Մասնաշի բարօրութեան հիմնաքարերը.—Չինաստանից ստաց- ուելիք տուգանքի վերաժողովը զրամի կամ նոր 40/0 վոխառութիւն.—Ղ. Աղայեան, Լ. Սարգսեանի	189

საქრ. უმჯ. II სართ.

ჯგაგ. XIV სართ.

საბჭო

გერმან, ჯგერმან, გერმან, გერმან

ს. ს. ს. ს. ს.

№ 4

ს. გ. რ. ბ. ლ.

1902

ს. ს. ს. ს. ს.

Типография Груз. Издат. Т—ва. | გამართ. ქართ. ჯგაგ. გერმან, გერმან.
1902

Дозволено цензурою. Тифлисъ, 30 апрѣля 1902 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 4

1. ԱՐԱՋԸ, պատմուածք Ա. Ահարոնեանի	5
2. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱԼ. Իսահակեանի	37
3. ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, Վէպ Հանրի Բորգոի, Թարգմ. Հ. Առաքելեանի.	39
4. ՆՈՐ-ՉՈՒՂԱՅԻ ՀԱՅՐԸ. Տ. Աբգարեանի	54
5. ԸՆԹԵՐՅՈՂԸ, պատմուածք Մարտիմ Գօրկիյի, Թարգմ. Ե. Ս.	61
6. ԿԵԱՆՔԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ, պատմուածք Ս. Տեր-Մելիսեղեկեանի	79
7. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ, Ե. Ֆրանգեանի	102
8. ԸՆԿԱԾԸ, պատմուածք Ս. Մ.-Շահնազարեանի.	109
9. ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՅ, բանաստեղծութիւններ Ալ. Մա- սուրեանի.	116
10. ԱՂՋԻԿ, առողջապահական և բարոյագիտական էտիւդ բժպ. Վ. Արծրունու.	118
11. ՀԱՅՐԻ ԹԻՒԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ, Լ. Սարգսեանի	141
12. ՀԵՆՐԻԿ ԻԲՍԷՆ, յօդ. Վ. Նալբանդեանի	144
13. ՄԱՏԵՆԱԽՍՍՈՒԹԻՒՆ.—14) Գէօթէ՝ «Ֆաուստ», Թարգմ. Գ. Բարխուդարեանի, Լ. Ս.—15) Վ. Արծրունի՝ «Վարա- կիչ հիւանդութիւնները և նրանց թոյնը», Լ. Ս. —16) Ե. Թ.՝ «Սահակ Պարթև», Լ.—17) Հ. Վիտհոֆ՝ «Թմբկիկը», Լ. Ս.—18) Rohrbach «In Teran und Armenien», Ե. Թ.	172
14. ԳԵՂԱՐՈՒՆԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՅ, † Գրիտափոր Կարա-Մուրզա. —«Արարատի» մի սովորութիւնը.—Գ. Բաղինջաղեանի պատկերահանդէսը.—Թատրոնական զործը այժմ և տառը տարի առաջ.—«Հայոց զրամատիկական ընկե- րութեան» հաստատութիւնը, Լ. Ս.	181
15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. † Գլէք Ուպենսկիյ.—Գիւղացիներ րի աղատութեան 41-րդ տարեկարձը.—Բարձրագոյն հաստատուած առանձին խորհրդակցութիւն գիւղատըն- տեական արդիւնաբերութեան կարիքների մասին. —Տնանագործական համաժողովի առիթով.—Մասաչյի բարօրութեան հիմնաքարերը.—Ձինաստանից ստաց- ուելիք տուգանքի վերածումը զրամի կամ նոր 40/ ₀ փոխառութիւն.—Դ. Աղայեան, Լ. Սարգսեանի	189

- Պաշտօնական հաղորդագրություններ.—Փոփոխություններ ներքին գործերի և լուսատրութեան մինիստրութիւնների մէջ.—»ВѢЩАЮТ«-ի լուրը հաղորդ.—Անկարգութիւններ Պալատայի և Խարկովի նահանգներում 195
16. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ.—Համատարած խղճատ.—Տնտեսական դրութեան չարացած կեանքի և մահուան խնդիրը.—Մեր պատրաստականութիւնը.—Երկիրը չէ ուսումնասիրուած.—Փաստեր Մարդասիրական Ընկերութեան կեանքից, Ա. 203
17. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ֆրանս-ռուսական համաձայնութիւնը Հեռաւոր Արեւելքում.—Մերձաւոր Արեւելքի վիճակը վերջին քսանհինգ ամեակում.—Ընդհանուր ընտրողական պայքարը Ֆրանսիայում.—Ժ. Կլեմանսօն՝ Ծերակոյտի անդամ.—Ընդհանուր և հաւասար ընտրողական իրաւունքի հարցը Բելգիայում, Լ. Ս. 217
18. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՅ, Ծխախոտի մասին, Կ. Փաշայեանի 222
19. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 231
20. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 243
21. ՅԱԻԵԼՈՒԱԾ. «ՕՐԱՄՈՒՏԻՆ», վէպ Ի. Ս. Տուրգենեվի 64—80

Ա Ր Ա Ձ Ը

(Նուէր սիկին Մար. Յով.-Խանդ...եանին)

I

Գարնան վերջն էր, արիւն քրտինք թափելու օրեր։ Գիւղը տքնում էր. փոքրիկ մանուկներն էլ չէին խնայում գործի մէջ։ Այդպէս էր գիւղը, ով կրծելու առտամներ և շարժելու ձեռք ու ոտք ունի ստիպուած է աշխատել առաւօտից երեկոյ, որովհետեւ հարիւր կաթիլ քրտինքից կէսի արդիւնքն էլ տուն չի գալիս։ Գիւղն աշխատում է միշտ իրանից շատ հեռու, շատ անծանօթ մարդկանց համար, շատ անգամ նոյն իսկ իր միսն ուտող, արիւնը խմող դահիճների համար։

Դաշտերում, այգիներում, բօստաններում կեանքը եռում էր. ամեն կողմ գալարուած, ծռուած մէջքեր, յոգնած, քրթնաթոր ճակատներ, արեւի առաջ ապըխտուած, տանջուած դէմքեր և մեզմ ու իրանց մռայլ ճակատագրին հնազանդ աչքեր, ուր տառապանքի քոյի տակից, որպէս պէծին տուող կայծը ծածկող միրիկներէ տակից, հազիւ հազ փայլում էր հեռաւոր լոյսը, մի կտոր հաց ունենալու ներելի հաւատը։

Գալօն էլ գագար չունէր։ Ընտանիքը մեծ չէր՝ ինքը, կինը և փոքրիկ աղջիկը, սիրունիկ, վարդաթուշ ինն տարեկան Շողիկը։ Ելի երեք բերան էր, պէտք էր կերակրել, ձմեռը գիւղում հանաք չի անում, մէկ էլ, էհ... քանի՜ դրսի ցաւեր կան, որ գիւղը պէտք է հոգայ, որովհետեւ գիւղ է, անտէր, խաւար գիւղ։

Այն երեկոյ Գալօն ուրիշների նման վերադառնում էր դաշտից, ողջ օրը քաղհան էր արել կնոջ և Շողիկի հետ, բամբակ էին քաղհանում: Մեծ չէ, փոքր է բամբակի արտը, բայց որ ժամանակին քաղհանուի, մանաւանդ ջրից չը զրկուի, երկինքն էլ հաշտ նայի, կարկուտ ու հիւանդութիւն չը տայ, Գալօն էլի մի տարի գլուխ կը հանի ամօթն երեսին, առանց ուրիշի ձեռքը նայելու: Եւ Գալօն յոյս ունի, այդ յուսով է, որ այս առաւօտ վաղ իր փոքրիկ ընտանիքով գնաց քաղհանի:

Նա լաւ գիտէ, որ քաղհանը կնոջ գործ է և ոչ տղամարդի. նա լաւ գիտէ, որ տղամարդի մէջքը չը պէտք է ծռուի մինչեւ գետին, որ նրա ճակատը չը պէտք է ծածկուի ուրաղի հարուածներից բարձրացող փոշիով, որ նա կնոջ պէս չը պէտք է գունդ գառնայ խոտերի մէջ, պշպշայ այս ու այն փնտաւար բոյսը. քաշելու համար. այդ բոլորը լաւ գիտէ Գալօն, բայց դէ ինչ արած, կարիքը մէջք էլ է ծռում, վիզ էլ, գլուխ էլ: Թէ ինքը՝ Գալօն չը գնայ քաղհանի, պէտք է իր փոխարէն մի վարձկան կին ուղարկի, խօմ իր խեղճ կինն ու Շողիկը չեն կարող ամբողջ արտը մենակ քաղհանել. գործը յետ կը մնայ, բամբակը կը փչանայ, յեւտոյ... այդ յետոն այնքան ծանր է և այնքան դառն, որ Գալօն առա տապակ էլ կը կը ծալուի, միայն թէ իր բամբակը տուն գայ, իր ամօթն երեսին մնայ, իր ցաւերը հոգայ իր ձեռքով:

Քաղհանը տղամարդի գործ չէ, բայց հեշտ էլ գործ չէ. Գալօն ամբողջ օրը ցաւով էր տեսնում իր Շողիկին, որ կռացած իր փոքրիկ ուրաղի վրայ, գլուխը թաղուած խոտերի մէջ զարկում էր մանր հարուածներ և դժուարութեամբ էր առաջանում: Քրտինքը ծորան-ծորան հոսում էր փոքրիկի սիրուն այտերի վրայից, փոշին բարձրանում ու ծածկում էր նրա մաղերն ու երկայն տրտեւանունքները, բայց աղջիկը շարունակում էր քաղհանել, որովհետեւ հայրն ասել էր թէ Վարդապառին նրա համար նոր, վարդագոյն մինթանայ պիտի

գնի, խշխշան ու սիրուն: Առաւօտը վաղ՝ երբ դեռ զով էր, երբ նոր գործի կեցան, Շողիկը ցատկոտում էր այժեամի պէս խոտերի մէջ և ուրազի զարկերի հետ սիրունիկ մանկական ձայնով «լէլէ» էր ասում. բայց քանի արեւը բարձրացաւ, քանի նրա շոգերն աւելի կիղիչ դարձան, Շողիկի ձայնը կամաց-կամաց նուազեց և ի վերջոյ ճաշին մօտ նա խալառ լռեց ինչպէս ասթից խեղդուած մի փոքրիկ թռչուն, որ ոյժ անգամ չունի իր բաց մնացած կտուցը փակել: Խեղճ Շողիկ, նա հետում էր շոգից, տանջւում էր և մի փոքր հանգիստ տալու համար իր թուլացած թևերին երբեմն-երբեմն դուրսը բարձրացնում էր, յետ էր տանում թաց ճակատի վրայ թափուած սիրունիկ խոտոպները, հրեշտակային աչքերով նայում էր հօրը:

—Հայրիկ, տես, մազերս էլի թափուեցին ճակատիս, մինթանայից բացի, իմ մազերին կանաչ-կարմիր լենտ էլ կ'առնես:

—Հա, լենտ էլ կ'առնեմ, Շողիկ ջան, ասում էր հայրը շոյելով նրա քրտնաթոր ճակատը, թող բամբակը հասնի:

Եւ երեխան հանգստացած վերստին զարկում էր իր ուրազը, փոքրիկ գլխում նոր գիմնասներ անելու ծրագրներ կազմելով: Միևնոյն ժամանակ նա աշխատում էր յետ չը մնալ ծնողներից, որոնք նրա մանկական փոքրիկ եսասիրութիւնը խնայելու համար երկու կողմից օգնում էին նրան աննկատելի կերպով առաջի խոտերը քաղհանելով: Քանի՜ քանի անգամ երեխան տեքաց ու ոտքը բռնեց.

—Տես, հայրիկ, ոտքս էլի փուշ մտաւ:

Նրա ոտքի փոքրիկ, խղճուկ թաթի վրայ մի կաթիլ արիւն և արտահանունքից մի կաթիլ արցունք կախուեց: Ծնողները երկու կողմից նրան դարձան, ոտքից փուշը հանեցին.

—Հայրիկ, դու ինձ կօշիկ էլ կ'առնես, փշերը ոտքս ծակում են ախր:

—Կ'առնեմ, Շողիկ ջան, կօշիկ էլ կ'առնեմ. և հայրը՝ վերստին գրկեց նրա գլուխը, սղմեց կրծքին և խանդաղատանքով համբուրեց:

—Ախ, քրոնամ, ասաց մայրը: Եւ նորէն շարունակեցին ընդհատուած գործը, նորէն երեք գլուխները կռացան խոտերի մէջ, իսկ արեւը վերից անխնայ թափում էր իր կիզիչ ճառագայթները և տօթը գնալով աւելի խեղդող էր դառնում:

Այս բոլորը մէկիկ-մէկիկ անցնում էր Գալօի գըլխով երեկոյեան տուն վերադառնալիս: Կինը լուռ բայլում էր նրա մի կողմից, իսկ Շողիկը միւս կողմից բռնած հօր ձեռքը: Փոքրիկը յոգնած էր և ճանապարհի թանձր փոշու մէջ ծակոտուած ստները խառնելով՝ հաղիւհաղ հետեւում էր հօրը, բայց էլի անդադար խօսում էր իր վարդադոյն մինթանայի, կանաչ-կարմիր լենտի և կօշիկների մասին:

Գիւղը հեռու չէր. այնտեղից լսւում էր գզիր Վարթօի կանչը. Գալօն կանգ առաւ մի րոպէ և ուշադրութեամբ բերանաբաց ականջ դրեց, ապա ինչպէս մի ծանր գոյժի անաջին տպաւորութեան տակ, մի վայրկեան սառած մնաց, յետոյ ձեռքի և գլխի մի անհանգիստ շարժումով բացականչեց.

—Արա՛ղ, Արա՛ղ, տունդ բանդուի Արա՛ղ, էլի:

—Հայրիկ, Արա՛ղն ի՞նչ է արել.

Հայրն էլ պատասխան չը տուեց. երեխան մնաց բերանը բաց, աչքերը հօր դէմքին յառած հետաքրքիր ու զարմացած հայեացքով: Գալօն մտախոհ դարձաւ, գզիրը կանչում էր թէ վաղը պէտք է գնալ Արաղ ջուր «կապելու». թմբերը բանդուել են: Եւ այդ ձայնը մի տեսակ մռայլ ելեէջերով տարածւում էր գիւղի շրջակայքի վրայ ու գնում էր մեռնելու դաշտերի հեռաւորութեան մէջ, ինչպէս վտանգ գուժող մի ազգանշան. լաւ չէր:

—Էլի թումբերը բանդել է, մրմռում էր Գալօն, ահ Արա՛ղ:

«Ա՛հ Արազ», դա մի ամբողջ ժողովրդի ղայրոյթի և ցաւի աղաղակն էր այն զարմանալի գետի դէմ, որ երբ պէտք է աւերել, թշուառութիւն ու սուգ տարածել, մեն-մենակ է անում, իսկ երբ պէտք է բարիք բաշխել, կատաղի պայքարից յետոյ է միայն զիջանում: Գալօի յուսահատ բացականչութեան մէջ հնչում էր այն հին ճիչը, որ նախնական մարզն արձակեց դարեր, շատ դարեր առաջ, երբ իր թուլութիւնը տեսաւ խելագար գետի հսկայ յորձանքների առաջ և նրա ավին նստած՝ ալիքների հեգնող մունչիւնների ներդաշնակութեան տակ երեխայի պէս լաց եղաւ: Այն օրուանից շարունակում է դարերի կռիւը, մարդը յամառ է ու տոկուն, իսկ Արազը ըմբոստ է և անյաղթելի իր անհասկանալի գոյութիւններով:

Գալօն մտածում էր այժմ Արազի մասի. նրա և գիւղի անվերջ պայքարի մասին: Այս տարի քանի՜ անգամ սև օրով, դառն աշխատանքով թումբեր քաշեցին նրա ալիքների դէմ և քանի՜ անգամ աւերեց տարաւ մռմռալով: Իր ավերին ծուարած գիւղերի բացարձակ տէրն է Արազը, հին աշխարհի բռնակալների պատկերն ունի, երբ ժպտաց, իր երկիրը բարիքով և ցնծութեամբ կը լցուի, երբ խոժոռուի ու կատաղի, արցունք ու ցաւ, մահ ու սարսափ կը սփռի իր շուրջը. և այն ժամանակ մնաս բարի կեանք ու երջանկութիւն, պէտք է ամեն բան նորից սկսել:

«Ա՛հ, Արազ» մռմռում էր Գալօն գլուխը բաշ ձեգած և կամաց-կամաց քայլելով: Նրա համար Արազը գետ չէ, ջուր չէ, որ թաւալւում է երկու բարձր ավերի մէջ մերթ վայրագ ու հպարտ, մերթ դանդաղ ու խաղաղ: Արազը մի ուրիշ բան է, մի ինչ որ անօրինակ հսկայական կենդանի, որ միաժամանակ կատաղի է և քաղցր, անսիրտ է և՛ զթոտ, գեղեցիկ է և՛ սարսափելի, կամակոր է և՛ հնազանդ, բայց միշտ հզօր, միշտ մի անզուսպ խօսկան ոյժ թագցրած իր ծփծփան կրծքի առակ, իր ոլորուն յորձանքների թափի մէջ:

—Հայրիկ, ախր ինչ է արել Արաղը:

Հայրը դարձեալ անպատասխան թողեց փոքրիկ աղջկան: Նա այժմ յիշեց մի տարօրինակ բան, Աշուղ Ադամի նկարագրած հեքիաթի վիշապը: Արաղն էլ վիշապ է, օղակ օղակ դալարուելէն ցաւերի տակ ճըմլուած գիւղերի շուրջը, ուզի՝ կը խեղդի, ուզի՝ կեանք կը տայ. սա էլ է զոհեր պահանջում, ինչպէս հեքիաթների վիշապը, որ տարին մի կոյս էր ուղում իր հովանու տակ ապրող և իր համբերութիւնը վայելող ժողովրդից: Արաղն էլ վիշապ է, միայն նա աղջիկ չէ պահանջում: Գալօն Շողիկին նայեց.

—Շողիկ, Արաղը վիշապ է.

Երեխան վախեցած՝ նայեց հօրը.

—Հայրիկ, վիշապը մարդ կը տանի:

—Հա՛ մարդ կը տանի, երեխան կծկուեց, հօր ձեռքը թողեց և անցաւ մօր փէշերին կպաւ:

—Ի՞նչ ես խօսում քեզնից դուրս, այ՛ մարդ, բարկացաւ կինը, վիշապս ո՞րն է, երեխային վախեցրիր, դէ Արաղն՝ Արաղ է էլի, ջուր է, գետ է:

—Է՛հ կնիկ, Արաղը եաման բան է:

Գալօն դարձեալ մտքերի մէջ ընկաւ, նա յանկարծ յիշեց, որ ինքը Արաղից վախենում է երեխայի պէս, յիշեց, որ նրա ափին հասնելիս միշտ առաջին անգամ մի տեսակ սարսուռ է գալիս վրան և աշխատում է շատ չը նայել ալիքներին. յիշեց, որ «Արաղ» կանչող գղրի ձայնը իրան միշտ անախորժ է եղել: Մինչեւ այժմ նա երբէք այդ երկիւղի մօտին այսպէս որոշ կերպով չէր մտածել, այս երեկոյ, գղրի կանչը լսելուց յետոյ, նա մի վայրկեան չի մոռանում Արաղը, կարծես տեսնում է, խօսում է նրա հետ: Արաղը աղջիկ չի պահանջում, մոմտում էր նա, բայց ինչո՞վ է աւելի ողորմած քան հին վիշապները. տարին տասներկու ամիս գիւղերը կոտորւում են՝ նրա անկուշտ փօրը ամբողջ ծառեր, դէղէրով խօտ, ժայռեր կոխելով որ մի կուց ջուր փախ-

ցնեն, ցանքերը ջրեն, որ սովից չը կոտորուեն, բայց էլի...

Դիւղին այժմ մօտ էին, գլրի ձայնն աւելի պարզ և աւելի սպառնալի էր լսուում:

— Էգուց տունը մի մարդ Արաղը գնայ, թումբերը քանդուել են համ:

— Կնիկ, Շողիկի հետ էգուց մենակ կ'երթաք քաղհանի, ճար չը կայ, ինչ ժամանակ է քանդել թումբերը:

Գալօն մոռացել էր, որ ժամանակն Արաղի համար չէ, նա իր առանձին ժամանակը, կամքը ու ցանկութիւններն ունի. ամենեւին նրա փոյթը չէ, թէ Գալօի բամբակը և հարեւանների ցանքերը կը չորանան: Նա դարերից հետէ սովորութիւն դարձած իր հարկն ու պաշտամունքն է ուղում և վազը նրա սպասին պիտի գնայ մի ամբողջ ժողովուրդ ունենալով, տանուէրներով, ջրպետներով ու զոհերով:

Արաղն աստուած է:

II

«Արաղ, Արաղ»:

Դիւղն ազմկուած էր. մեծ հրապարակում կանչ, հայհոյանք, անէծք, սպառնալիք իրար էին խառնուել. մարդիկ յուզուած էին և էլ իրար չէին հասկանում, նրանց բոլորի ձայները միասին կազմում էին մի անհասկանալի կոկորդային մռմռոց: Դիւղն ասես, պատրաստուում էր դիմադրել մի անյակնկալ յարձակման, մօտալուտ, վերահաս վտանգն էր յայտարարում գլրի անախորժ կոչը: Կռիւ էր յայտարարում Արաղի դէմ. թշնամին շատ էր հզօր և մարդիկ շատ էին խեղճ իրանց դիմադրութեան նախնական միջոցներով: Ահա թէ ինչու գիւղը տակն ու վրայ էր լինում ամեն անգամ, երբ Արաղը քանդում էր ամբարդակները և երբ գլիրը ոռնում էր փողոցներում:

Կէս գիշերին պէտք էր ճանապարհ ընկնել վաղ առաւօտից կռուի գաշտը՝ Արաղի ափին գտնուելու համար. իսկ մինչեւ այդ՝ անհրաժեշտ էին բազմաթիւ պատրաստութիւններ, բահեր, կացիններ, քլունդներ, ուրագներ, հաստ պարաններ և ամենից աւելի ծառերի մեծամեծ ճիւղեր, որոնք պիտի կապուէին և Արաղի առաջը ձգուէին ջրի ընթացքը փոխելու համար:

«Արաղ, Արաղ», շարունակում էր կանչել գզիրը վազվզելով գիւղի նեղ ոլորուն փողոցներով և նրա ձայնը որպէս մարտահրաւէր, շարժում էր ամենքին և գործի հանում: Գալօն պարտաճանաչ ու շիտակ մարդ էր. դեռ երբէք ստոր անպատիւ արարքի համար նրա պապերի, հօր յիշատակը չէր անարգուել գիւղամիջում: Դեռ երբէք իր հարեւաններին դժգոհելու, գանգատուելու առիթ չէր տուել իր ընթացքով: Նրա համար գիւղում ասում էին թէ իր թշնամու հաւին անգամ «բը՛շշ» չի անի: Ասենք նա չէր էլ տանի, որ անարգար տեղը իր հաւին էլ «բը՛շշ» անեն, մանաւանդ նա զգայուն էր իր մեռելների, իր հօր ու մօր յիշատակի համար, իր ընտանեկան պատուի համար: Գիւղում ամենքը գիտէին, որ եթէ Գալօնի պապենական շիրիմներն անարգուին, կամ նրա կնոջ պատուին մի անտեղի խօսք ասեն, բանն առանց արիւնի չի վերջանայ: Սակաւախօս, համարեա միշտ մռայլ, բայց վերին աստիճանի արդարասէր մարդ էր, և իր խաղաղ արտաքինի տակ թաղցնում էր մի նուիրական զայրոյթ ամեն մի անիրաւ գործողութեան, անտեղի արարքի համար: Այդ արդար բարկութեան ժամերին նա սարսափելի էր. թաւ յօնքերը բարձրանում էին մինչեւ ճակատի կէսը և նրանց տակից, ինչպէս արեւն սքօղող ամպի տակից, փայլատակում էին նրա խորունկ ու խելացի աչքերը, որպէս երկու բոց կտրած ածուխ: Դիտէր, որ «աշխարհը չար է», և ինքը զայրացկոտ, ուստի «իր անցաւ դիւրին Աւետարանի տակ չը դնելու համար», ինչպէս ինքն էր ասում, աշխատում էր որքան կարելի է հեռու

մնալ ընկերութիւնից, մանաւանդ հասարակական գործերից, ուր, գիտէր, հեշտութեամբ առիթ պիտի ունենայ անուղղելի, անդառնալի բան անել շնորհիւ իր անզուսպ զայրոյթի: Մի անգամ՝ երբ դեռ նոր էր նըշանուած, մի քեֆի մէջ ընկերներից մէկը կիսահարբած վիճակում նրան առաջ՝ «Նշանածդ սիրուն է, մեր տղայ»: Գալօն կատաղութիւնից գլուխը կորցրած՝ գինով լի ահագին կաւը խլեց և ընկերոջ գլխին շարտեց. մահն անխուսափելի էր, եթէ կողքի միւս ընկերը թեւին չը խփէր և հարուածը չը վրիպէր: Այս դէպքին ծանօթ էր ամբողջ գիւղը, Գալօն ինքն էլ երբէք չէր մոռանում և աշխատում էր նման պայմանների մէջ չը գտնուել երբէք:

—Այ մարդ, մի օր դու բո զայրոյթով մեր գլուխը մի բան կը բերես, տեսնենք երբ, ասում էր յաճախ կինը, երբ չնչին առիթից իր ամուսինը տաքանում էր. Գալօն այդպիսի դէպքերում, ի պատասխան իր կնոջ, թաւ յօնքերը մի փոքր աւելի էր կախում ու լռում: Իր հասարակական պարտքերը կատարելու համար նա առաջնորդւում էր միշտ իր հօր տուած մի հատիկ խրատով՝ «Ամենքը մէկի, մէկը՝ ամենքի համար»:

—Արդւոր մարդ, հազար ողորմի քեզ, կրկնում էր նա ամեն անգամ այդ խրատը յիշելիս: Այսօր այս իմաստուն խրատը Գալօն վերստին մտաբերեց, երբ գիւղի իրարանցումը տեսաւ: Գիւղում էլի ջուր չը կայ, ամենքը պիտի չարչարունեն քրտինք թափեն, որովհետև մի մարդը Արաղի հետ գլուխ թափել չէ կարող. յետոյ երբ ջուրը գայ, ամեն մէկը կ'օգտուի ընդհանուրի աշխատանքի պտուղից: Սրանից էլ սիրուն, հասկանալի բան, մտածում էր Գալօն: Արաղը դուլում է տրեւ, զոլումին ճար է պէտք, իսկ այդ ճարը միասին, միաբան սլիտի արսւի, հէնց երեւի դրա համար են մորդիկ իրար մօտ ապրում, ինչի են պէտք ձեռները, թէ տաճն մատ չունենային, մի ձեռքը ծածի կը տայ: Գիւղի բանն էլ այսպէս է. որ ամեն մէկը չանի, ամեն-

բը կը տուժեն. երբ ամենքը անհոգ, անպարտաճանաչ լինեն, ամեն մէկը կը քանդուի. «մէկն ամենքի, ամենքը մէկի համար, ողորմի բեզ, հայր»:

Այսպէս մտածեց Գալօն և, իր աղքատիկ ընթրիքը կնոջ և Շողիկի հետ վերջացնելուց յետոյ, թէեւ յոգնած, ուժասպառ, բայց վերկացաւ, պատից վերցրեց կացինը, դօտին խրեց և վերստին դէպի այգիները գնաց՝ իր բաժին ճիւղերը բերելու համար: Ճանապարհին էլի յիշեց օրուայ անցքերը, յիշեց մանաւանդ իր Շողիկին, որին սիրում էր աչքի լոյսի պէս: Նրան վարդազոյն մինթանայ, կանաչ-կարմիր լենտ և ճռճռան կօշիկներ է խոստացել: Գալօն ժպտաց իր աղջկան երեւակայելով՝ զարդարուած ու սիրուն: Բայց այդ ժպիտը վայրկենապէս փախաւ նրա դէմքից, երբ յիշեց, որ այդ բոլորը Արազի ձեռքին է, նրա ալիքների տակն է թափնուած. որ ջուր չը տայ, որ բամբակը չորանայ, ինչով գնի. պէտք է գնալ, զօռով խլել այդ բոլորը: Խեղճ Շողիկ, իսկ նա այնպէս հաւատացած է, գիշեր ցերեկ երազում է:

Այգում մի նոր մտահոգութիւն տիրեց Գալօն. նա չը գիտէր ռոտեղից ձեռք բերել ծառի ճիւղեր: Պտղատու ծառերից կտրել չէր կարելի, իսկ բոլոր անպտուղ ծառերից մնում էր միայն մի հատիկ ուռենի, Շողիկի ուռենին: Միւսների ոստերն այս տարի իսպառ զոհ գնացին Արազին, մնում էր այս մէկը, որ իր փոքրիկ պատմութիւնն ունէր: Վեց տարի առաջ էր, Գալօն լաւ յիշում է, մի օր ինքը այգու առուակի ափին ուռենիներ էր անկում, փոքրիկ աղջիկը վաղէվազ մօտեցաւ.

— Հայրիկ այդ ինչ ես անում:

— Ծառ եմ անկում, մատաղ.

— Ինչո՞ւ ես անկում:

— Տնկում եմ, որ մեծանան.

— Յետոյ խնձոր ու տանձ կը լինի:

— Հա՛, յետոյ խնձոր ու տանձ կը լինի.

—Մէկն էլ ես տնկեմ, հայրիկ, որ ինձ էլ խնձոր ու տանձ լինի, հա՛ւ:

Եւ նա փոքրիկ թաթիկներով վերցրեց մի բարակ ոստ և բոլոր ուժով տնկեց առուակի եղրի խոնաւ հողի մէջ:

—Գիտե՞ս կնիկ, ասաց Գալօն ժպտալով իր կնոջը, Շողիկը ուռենի տնկեց, թո՛ղ մնայ տեսներն ի՜նչ կը լինի: Մայրը գրկեց փոքրիկին, որ բւրջալով ծիծաղում էր, հպարտ էր:

Եղաւ այն, ինչ որ լինելու էր. ուռենին հեշտ և արագ աճող բոյս է, մի քանի ժամանակից յետոյ նա արմատներ ու ոստեր ձգեց և միւսների պէս դարձաւ փոքրիկ ծառ, «Շողիկի ծառ», ամենից սիրուն, ամենից սիրելի: Նրա երկար, դալար ոստերը կախկիւռուցին առուակի վրայ, ինչպէս արտասուող կոյսի հերարձակ մաշկերը, և ամրան շոգիներին մշտադով մթնոլորտ էին սլա՛հում իրանց տխուր հովանու տակ: Շողիկն այնքան ուրախ, այնքան երջանիկ էր միշտ իր ծառի տակ: Այնտեղ էր չարում նա իր տիկնիկները, այնտեղ էր շինում իր փոքրիկ տնակը և թիթեռներ ու բզեզներ փակում ներսը, այնտեղ էր երգում իր սիրուն մանկական «լէլէները» և ուռենին սօսափում էր մեղմով այդ սիրուն թռչնակի վրայ:

Այսօր էլ չքեղ, սաղարդաշատ ուռենին փռել էր իր դալար ոստերը հարուստ փնջերով, երեկոյեան հողից օրօրում էր իր սգւոր գլուխը և կարծես վտանգ զգալով՝ փափսում է մեղմիկ, տերեւները դողգողում, փարում էին իրար, և ամբողջ ծառը սուսում էր խորհրդաւոր շշուկով: Գալօն կանգնել էր նրա առաջ, նայում էր մտախոհ և չը գիտէր ի՜նչ անել. Արազն էր ուզում այդ սիրուն ծառը, բայց Շողիկը լաց կը լինի, ծ, ի՜նչպէս կը հեկեկայ: Գալօն երկար կանգնած մնաց, ժամանակն անցնում էր, նա մի քանի քայլ հեռացաւ, ապա յետ եկաւ, կրկին գնաց, էլի եկաւ.

—Արճղ, զուլում Արճղ, բացականչեց նա և արագ

արագ բարձրացաւ ծառը: Առաջին ճիւղին հարուածելուց առաջ, բարձրացրած կացինը մնաց առ ժամանակ օդի մէջ, զարկեւ, թէ չէ, դեռ մտածում էր նա:

—Ուհհ, հնչուեց ոստերի մէջ մի ցաւոտ մռնչոց և առաջին ճիւղը ճոնչալով գետին ընկաւ. միւսների համար Գալօն էլ չը տատանուեց, հարուածները թափւում էին արագ-արագ, նոյն իսկ զայրոյթով, կատաղութեամբ, կարծես նա ոխ ունէր հէնց այս ծառի դէմ և ճիւղերը ճոնչում էին գետին տապալուելով իրար յետեւից: Քրտինքի մէջ կորած, հեւալով նա միայն այն ժամանակ կանգ առաւ, երբ իր վերջին հարուածը կորաւ օդի մէջ և երբ ճղակոտոր ուռենին մնաց մերկ. ինչպէս մի հաստ ցից: Գալօն շտապով ցած թռաւ, շուտ-շուտ հաւաքեց ճիւղերը, շալակ կապեց, թիկունքն առաւ և հեռացաւ, աշխատելով յետ չը նայել: Գալօն վերստին յիշեց Շողիկին. վաղը աղջիկը կը տեսնի իր ծառի այս զարհուրելի մերկութիւնը, այս անսիրտ աւերածը: Գալօն երեւակայում է այդ տեսարանը, երեսխան ուրախաձայն աղաղակներով վազէվազ գնում է դէպի իր ծառը և քարացած ու բերանաբաց կանգ է առնում, ապա աչքերը արցունքով լեցուն և յուզմունքից ու վշտից կերկերուող ձայնով դանդատում մօրը...

Գալօի աչքերը թացացան, բռն աւելի ծանրացաւ: Երեսը դարձրեց և տնքալով իր բռնի տակ առաջ շարժուեց.

—Բարեւ, սանահէր Գալօ.

—Բարեւ ախպէր: Եղօն էր, Գալօի հարեւանն ու քաւորը, որը նոյնպէս մի մեծ կոյտ ճիւղեր շալակած գիւղ էր գնում:

—Սանահէր Եղօ, ի՞նչ կ'առես, անիծած Արաղը այս տարի քանդեց մեզ, էլ ճիւղ ճարել չենք կարողանում, վերջին ծառն եմ ճղակոտոր արել այսօր, գլխիս կրակ մազուեց, լացս եկաւ. Շողիկի ծառն էր:

—Դէ սանահէր, Արաղն Արաղ է, այդ գիտենք, Բին-Գեօլում որ երկինքը փռչտայ, մեր աչքերից ար-

ցունք կը գայ: Արաղի ցաւը մեր հայրերն էլ են տեսել, մեր պապերն էլ, Ագամից սկսած մեր օրն այս է: Բայց ցաւը որ մէկ լինի, տանելը հեշտ է, արի տես, որ այժմ հոգի հաւատ չի մնացել, անաստուած մարդիկը շատացել են. Արաղը որ մենակ զուլում աւնէր, դարդերս խօմ մէկը կը լինէր:

— Է՛, կայ չը կայ մեր տուն բանդողը Արաղը չէ՛:

— Է՛հ, ո՞վ գիտէ ախպէր, այնպիսի բաներ են ասում, այնպիսի բաներ: Մեր արտերն են չորանում, գիւղում մի կուց ջուր չը կայ, ձմեռը մեր երեխաներին թոնիր դցես մշահոտ չի գայ, բայց է՛լի այնպիսի բաներ են ասում, որ մարդի մաղերն են դիպանում, ես ի՞նչ գիտեմ:

— Ի՞նչ, սանահէր, ինչ են ասում:

— Այն որ մենք այսպէս սե օրով, արիւն-քրտինք թափելով շաբաթը մի անգամ թումբեր ենք քաշում՝ Արաղի առաջին, թշնամի, անհոգի մարդիկ գիշերանց գնում են մի երկու բահ զարկում, բանդում և ջրի բերանը տալիս մեր այնքան աշխատանքը, մեր երեխաների ապրուստը:

Բեռի տակ կռացած Դալօն կանգ առաւ:

— Եղօ, դու ցնդուե՛լ ես.

— Երանի թէ ցնդուած լինէի, սանահէր.

— Եղօ, դու դիւահար ես.

— Երանի թէ դիւահար լինէի, սանահէր, ասում են...

— «Ասում են, ասում են», այ մարդ, դու խօմ փափախիդ տակ դլուխ ունես, ո՞վ, ո՞ւմ դարդն է կըտրուել այդքան ծով մեղքի տակ մտնել և ինչո՞ւ համար:

— «Ծով մեղքը» քեզ պահի, միամիտ սանահէր, «ինչո՞ւ համարին» խօսք չունեմ: Նրա համար, որ այդպէս են կամենում ռէսը, տանուտէրը, ջրպետը և ո՞վ գիտէ էլ ո՞վ... Դժիրը ունում է փողոցներում, թէ տունը մի մարդ Արաղ գնայ, վաղը երկու տնից մի մարդ էլ հաղիւ գնայ, ո՞ւր են մնացածները, ինչո՞ւ չեն

գալիս գիւղի ցաւը հոգանք. նրանք ինձ ու քեզ նման անճարակ խեղճեր չեն, սանահէր Գալօ, նրանք առաջուց տեսնում են ուէսին, տանուտէրին, ջրպետին, բերանները քաղցրացնում են մի բանով, ու էլ Արազ չեն գնում, մնում են իրանց գործով զբաղւում: Ես ու դու կ'երթանք ջուր կը կապենք նրանց համար, թէ կարողացանք: Այսպիսով այդ երեք աւազակները իրանց ընկեր այլ աւազակների հետ մի կլորիկ գումար են դնում գրպանները, ահա թէ ինչո՞ւ նրանց հարկաւոր է, որ Արազը շուտ-շուտ բանդի թումբերը, թէ չը քանդի, ինչո՞ւ իրանք քանդել չը տան, այդ խօսմ գովաւար չէ, երկու բան միայն:

Գայօն չալակը ցած դցեց հէնց ճանապարհի մէջ և վրան նստեց, էլ տանել չէր լինում. այն ինչ որ ինքը լսեց, կոկորդը խեղդում էր, օդը պակասում էր նրան: Մի փոքր մնաց գլուխը քաշ գցած կրճքին, ապա յանկարծ վերթաւ, մարմնի առաջին մասն ու պարանոցը դցեց առաջ դէպի հարեւանը, յօնքերը բարձրացրան մինչեւ ճակատի կէտը, աչքերը վառուեցին խաւարում: Նա նայում էր և աշխատում էր Եղօի դէմքը տեսնել.

— Եղօ, ճշմարիտ է այդ, ինչ որ դու ասում ես:

— Խեղճ Գալօ, դու ես միայն աշխարհի չար ու բարուն անձանիթ. ձկան ակա՞նջի մէջ ես քնել, այն էլ շատ է, որ վաղը մեր աչքի առաջ խուրձերի պարանը գողտուկ կտրել չը տան և մեր ողջ օրուայ աշխատանքը ջրին յանձնեն:

— Ո՞վ, ո՞ւմ ձեռքով, ախր ո՞վ կ'անի այդ չարագործութիւնը. նա բռնել էր այժմ Եղօի ձեռքը և բոլոր ոյժով թօթւում էր կարծես մարմնից պոկելու համար:

— Ո՞վ կ'անի. ում որ մի քանի կողէկ կը տան, ապա նա ձայնը ցածրացրեց, շրթունքները բոլորովին իր հարեւանի դէմքին մօտեցրեց, նրանք այժմ դէմ առ դէմ կանգնած՝ հեռում էին իրար դէմքին և փոխադարձաբար զգում էին իրար տաք շունչը:

—Ո՞վ:

—Վարթճն, հէնց գղիր Վարթճն:

—Եղօ, սուտ է, սուտ է այդ բոլորը. մոռնաց Գալօն վիրաւորուած գաղանի պէս, սո՛ւտ է, գուռ անիրաւ մարդ ես, փո՛հ, ի՛նչ վատն ես: Ապա նա խլեց իր բեռը, թափով գցեց մէջքին և առանց հարեւանին մի բառ ասելու, առաջ անցաւ ու կորաւ խաւարի մէջ:

—Ողորմելի՛ միամիտ, լսուեց նրա յետեւից:

III

Գալօն տունն եկաւ սիրտը ցաւած ու մռայլ, որ «աշխարհն այդքան չար է»: Եթէ Եղօն ուղիւ է ասում, մտածում էր նա, աշխարհը չար է, թէ սուտ է ասում, էլի չար է, չէ՞ որ Եղօն էլ աշխարհից է և հոգի է այրում: Ապա նա շուտ պառկեց քնելու, որ հանգստանայ, առաւօտը վաղ Արազ գնալու համար: Քունը չը տարաւ: Երեք պատկերներ նրան մի վայրկեան հանգիստ չէին տալիս, նրա միտքը կրծստում ինչպէս ճիւղղներ, նրա ուղեղը ճմուռւմ իրանց գաղտնիքի ծանրութեամբ և նրանցից իւրաքանչիւրը կարծես յղի էր մի զարմանալի խորհուրդով, որ խուսափում էր Գալօի խելքից և որ այնուամենայնիւ սարսափելի էր: Այդ սարսափելին էր փնտրում Գալօն առանց ինքն իրան հաշիւ տալու և այդ է պատճառը, որ, հակառակ իր կամքի, այդ երեք պատկերները գալիս ցցւում էին նրա տանջուած երեւակայութեան առաջ միշտ մի և նոյն կարգով, իրարից մի և նոյն տարածութեամբ, որոշ ծրագրով և կարծես որոշ խորհրդով: Գալօն նախ ասում էր «աշխարհը չար է», անմիջապէս յետոյ նրա շրթունքները կրկնում էին՝ «Ծողիկը լաց կը լինի» և սրտն հետեւում էր երրորդը՝ «Արազը վիշապ է»: Նա չը գիտէր թէ ինչո՞ւ է այսպէս լինում, ուղում էլ էր, որ այդպէս չը լինի, որ այս երեք «բանը» իրար յետեւից չը գան, կամ դոնէ կարդը փոխեն, ի դ՛ուր, հէնց որ նա միմեջում էր առաջինը,

միւս երկուսը մի և նոյն կարգով արտասանում էին և Գալօն վախենում էր իր ձայնից, վախենում էր այդ բառերից: Նա տասն անգամ աչքերը զօռով փակեց պի՛նդ, պի՛նդ, հաստատ վճռեց այդ երեք խօսքերից և ոչ մէկը չարտասանել և քնել, բայց պատկերները եկան և նա աչքերը բացեց ու կրկնեց.

«Աշխարհը չար է»:

«Շողիկը լաց կը լինի»:

«Արաղը վիշապ է»:

Գալօն շուռ եկաւ մի կողքից միւս կողքի վրայ, յետոյ դարձեալ առաջինի վրայ, տնքաց, ծօփ արեց, նստեց, էլի պառկեց, աչքերը պինդ փակեց, ի զճւր... Յետոյ նա սկսեց մտածել թէ նա ինչո՞ւ է կրկնում այս խօսքերը: Լաւ, «աշխարհը չար է», իրան ի՛նչ, կամ մի՞ թէ նա նոր է իմանում այդ, մի՞թէ հազար ու հազար անգամ սրանից առաջ ինքը չի կրկնել զանազան առի՞թով մի և նոյն խօսքը. էլ այսօր ի՛նչ մի առանձին բան կայ դրանով զբաղուելու: Այո, աշխարհը միշտ չար է, այդ հին, շատ հին բան է, պատասխանեց նա ինքնիրան, բայց ասում են թէ Արաղի թմբերն էլ են քանդում, ահա այս է նորը. մարդը ագահ գայլ է, գաղան է, այդ էլ հին, շատ հին բան է, բայց ասում են, որ նա բորենի է, գիշերները չիրիմներն է քանդում և գիտկներ լափում, այս է նորը: Հապա վերեւից, կապոյտ երկնքից նայող աչքն ի՛նչ է ասում, չէ՞ ասում են, թէ նա ամեն ինչ տեսնում է և դրում, խաւարի մէջ էլ է տեսնում, չը լինի՞ թէ խաբում են... խաբում են... յետոյ... ուրեմն բորենիներին է իրաւունքը, հուճւ...:

Հապա Շողիկի ծառը կոտորեմ, յետոյ քանդէն... Շողիկը լաց կը լինի: Նա նայեց աղջկայ փոքրիկ անկողնին, երեսան մուշ մուշ քնել էր, «Քնիր, քնիր, քաղցրիկ զաւակ, քնիր անմեղ հրեշտակս, աշխարհը չար է, բորենիներով լիբը, քնիր, քանի կարող ես. ի՛նչքան բան կայ, որ դու չը գիտես, և ինչքան լաւ կը լինի, որ եր-

բէք, երբէք չիմանաս. ինչքան սիրուն բան կայ կեանքում, ձեռքիցդ կը խլեն, թէ շող ես բռնել՝ խաւարը կը տան, թէ ծաղիկ է, թերթերը կը փետեն, թէ քաղցր է, թոյնը կը տան. թոյն, թոյն, իմ սրտում որքան կայ զաւակս, մի կաթիլն անգամ կ'ուզէի քեզ չը հասնի, բայց դու վաղը լաց կը լինես, իմ խեղճ զաւակ, որովհետեւ աշխարհը չար է, որովհետեւ Արաղը վիշապ է»:

Ելի՛ր Արաղը. Գալօն կ'ուզէր գոնէ Արաղի մտաին չը մտածել, բայց ամենից շատ այդ վիշապն էր զբաղեցնում նրան, ամենից շատ այդ էր վախեցնում նրան: Ինչո՞ւ. Գալօն երկար մտածեց և յանկարծ յիշեց «Արաղի ձուկ աղջիկը» և նրա հետ, ինչպէս մանկութեան մի մոռացուած երազ, իր քրոջ՝ սիրունիկ Մարանի պատկերը կանգնեց առաջը: Մարան... Գալօն ամբողջ մանկութիւնն է դա, այն երջանիկ օրերը, երբ արցունքի տակ անգամ ծիծաղ է թափնուած, երբ աշխարհը վարդ և կեանքը երազ է: Գալօն սակայն շատ բան չի յիշում իր կեանքի այդ վառ արշալոյսից. նա յիշում է միայն որ մի քոյր ունէր, որին սաստիկ սիրում էր և որն իր համար «Արաղի ձուկ աղջիկն» էր պատմում: Գալօն յիշում է նաեւ թէ ինչպէս ինքը ճնճղուկների ձագեր էր բռնում բերում քրոջը, ապա յոգնած ու քրթնաթոր գլուխը դնում էր նրա ծնկանը, աչքերը յառում էր երկնքում սահող ամպերին, իսկ քոյրը պատմում էր նրան «Ձուկ աղջկայ հէքիաթը», որի վիշապից երկսով էլ վախենում էին, իրար մօտ կծկուում, բայց և այնպէս, ոչ քոյրն էր հրաժարում պատմելուց, ոչ եղբայրը լսելուց: Եւ նրանք վախվախով, բայց սիրով էին երեւակայում Արաղ, վիշապ, «Ձուկ աղջիկ», և լաւ էր, լաւ էր այդ բոլորը:

Գալօն որպիսի՛ր քնքշութեամբ էր սիրում Մարանին, նրա խոր ու միշտ թախծապահ աչքերը, սրոնք ոգետւթեան և թեթեւ բարկութեան րոպէներում, կոյր ձեւ էին ստանում ինչպէս երկու վառ աստղեր, նրա

թուլի երկայն մագերը, նրա դունատ դէմքի անփայլ ժպիտը, քանի քանի անգամ եղբայրը լաց է եղել միայն նրա համար, որ քրոջ աչքերում արցունք է տեսել: Գալօն այն ժամանակ հաւատացած էր, թէ չը կայ աւելի մեծ երջանկութիւն քան մի բարի, սիրուն բոյր ունենալ, որի անունն անպատճառ Մարան լինի, և որն անպատճառ Ձուկ աղջկայ հէքիաթը իմանայ և Գալօի գլուխն իր ծնկանը դնի և պատմի, պատմի... Եւ այդ բոյրը տաս տարեկան չը հասած խեղդուեց իրանց դաշտերի մեծ առուի մէջ, Գալօն այդ տեսաւ և իր մանկութեան բոլոր երազները սև դարձան:

Երկար ժամանակ Գալօն հաւատացած էր, թէ Արազը տարաւ նրան Ձուկ աղջկայ մօտ: Եւ այդ ժամանակից Գալօն և՛ վախենում էր Արազից և՛ ասում էր: Ա՛խ ինչպէս կ'ուզէր Գալօն այժմ էլ գլուխը դնել քրոջ ծնկանը՝ ինչպէս մանկութեան օրերում, մոռանալ ամեն բան և լսել նրա շրթունքներից «Ձուկ աղջկայ հէքիաթը»: Բայց Մարանն էլ չը կար և Գալօն էլ երեխայ չէր, մեծ մարդ էր, տանջուած, մռայլ, հաւատը կորցրած դէպի աշխարհ, դէպի մարդիկ, դէպի ամեն ինչ: Ասում են, թէ Շողիկը նման է Մարանին, Գալօն նորից նայեց աղջկան, երեխան շարունակում էր քնել անուշ անուշ. նրա կողքին կծկուած՝ մռռում էր փոքրիկ կատուն, դունչը դրած երեխայի խոպուպների մէջ: Գալօն ձեռքով հեռացրեց կատունին, նա այդ վայրկենին չէր ուզում, որ Շողիկին ոչ ոք դիպչի, Շողիկը և՛ իր աղջիկն է և՛ իր Մարանն է: Կատուն յետ եկաւ և կրկին իր տեղը բռնեց, Գալօն նորէն հեռացրեց նրան. կենդանին էլի յետ եկաւ. զայրացած Գալօն այս անգամ ուժով բռնեց նրա մէջքից և բոլոր թափով չպրտեց դէպի պատը: Կատուն ջախջախուած ու արիւնջուայ գետին ընկաւ ողորմելի մլաւիւններ արձակելով: Աղմուկի վրայ կինը զարթնեց.

— Գալօ:

— Օ'ֆ, օ'ֆ:

— Կատուին զո՞ւ զարկիր...

— Ի՞նչ գործ ունի Շողիկի մօտ:

— Տնայէն, նա խօմ միշտ այնտեղ է, խեղճ կենդանի, ի՞նչ անսիրտն ես այ մարդ:

Կատուն շարունակում էր ցաւօտ մլաւիւններ արծակել:

— Ի՞նչ է պատահել բեզ, ինչո՞ւ չես քնում: Գալօն լուռ էր:

— Գալօ ջան:

Պատասխանի փոխարէն խաւարի մէջ հնչուեց Գալօի հեկեկանքները.

Շփոթուած կինը նստեց, փաթաթուեց ամուսնու պարանոցին, քնքշութեամբ համբուրեց ճակատը:

— Ի՞նչ է պատահել բեզ Գալօ ջան, մատաղ, մեղք չեմ ինձ չարչարում ես:

— Ոչինչ, այ կնիկ, Մարանը միտս ընկաւ, մեր պնտիկ Մարանը, երազումս տեսայ, էլի ինձ համար Ձուկ աղջկայ հէքիաթն էր պատմում ինչպէս երեխայ ժամանակս: Մարանը շատ լաւն էր, ի՞նչպէս էի սիրում: Եւ լացս եկաւ...

Գալօն թագցնում էր ճշմարտութիւնը, նա լաց էր լինում կատուի համար, որին չը գիտէր ինչո՞ւ սպանեց. լաց էր լինում, որովհետեւ աշխարհը չար է, Շողիկը լաց կը լինի, Արազը վիշապ է:

— Կնիկ, դու «Ձուկ աղջկայ» հէքիաթը չը գիտե՞ս:

— Ախր դրա ի՞նչ ժամանակն է, Գալօ ջան, քնիր, հանդստացիր:

— Դէ որ քունս չի աանում. կնիկ, դաս դու ինձ «Ձուկ աղջկայ» հէքիաթը պատմես, ես էլ կամաց կամաց կը քնեմ:

— Երեխայ ես դարձել:

— Ախ, կնիկ, ո՞ւր է թէ երեխայ դառնայի, Մարանն էլ կենդանի լինէր:

— Լաւ, դէ լսիր «Ձուկ աղջկայ» հէքիաթը.

«Կը լինի չի լինի մի շատ սիրուն աղջիկ կը լինի»
Այդ աղջկան մի քաջ և սիրուն նշանած կը լինի
Մի օր աղջիկը դաշտ կ'երթայ բանջարի,
Վիշապը նրան կը խլի ու փախցնի»:

—Ձատու ալառաւից ասա, կնիկ, ան է լաւ:

«Պառաւ ջատու և կաւ հասաւ հեծած կաւէ խնոցին,

Չար վիշապի այրից փախցրեց նազելի կոյս աղջկան.

—Պառաւ, սլառաւ, աղջիկն ասաց, տար ինձ հասցրու իմ
երարին,

Եօթը սարից, եօթը ձորից այն կողմն է իմ սիրելին:

—Չէ, խօրօտիկ, դու ինձ պէտք ես, ջատու ալառաւն ան-
խելք չէ,

Սար ու ձոր եմ չափել, անցել, դու ինձ պէտք ես, կոյս
աղջիկ:

—Պառաւ, այն կողմը մի տար ինձի, Արազն է մեր առաջին,

Դու խօս գիտես ծուռ Արազին, ճամպայ չի տայ գիշերով,

Ծուռ Արազը ճամպայ չի տայ և վիշապը կը հասնի:

Պառաւն անտես արաւ աղերս կոյս գեղանի աղջկան,

Շարժեց թափով իր խնոցին և Արազի ափն իջաւ:

—Արազ, նայիր բեռս է սիրուն, չար վիշապն է քամակին,

Թէ ճար չը տաս, կոյս գեղանին բաժին կ'ընի վիշապին,

Արազ, խղճա՛, բեռս է սիրուն, չար վիշապն է քամակիս:

—Բեռդ ինձ տուր, անցիր գնա՛, մոնչաց դիժ Արազը,

Սէր էլ ունեմ, տեղ էլ ունեմ անդունդներս եւ հազարով.

Սիրուն բեռդ գիրկս գցիր, պառաւ, անցիր դու, գնա՛:

—Արազ, մէջքս տաքանում է չար վիշապի բոց շնչից,

Եկաւ, եկաւ վրայ հասաւ, մի ճար տուր ինձ, ջան Արազ:

Արազ, նայիր բեռս է սիրուն չար վիշապն է յետևիս:

—Կոյս գեղանին ծնցս գցիր, պառաւ, անցիր դու, գնա՛,

Հազար վիշապ, հազար զլխով էլ չեն խլի իմ ձեռքից,

Տնւր ինձ կոյսը, ճամպայ կը տամ, թէ չէ դուր ես ա-
ղերսում:

Վիշապը հասաւ, աղջիկը թռաւ, գիժ Արազի ծոցն ընկաւ,

Վիշապն հասաւ ու պառաւին խնոցիով կուլ տուաւ:

Եւ աղջիկը գետի ծոցում, մէկէն սիրուն ձուկ դարձաւ,

Ձուկ աղջիկը հարսը դարձաւ, սիրուն հարսը Արազին:

Բայց չը մոռցաւ իր սիրածին եօթը սարից այն կողմը,

Ալիքները մրմունջներից նա սիրոյ երգ ուրեց,

Հին օրերի երազներից սուգ ու ողբեր յօրինեց,

Ջրի տակ էլ անդունդներում նա աշխարհը անիծեց:

Կէս գիշերին լուռ լուսինը շողեր թափեց արծաթի,

Աստղերն եկան շարան-շարան Արազի մէջ նայեցին,
 Եւ նայեցին ու ժպտացին ալեակների երեսին,
 Աչքով արին ալեակներին, դողդողացին նրանց հետ,
 Եւ ձկների արծաթ մէջքին շող հիւսերը փռեցին,
 Եւ ձկների խմբերի հետ խաղ ու պարեր սարքեցին:
 Կէս գիշերին Չուկ աղջիկը մոլար, տխուր ու մենակ,
 Գիժ Արազի փայփայանքից փախաւ դէպի ափերը,
 Լուռ ափերին, խուլ ափերին երազ օրերը սգաց,
 Լուռ ափերին, խուլ ափերին ցաւի երգը մըմնջաց,
 Անուշ ձայնով եարին կանչեց, եարը չեկաւ ու չեկաւ,
 Այրուած սրտով խորասուզուեց, ալիքների տակ մտաւ:
 Գետի ափին յանկարծ հասաւ մի սիրունիկ տղամարդ,
 Նժոյգ հեծած, լախտը ձեռքին ու մազերը փողփողուն,
 Կանգնեց ափին, — Արազ, ասաւ, մի ճանապարհ տուր ինձի,
 Չար վիշապը ետս տարաւ. եօթը սարից էն կողմը,
 Մի ճամպայ տուր ետրիս գտնեմ, առնեմ հասնեմ մուրաղիս:
 Գիժ Արազը զոռաց, թնդաց, բաշը ցցեց կատաղած,
 Սարեր կազմեց ալիքներից, բարդ-բարդ փրփուր դուրս
 հանեց,

Եւ փրփուրի վրայ յանկարծ Չուկ աղջիկը յայտնուեց,
 Նայեց ափին, տեսաւ ետրին, սիրոյ երգը զեղզեղեց,
 Դիւթիչ ձայնով, ցաւոտ ձայնով սիրոյ երգը նա երգեց:
 — Չար վիշապի խաւար այրից, ջատու պառաւն ինձ խլեց,
 Չար պառաւի ձեռքից փախայ, գիժ Արազի գիրկն ընկայ:
 Լուսինն եկաւ, ժպտաց ինձի պազ չիթերով արծաթի,
 Աստղերն եկան շող հիւսերը դալար մէջքիս փռեցին:
 Արծաթ մէջքիս շողն ինչ անեմ, սէրն եմ ուզում իմ ետրին,
 Դալար մէջքիս ջուրն ինչ անեմ, սէրն եմ ուզում իմ ետրին:
 Չուկ աղջկայ ձայնը թովեց նժոյգ հեծած կտրճին,
 Սիրոյ երգով կոյսը վառեց սէրը փնտռող իր ետրին.
 Շարժեց իր ձին ալիքների գիրկը նետուեց կտրիճը,
 Չուկ աղջիկը գրկեց նրան, անդունդների խորն իջաւ,
 Գիժ Արազի սառը ծոցում նա իր մուրաղին հասաւ:

— Ախր կը խեղդուե՞ն: Շողիկն էր, զարթնել էր և
 ականջ էր դնում:

— Չեն խեղդուի, Շողիկ ջան, ձուկ դարձան:

— Հա՛, չեն խեղդուի, ձիաւորը կը խեղդուի, Արազը
 կը խեղդի, Արազը վիշապ է, հայրիկ, դու էլ մի գնար,
 չը խեղդուես, Չուկ աղջիկը կը բռնի, հա՛մ.

— Չեմ խեղդուի մատաղ, քնի՛ր, քնի՛ր...

IV

Արեւելքը դեռ չէր շահագործուել. գիւղը՝ վախեցած քարաթոթոշի պէս կծկուած, մրափում էր անշշուկ. խաւար ու գալարուն փողոցները ինչպէս սեւ օձեր ձգւում էին զանազան ուղղութեամբ, իրար էին փաթաթւում, կծիկ դառնում, յետոյ կրկին բաժանւում և կամ կորչում էին տների մութ զանգուածի մէջ, կամ մի անվերջ յօրանջումով երախները բացած այլանդակօրէն նայում էին դէպի ամայի դաշտերը: Աքաղաղները բոլոր տներից կանչել սկսեցին, բայց նրանց բոլորի ձայնը չը կարողացաւ խլացնել գղիւր Վարթօի առաւօտեան կանչը. «Արճղ, Արճղ»: Մարդիկ քնաթաթախ ու յօրանջելով դուրս էին սողում այս ու այն պատի տակից, այս ու այն անկիւնից և մոլար ստուերների պէս դիմում էին վերստին դէպի հրապարակը, ընդհանուր բանակատեղին: Լսւում էին եղների բառաչ, գոմէշների փնչոց, սալերի ճռինչ, բահերի զրնգոց, հատուկաոր խօսակցութիւններ, դժգոհ ձայներ, կիսաբռն մարդկանց կցկտուր պատասխաններ: Գալօն էլ փողոցումն էր:

— Տէր Աստուած, մտածում էր նա, և այս բոլորը նրա համար, որ մեր մարդակեր իշխանները մի ժամուայ մէջ ջրին տան... Չէ, չէ, Վարթօն չի անի այդ, ոէսն ու տանուէրն էլ չեն անի, ջրպետն էլ չի անի: Ամենքն էլ վատ մարդ են, անկուշտ գաղաններ, ուրիշի քրտինքին աչք դրած չարագործներ, բայց էլի մեռել ուտող բորենիներ չեն: Արազի թմբերը քանդել, թէ մեր տները, գիւղի ջուրը կտրել, թէ մեր երեխաների վիզը, այդ մէկ է. ո՞վ կ'անի, ո՞վ այսքան մեղք իր հոգու վրայ կ'առնի: Ախր իրանց մեռելները գերեզմանների մէջ կը դողան, զայրացած հօղն էլ նրանց ոսկորները կը ճմռի: Մարդ են, կրծքերի տակ սիրտ ունեն, որ քար չէ, այլ թրթռուն միս: Գարշելի Եղօ, փճահ, ինչ վատ է աշխարհը:

Եւ գիւղը շարժուում, գնում էր դէպի Արաղը: Ճիւղերով բեռնաւորուած սայլերը ճռնչում էին բեռների ծանրութիւնից կարծես տնքալով ցաւից, իսկ գիւղացիները մեծ ու վտրր խմբեր կազմած հետեւում էին նրանց դանդաղ ընթացքով: Մի ամբողջ կարաւան էր կամ, աւելի ճիշտ, մի խտասիրտ աստուածութեան դուռը գիմնդ ուխտագնացների երկիւղած բազմութիւն:

— Բարի լոյս սանահէր: Գալօն յետ նայեց, դարձեալ Եղօն էր:

— Աստծու բարին:

— Էլի՛ նեղացած ես:

— Ձէ, դէ ի՛նչ նեղանամ, գիւղի բան է, այսպէս էլ կ'առեն, այնպէս էլ:

— Հա՛, լաւ է, որ չես նեղացած, դէ մի աչք ածիր չորս կողմի, տես քանի հողի ենք Արաղ գնում:

— Քանի հողի ենք, չէ տունը մի մարդ է էլի, ի՛նչպէս համարեմ:

— Մի համարի, այնպէս մի աչք ման ածիր, գիւղը՝ խօմ գիտես, հարիւր տուն է, այստեղ վաթսուն մարդ էլ չը կայ: Լուսաբաց էր արդէն, Գալօն յետ նայեց, առաջ նայեց, Եղօն կարծես թէ ճշմարիտ էր ասում, հէնց իր մօտի հարեւաններից շատերը չը կային, նա գլուխը քաշ ձգեց ու լռեց, չը բարկացաւ, բայց աւելի մտածկոտ դարձաւ:

— Բարին քեզ հետ սանահէր, ասաց Եղօն ու առաջ անցաւ:

Գալօն նրան անպատասխան թողեց: Ախր ի՛նչ է ուղում այս մարդն իրանից. բանուորները քիչ են, ուէսն էլ, տանուտէրն էլ, ջրպետն էլ դողեր են, ողջ աշխարհը դժոխք է, մարդիկ գազաններ, յետո՛յ... գիւղի ցաւը միայն Գալօնն են տուել, ի՛նչ է գնում գալիս իր սիրտը ցաւեցնում: Քաղհանն այսօր կինն ու Շողիկն են անում,— խեղճ Շողիկ, ոտին էլի քանի՛ փուշ կը մտնի և ինքը Գալօն այնուամենայնիւ եկել է իր պարտքը կատարելու, անաստուած հարեւանները չեն եկել, Գա-

լօն լինչ անի, որ հողը տայ գլխին, որ ջուրն ընկնի, ուհ աշխարհ, հազար երեսանի փուչ աշխարհ:

Եղօն Դալօից ոչինչ չէր պահանջում և եթէ գիտե- նար իր հարեանի ներքին ցաւերը, իսպառ հանգիստ կը թողնէր նրան, նա չար մարդ չէր: Միայն նա միշտ զայրանում էր, որ իր համար այնքան պարզ, այնքան աշկարայ ճշմարտութիւնը ամենքը չը գիտեն, չեն խոս- տովանում: Խոստովանեն... Թող ամենքն ասեն, թէ մեզ կողոպտում են, խաբում են, զրկում են, որ մենք խեղճ ենք, տանջուած, անճար, անտէր, յետոյ... յետոյ ոչինչ, Եղօն աւելի հեռու երբէք չէր գնում, նրա խիղ- ճը բողբոջ, ըմբոստ չէր, նա խաւարի մէջ, մի կորած անկիւնում իր ցաւերի վրայ գանգատուող, մրմնջացող լացող ձայնն էր և կ'ուզէր, որ ամենքն էլ լաց լինեն ու հառաչեն: Թող Դալօն էլ լաց լինի իր սրտի խոր- քում, նա էլ զգայ, խորապէս զգայ, որ իրանք լողում են ցաւի ծովի մէջ և թող մղկտայ, միայն ու լռի ինչ- պէս ամենքը: Եղօն գիւղի արթուն խիղճն էր, սեւ ճա- կատագրին Գիտակցական հնազանդութիւնն էր. ոչ ոք նրա պէս չէր ճանաչում իրերի ցաւալի վիճակը, ոչ ոք նրա չափ չէր տրտնջում, և ոչ ոք էլ նրա պէս հլու հպատակ չէր չարիքի ամենատեսակ պահանջներին. Ե- ղօն մարմնացած գիւղն էր, այն սեւ ու լացող ամբոխն էր, միայն լացող:

Արեւը ծագել էր արդէն, երբ կարաւանը գետի ափին հասաւ: Արագը ծոյլ ծոյլ արեւոզ տրած, քնից նոր արթնցածի պէս ձգձգւում ու գալարւում էր և մեղմով յետ էր ձգում իր վրայից գոլորշիների կաթնա- գոյն շամանդաղը: Դալօն կանգնած նայում էր մտած- մունքի մէջ ընկղմած:

— Տես սանահէր, ջուրն այսքան քիչ է, լինչպէս կարող էր թումբը քանդել:

Դարձեալ Եղօն էր:

— Զուրը քիչ է, պատասխանեց Դալօն դժկամա- կութեամբ առանց աչքերը գետից հեռացնելու: Ալիք-

ները կարծես դերել էին նրա հայեացքը և Գալօն էլ ոչինչ չէր տեսնում իր շուրջը, ոչինչ չէր լսում: Մի ձկնկուլ ալիքների վրայ զարկուեց հենց Գալօի աչքի առաջ և մի ձուկ բռնեց ու բարձրացաւ, Գալօն այդ էլ չը տեսաւ:

— Զարմանք բան է, թէ թումբերն ինչպէս են քանդուել, անձրեւ չի եկել, դետը չի վարարել ինչպէս անցեալ անգամները, խօսում էր Եղօն ըստ երեւոյթին ինքն իրան, բայց իրօք Գալօին լսել տալու համար: Վերջինս այդ հասկացաւ:

— Ձը գիտեմ Եղօ, ես եմ քանդել, ես, կոչեց Գալօն համբերութիւնից դուրս եկած, թող ինձ հանգիստ, խեղդեցիր. ձայնը խղուեց և նա ճակատը յենեց բահի կոթին ու լռեց:

Ի՞նչ է ուզում ինձանից այս մարդը, սատանայի պէս մի քայլ չի հեռանում, մոտժում էր Գալօն, քանդել են, քանդել են, յետոյ... թող չը քանդէին. երեւի այն արցունքն եւ շալակել բերել նոր թումբ շինելու, ուրիշ ի՞նչ անեմ: Հո՛ւ աշխարհ, բարձրացիր էէ, նղոված ջուր, փրփրա, դուրս թափուի ափերիցդ, վըրաներս արի, սրբի միանդամից թող հոգիներս աղատուի, չէ՞ բորենիներն էլ մեզ հետ կ'երթան:

Եղօն նպատակին հասաւ. Գալօն լուռ մնում էր. կասկածը, սև հոգեմտչ կասկածը մի կաթիլ թոյնի պէս ընկաւ նրա շիտակ սրտի մի խոր անկիւնում և այժմ կամաց կամաց փորում կրծում էր անասելի ցաւեր պատճառելով: Բահի վրայ յենուած՝ նա ջղածդաբար սղմում իր ոսկրոտ մատների մէջ բահի կոթը և չը ճշալու համար քիչ էր մնում ատամներով ձեռները կրծոտի. նա տանջւում էր, նա զգում էր թէ ինչպէս իր կրծքի խորքից գունդի պէս մի բան ուռչում, մեծանում, լայնանում է և դանդաղ կերպով, բարձրանում է դէպի վեր, դէպի կոկորդը: Գալօն այժմ անկարող էր բարձրացնել իր գլուխը բահի վրայից, չէր էլ ուզում շուրջը նայել, շարժուել, կարծես թէ ամե-

Նափոքր շարժումից ուռած կուրծքը կարող էր պատ-
ռուել: Դարձեալ յիշեց իր բամբակը, կնոջը ու Շողի-
կին, որոնք արեւի տակ քաղհանում են, ապա աղջիկը
ներկայացաւ նրա աչքին վարդագոյն մինթանայով,
կանաչ-կարմիր լենաը սիրուն մազերի մէջ, փոքրիկ կօ-
շիկները ոտներին. յիշեց ծառը, ճղակոտոր ու սգաւոր
ծառը և Շողիկին նրա տակ արտասուելիս:

— Վիշապ, վիշապներ. մոմուաց նա բռունցքները
սղմած.

— Գալօ, Գալօ, դործի կաց:

Վարթօն էր, գղիւր Վարթօն, սա է քանդել, սա
պիտի քանդի թումբերը:

Նա նայեց Վարթօնին ոտքից գլուխ փորձող, շեշ-
տակի հայեացքով, վերջինս յետ-յետ քաշուեց այդ ծա-
կող հայեացքի առաջ. բայց էլի Վարթօն էր, ողորմելի
Վարթօն. նա իր շաշ աչքերը առաջուայ պէս թարթեց
բարութեամբ, քիթը, իր մեծ, կարմրած քիթը, խեղճ-
խեղճ վեր քաշեց մի բանի անգամ ինչպէս միշտ, վա-
րի քաշ ընկած և միշտ լորձիւնոտ երկար շրթունքը
դողդողացրեց ինչպէս միշտ, երբ վախենում էր մէկից
և մնաց լուռ:

Սա է քանդել, սա պիտի քանդի, կրկին մոմուաց
Գալօն, խեղճ ողորմելի Վարթօ, քանդել են, թող այդ-
պէս լինի, չարն աշխարհից պակաս չէ, բայց Վարթօն,
խեղճ ու կրակ Վարթօն, ուռնհ, Նղօ, դու գարշե-
լի ես:

— Հա, դործի կենամ Վարթօ, դործի կենամ, լաւ
ես ասում, մեր ցաւն է, հոգանք:

— Հապա, մեր ցաւն է, Գալօ ախպէր, վրայ բերեց
Վարթօն սիրտ առած. Արազը որ կայ մեր տէրն է,
մեր էլ զուլումն է. ինչ անենք, ախպէր: Վարթօն դար-
ձեալ մի բանի անգամ շատ քաղցրութեամբ թարթեց
շաշ աչքերը, վեր քաշեց վարի ջրոտ շրթունքն ու կար-
միր քիթը և գնաց կորաւ ամբոխի մէջ: Գալօն նայում

էր նրա յետեւից, ապա մի բան մումուաց ատամների տակ Եղօի հասցէին ու գնաց գործի կեցաւ:

Եւ գործը եռում էր: Ռէսը, տանուտէրն ու ջըրպետը որոտում, անիծում, հայհոյում էին. երբեմն երբեմն լսում էր մտրակի շրխկոցը, մի ուրիշ կողմ հաստ ճիպտոն էր գործ տեսնում, իսկ Վարթօն ինչ որ շարունակ ճվճվում էր քիթն ու շրթունքը վեր բաշելով: Մարդիկ աշխատում էին միջիւնների պէս: Սայլերը դատարկուեցին և ոստերից հաստ պարաններով մեծամեծ կապոցներ շինեցին իւրաքանչիւրի ծալքերում տապակ տապակ բար ու հոդ ածելով, որ ծանր լինի, ջրին դիմանայ: Քար ու հողի և ճիւղերի այս ահագին գանգուածը պէտք էր գետը դցել. մի բանի տաննակ ձեռքեր կպան միանգամից, նախ՝ առաջին կոյտին և բոլոր ոյժով, հարայ-հրոցով նրան դէպի ջուրը դուրեւ սկսեցին. իսկ Արաղը հանգարտ ու վեհ քշում էր իր ալիքները, նայում էր խեղճ մարդկանց այս ջանքերին, թեթեւ ճղփիւն էր հանում և կամ փոփսում ավերի հետ մի դաղանի ծրագիր:

Բլրաձև կոյտը ահագին շառաչով ջուրն ընկաւ. ալիքները լայն յորձանք տուին և փախան այս ու այն կողմ, փրփրալով, ապա բոլոր ուժով դարկուեցին իրանց առաջը ցցուած այս նոր արգելքին: Թումբը դողաց, բայց նոյն վայրկենին նրա վրայ թռան մի խումբ մարդիկ, ոմանք պարաններից կախուեցին, ուրիշները՝ ճիւղերից, մինչդեռ ավի բաղմութիւնն շտապ շտապ քարեր ու ցեխ էր շարտում վրան, որ ծանրանայ, ալիքների թափին դիմանայ: Տանուտէրն ու ջրպետը ավից էին հրամաններ արձակում, ուէսն ու գլիրը թումբի վրայ էին, այստեղ էր և Գալօն:

—Քար հարեւաններ, բար ածեցէք, ճշում էր Գալօն քրտինքի մէջ կորած. նա կարծես իրօք վիշապի դէմ պայքար էր մտել և իր ոգեւորութեան մէջ ամեն ինչ մոռացած, յափշտակուած գործի գեղեցկութեամբ, նա գեղեցիկ էր և խրոխտ: Մի վայրկեան, միայն մի

հատիկ վայրկեան նրա աչքը Եղօի աչքին հանդիպեց, երկու տարօրինակ հայեացքների միջոցով մտքերի փոխանակութիւն եղաւ. Գալօն ասում էր.

—Ասում էիր թէ պարանը կը կտրեն, տե՛ս.

—Կը տեսնենք պատասխանեց Եղօի հայեացքը:

Եւ կրկին լսուեց Գալօի կանչը՝ «Քար, ցեխ». և բահերով ու ձեռներով ամբօխը դործում էր անընդհատ: Լաւ էր. Գալօն հրճւում էր՝ «Քար ու ցեխ»: Ուռած ալիքները սպառնալի էին և հզօր, բայց թումբը հաստատուն էր և ծանր, կարծես էլ վառանդ չը կար, նոյն իսկ ջուրը բարձրացաւ և շարժուեց դէպի առունները, էլի մի փոքր աշխատանք և ամեն ինչ վերջացած է: Բայց յանկարծ թումբը երերալ սկսեց, դողաց ինչպէս երկրաշարժի ցնցումից, ապա ալիքների միահամուռ թափի առաջ հաղիւ հաստատուած ամբարդակը տեղահան եղաւ և սկսեց ցրիւ դալ:

—Պարանը կտրուեց, ավը թռէք, ճշացին մի քանի ձայներ: Թումբի վրայի բաղմութիւնն շտապով յետ փախաւ ջուրը չը թափուելու համար, մինչդեռ Գալօն մեն մենակ դեռ կանգնած էր օրօրուելով, կարծես աչքերին չէր հաւատում, քարացած նայում էր իր ոտների տակ մռնչացող ալիքներին, նայում էր լայն դետի անհոգ յորձանքներին և էլ չը գիտէր թէ ի՞նչ է անում, մինչդեռ ամբարդակը քար ու քանդ էր լինում և մօտ էր իսպառ գլորուելու:

—Թուիր Գալօ, թուիր տնաքանդ, ճշաց բաղմութիւնը: Գալօն քնից արթնացածի պէս նայեց իր ոտների տակ խուսափող թումբին և վերջին վայրկենին ավը նետուեց: Ծառերի ահագին կոյտը բաժան բաժան եղաւ. իւրաքանչիւր ալիք իր մասն առաւ և, հրճուելով ու մռմռալով, ամբողջ օրերի աշխատանքն ու այնքան յոյսեր խառնեցին իրանց փրփուրների հետ և քչեցին դէպի անծանօթ հեռուն:

—Վիշապ, մռնչաց Գալօն ատամների արանքից: Նոյն վայրկենին հէնց իր ախանջի տակ մէկն ասաց՝

—Տեսնո՞ւմ եմ, ասացի կը կտրենք:

Դարձեալ Եղօն էր:

Դալօն լսեց շրթունքները կրծոտելով և նրա կրծքի տակի գունդը, որ աշխատանքի ժամին մոռացուել էր, վերստին լայնացաւ, բարձրացաւ, բարձրացաւ, ամբողջ կուրծքը բռնեց և հասաւ կոկորդը սեղմեց: Դալօն այժմ անյաղթելի ցանկութիւն ունէր մի բան ասել, ճշալ, մի բան ջարդել, մէկին խեղդել և կամ բարձր շատ բարձր տեղ կանգնել, թքել աշխարհի վրայ ու մոնչալ ահագին ձայնով մի այնպիսի բան, որ այս ամբողջը դողայ ցաւից ու դայրոյթից:

—Օձեր, իժեր և... էշեր մոմուաց նա ատամների արանքից և կրկին գործի կպաւ, կրկին ցատկեց երկրորդ կոյտի վրայ որ նոյն վայրկենին ջուրը ձգեցին:

—Քար ու ցեխ գոռում էր ուէսը թմբի վրայից:

—Քար ու ցեխ ճշում էր Վարթօն պարանին կպած բոլոր ուժով և տեղից էլ չէր շարժւում:

Դալօն էլ չէր գոռում, չէր էլ շարժւում: Փոթորկով բռնուած նաւի նաւապետի պէս մեխուել էր մի և նոյն տեղում, նայում էր իր թաւ յօնքերի տակից վառուող աչքերով, նայում էր շնչարդել, հեւալով. նա մի վայրկեան անգամ աչք չէր հեռացնում Վարթօնից: Ընդհանուր աղմուկի, իրարանցման մէջ Դալօն որսը նկատած բաղէի պէս յանկարծ առաջ նետուեց, ու ծունկ չոքեց Վարթօնի մօտ և նրա ձեռքը բռնեց: Վարթօն փորձեց պսպղան բանը թաղել ոստերի մէջ, բայց արդէն ուշ էր, Դալօն տեսաւ դանակը... Վարթօն կըտրում էր պարանը:

—Չարագործ, մոնչաց նա, դու... Եղօն... օճհ մարդասպան, բորենի, ես բեղ... Մայր, մայր, դու մայր ես Արադ, վիշապներն ու բորենիները սրանք են:

Վարթօն դարձաւ փորձեց շաշ աչքերը բարութեամբ թարթել, փսխնքոտ քիթն ու շրթունքը խեղճ խեղճ վեր քաշել, նա նոյն իսկ ուղեց ժպտալ, բայց այդ բոլորից նրա գէմքը մի դարչելի արտայայտութիւն ստա-

ցաւ ու սարսափով խեղաթիւրուեց. Գալօն կատաղաբար կանգնեց և ոտքի մի ուժեղ հարուածով չարագործին դէպի ալիքները շարտեց: Վարթօն դլորուեց, բայց պինդ կախուեց Գալօի ոտքից... Նոյն վայրկենին ուէսը յետ թռաւ ամբողջ սարսափած, իսկ երկու հակառակորդները չրփոցով շուրն ընկան իրար փաթաթուած: Այս բոլորը կատարուեց համարեա մի վայրկենում: Բաղմուլ թիւնը դարմանքից բար կարեց, իսկ ուէսը գունատած ու դողալով ընկաւ ամբի աւազի վրայ:

— Պարան, պարան ձգեցէք, խեղդուեցին, չ'ուտ կոչում էին զանազան կողմից. ամերից պարանները նետուում էին, բայց խեղդուողները կարծես անուշադիր էին, օձերի պէս իրար փաթաթուած՝ ձեռքերն ու ոտքերն իրար խառնուած նրանք խորասուզւում էին ալիքների տակ, կրկին դուրս գալիս, դարձեալ կորչում, դարձեալ յայտնւում, միշտ միասին, միշտ դալարուած, կարծես իրար ծեփուած: Մի անգամ միայն Գալօն աջ բռնեցքը սպառնալից կերպով բարձրացրեց ջրից վեր վեր և որոտաց՝ «բորենիներ». Վարթօն էլ նրա բազմակների մէջ թրպրտալով, դէմքը սարսափից այլանդակուած, փորձեց մի բան ճշալ, բայց սղմնած կոկորդից ձայն չը դուրս եկաւ, իսկ ունդներից արիւնը ժայթքեց և ջուրը ներկեց, սարսափելի էր: Ափի բազմաթիւնը գլուխը կորցրած՝ գծուարանում էր նայել գետի մէջ կատարուող տեսարանին, սովորական գծախտութիւն չէր, երկու կեանքեր չէին, որոնք մաքառում են ալիքների կատաղութեան դէմ, այլ մի ուրիշ անհասկանալի բան կար որ ահաւոր էր դարձնում ալիքների մէջ կատարուածը: Յանկարծ ճիւղերի երկրորդ կոյտը դլորուեց, թաւալ թաւալ առաջ խաղաց, հասաւ խեղդուողներին և երկսին էլ մի անգամից իր տակ թաղեց. իրար դալարուած մարմիններն այլ եւս չը երեւացին. վերջացան:

Այնուհետև թոււմբը շինուեց. Արազը դարձեալ գլխաւոր մայր էր, նա առատ ջուր տուեց և գիւղը մի անգամ էլ փրկուած էր: Գալօն ու Վարթօն գիւղի համար զոհ գնացին, մտածում էին ամենքը և տխուր էին: Մէկ Նզօն գիւղէր, թէ ո՞վ զոհուեց գիւղին և ո՞վ իր պատիժն ստացաւ: Անցան օրեր, գիւղը վերստին խաղաղուեց, մոռացաւ դժբախտ անցքը, մոռացաւ իր ցաւը: Նզօն էր միայն, որ մնաց սգաւոր, ճակատը միշտ մուսլի, կարծես մի ծանր յանցանք էր ծանրանում նրա խղճի վրայ. նա դադարեց գիւղի ցաւերի մասին խօսելուց, յետ քաջուեց հրապարակից և մոռացուեց ինչպէս իր վատբախտ սանահէրը: Նոյն տարին աշնանը գիւղացիք զարմանքով տեսան, որ Գալօի բամբակը Նզօն հաւաքեց և աշնանացանը իր արօրով կատարեց: Հազար ու մի ենթադրութիւններ արին, պատմութիւններ յօրինեցին, իսկ Նզօն անտարբեր դէպի ամենքը և ամեն ինչ ամբողջապէս իր վրին առաւ Գալօի տան ցաւն ու հոգսը:

Էլի գարուններ և ամառներ եկան. Շողիկի ուռենին վերստին ճիւղեր արձակեց դալար ու երկար ու կախուեց առօրակի վրայ, էլի նրա տակ ստուերն աւնուշ էր ու զով և հաճելի էր այնտեղ նստել. բայց Շողիկն էլ չէր երգում իր «լէլէն», էլ տնակ չէր շինում, էլ տիկնիկ չէր խաղում: Սգատերև ուռենին սօսափիւնով օրօրում էր իր լալկան ոստերը, տերևները տխրութեամբ փափսում էին վերից և մայր ու աղջիկ նրա պէս սգաւոր, նրա պէս լալկան նստում էին ժամերով և հազար ու մի սև բաներ մտածում: Շողիկն էլ չէր խօսում իր վարդագոյն մինթանայի, իր կանաչկարմիր լենտի, իր ճռճռան կօշիկների մասին. փշերով ծակոտուած իր ոտները նա էլ չէր ցոյց տալիս մօրը, միայն երբեմն երբեմն յետ յետ էր տանում իր խոպոպները, նայում էր մօր արցունքոտ աչքերին, ինքն էլ էր արտաւանդում մեղմիւ և հարցնում.

— Մայրիկ, ինչ եղաւ իմ հայրիկը.

—Արազը տարաւ, Շողիկ ջան, Արազը տարաւ:

—Ախր ինչո՞ւ տարաւ:

—Գիւղի համար մատաղ, գիւղի համար տարաւ:

—Մայրիկ, էլ չի՞ գայ.

—Ձէ, էլ չի գայ:

—«Ձուկ աղջիկը» բռնե՞լ է հայրիկին, հա՞ մայրիկ:

Մայրը էլ չէր պատասխանում, գրկում, սղմում էր իր կրծքին աղջկայ գլուխը, արցունքը մեղմիւ թափւում էր աչքերից, երեխան նայում էր մօրը և մտածում հօր մասին, Ձուկ աղջկայ մասին, Արազի մասին և չէր կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ Արազը տարաւ իր հօրը գիւղի համար և ո՞ւր տարաւ: Եւ ուռենին օրօրւում էր վերից տխուր սօսափիւնով և թափում էր իր տերեւները սգաւոր մօր և աղջկայ գլխին:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

1902 թ., մարտ, Պարիզ:



Սարի հովի պէս ամպերի փէշով
Արծուի թևին զարնեմ' ու երթամ:
Զինջ աղբիւրի պէս դալուկ անտառով
Զոր տերեւները գրկեմ' ու երթամ:..

Ա՛խ, կեանքըս թօշնաւ ու ցնորքներըս
Կնացին աշնան հաւքերի նման.
Դուն էլ ծաղրեցիր վառ արցունքներըս,
Սիրուս երազը ողբամ' ու երթամ:..

Վարդի ու դարնան անուշիկ երգեր
Կեանքի ափերից գըլգըլան, կու գան...
—Է՛հ, բաւական է... ես վաղ եմ հանգեր.
«Մնաք բարեւ» մրմնջամ, երթամ:..

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՕՏԻՒՆԵՐ

I

Ձմեռն անցաւ, եկաւ գարուն,
Հալաւ բանձրիկ սարերու ձուն.
Ճամբայ բացուաւ զարիւններուն:
Իմ զարիւրէն խաբար չը կայ,
Սիրոս ճամբին դադար չը կայ:

Ղարիբ երկիր ամպ-մշուշ է,
Իմ զարիւրի սիրտ քրքուշ *) է.
Ոտ կը փոխէ՝ քար ու փուշ է:
Հերիք մնաս, դարձի վաթան,
Իմ ախպէր ջան, զարիւր եւր ջան:

Ջուրն է պրծեր, կու գայ սարէն,
Սարէն, ձորէն, իմ աչքերէն...
Իրար մի տար սրտիս եարէն.
Դարձի վաթան, հողն անո՛ւշ է,
Հողն անո՛ւշ է, ջուրն անո՛ւշ է...

Ա.Ի. ԻՍՍ.ՀԱԿԵԱՆ

*) Քրքուշ = քնքուշ (ժողովրդ. բառ):

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ^{*)}

ՎԷՊ

ՀԱՆՐԻ ԲՕՐԴՕԻ

VI

Օգոստոսի 20-ին, երեկոյան, Ժակ Ալվարը և իր մասնա-
ժողովը հաւաքուեցին «Ապագայ» լրագրի խմբագրատանը, Ան-
նէսիում, սպասելով տեանել ընտրութեան արդիւնքը:

Մէրանը և մի քանի այլ նշանաւոր անձինք, սիրելով հե-
ռու մնալ ամբոխի ժխորից, արձաղանք չէին տուել հրաւերին:

Ծերերը հագել էին իրանց հանդիսաւոր օրերի զգեստը և
յարգանքով խօսում էին ընդհանուր քուէարկութեան մասին:
Երիտասարդները, գեղածիծաղ հագուստներով, ման էին դալիս
սենեակներում, նկատելով քուէարկութիւնը իբրի մի թեթեւ
զուարճութիւն:

Ժակը շոյում էր իր չէկ մօրուքի ծայրը: Յաղթական
վստահութեամբ, նա ոչ մի կասկած չուէր իր յաղթութեան
մասին, և նրա դէմքի վրայ կարգացւում էր արդէն յաղթածի
ժպիտը: Նա պատրաստում էր արդէն իր շնորհակալութեան
ճառը ընտրողներին:

Մի լուսամտի առաջ կանգնած՝ Լիւսիէն Հալանդը խօսակ-
ցում էր կոյս ֆերրէզիի հետ, որ եկել էր այդտեղ լոկ հետա-
քըրքըրութիւնից դրդուած: Իր կնոջ մի քանի օտարոտի վար-
մունքը զարթեցրել էին նրա մտքի մէջ նախկին կասկածները:
Նա մի նոր առանձին և եռանդով պաշտպանում էր անիշխանա-
կանների թէօրիսն: Բոլոր խմբերի մէջ խօսակցութիւնը ընտ-
րութիւնների մասին էր: Յոռեգտաների մէջ նախադասի աթոռն
գրաւել էր փաստաբան Բրէնան, որի կծու խօսքերը սառն ջուր

*) Տե՛ս «Մուրճ» № 3.

էին ածում յոյսերի և ուրախութիւնների վրայ: Մի սեղանի մօտ նստած Շարավէնը յաջողութեան նպաստաւոր հաշիւներ էր անում և մայօր Բարօ կարդում էր ուսի վրայով, յուզուելով առաջուց, մի գուցէ իր վրէժխնդրութիւնը չաջողուի: Դահլիճի մի այլ ծայրում գերուկ նստար Տայլարը կարգադրութիւններ էր անում և պատրաստել էր տալիս մի համեղ ու ճօխ ընթրիք, որի համը առաջուց ճաշակում էր ինքն:

—Նահանգական իշխանութիւնը մեզ հակառակ լինելով, մենք պարտութիւն կը կրենք, ասում էր նա: Ի հարկէ, այդ զէպքում, ոչ ոք չի մօտենայ ընթրիքին. գոնէ այժմ պէտք է օգնել տնտեսին:

Հիւսիսային և հարաւային Աննէսի ընտրողական շրջանների թերթիկները բերին: Շարավէն դարսում էր այդ թերթիկները և դասաւորում էր ըստ նահանգների: Ժակը, բողոքովին հանդարտ, կարգաց բարձրաձայն ընտրութեան արդիւնքը: Հարաւային Աննէսիում նա ստացել էր փոքրամասնութեան քուէները, մինչ, հիւսիսայինում, չնորհիւ պ. Մէրանի, ստացել էր ահագին մեծամասնութեան քուէները, իսկ ամբողջապէս նա ստացել էր 3285 քուէ ընդդէմ 2864-ի:

—Այդ պարտութիւն է, ասաց Բրէնան: Բիւմիլլին, Տօրէնը և Ֆավերթը մեզ դէմ են:

—Ո՛չ Ֆավերթը, ուղղեց մայօր Բարօն չոր ձայնով:

Վատ լուրեր սկսեցին գալ: Բիւմիլլի նահանգը, շրջանի ամենաբազմամարդներից մինը, թեքել էր տալիս կշիռը Ֆրօսսարի կողմը երեք հարիւր ձայների առաւելութեամբ:

—Ես այդ նախատեսել էի, ասաց Բրէնան, ուրախացած ընկերի անաջողութեան վրայ:

Ժակը ընտրուէր թէ ոչ, նա հաւաստարապէս դժգոհ էր. նա ցանկանում էր համ նրա տեղն բռնել համ էլ նրան նուաւատացած տեսնել:

Ժակը բողոքեց իր հանդարտ ձայնով, որ յուսահատութեան էր հասցնում Բրէնային:

—Սպասենք վերջին. զեռ իմ և հրամանատարի նահանգների քուէարկութեան արդիւնքը չը գիտենք, ես մեծ յոյս ունեմ նրանց վրայ:

—Անտարակոյս, հաստատեց Բարօն: Լուսիէնը շահագրգռուած այդ խօսակցութեամբ, հեռացաւ լուսամուտից:

—Ես կը գնամ քաղաքապետութիւնը՝ տեսնելու ընտրութեան հետեանքները:

—Ես էլ կը գամ ձեզ հետ, ասաց Ֆերրէզին:

Նրանք իջան փողոցը, որ գրեթէ դատարկ էր. անկած ծառերի տերեւների ստուերը աւելի ևս խտացնում էր գիշերուայ մութը. նրանք հասան քաղաքապետութեան շինութեան առաջ, որի բոլոր պատուհանները վառ լուսաւորուած էին: Ամբոխը եռում էր այգտեղ և սաստիկ յուզւում ամեն անգամ, երբ մի նոր քուէարկութիւն յայտարարուում էր: Լսւում էին աղաղակներ. «Կեցցէ Ալվար», կամ «Կեցցէ Ֆրոստար»: Կուսակցութիւնները հայհոյում էին միմեանց, հրում էին իրար և ժխտորի մէջ լսւում էին հարբածների գոռիւնները:

Երկու տղամարդիկ վարանում էին առաջ գնալ. պ. Ֆերրէզին չը թագցրեց իր արհամարհանքը:

—Ձեր երկիրը, պարոն, գինեվաճառների ձեռքն է ընկել: Աւատական զղեակների տեղ բուսել են գինեառուները. ժողովուրդը պահանջում է իմիկ և զուարճանալ: Նրան հարկաւոր են կրկէսներ, ուստի և հանդէս են եկել երդուեալների դատարանները և ընտրութիւնները: Նա ողջունում է յաղթողին և սուլում յաղթուածին ինչպէս զլամարտի ժամանակ: Թշուառ ժողովուրդ. նա իրան չատ լաւ կը զգար բարի բռնակալի և նոյն իսկ չար բռնակալի իշխանութեան ներքոյ:

—Մեր պարտաւորութիւնն է բարոյապէս բարձրացնել, կամ աւելի ուղիղ՝ ղեկավարել ժողովուրդը: Նա աշխատում և տանջւում է. մենք այդ չը պէտք է մոռանանք:

Կոմսը զօրմաշքով նայեց նրան:

—Ես կարծում էի, որ դուք ասում էք ժողովուրդը...

Այդ միջոցին կախ տուին երկու նահանգների, Ալբիի և Ֆալերժի քուէարկութեան հետեանքը: Իր նահանգում ժակը ստացել էր գրեթէ բոլոր քուէները, իսկ մայօրի նահանգում ֆրոստարը մի քանի ձայն աւելի էր ստացել: Թօնի և Թօրէն-Սալի քուէարկութիւնները դեռ չը կային: Այդպիսով ընտրութիւնը դեռ կասկածելի էր, որովհետև Ալվարը հարիւր յիսուսից մինչև երկու հարիւր ձայն միայն աւելի ունէր իր հաւատակորդից:

—Մայօրը կը կատաղի, ասաց կոմս Ֆերրէզին հեղինաբար, վերադառնալով Լուսիէնի հետ «Ապագայի» խմբագրատունը:

Եւ, իրօք, մայօր Բարօն սաստիկ զայրացրել էր իր նահանգի դէմ: Նա կարծում էր, որ յաղթութեան վերջնական պատիւը իրան կ'ընկնի. նա յոյս ունէր որ այդ օր կը յագեցնի իր ատելութեան պապակը Ֆրոստարի դէմ, իսկ այժմ՝ այդ չը յագեցած վրէժխնդրութիւնը կատաղեցնում էր նրան: Յուզ-

մունքից նա խօսք չէր գտնում խօսելու, ուստի և վայրագ լռութիւն էր պահպանում:

Ալվարը, որ շատ ճարպիկ էր մարդկանց կառավարելու արհեստին մէջ, մօտեցաւ նրան և իր խաղաղ ձայնով հանգստացրեց նրան:

— Առանց ձեզ ես ձեր նահանգում մի ձայն անգամ չէի ունենայ. դուք Փրօսսարի մեծամասնութիւնը ոչնչութեան հասցրիք. չնորհակալ եմ:

Այս խօսքերը հանգստացրին ծերունուն. սակայն նա չը խօսեց և սպասեց՝ կարմրատակած ու դաժան, վերջնական հետեանքին: Նրա ինքնասիրութիւնը տանջոււմ էր:

Շաւարէն անհանգիստ՝ մի կողմ տարաւ թեկնածուին.

— Մենք չունենք մեր հաշուած քուէները. պաշտօնականները երեւի ծածուկ աշխատել են մեզ դէմ:

Դահլիճում այլ ևս չէին ծիծաղում և կատակաբանում. նոյն իսկ Տայլարը դուրս եկաւ այն մութն անկիւնից, որտեղ կարկանդակ էր կտրտում: Համոզուածները սկսեցին կասկածել. միւսների մէջ զարթոնեց խաղամոլների բնազդը և նրանք սկսեցին շահագրգռուել այդ կռուով, որ լուրջ կերպարանք էր ստանում: Նրանք, որոնք չուտով յուսահատոււմ են հէնց որ յաջողութիւնը անմիջական չէ լինում, խօսում էին արդէն այն տըխրութեան մասին, որ մարդ զգում է կրելով անյաջողութիւն այն բոլէին, երբ նպատակն այնքան մօտ է համարում: Մի երիտասարդ, որ շատ էլ փիլիսոփայական դատողութեան տէր չէր, անէծք կարդաց.

— Այս գիւղացիները ծառաներ են. նրանք ծնւում են մի արկղ վաքսով ձեռքին և ամբողջ իրանց կեանքում որոնում են պաշտօնական ոտներ՝ փայլեցնելու համար:

Մի ընտրական գործակալ ներս մտաւ այդ բոլէին: Դա մի տղամարդ էր երկար և վտիտ. նա բերեց թօնի քուէարկութեան թերթիկը, որ աննպաստ էր: Այդ մասնակի անյաջողութիւնը մի մեծ աղէտի կերպարանք ստացաւ և ամենքը սկսեցին մեղադրել Բրէնաին, որ թօնի քաղաքագլուխն էր: Նա, իրօք, իր թեկնածուի դէմ էր գործել, բայց չէր կարծում, որ կարող է այդքան ազդեցութիւն ունենալ: Յուսահատութեան մի հով անցաւ ամենքի գէմքով: Շաւարէն՝ յուսահատ, վայր գցեց մատիւրը. ամենքը իրանց նայուածքը սեռեցին ժակի վրայ, որ անվրդով պահում էր իր յաղթական ժպիտը և ոչինչ չէր պատասխանում տխուր նախագուշակութիւններին: Բրէնան, արդէն ընկճուած իր անակնկալ ազդեցութեամբ, կատաղում էր

տեսնելով ժակի այդ անդորր դէմքը, նա յոյս ունէր տեսնելու նրա վնասութիւնը և պարտութիւնը:

Վերջապէս մի չնչապառ մանչ վազեց եկաւ, բերելով ընտրութեան հետեւանքը Թօնում և Թօրան-Սալում, որ նոր յայտարարուել էր քաղաքապետութեան մէջ: Ալվարը ընտրուած էր 500 ձայների մեծամասնութեամբ. 8632 քուէ ընդդէմ 8111-ի: Ամենքը ծափահարեցին. ուրախութիւնը պայթեց ջրղային սաստիկ լարումից յետոյ:

— Ժամ է այժմ խմել և ուտել, պոռայ Տայլար, որ ամբողջ երեկոն կոնծել էր:

Բաժակները լցուեցին չամպայնով, դէմքերը զուարթացան և խօսակցութիւնները կենդանացան: Ամին մէկը սկսեց չափազանցնել իր քաղաքական արդեցութիւնը և իր կատարած ընտրական ջանքերը: Նախանձայնութիւն յայտնուեց մասնաժողովի անդամների մէջ:

Ժակը այլ հս չէր ժպտում ու ընաւ չէր խօսում. նա մտածում էր իր բախտի մասին:

Փողոցում մի ժխոր բարձրացաւ խուլ և հեռաւոր, բայց հետզհետէ զոռալով և մոնչելով: «Ապագայի» խմբագրատան պատուհանների տակ նա պայթեց, ամբոխն էր շարժուն, որ գոռում էր, «կեցցէ Ալվար»: Բաց փեղկերից յաղթական այդ ձայները մոնում էին դահլիճը. Ժակը երևաց լուսամուտներից մէկիւ առաջ. նրա ետեւում դրուած լամպերը լուսաւորում էին նրա մութ ուրազիծը: Ի տես նրան, աղաղակները կրկնապատկուեցին: Մի կատաղի զառանցանքով համակուեց ամբոխը, որ իր ոգևորութեան աղաղակները թափում էր իր յոգնած կրծքերից: Ընտրեալը, բախտաւոր ներշնչմամբ, մի քիչ առաջացաւ պատուհանից դուրս և մեկնելով բաժակը, արտասանեց իր հզօր և մեկին ձայնով, որ ծածկում էր զոռիւնները:

— Խմում եմ ընդհանուր քուէարկութեան համար. խմում եմ Աննէսի ժողովրդի, Ֆրանսիայի ժողովրդի կենացը:

— Կեցցես, մոնչացին երկու հազար ձայներ ուրախալից թնդիւնով:

Նոր պատգամաւորը նայում էր ներքև, այդ հոծ և սև ամբոխին, որ գեոռում էր և զոռում: Նա ազահուլեամբ չնչում էր յաղթութեան օդը և, ըստ երևոյթին, անտարբեր էր մնում:

— Մարդ զգում է, որ ապրում է, ասաց նա Լուսիէն Հալանդին, որը յենուած կոմս Ֆերրէզիի ուսին, աշխատում էր նկատել զաչի լոյսով կիսալուսաւորուած ամբոխի մէջ մի քանի դէմքեր:

Մարդկային այդ երամակը ծփում էր իբրև ծովի կոհակ-

ներս Դիմագծերը անհետանում էին այդ յորձանուախ մէջ. առաջին նայուածքով կարելի էր լինում տեսնել միայն վայլող աչքեր և բացուող բերաններ: Ստուերի ու լոյսի սահող լայն շերտեր, մեկին կերպով ցոյց տալով առանձին խմբեր, տձև կերպարանք էին ընծայում միւսներին: Ամբոխը նմանում էր այդ բոլորէին հազար գլխանի մի հրէշի:

Լուսիէնի նայուածքը շուտով որոշեց մանրամասնութիւնները: Մի ծերունի երերցնում էր օդում իր կակուղ գլխարկը, որ նման էր աւելի գլգլակի և ցոյց էր տալիս մի սարսափելի բերան, թափուած ատամներով: Գզգզուած մազերով բանուորների մի խումբ համբոյրներ էր ուղարկում ժակին և նրանց մոտայուած գէմքերը արտայայտում էին նրանց ցանկութիւնը: Կապոյտ բաճկոնով մի հաստ գիւղացի այնպիսի գոռիւններ էր արձակում, որ կարելի էր կարծել թէ ահա կաթուածահար կը լինի: Մի սինթոր տղայ, թառ եղած լապտերի մոյթի վրայ ոռնում էր օդում, խելագար աչքերով:

Լուսիէնը այնպէս էր գրաւուել տեսարանով, որ կարծես մի նոր աշխարհ էր գտել: Թափօրը քիչ-քիչ անցնում էր: Ալվարը փակեց պատուհանը և իրան յատուկ պարծենկոտութեամբ ասաց այնքան բարձրաձայն, որ Լուսիէնը լսի.

—Այժմ, թքել եմ բոլոր այդ մարդկանց վրայ:

Հալանդը խոր արհամարհանք զգաց դէպի նրան: Նոյն իսկ այդ բոլորէին, նա մտածեց թէ ինչպէս այդպիսի մի ամբոխ ողջունել էր իր հօրը և իր պապին, այդ մեծ քաղաքացիներին, որոնք նուիրում էին իրանց ոյժերը ժողովրդին և հայրենիքին. այդ տեսարանի թարմ տպաւորութեան տակ նա նկատում էր ժակին իբրև մի գող, որ գողացել էր ժողովրդի քուէն, իսկ իրան համարում էր դաւաճան: Այն ներքին աշխատութիւնը, որ կատարում էր նրա մէջ իր վերադարձից ի վեր, մի նոր ուժգնութեամբ զգացնել տուեց իրան:

Դահլիճում տափակ դատողութիւններ էին փոխանակւում. հանդիսականներից մինը նկատեց.

—Խելագար վայրենիների է նման այս ժողովուրդը:

Բայց Լուսիէն Հալանդը, որին մինչ այդ ամենքը համարում էին դիլլետանտ քաղաքականութեան մէջ, յանկարծ պատասխանեց.

—Ինչի՞ համար: Նրանք ողջունում են ուրախալի աղաղակներով իրանց ընտրեալի ոյժը և երջանկութիւնը: Ես նրանց մէջ տեսնում եմ միայն անմիջականութիւն և ոչ այլանդակութիւն:

Ֆերրէզի կոմսը տարաւ մեկուսի երիտասարդին: Ցոյց տալով նրան ընտրեալին, մրմնջաց.

—Զօրեղ կուրծք, խրոխտ ձայն, ընդհանուր խօսքեր—անախնչով յաղթում է նրանց։ Նրանք նման են այն որոշ կարգի կանանց, որ ընկճւում են բիրտ ոյժի առաջ։ Ոյժի առաջ նրանք հլու են, ինչպէս քծնող չներ։ Նապօլէօնը մինչև այժմ ևս ժողովրդական է մնացել ձեր գիւղական ժողովրդի մէջ, որ վախկոտութեան չափ խաղաղասէր է, և այդ հեգնութիւնը հիացնում է ինձ։

—Ո՛չ, նրանք տկար են զգում իրանց, նրանք սրտնում են նեցուկ և մանաւանդ սէր։

Բայց իտալացին, քաջալերուած իր պերճախօսութեամբ, շարունակեց խօսել որպէս թէ իր խղճուկ վերացական թէօրիաները իրօք կարող են իրականանալ։

—Դէն գցենք ժողովուրդը և արհամարհենք պետական մարդկանց ստոր գործունէութիւնը։ Մենք պէտք է հայրենիքից և օրէնքներից աւելի բարձր կանգնենք, ազատաբար զարգայնենք մեր ոյժերը Նիցչէյի թէօրիայի համաձայն, մենք, որ մարդկութեան գերազօյն մոքերն ենք կազմում։

Ժակը լսեց այս խօսքը և մի վատ ժպիտ երևաց նրա շրթունքների վրայ, իսկ մտքում մի ստոր մտածմունք։ Չէ որ մի կոպիտ, ստոր խօսքով նա կարող էր ո՛հնչացնել այդ փոքր հիւանդոտ մարդի հպարտութիւնը, որ այնքան արհամարհանքով էր վերաբերում քաղաքականութեան։

Նոր պատգամաւորի ժողովրդական յաջողութիւնը նուազեցնելու համար Բրէնան սկսեց քրքրել ամբսխի տարերքը։

—Ամենից առաջ նա բաղկացած է սինլեքորներից, զրանք են կազմում միշտ ամեն մի ժողովրդական ցոյցի, թափօրի հիմքը։ Աւելայրէք զրանց վրայ իսկական համակրողների փոքրաթիւ խումբը, ապա նրանց, որոնք վարակուել են ընդհանուրի ոգեւորութեամբ, հասարակ հետաքրքիրներին, որոնք միայն նոր լուրերի ետեւից ընկած՝ պատահաբար միանում են ընդհանուր շարժման, վերջապէս բոլոր նրանց, որոնք քուէարկած լինելով Ալվարի դէմ, այժմ երբ նա ընտրուեց, անցել են նրա կողմը։

Սակայն թափօրը քաղաքում պտոյտ անելուց յետոյ, վերադարձաւ «Ապագայի» խմբագրատան առաջ աւելի ստուար և ազմկալից, բայց նրա բնաւորութիւնը փոխուել էր. այժմ նա աւելի նախատում էր պարտեալին, քան փառաբանում էր յաղթողին։ Օգի մէջ խաղայնում էին թեփով լի մի սոսկալի խըրտուիլակ, որի մէջքին զրուած էր խոշոր տառերով. *ВРОСУУСЬ*։ Գաղի լոյսը երբեմն-երբեմն ընկնում էր այդ արձանագրութեան վրայ։

Մի քանի գողիւններից յետոյ, ամբողջ մօտեցաւ այն պատուհանին, որի առաջ կանգնած էր Ժակ Ալվարը։ Սա փորձեց սովորական խօսքերը.

— Ողջունում եմ ազատութիւնը և ռաբկաւարութիւնը։

Բայց նրա ճօճուն կոչը ոչ ոքի չը յուզեց. այն ժամանակ նա լի թըքերով ձայնեց.

— Ի խաչ հանէք Ֆրօսսարին։

Եւ այդ աղաղակը կատաղի ոգեւորութիւն առաջ բերեց ամբողջ մէջ։ Ժակը ծիծաղում էր. այդ տեսարանի մէջ նա նրկատում էր միայն իր իշխանութիւնը մարդկանց վրայ։ Այն աշխարհակալների նման, որոնք մեծացնում են իրանց նուաճումները երեւակայութեամբ, նա այժմեան յաղթութիւնը համարում էր պատուանդան ապագայի վառքի համար։ Բենգալիան կրակը, որ վառուեց պատուհանի տակ, լուսաւորում էր նրա դէմքը կարմիր լոյսով։ Յաջողութիւնը զօրեղացնում էր նրա առնական գեղեցկութիւնը։ Այդ բոպէին ոչ մի բան նրան անհարին չէր թւում. նա իր մէջ ոյժ էր զգում ամբողջ աշխարհը տակն ու վրայ անելու։

Լուսիէն Հալանդը նայում էր նրան և մտածում փողոցի ժողորի մէջ.

— Նրան բնական է թւում այս վայրի գաղանի բերանը գցել մի մարդ։ Դուրս է գալիս, որ նա իրաւունք ունի ատել ամբողջ, շոյելով նրան։ Վերջին ընտրութիւններին, ամբողջ յաղթանակով պտույրեց Ֆրօսսարին. այսօր, դա նրան նախատում է հրապարակաբար մի կոպիտ խրտուխլակի ձեւով։ Տգէտ և անգութ ժողովուրդ։

Ամբողջ առաջ էր ընթանում, կատաղի մոնչիւններ արձակելով.

— Ի խաչ հանէք Ֆրօսսարին։

— Ընթրենք, ասաց հրամանատար Տոյլարը։

— Գնանք, ասաց կոմս Ֆերրէզին Լուսիէնին։ Տալլուարը հեռու է. կառքս լծուած է հիւրանոցի բակում. ես ձեզ կը տանեմ մինչև Մենտօն։

Գնալուց առաջ Լուսիէնը դարձաւ Ժակին.

— Պէտք է իմաց տալ Մէրաններին քո յաղթութիւնը. գուցէ այժմ շատ ուշ է և անյարմար է անհանգիստ անել նըրանց։

Բայց նորընտիր պատգամաւորը չէր լսում նրան։ Ամբողջ ցոյցերը դեռ թնդում էին նրա ականջում։ Աննիի մասին մտածմունքը չքացել էր նրա մտքից։

Ընտրական մասնաժողովը ընթերցեց տառնց նոյն իսկ նկատելու ֆերրէզիի և Հալանզի բացակայութիւնը: Զօրեղ գինիների ազդեցութեան տակ, յաղթողների ու զենքերը տաքացաւ: Շուտով, ընդհանուր քաղաքականութեան վերաբերեալ ձուռմարտն ֆրազներին հետեւեցին ծերունիների զուարճալի անեկդոտները և երիտասարդների պատմութիւնները իրանց սիրային արկածների մասին:

Ժակը հազիւ բռնում էր չրթունքները: Ժողովրդի հետ միասին անհետացել էր փառքի քաղցր զգացումը: Հակառակորդի միջակութիւնը, յաղթութեան գոհակութիւնը պարզ երևում էին նրան և վիրաւորում: Նա սփսոսում էր այն տենդային ճիգերը, որ գործ էր դրել և մոքի անընդհատ լարումն, որ ունեցել էր ընտրողական շրջանի ընթացքում: Անդորրութիւնը, որ պէտք է այժմ հետեւէր, առաջուց ձանձրացնում էր նրան և այն երեք շարաթիւերը, որ պէտք է անցկացնէր մինչև ամուսնանալը, թւում էին նրան արդէն միակերպ և տաղտալի, աչքի առաջ ունենալով անցրած դործունեայ օրերը: Նա սփսոսում էր որ չէ կարող կոխ տալ և մի ուստումով անցնել այդ անջրպետը ու յանկարծ տեսնել իրան Պարիզում: Արդէն իսկ զանազան ծրագիրներ էր կազմում իր ապագայ քաղաքական դործունէութեան համար: Նա կ'աշխատի օգտակար ծանօթութիւններ կապել պատգամաւորների պալատում, շողորթութեամբ ոչնչութիւններ և տինդէտ սպասելով նպաստաւոր ժամին: Բռնելով այդպէս հաստատ գիրք, նա առաջին անգամ յոյս կը տայ իրան պալատին մի դործնական, պարզ, մեկին ճառ արտասանելով, մի ճառ, որ յաջողութիւն կ'ունենայ: Բացի դրանից նա յոյս ունէր կարեւոր տեղ բռնել և դատաստանական աշխատանքում, եռանդուն մասնակցութիւն ունեցող պարբերական մամուլի մէջ, որ դրաւում էր նրան, ինչպէս փաստաբանութիւնը, ամենօրեայ կռուի հեռանկարով: Նրա դործունէութեան համար բացւում էր մի լայն ասպարէզ և նա շտապում էր որքան կարելի է շուտով ոտք կոխել այդ ասպարէզի վրայ:

Պատկերացնելով իր աչքի առաջ այդ ապագան, նա մի նայուածք դարձրեց իր շուրջը և նկատեց ուրախ, բարեհոգի դէմքեր, տխրամած և նախանձոտ դէմքերի հետ միասին: Նա արհամարհանքով յետ դարձրեց աչքերը ուրիշ կողմ: Արդէն բարձրից էր նայում իր բախտի այդ աջակիցների վրայ և ուրախանում էր իր սեփական գերազանցութեան վրայ: Վախճանալով իրան հաւասարը գտնել այդ ընկերութեան մէջ, նա սկսեց որոնել Լուսիէնին, որի պայծառ և հեգնական միտքը երկիւղ էր ներշնչում նրան:

—Ո՞ւր գնաց պ. Հալանդը, հարցրեց նա:

—Մենտոն գնաց, ասաց մէկը:

Եւ Տայլարը արհամարհանքով աւելացրեց.

—Այդ պարիզցիները երբէք ոչինչ չեն ուտում:

Առաւօտեան ժամը երկուսին մասնաժողովը դուրս եկաւ խմբագրատնից: Մի քանի երիտասարդներ աւելի վաղ էին դուրս եկել և զնացել զանազան զուարճասիրական տեղեր: Ժակը բարկացաւ, տեսնելով, որ ելքը պառչածաւոր կերպով չէ կատարուում, ուստի և յետ մնաց մայօր Բարօի հետ, որ ուռած և փքուած, աւելի յարմար էր, Ժակի կարծիքով, ներկայ հանդիսաւոր բոլորին...

Պ. Ֆերրէզիի ձին զանդաղ առաջ էր գնում փողոցով, որ լցուած էր դատարկապորտ ամբոխով:

—Նայեցէք, ասաց Լուսիէնը, երբ կառքը մտաւ հրապարակը:

Հրապարակը զեռում էր մարդկանցով: Կենտրոնում, մի բարակ բոց էր բարձրանում. ստահակների մի խումբ չղթաց կաշմելով, շրջապատել էր այդ բոցը, կաքաւելով և աղաղակելով. «անկցի մրօստարը»: Նրանք այրում էին խրտուիլակը:

Կոմսը զայրացաւ:

—Ժողովուրդը վեհապետների ամենազգուշին է: Ես նրա ատելութիւնը նախամեծար եմ համարում քան նրա սէրը:

Լուսիէնը մտածում էր.

—Այո, ժողովուրդը կուրօքէն բաշխում էր իր սէրը և ատելութիւնը: Այս խեղճ Պրօստարը, որի պարզամտութիւնը մանրամասն ցոյց է տալիս մեզ պ. Մէրանը, լինելով մի ոչնչութիւն, անարժան է այն անէծքներին, որ նրան հաւասարեցնում են շատ մեծ մարդկանց հետ: Ամբոխին պէտք են այնպիսի զբաղողներ, ինչպէս Ալվարն է, որ հերթով շոյեն նրան և մտրակեն:

Անցնելով քաղաքապետութեան առջևից, որի գեղեցիկ ճակատը լուսաւորում էր լուսնի մահիկը:

—Տեսէք, ասաց Լուսիէնը, ցոյց տալով մատով իր ընկերին մի գէր մարդ, որ թաշկինակով սրբում էր ճակատի քրտինքը, և պաշտօնական գլխարկը բռնած ունէր ձեռքին:

Ապա ցած ձայնով նա աւելացրեց.

—Պրօստարն է. պաշտօնանկութիւնը շատ շուտ է սկսում:

Պարտեալը փախչում էր, լքուած ամենից: Նա փախչում էր քաղաքապետութիւնից ետեի մի դռնով, այն դռնով, որ առաջ բացում էր նրա կնոջ առաջ: Եղիելի, նուաստացած, վախելով հայհոյանքներից նա շտապում էր հասնել իր տունը: Առանց պատդամաւորական լիազօրութեան, նա կորցրել էր որ

և է նշանակութիւն. նա չէր համարձակուած նոյն իսկ պահել իր գլխին այն փեղոյրը, որ դրած. ունէր ընտրութիւնների ժամանակ և որն, նրա գաւառական տեսակէտով, իր պաշտօնի կարևոր ստորագրելիքն էր կազմում, մի և նոյն ժամանակ պարիզային ղեկի մարմնացումն:

— Լսեցէք, մրմնջաց կոմսն, նա իր ժամանակին գնաց:

Հարբածների մի խումբ, որի առաջնորդն էր քաղաքապետութիւնից վոնդուած մի սպասաւոր, գոռում էր վանդակապատի առաջ:

— Էյ, պրեֆէկտ, քո Ֆրոստարուհուդ վերադարձում են քեզ. յետ ընդունիր քո սիրուհուն:

Լուսիէնը չը կարողացաւ զսպել իրան:

— Ամօթալի է. չուտով հեռանանք այստեղից:

Կոմս Ֆերրէզին մտրակեց ձին: Շուտով նրանք մտան բայդաշտը և չնչեցին գիշերային թարմ օդը: Կառքի կարմիր լապտերները արձակում էին ճանապարհի երկու կողմը երերուն լոյս, որ ընկնում էր կամ ծառերի, կամ յանկապատերի, կամ քարակոյտերի վրայ: Չանձրացած լինելով ամբոխից, նրանց այժմ դուր էր գալիս առանձնութիւնը և լռութիւնը: Մրսկան կոմսը փաթաթուել էր շալերի և ծածկոյնների մէջ: Այդ օրը նրա մէջ զեղել էր լեզին մարդկութեան դէմ: Լիւսիէնը հետըզհետէ թօթափում էր իրանից զգուանքի այն ծանր զգացումն, որով նա տողորուած էր ամբողջ օրը:

— Պէտք է խզալ ժողովրդին, ասում էր նա ինքն իրան: Նա չը գիտէ ինչ է գործում, իրականապէս ոչ ոք հոգս չէ անում նրա մասին, ոչ ոք նրան չէ սիրում անկեղծօրէն: Նրան արբեցնում են խոստումներով, կերակրում են փքուն ճառերով և յետոյ զարմանում են տեսնելով նրա բարոյական սակաւարիւնութիւնը: Ի՞նչ ընտրութիւն կայ ժողովրդի առաջ. մի կողմից Ֆրոստարն է ներկայացնում նրան իր պղտոր ապուրը արմատական ծրագրի անունով, միւս կողմից Ալվարն է ներկայացնում իր հոտած արգանակը: Եւ սակայն պէտք է բացատրել ժողովրդին, թէ ինչպէս ժողովրդական կեանքը, յորդելով դէպի Պարիզը, չափազանց կենտրոնացել է, խտացել և ընկել վարչութեան իշխանութեան տակ, այնպէս որ այժմ ամեն բան կախուած է Պարիզից. պէտք է ապացուցանել նրան, թէ պետական կազմութեան մէջ, ինչպէս և ամեն մի մասնաւոր տան մէջ, անհրաժեշտ է պահպանել կարգին հետևողականութիւն: Լաւ կը լինէր կարգաւ առաջ մի փոքրաթիւ խմբի համար մի շարք պարզ և հանրամատչելի դասախօսութիւններ: Ռոտիհետն ռամկավարութիւնը արդէն կատար-

ուած իրողութիւն է, ուստի մնում է միայն կազմակերպել այդ մինչև այժմ անգիտակցական մնացած ոյժը՝ ի հարկէ, այդ բոլոր նախաձեռնութիւններից յետոյ գուցէ քեզ քարկոծեն կամ քո խրատելիակը այրեն, բայց զոնէ կ'իմանաս, որ այդ վարձատրութեան գու աւելի արժանացել ես, քան խղճուկ Ֆրոսսարը. զոնէ աշխատել ես բարիք գործել: Հայրս սիրում էր ժողովուրդը և մի և նոյն ժամանակ խորին զթաշարժութեամբ էր վերաբերւում նրան. զոնէ հետեւում նրան այս երկրորդ կէտում...

Սակայն կոմս Ֆերրէզին շարունակում էր իր մաղձը.

— Երբ ես մանուկ էի, պ. Հալանդ, ծնողներս մի խոհարարուհի ունէին, որ հաւերը զլխատելու արհեստի մէջ մեծ հմտութիւն էր ձեռք բերել: Մի օր նա խնդրեց ինձ այդ հաւերից մինի ոտը բռնել գլուխը կտրելու ժամանակ: Երբ ես մերժեցի ցոյց տալ նրա այդ օգնութիւնը, որովհետև զգուանք էի զգում այդ ահասկ զործողութիւնից, նա ասաց ինձ իրան յատուկ խստութեամբ. «այժմ զգւում ես, բայց յետոյ փառաւոր կերպով անուշ կ'անես, առանց զգուելու»: Այդ սպասուհու խօսքերի մէջ սիմբոլական ինչ որ մի բան կար: Մենք զղուանքով ենք վերաբերւում աղտոտ գործերին ընկերական կեանքի մէջ, բայց օգուտ ենք քաղում նրանցից: Մենք հանդուրժում ենք, որ բանուորները տանջուեն թշուառութիւնից, արտադրելով մեզ համար աւելորդ առարկաներ և զլանում ենք բացատրել նրանց այդ կէտը: Բայց անձնապէս մենք ոչինչ չունենք նրանց դէմ և նոյն իսկ մենք մի տեսակ կարեկցութիւն ենք զգում դէպի ներքանց, որն խիստ շոյական է մեր սրտին: Դա մի տարօրինակ թուլութիւն է, պ. Հալանդ: Տեսէք պ. Ալվարը. նա չի վախենայ բռնել հաւի ոտքը և օգնել՝ կտրելու նրա գլուխը. այդ կողմից նա գերազանցում է մեզ: Իսկ ես, ես համարձակ եմ միայն իմ մտածմունքներին մէջ. ես միշտ վախկոտ եմ եղել գործողութիւններին մէջ. մարող աչքերի տոանձնայատկութիւնն է այդ—միացնել մտաւորական ոյժը ֆիզիկական թուլութեան հետ...

Բայց Լուսիէնը ականջ չէր դնում նրան: Նա մտածում էր ժողովրդի անարդարութեան և թեթեւամտութեան մասին: Եւ պ. Ֆերրէզին, յոգնած իր շատախօսութիւնից, հազաւ և մըրմընջաւ.

— Կ'ուզենայի սպանել մի մարդի, բայց չեմ կարող...

Փաթաթութեամբ իր ծածկոցների մէջ, նա դողում էր և նրա աչքերը ատելութիւն էին ցոլացնում:

Մենտօնի իրանց տան տափաստանից Մէրանները տեսել էին ինչպէս զիշերային երկնքի վրայ փամփուշտները երկար

գիծ էին թողնում և ապա թափուում ոսկեշաղ անձրեւով: Ամբողջ գիշեր նրանք հսկում էին դահլիճում, որի բաց լուսամուտներից նրանք վայելում էին մոռյլ լճի և լուսաւորուած Աննէսիի տեսքը, շնչելով գիշերուայ զով օդը: Աննին, յուզուած, կանչել էր ծնողներին ցոյց տալու համար նրանց հրախաղուած թեան հետքերը:

— Կանգիդատները, ասում էր Մէրանը, պէտք է ընտրեն մի գոյն, ձիարչաւների ժօկէների նման: Հանգամանքների համեմատ կարելի էր այս կամ այն գոյնի հրախաղութիւն ստրքել: Այգպիսով ամեն մարդ կ'իմանար ընտրութիւնների հետեւանքները:

Նա ուեւայրեց.

— Ժակը ինձ խոստացել է, ընտրուի թէ ոչ, ուղարկել ինձ մի պատգամաբեր: Անշուշտ, նա իր խոստումը կը մոռանայ յաղթանակի ժամանակ, իսկ պարտութեան ժամանակ աւելորդ կը համարի պատգամ ուղարկելը: Մենք վաղը կ'իմանանք հետեւանքը: Գնանք և պառկենք քնելու:

— Գնանք պառկենք, կրկնեց կինը: Ապահովաբար, ժակը ընտրուած է:

— Ո՛հ, հայրիկ, մի բոսկէ էլ սպասէք, մրմնջաց աղերսարկու ձայնով Աննին, որ չէր կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ նշանածը կը մոռանայ իրան: Անպատճառ, այժմ, մէկը կը գայ:

— Ծանո լաւ, մի քիչ էլ համբերենք, յօժարեց պ. Մէրանը: Այս աղջկերբը երևակայում են, որ տղամարդիկ միշտ իրանց մասին են մոռնում, դու կը հիասթափուես, զաւակս, հարցրու մօրիցդ:

Աննին թիկն տուեց վանդակապատին: Նրա առաջ, լճի ջրերի և պարտէզի ծառերի ետեւը, բարձրանում էին լեռների կատարները, որ լուսնի ծագող մահիկը հազիւ լուսաւորում էր: Նա լսում էր արին խփուող թեթի ալիքները:

Նրա սրտի մէջ սկսեց մուտք գործել մի անորոշ տխրութիւն: Շրջապատող առարկաների թախծութեան մէջ, նա հասկանում էր մարդկային էակների առանձնութիւնը: Հողինները զուր տեղ որոնում և կանչում են միմեանց խորին խաւարի մէջ, ինչպէս այդ գիշերուայ խաւարը: Սէրը սահում է նրանց վրայով, առանց լուսաւորելու, առանց ջերմացնելու նրանց, ինչպէս սարերի կատարի ետեւ թաքնուած այդ լուսնի գունատ ճառագայթները: Սիրահարները չեն ճանաչում միմեանց, ապրելով միմեանց հետ, նրանք մնում են օտար մէկ մէկուց: Եւ

Նրա ապագայ ամուսինն ևս կ'ապրի նրա կողքին, ոչ մի անգամ չը նայելով նրա սրտի խորքը, այն սրտի, որ պատկանում է նրան և որը նա չը գիտէ դառնալով իր նշանածը: Աշխարհը այդպէս դալիս գնում է, առանց ուշադրութիւն դարձնելու փոքրիկ աղջիկների վշտի վրայ: Եւ սակայն սէրը՝ կեանքի գեղեցկութիւնն է, ինչպէս լոյսը երկրի գեղեցկութիւնն է: Նրան թւում էր, որ ժակը կորած է իր համար, անջատուած իրանից սառնամանային անհուն տարածութիւններով: Նրա մէջ մինչև անգամ փափագ ծագեց, որ ժակը պարտութիւն կրէ, որպէս զի ինքը կարողանայ դարմանել նրա գոռոզութեան վէրքերը: Կարեկցութիւն և գութ շարժուեց Աննիի մէջ թէ՛ դէպի ժակը և թէ՛ դէպի իրան:

Ժաննին բերեց մի շալ և գցեց քրոջ ուսերի վրայ: Նա նկատեց Աննիի դուռնատ դէմքը և մեղամաղձիկ աչքերը: Նա կամեցաւ հարց ու փորձ տնել. նրա չրթունքները պատրաստուում էին մի ծանր խօսք արտասանել, որովհետև նրա մանկական դէմքը այլափոխուել էր: Նա գրկեց Աննիին, ասելով.

—Քեզ չափազանց սիրում եմ. ինչո՞ւ գնում ես մեր մօտից...

—Ահա գալիս է մէկը, ասաց մանկատի աղջիկը, ընդհատելով քրոջը:

Եւ նրա տխրութիւնը չքացաւ իբրև մի վատ անուրջ: Լսուեց զանգակի ձայնը: Լիւսիէնը ներս մտաւ. Աննին նրան ընդառաջ:

—Նա ընտրուած է:

—Այո, ասաց երիտասարդը, ևս ցանկացայ հաղորդել ձեզ այդ լուրը:

Աննին նորից հարցրեց.

—Նա ի՞նչն է ուղարկել ձեզ, այնպէս չէ:

Խեղճ աղջիկը ժակին էր վերադրում այդ գիշերային այցելութեան միտքը: Նրան վիշտ չը պատճառելու համար, Լիւսիէնը պատասխանեց.

—Այո, ժակն է ուղարկել ինձ:

Բայց արտասանեց առանց ուրախութեան և առանց եռանդի: Փոքրիկ Ժաննին նայում էր նրան իր մեծ պայծառ աչքերով, որոնք շատ շուտ էին հասկանում:

Լիւսիէնը պատմեց մանրամասնութիւնները: Երբ նա պատմեց սիմբօլական խրտուիլակի դէպքը և Ծրօսասարի վախկան փախուստը, պ. Մէրանը՝ վշտացած, ասաց.

—Գիտէ՞ք, իմ սիրելի պ. Հալանդ, որ մի հարուածով դուք ջնջեցիք ամբողջ երեսուն անեկդօտ եւս բէպերտուարից: Ծակա-

տագիրը անհետկեթ է. նա տրադիկական վախճան է տալիս այն ընտրեալին, որին պաշտպանում էր վողէվիլը և որն ընթանում էր կեանքի մէջ կօմիկական մեծ ոյժով: Այժմ այլ ևս չեմ կարող զրուցել հիւրերին ճաշի վրայ անեկդօտներս:

Աննին, մտախոհ, ցնծում էր նշանածի յաղթութեամբ:

—Նրա բոլոր խոնջութիւնները վերջ կը ստանան. այժմ նա իմն կը լինի: Նա ստիպուած չի լինի մաս-մաս լինել իր պաշտօնի և իր սիրոյ մէջ: Նա ինձ կը հարցաքննի և ես ամբողջովին բաց կ'անեմ նրա առաջ սիրտս:

Նա մոռացել էր այն խորհրդաւոր դէմքը, որ ժամնին ցոյց տուեց ժակի պատգամաւորի գալուց առաջ, պատրաստուելով ինչ որ մի բան հաղորդել:

Ճանապարհ գնելով հիւրին, ալ Մէրանը ասում էր.

—Ճշմարիտ, չափ թանգ հատկից ինձ փօստաւորի պարտութիւնը. այժմ անյարմար է ինձ այլ ևս պատմել անեկդօտներ նրա մասին. ընկածին կոխ չեն տալիս:

Իր բուրակի ծառուղիով գնալով, Լուսիէնը մտածում էր.

—Աննին զեղեցիկ էր այս երեկոյ: Համակ սէր էր բուրում նրա դէմքը: Եւ սակայն որքան տանջանք է պատրաստում նրան կեանքը: Նա տալիս է իր կեանքը առանց ճանաչելու ոչ այս կեանքը, ոչ այն ամուսինը, որ ընտրել է: Եւ ճրտեղ պէտք է կարողանար ճանաչել նրանց: Նոյն իսկ նրա մաքրութիւնը ծածկում է նրանից չարը: Ժողովրդի նման, Աննին ևս ոչինչ չը դիտէ. ժողովրդի նման նա ևս չը տանջուի, հետամուտ լինելով երջանկութեան: Նա չարժում է զուլթս, ինչպէս և ժողովուրդը: Բայց ևս ոչինչ չեմ կարող անել նրանց համար:

Պր. Թարգմ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

(Եր ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Պարսկաստանի հայաբնակ օազիսներից մէկն էլ Նոր-Ջուղան է իր շուրջ ձգուած բաղնաթիւ հայ գիւղերով: Քանի որ «Մուրճը» սկսել է ծանօթացնել Պարսկաստանի զանազան մասերի հետ, աւելորդ չը համարուի և այս նկարագրութիւնը:

Նոր-Ջուղայի բնակիչների թիւը 1901 թուականի չնչադրութեան համաձայն՝ հասնում է՝ 524 տան (ընտանիքի), որոնց կարելի է բաժանել հետևեալ կերպով.

1) Քահանաներ, որոնք ձեռնադրուած են Հնդկաստանի և Ջաւայի վիճակների յոյսով, և որ 4—5 տարի փոխադրուի վիճակաւորուելով՝ վերադառնում են բաւական դուժարով: Քահանաների աշխատանքի թիւը հասնում է 22-ի:

2) Ուսուցիչներ, որոնց երկսեռ խմբի թիւը տղայոց «Կենտրոնական» և օրիորդաց «Ս. Կատարինեան» աղգային դպրոցներում հասնում է 23-ի, իսկ բողոքականների երկսեռ դպրոցներում մօտաւորապէս 35-ի:

3) Կալուածատէրեր, որոնք պարապում են այդեդործութեամբ և պարտիզպանութեամբ, սակայն ամառն երաշտից ստիպուած լինելով եղների միջոցով ջրհորներից ջուր հանել արմտիքը ջրելու համար, ենթարկուած են աւելորդ ծախքերի և հետեւաբար այնքան էլ չեն օգտուում, թողնելով դեռ այն, որ յաճախ որթերը բոլորովին ցրտահար են լինում:

4) Արհեստաւորներ, որոնք ընդհանրապէս պարապում են ոսկերչութեամբ, հիւննութեամբ, ժամադործութեամբ, դերձակութեամբ, կօշիկակարութեամբ և «չիրաչիութեամբ» (խմբիչքներ պատրաստել և վաճառել): Գտնւում են նաև բժիշկ, նկարիչ, քանդակագործ, քարտաշ, կտաւագործ *), դարբին և այլ արհեստաւորներ:

*) Ջուլհակութիւնը առաջ մեծ դեր է խաղացել Նոր-Ջուղայում, իսկ այժմ հստակ ի՞նչ մի քանի գործարաններ ճարուեն:

5) Վաճառականներ, որոնք առևտրական յարաբերութիւններ ունենալով Անգլիայի, Հոլլանդիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի, Բաղդադի և Պարսկաստանի այլ և այլ քաղաքների հետ, արտահանում են՝ նուշ, բամբակ, ափրոն, ծխախոտ, գինի, քաթերայ (խէժ), զառան մորթի, չոր մրգեղէն, գուլբայ, կաշի (ոչխարի, աղուէսի և կղաքիսի), զանազան դաճած կտաւիք և տեղական մանրուէք: Իսկ փոխարէնը ներմուծում են զանազան դաղեղէն (գլխաւորապէս չիթ և մահուղ), չիթեղէն, բիւրեղեղէն, խմիչք, նաւթ, չաքար, մետաղ և բազմատեսակ եւրոպական մանրուէք:

6) Գրագիրներ, որոնք ծառայում են ընդհանրապէս եւրոպական բանկային, հեռագրական և առևտրական հաստատութիւններում:

7) Զբիւհեք դասարկաւորչիկներ, որոնք ապրում են կամ Հնդկաստանում և Զաւայում գտնուող աղղականների տարեկան նպաստներով և կամ տեղական «Աղքատախնամ ընկերութեան» ամսական տուրքերով: Սրանց համար «ճակատի քրտինքով հաց ճարելը» վաղուց արդէն կորցրել է իր նշանակութիւնը:

Բոլոր բնակիչները ապրում են թրծուն և արեւաթուրծ աղիւսից կառուցուած տներում, որոնք օդի չորութեան պատճառով՝ հարկւրաւոր տարիներ են գլմանում:

Համարեա բոլոր տները, չը նայելով արտաքին անչքութեան, բաւական ճաշակով են պատրաստուած: Ունեն ամառուայ և ձմեռուայ առանձին բաժանմունքներ: Իւրաքանչիւր տուն ունի իր ծաղկանոցը և առանձին ջրհորը՝ առատ ախորժահամ և ականակիտ ջրով: Հին հոյակապ տներից ոմանք ունեն և՛ ընդարձակ աւաղաններ, իսկ շատերն էլ՝ պարտէզներ:

Հարուստի սրահից սկսած մինչև վերջին աղքատի բնակարանը, առանց բացառութեան, զարդարուած են զանազան պատկերներով և ըստ կարելոյն կահաւորուած:

Տներից շատերը ունեն իրանց առանձին գինեւոտներ, հրնձանն ու կարասները: Հմուտ ձեռքով պատրաստած գինին ոչնչով պակաս չէ եւրոպական ամենայարգի խմիչքից, եթէ չսանի, որ մաքրութեան և անարատութեան կողմից գեռ գուցէ դերազանցում էլ է:

Բոլոր տները ունեն իրանց թոնիրը և լաւաշ հաց թխելու անհրաժեշտ իրերը: Թխելու ծէսերը ճիշտ նման են Հայաստանում տիրող ծէսերին:

Առհասարակ, ուտոնին կեանքը դեռ պահպանում է նախնի նահապետական պարզութիւնը, սակայն Հնդկաստան իրթեւե-

կողմերի չնորհել՝ վերջերս նորաձևութիւնները սկսել են կամաց-կամաց մուտք գործել:

Ուշագրութեան արժանի է նոր-ջուղայեցիների ջերմ կրօնասիրութիւնը. առաջոյց դրան, նախկին կառուցած 24 եկեղեցիները, որոնց 12-ն են միայն մնացել մինչև մեր օրերը, և այն հաստատուն հաւատը, որով ընդգլխացան Շահ-սուլթան-Հօսէյնից յետոյ ծագած հազար ու մի տեսակ հալածանքներին, հարստահարութիւններին ու կապանքներին, և երբեք չը դաւաճանեցին այն խաչին, որ իշխում է բոլոր եկեղեցիների բարձրաբերձ գմբէթների և զանգակատների վրայ. մինչդեռ հայերի հետ տարագրուած վրայիք *) և հէնց տեղացի կրակապաշտ պարսիկները՝ ամենաթեթիկ նեղութեան իսկ չը գիմանալով՝ կրօնափոխ եղան և ձուլուեցին մահմեդական տարրի հետ: Մօտաւորապէս 30 տունը կաթոլիկ են, մի այդքան էլ բողոքական, իսկ մնացածը լուսաւորչական:

Առանց բացատրութեան, ամեն մի նոր-ջուղայեցի ծնողի առաջին և սեպուհ պարտքն է համարուած տղային կամ աղջկան, հինգ տարեկանից յետոյ, դպրոց ուղարկել, և աղի արտասուք է թափում, երբ ստիպուած է լինում, ապրուստ հայթայթելու համար, տղային հանել դպրոցից առանց «ուսուժն թամամելու»:

Նոր-ջուղայեցին հպարտութեան չափ վեհանձն է, բայց գիրադրգիւ է երկչու: Ծայրայեղ է թէ սիրոյ և թէ ատելութեան մէջ: Նա հիւրասէր է, չափազանց աշալուրջ է գործի մէջ և չը խաբուող: Այս յատկանիշը երևի ժառանգել է Սպահանի պարսիկներից, որոնց մասին Պարսկաստանի միւս քաղաքներումը մի առած կայ, թէ «սպահանցու մեռելիցն էլ պէտք է վախեցած»: Ընդունակութեան կողմից գովելի սրամտութիւն ունի, այնպէս որ Հնդկաստանի բոլոր եւրոպական դպրոցներում թէ դասի, թէ խաղի և թէ վարքի մէջ միշտ նոր-ջուղայեցի աշակերտներն են յառաջադէմ գտնուում:

Հնգկաստան կամ Զաւա գաղթող նոր-ջուղայեցին, երբ բախտի բերմամբ յաջողուել է նրան հարստութիւն ձեռք բերել, չէ զլացել թէ կենդանութեան ժամանակը նպաստել և թէ մեռնելիս մի օրոշ գումար կտակել իր հայրենիքում գտնուող որևէ հասարակական հիմնարկութեան, այնպէս որ Նոր-Ջուղայի բոլոր ազգային և եկեղեցական հաստատութիւնները նիւթապէս կախումն ունեն Հնդկաստանի և Զաւայի անձեռնմխելի գումարների տոկոսներից:

*) Մահմեդական վրացիների սերունդները այժմս բնակուած են Սպահանի մօտակայ գիւղերում և ոչնչով չեն տարբերուած բուն պարսիկներից:

Նոր-Ջուղան կարծես բարբառների ու տարազների ցուցահանդէս լինի: Հայերի մէջ տիրող բարբառն ընդհանուր առմամբ բաւական նման է արաբատեանին, սակայն տալիակ արտասանութեամբ և գրաբարախառն: Ծերունիներն խօսում են պարսկերէնախառն, Հնդկաստանի «ուսուալ»ները՝ անգլիերէնախառն, բողոքականների հետ առնչութիւն ունեցողները՝ թրքահայ բարբառով, իսկ նոր սերնդի սոսուար մասը, ազգ. երկսեռ զպրոցների չնորհիւ, գրական արաբատեան բարբառով:

Կանայք հազնուում են Հայաստանից բերած հին տարազով (այժմեան Ղարաբաղի), կէս եւրոպական և զուտ եւրոպական: Գլուխները ծածկում են Հին-Հայաստանի տարազով (այժմեան Ղարաբաղի), վրաց, պարսկական, եւրոպական և «բուշեռի» կոչուած անչնորհք ձևով: Դուրս ելնելիս ծածկում են սպիտակ սաւանով—չարսաւով, իսկ վերջերս պարսիկներից մտել է և սև ծածկոցի գործածութիւնը: Տղամարդիկը հազնուում են հին ու նոր պարսկական, կիսաեւրոպական և զուտ եւրոպական տարազներով. զլուխներն էլ ծածկում են նոյնպէս տարբեր ձևերով, այն է Ղարաբաղի և բազմատեսակ պարսկական և եւրոպական տարազներով: Սակայն նոր գերունգը, թէ՛ օրիորդները և թէ՛ տղաները, հազնուում են կէս եւրոպական ձևով:

Տասնեակ տարիներ առաջ, Հնդկաստանում և Ջաւայում գտնուող մի քանի նոր-Ջուղայեցիների ձեռք բերած հոչակը և առասպելական հարստութիւնը, վաղուց ասիւթ է տուել բոլոր նոր-Ջուղայեցիներին, զգուանքով վերաբերուել զէպի հայրենիքում ունեցած համեստ պարագմունքը և գիմել Հնդկաստան պանդիրաութեան: Հետեւաբար, հէնց այս հանդամանքն է միակ պատճառը, որ Շահաբասի ժամանակուայ հայերի ձեռքում և՛ զած արհեստները և առեւտուրը կամաց-կամաց անցել և անցնում են պարսիկների ձեռքը, այնպէս որ յաճախ հայերի սեփական խանութներն ու կրպակները պարսիկներից են վարձուում: Իսկ նոր-Ջուղայեցուն մնացել է միայն՝ կամ անձամբ Հնդկաստան գաղթել և կամ որդուն այնտեղ ուղարկելով՝ աչք անկել, մինչև որ ուսումն աւարտէ և մի պարագմունք ձեռք բերելով կարողանայ մի քանի յետ դցած ռուսիներով կերակրել իրան:

Հնդկաստանը նոյն դերն է խաղում Նոր-Ջուղայի համար, ինչ որ երբեմն Պօլիսը թիւրքաց Հայաստանի: Կարծես մի հասարակական պահանջից, մի կարևոր անհրաժեշտութիւնից, մի հոգևոր ու սեպուն պարտականութիւնից զրդուած՝ նոր-Ջուղայ-

եցի զօրեղ և առոյգ արհեստաւորը թողնում է իր առօրեայ պարէնը հայթայթելու պատուաւոր պարապմունքը, զրաւ դնում հայրենական ժառանգութիւն հասած օջախի մի մասը և՛ երեւակայական ոսկու և արծաթի կոյտերի փայլի շլացմամբ՝ ձեռք առնում պանդխտութեան գաւազանը:

—Ո՞ւր բարով,

—Հնդկաստան,

—Ո՞ւմ յուսով,

—Աստուած ողորմած այ:

Այսպէս անասելի նեղութիւններից ու տառապանքներից և պարտք վերցրած գումարը բոլորովին ծախսելուց յետոյ, մեր պանդուխտը վերջապէս համնում է ցանկալի Աւետեայ երկիրը, բայց փոխանակ մեղրի ու կաթի, հանդիպում է մի կարգ եղիպտական տանջանքների: Տեղական հանգամանքներին ու լեզուին անփորձ, անծանօթ և անտէր, անօգնական թափառում է երկար տարիներ Հնդկաստանի զանազան քաղաքներում, բայց ամեն տեղ մերժում և անյաջողութեան պատահում:

Օր ըստ օրէ վաղահաս ծերութիւնը մի կողմից, ընտանիքի կարօտը միւս կողմից, սրանց աւելացրու և կլիմայի վատառողջութիւնը, այս բոլորը հալ ու մաշ են անում մեր յուսախաբ բախտախնդրին: Երբեմն վճռում է վերադառնալ հայրենիք, բայց ինչ երեսով. երբեմն որոշում է մնալ պանդխտութեան մէջ, բայց ինչ յոյսով: Երկար այսպէս մնում է երերման ու տատանման մէջ, առանց մի վերջաւորութեան գալու: Դարձեալ հայրենիքի կարօտը և ընտանիքի բուռն սէրը յաղթում են բոլորին և մեր պարոնը սկսում է մուրացկանութեան ձեռք պարզել եկեղեցիներին և յայտնի հայ առևտրական տներին: Վերջապէս գէսից-գէնից մի քանի ոռփիւններ ձեռք զոյգելով ճանապարհւում է գէպի հայրենիք: Բոլոր ունեցածը ծախսելով և մի բան էլ ուղեկիցներից պարտք վերցրած՝ համնում է իր տունը, բայց «ինչ տեսնի լաւ, որ արդար լինի և ոչ անիրաւ» — բնակարանի մնացած մասն էլ զրաւ դրած, զաւակների մէկը կամ երկուսը «հայրիկ» կանչելով վախճանուած, դեռահաս կէնը պառաւած, իսկ ինքը առաջուան պարապմունքը շարունակելու անընդունակ և անկարող: Մեր բախտախնդիր պարոնը հիմա և միայն հիմա է հասկանում իր «սխալ հաշիւը»: Այս վերադարձողի վիճակն է, իսկ ինչ վերաբերում է պանդխտութեան մէջ մինչև ի մահ դեղերողի վիճակի մասին, ընթերցողին եմ թողնում երևակայել:

Ինչպէս որ չափահասների, նոյնպէս և փոքրիկների վրայ:

կարծես սրբազան պարտք է զրուած այցելել Հնդկաստանը, որպէս մահմեդականների պարտքն է ուխտագնացութիւնը իրանց մարգարէի գերեզմանին: Դեռ երեսուն չը ծնած մայրը ուխտում է, որ եթէ երեսուն տղայ լինի, կ'ուղարկէ Հնդկաստան, «զնայ մարդ զառնայ»: Իսկ երբ տղան հասնում է տասն տարեկանի, ծնողները 40—50 թուման պարտք են վերցնում, պատրաստութիւններ տեսնում և երկխային ճանապարհ գցում զէպի Կալիկաթա, որ «զնայ ուսում առնի և իր արեին ձէն տայ»: Այսպիսով Նոր-Ջուղայեցի ծնողը «զուրս ա զալիս պարտականութիւնից» և հանգիստ խղճով սպասում է միթիթարութեան: (Անշուշտ բացառութիւններ միշտ լինում են):

Ամեն զարնան և աշնան ճանապարհ են ընկնում մի քանի կարաւաններ, իւրաքանչիւրը բաղկացած լինելով 8—10 երեխաներից և 3—4 ծնողներից կամ խնամատարներից, որոնք անտանելի նեղութիւններ կրելուց յետոյ՝ Բուշեռի ժայռոտ լեռների և Պարսկային ծոցի վրայ, հասնում են ուխտատեղին՝ Կալիկաթա և ըստ սովորութեան դիմում «Սէյրաթխանայ» հիւրանոցը *): Քանի օրից յետոյ, իւրաքանչիւր ծնող, կամ խնամատար սկսում է սրան-նրան միջնորդ գցել «Հայոց Մարդասիրական ճեմարանի» վարչութեան, եկեղեցու երէցփոխանութեան և զանազան ազգեցիկ ու հարուստ անձերին, որպէս զի հետը տարած տղային տեղաւորէ մի դպրոցում: Շատ անգամ պատահում է, որ վեց ամիս կամ մի ամբողջ տարի, այսպէս մուրացկանութեամբ ասլրելով օր է մթնեցնում և ոչ ոք չէ գըտնըւում օգնութեան ձեռք կարկառող: Վերջապէս, հազար ու մի թուք ու մուր ուտելուց և հողին բերանը համնելուց յետոյ, եկեղեցին կամ մի բարեպաշտ տիկին գլխավոր խեղճ երեխային, տեղաւորում է նրան վերոյիշեալ հայոց միակ դպրոցում «ուսում առնելու»: Այս նախապաշարուած, հայատեսայ և օր աւուր յետադիմող դպրոցի մասին աւելորդ եմ համարում այստեղ ծանրանալ, յօդուածին նիւթից դուրս լինելուն պատճառով:

Այսպէս, Նոր-Ջուղայից տարեկան առնուաղը 50 մեծ և փոքր տղամարդիկ զաղթում են Հնդկաստան, զբանցից առ աւելին 5 հոգին «մարդ են դառնում» այնտեղ, 5 հոգին էլ վերադառնում տեղս, յաճախ թէ հոգեպէս և թէ ֆիզիկապէս ապականուած, անժուժկալ կեանքի չնորհիւ: Իսկ մնա-

*) Հնդկաստանի հարուստ հաջ խօջաններից մէկի կառուցած այս հիւրանոցը իր զրամազլիսով յատկացրած է բոլոր աղքատ հայ պանդոխտներին՝ որպէս ձրի ասպնջարան, մինչև երեք ամիս ժամանակ, երբեմն աւելի ևս:

ցեալ 40 հոգին տաք ու խոնաւ կլիմայի և կեանքի տարբեր պայմանների շնորհիւ ոչնչանում և իսպառ անյայտանում են:

Հազարաւոր այսպիսի դառն փորձերից յետոյ էլ, գետնոր-ջուղայեցին չէ կարողացել սթափել իր կորստաբեր ներհից և համոզուել որ, ոչ թէ Հնդկաստան զնալով կամ երկսայ ախտեղ ուղարկելով, այլ հէնց իրանց հայրենիքում ապրուստի միջոց հնարելով և ունեցածը ձեռքից չը տալով միայն կարող են դառնալ «մսկի չինողներ»:

ՏԻԳՐԱՆ ԱՐԳԱՐԵԱՆՑ

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ղ Ը *)

Պատմութիւն

Մ Ա Ք Ս Ի Մ Գ Օ Ր Կ Ի Յ Ի

... Գիշեր էր, երբ ես փողոց դուրս եկայ այն տնից, ուր, ինձ մօտիկ մարդկանց շրջանում, կարդում էի իմ առաջին, տպուած պատմութեան շրջանը: Ինձ չատ էին գովում նրա համար, և ես հաճելի կերպով յուզուած, դանդաղ քայլում էի ամայի փողոցով, առաջին անգամ իմ կեանքում զգալով այդքան լիօրէն ապրելու զուարճութիւնը:

Փետրուար ամսում էր այդ, գիշերը պայծառ էր, և անամպ երկինքը, աստղերով խիտ հիւսուած, չնչում էր զուարթ պարզութեամբ երկրի վրայ, որ ծածկուած էր հէնց նոր եկած ձիւնի չքնող զարդարանքով: Ծառերի ճիւղերը, ցանկապատերի վրայից կախուելով, ձգում էին իմ ճանապարհի վրայ ստուերների հրաշազարդ նկարներ, վառ և խնդալի պսպղում էին ձիւնի բերեղեղները լուսնի կապոյտ ու փաղաքշող փայլի մէջ: Ոչ մի տեղ չէր երևում ոչ մի կենդանի էակ, և իմ ոտերի տակ ձիւնի ճոճոցը միակ ձայնն էր, որ խանդարում էր այդ պայծառ, ինձ համար յիշատակելի գիշերուայ հանդիտաւոր լուսութիւնը... Ես մտածում էի.

— Լսւ է մի բան լինել երկրի վրայ մարդկանց մէջ! Եւ երեւակայութիւնը, չը խնայելով վառ գոյներ, նկարում էր ինձ իմ ապագան...

— Այո, դուք հիանալի մի բան էք գրել!.. Այդ—իրողութիւն է!—ասաց մէկը մտախոհ կերպով իմ մէջքի յետեւից:

Ես ցնցուեցի յանկարծախիտութիւնից և յետ նայեցի:

Փոքրիկ, մուգ հագնուած մի մարդ հասաւ ինձ և քայլեց

*) Գրուած է 1898 թ.

ինձ հաւասար, ներքինից վերև նայելով իմ երեսին և ժպտալով սուր ժպիտով: Նրա մէջ ամեն ինչ սուր էր, հայեայքը, այտոսկրները, ծնօտը էսպանիօլ մօրուքով. նրա ամբողջ փոքրիկ, չոր կազմուածքը աչք էր ծակում իր տարօրինակ անկիւնաւորութեամբ: Նա գնում էր թեթև և մի տեսակ անձայն, կարծես սահում էր ձիւնի վրայ: Ես նրան չէի տեսել այնտեղ, ուր կարգում էի, և, հասկանալի է, որ զարմացած էի նրա բացականչութեամբ: Ո՞րտեղից և ո՞վ է նա:

— Դուք... ևս լսում էիք? — հարցրի ես:

— Այո, հաճութիւն ունեցայ:

Խօսում էր նա տնօր ձայնով: Նրա շրթունքները բարակ էին, փոքրիկ սև բեղերը իրանցով չէին ծածկում նրանց ժպիտը, որ չէր անհետանում և անախորժ տպաւորութիւն էր թողնում, որովհետև ես զգում էի, որ նրա յետևից ծածկուած է ինչ-որ կծու և ինձ համար ոչ նպաստաւոր միտք: Բայց ես չափազանց լաւ էի տրամադրուած, որպէս զի երկար կտեղ առնէի իմ ուղեկցի այդ դիժը դիտելու վրայ, ուստի ստուերի նման արագ անցնելով իմ աչքերում այդ դիժը շատ շուտով անհետացաւ իմ ինքնագոհութեան պարզութեան առաջ: Ես գնում էի նրա հետ կողք կողքի և սպասում էի, թէ ինչ կ'ասի, ծածուկ յուսալով, որ նա կ'աւելացնի այդ երեկոյ իմ զգացած հաճելի բոպէներէ քանակը: Մարդ ազահ է, որովհետև ճակատադիրը չափազանց սակաւ է ժպտում նրան քաղցրութեամբ:

— Լաւ է, չէ, զգալ իրան ինչ-որ բացառիկ մի բան? — հարցրեց իմ ուղեկիցը:

Ես նրա հարցի մէջ առանձին ոչինչ չը լսեցի և չտապեցի համաձայնուել նրա հետ:

— Խէ, խէ, խէ. — կծու ծիծաղեց նա, ջղաձգութեամբ շփշփելով իր բարակ ճկուն մատներ ունեցող փոքրիկ ձեռները:

— Է, դուք ուրախ մարդ եք եղել... — չորութեամբ ասացի ես, վերաւորուած նրա ծիծաղից:

— Այո, ես ուրախ մարդ եմ, — ժպտալով հաստատեց նա և շարժեց գլուխը: — Եւ յետոյ ես շատ հետաքրքրուող եմ... Ես միշտ ուզում եմ իմանալ. ամեն բան իմանալ — այդ իմ մշտական ձգտումն է և հէնց այդ է իմ մէջ պահպանում զուարթութիւն և համարձակութիւն: Ահա և այժմ ես ուզում եմ իմանալ թէ ի՞նչ արժէ ձեզ ձեր աջողութիւնը:

Ես նայեցի նրա վրայ և ակամայից պատասխանեցի նրան.

— Մօտ մի ամիս աշխատանք... կարելի է, մի քիչ աւելի...

— Ահա — փութկոտութեամբ յարեց նա... — մի քիչ աչ-

խատանք, ապա մի մասնիկ կենսական վորձի, որ միշտ մի բան արժէ... Բայց այնուամենայնիւ այդ թանգ չէ, երբ այդ գնով դուք ձեռք էք բերում զխտակցութիւն, որ ահա որոշ մօմէնտում մի քանի հազար մարդիկ ապրում են ձեր մտքով, կարգաւով ձեր երկը: Եւ ապա ձեռք են բերւում յոյսեր, որ, կարելի է, ժամանակով... խէ, խէ... և երբ դուք կը մեռնէք... խէ, խէ, խէ... Այդ բոլորի համար կարելի է աւելի տալ, նրա- նից աւելի, որքան դուք տուիք մեզ—դորդ չէ?

Նա կրկին ծիծաղեց իր կցկտուր, կծու ծիծաղով, խորա- մանկ կերպով չափելով ինձ սուր, սև աչքերով: Ես ևս նայեցի նրա վրայ վերեւից ներքեւ և, վիրաւորուած, սառնութեամբ հարցրի նրան.

—Ներեցէք... հում հետ ես հաճոյք ունեմ զրուցելու:

—Ես ո՞վ եմ: Դուք գլխի չէք ընկնում: Իսկ ես առայժմ չեմ ասի ձեզ, թէ ով եմ... Միթէ ձեզ համար մարդու անուն իմանալը աւելի կարեւոր է, քան իմանալ այն, ինչ նա ասաց ձեզ:

—Ի հարկէ, ոչ... Բայց այդ բոլորը... տարօրինակ է... —պատասխանեցի ես:

Նա չը գիտեմ ինչու համար զիպաւ վերակուիս թեկն և, կամացուկ ծիծաղելով քթի տակ, ասաց.

—Է, թող տարօրինակ լինի,—ինչո՞ւ մարդ երբեմն թոյլ չը տայ իրան դուրս գալ հասարակի և սովորականի չըջանա- կից... Եւ եթէ դուք հակառակ չէք այդ անելու—եկէք պարզ խօսենք: Երեւակայէք որ ես—ընթերցող եմ... մի ոմն տարօրի- նակ ընթերցող, որ շատ հետաքրքրուող է և կը ցանկար իմա- նալ, ինչի համար և ինչպէս է չինւում գիրքը... ձեզնից, օրի- նակ: Եկէք ուրեմն խօսենք:

—Օ, ինչբեմ!—ասացի ես..., —ինձ հաճելի են... այդ- պիսի հանդիպումներ և... և խօսակցութիւններ ամեն օր չեն հնարաւոր:—Բայց ես արդէն ատում էի նրան, որովհետեւ այդ բոլորը անախորժ էր դառնում: Ես մտածում էի. ի՞նչ է սա ուղում: Եւ ինչո՞ւ ես թոյլ տամ ինձ այդ փողոցային հանդի- պումին՝ ինձ անծանօթ մարդու հետ, ինչ որ զիսպուտի բնաւո- րութիւն յատկացնել:

Սակայն, այնուամենայնիւ ևս դանդաղ գնում էի նրան կից և աշխատում էի իմ երեսի վրայ արտայայտել ուշադրութիւն դէպի իմ ուղեկիցը: Այդ, ես յիշում եմ, դժուարութեամբ էր աջողում ինձ: Բայց, այնուամենայնիւ իմ մէջ զեռ շատ կար զուարթ տրամադրութիւն, ես չէի ուղում վիրաւորել այդ մար- դուն՝ մերժելով խօսել նրա հետ և վճռեցի հետեւել ինքս ինձ:

Լուսինը փայլում էր երկնքում մեր յետեւից, և մեր ստուերները ընկած էին մեր սոքերի տակ: Մի մութ բիծ կալմելով, նրանք սողում էին մեր առջեւից մայթով, իսկ ես նայում էի նրանց վրայ և դգում էի իմ մէջ մի ինչ-որ բանի յղացում, որ ինչպէս և այդ ստուերները, մութ էր և անըմբռնելի և, ինչպէս այն ստուերները, նոյնպէս իմ առջեւ էր:

Իմ ուղեկիցը մի բոպէ լուց և ապա խօսեց իր խոհերին տէր մարդու վստահութեամբ:

—Ոչինչ չը կայ կեանքի մէջ աւելի կարեւոր և հետաքրքրաւիան, քան մարդկային զործողութիւնների շարժառիթները... Ղարդ չէ?

Ես նշան արի գլխով:

—Դուք համաձայն եք!.. Դէ եկէք պարզասիրտ խօսենք... բայց մի թողէք պարզասիրտ խօսելու գէպը, քանի որ դեռ ջահէլ եք...

—Տարօրինակ մարդ!—մտածեցի ևս և, հետաքրքրուած նրա խօսքերով, հարցրեցի նրան, քմծիծաղ.

—Բայց ինչպէս այդ անել այդպէս... միտնդամից? Եւ ինչի մասին խօսել?

—Իսկ ինչո՞ւ գնալ դանդաղ, երբ կարելի է նպատակին հասնել մի ոտիւնով.—արագութեամբ պատասխանեց նա, նայելով երեսիս և հին ծանօթ ընտանիութեամբ բացականչեց.

—Եկէք խօսենք զրականութեան նպատակների մասին!

—Լաւ... թէև, ինձ թւում է, արդէն ուշ է...

—Օ! ձեզ համար դեռ ուշ չէ!...

Ես կանգ առայ, զարմացած այդ խօսքերից,—նա արտասանեց նրանց այնպիսի լուրջ վստահութեամբ... և նրանք հնչում էին ինչպէս այլաբանութիւն: Ես կանգ առայ, կամենալով մի ինչ որ բան հարցնել նրանից, բայց նա, բռնելով ձեռքիցս, կամաց և օտիպողական կերպով առաջ տարաւ, ասելով ինձ.

—Կանգ մի առնէք, որովհետև ինձ հետ դուք լաւ ճանապարհի վրայ եք... Բաւական են առաջաբանները! Սոսցէք

—Ինչ է ուզում զրականութիւնը... դուք նրան ծագայում եք, դուք պէտք է այդ գիտենաք:

Իմ զարմանքս աճում էր ի փնաս իմ ինքնազսպութեան: Ի՞նչ է ուզում ինձանից այդ մարդը. Ով է նա:

—Լսեցէք,—ասացի ևս,—համաձայնութեցէք, որ այն ամենը ինչ կատարւում է մեր մէջ...

—Ունի իր բաւականաչափ հիմքը,—հաւատացէք ինձ!

Ախր աշխարհում ոչինչ չի կատարում առանց բառականապես հիմքի... Դէ չուտ արեք զնանք, բայց ոչ զէպի առաջ, այլ զէպի խոր...

Անտարակոյս, այս տարօրինակ մարդը հետաքրքրական էր, բայց նա ինձ զայրացնում էր: Ես կրկին անհամբեր շարժում գործեցի զէպի առաջ. նա ինձ հեռեւում էր և հանդարտութեամբ ասում ինձ.

—Ես ձեզ հասկանում եմ, ձեզ համար դժուար է այս վայրկեանում բնորոշել այն նպատակը, որ հետապնդում է զբաղանութիւնը: Փորձեմ ես անել այդ...

Նա չունէ քաշեց և ապա ժպտալով նայեց կրեսիս.

—Դուք կը համաձայնէք ինձ հետ, եթէ ես ասեմ, որ պրականութեան նպատակն է—օգնել մարդուն հասկանալ ինքն իրան, բարձրացնել նրա հաւատը զէպի ինքը և զարգայնել նրա մէջ ձգտում զէպի ճշմարտութիւնը, մաքառել վատթարի դէմ մարդկանց մէջ, կարողանալ գտնել լուր նրանց մէջ, պարթեյնել նրանց հոգիներում ամօթ, ցասում, արիւնթիւն, անել ամեն բան նրա համար, որ մարդիկ դառնան ազնուաբար ուժեղ և կարողանան սղեւորել իրանց կեանքը զեղեցկութեան սուրբ սղով: Ահա իմ բանաձեւը. նա, ի հարկէ, լիակատար չէ, սխեմատիկ է... Լրացրէք նրան այն ամենով, ինչ կարող է սղեւորել կեանքը, ասացէք—դուք համաձայն եք ինձ հետ?

—Այո, այդ այդպէս է...—ասացի ես:—Ընդունուած է կարծել, որ, ընդհանրապէս, զբաղանութեան նպատակն է—ազնուացնել մարդուն... Այդ այդպէս է...

—Ահա ինչ մեծ գործի էք դուք ծառայում!—ազդու կերպով ասաց այդ մարդը... և կրկին նա ծիծաղեց իր կծու ծիծաղով. —Խէ, իէ, իէ!

—Սակայն, ինչո՞ւ եք այդ ամենը ասում.—հարցրի ես, ձեւացնելով, իբրեւ թէ նրա ծիծաղը ինձ չէ զիպչում:

—Բայց ինչպէս եք դուք կարծում: Ասացէք պարզաւորաւ...

—Պարզասրտութեամբ ասած...—սկսեցի ես, մտքումս որոնելով կծու խօսք, և լռեցի: Ի՞նչ է նշանակում բացայայտ խօսել: Այս մարդը յիմար չէ, նա պէտք է իմանայ, թէ որքան նեղ են մարդկային պարզասրտութեան սահմանները և թէ ինքնասիրութիւնը որքան զիմացկուն է նրանց պահպանում: Նայելով իմ ուղեկցի զէմքին, ես զգացի ինձ խոր վիրաւորուած նրա ժպիտով—նրա մէջ այնքան հեղնութիւն և սուր արհամարհանք կար! Մէկ էլ ես զգում էի, որ սկսում եմ կրկնել

կրել ինչ-որ բանից և այդ երկիւղը ստիպում է ինձ թողնել, հեռանալ նրանից:

—Յտետութիւն!—չորութեամբ ասացի ես, թեթեւ կերպով բարձրացնելով գլխարկս:

—Ինչո՞ւ—յաճաճայն բացականչեց նա:

—Ես չեմ սիրում կատակներ, երբ նրանց մէջ չը կայ չափ ու սահման:

—Եւ գնացէք... Ձեր գործն է... բայց իմացէք, եթէ դուք այժմ ինձ թողնէք գնաք, մենք այլ ևս երբէք չենք հանդիպի:

«Երբէք» խօսքը նա ընդգծեց, և նա հնչեց իմ ականջներում ինչպէս յուղարկաւոր զանգի հարուած: Ես ատում եմ այդ խօսքը և վախենում նրանից. նա միշտ երեւում է ինձ ծանր և սառ, կարծես իբրեւ մի մուրճ, որ ճակատագրից նախասահմանած է մարդկանց յոյսերը ջախջախելու համար:

—Ինչ է ձեզ հարկաւոր,—թախիծով և չարութեամբ հարցրի ես:

—Նստենք այստեղ,—կրկին քմիծաղ, արտասանեց նա և, ամուր բռնելով ձեռիցս, քաշեց նրան ներքեւ:

Այդ վայրկեանում մենք նրա հետ քաղաքային այգու ծառուղիում էինք, ակացիաների և սիրինդների սառցոտապատ ճիւղերով չրջապատուած: Լուսնով լուսաւորուած, նրանք կախուէր էին օդում իմ գլխի վերեւ և, ինձ թուում էր, թէ սառցով և եղեամով ծածկուած այդ կոշտ ճիւղերը թափանցում են կուրծքիս մէջ և կաշւում սրտիս:

Շուարած, յանկարծակիի բռնուած իմ ուղեկցի արարքից, ես նայում էին նրան և լռում:

—Այդ հիւանդի մէկն է,—մտածում էի ես, ցանկալով քաջալերել ինքս ինձ և բացատրել ինձ նրա գործողութիւնները: Բայց նա չը գիտեմ ինչպէս իմացաւ իմ միտքը:

—Դու կարծում ևս որ ևս աննօրմալ եմ? Թող այդ: Այդ ափսիսի փուչ և փնսսակար միտք է! Ծածկուելով նրանով, ինչքան յաճախ մենք հրաժարւում ենք մարդուն հասկանալուց միայն ափս պատճառով, որ նա մեզինից աւելի ուրոյն է, և որքան անդրդուելի է այդ միտքը պահպանում ու բարդացնում մեր փոխադարձ յարաբերութիւնների ախուր անլիութեանը!

—Օ, ի հարկէ...—ասացի ես, աւելի և աւելի վախ զգալով իմ մէջ այդ մարդու սուաջ...—Բայց ներեցէք, ևս կը գնամ... Արդէն ժամանակն է...

—Գնա, —ասաց նա, թօթուելով ուսերը:—Գնա... բայց

իմացիր, որ դու շտապում ես կորցնել զինքդ... խէ, խէ...—Նա բաց թողեց ձեռքս, և ես թողի հեռացայ նրանից։

Նա մնաց այգում, սարի վրայ, որ իջնում էր դէպի Վօլ-դան, սարի վրայ, որ ծածկուած էր ձիւնի սպիտակ սաւանով և կտրտուած շաւիղների մութ ժապաւէններով։ Նրա առաջ բացւում էր լայն տեսարան դէպի դետի միւս կողմում ընկած լուռ, տրտում հարթութիւնը։ Այդ մարդը մնաց այգում, նըստեց նստարաններից մէկի վրայ և սկսեց նայել դէպի ամայի հեռատանը, իսկ ես գնում էի ծառուղու երկայնութեամբ և զգում որ չեմ հեռանալ նրանից, բայց այնուամենայնիւ գնում էի։ Գնում էի և մտածում. պէտք է դանդաղ դնալ թէ արագ, որպէս զի ցոյց տամ նրան, այն մարդուն, որ նստել էր այնտեղ, իմ յետեւից, թէ որքան չնչին նշանակութիւն ունի նա ինձ համար։

Ահա նա կամայ սուլում է ինչ-որ ծանօթ բան... Ես դիտեմ, որ այդ մի ծիծաղաշարժ և տխուր երգ է կոյրի մասին, որ իր վրայ էր վերցրել կոյրերի առաջնորդի դերը։ Ինչո՞ւ է նա հէնց այդ երգը սուլում,—մտածեցի ես։

Եւ միայն այժմ ես հասկացայ, որ այն բոպէից, երբ ես պատահեցի այդ փաբրիկ մարդուն, ևս մտայ քայտով և օտարոտի զգացումների մի մութ շրջանի մէջ։ Ո՞ւր է իմ հոգու մի քիչ առաջ ունեցած հաւասար և բաւական տրամադրութիւնը։ Նա պատուեց ինչ-որ կարեւոր ու ծանր մի բանի սպասողութեան մշուշով, որ ահա, ահա կը գայ ու կուլ կը տայ ամենը, ինչ լաւ բան որ տուեց ինձ իմ աջողութիւնը, բոլոր երազանքները և յոյսերը, որ յարուցեց իմ հոգու մէջ աջողութիւնս։

Ի՞նչպէս դու կը լինես առաջնորդ,

Երբ ճանապարհին ես անծանօթ։

Յիշեցի ես այն երգի խօսքերը, որ սուլում էր այն մարդը։

Ես չուռ եկայ և նայեցի նրան։ Յենուելով մի ձեռքով ծնկան և զլուխը դնելով ափին, նա նայում էր ինձ, սուլում, և նրա սի բեղերը շարժւում էին լուսնից լուսաւորուած երեսին։ Մի ինչ-որ ճակատագրական զգացմունքից մղուած՝ ես վճռեցի յետ դառնալ։ Արագ մօտեցայ ես նրան, նստեցի կողքին և ասացի նրան, առանց յուզուելու, բայց ջերմաբին.

—Լսէք, եկէք պարզ խօսենք...

—Այդ անհրաժեշտ է մարդկանց համար,—նշան արաւ նա գլխով։

—Դուք, ես զգում եմ, ունէք ձեր ձեռքում ինձ վրայ ազ-

զելու ինչ-որ սյօ է, ակնյայտնի է, ինձ ինչ-որ ասելու բան ունէք... այո?

—Վերջապէս, դու գտար քո մէջ արիութիւն լսելու!—բացականչեց նա ծիծաղով. բայց այժմ այդ ծիծաղը ակելի մեղմ էր և մինչեւ անգամ ուրախութեան մօտ ինչ-որ չնշտ լսուեց:

—Դէ խօսէք!—ասաց նա,—և եթէ կարող էք, խօսէք առանց տարօրինակութիւնների...

—Օ, լաւ! Բայց համաձայնուիր, որ ակնարարօրէն տարօրինակութիւնները անհրաժեշտ էին նրա համար, որ գէպի ինքնա գրաւեմ քո ուշադրութիւնը? Այժմ բխանում է ուշադրութիւնը գէպի հասարակը և պարզը, որոնք թոււմ են չափազանց սառ և կոշտ, իսկ տաքացնել և մեղմացնել մի բան մենք չենք կարողանում—մենք ինքներս սառն ենք և կոշտ: Մենք, կործես, նորից ուղղում ենք ցնորքներ, զեզեցիկ մտայածին բաներ, երազանք և տարօրինակութիւններ, որովհետև մեր ստեղծած կեանքը աղքատ է գոյներով, ազօտ է, ձանձրալի! Իրականութիւնը, որը մենք մի ժամանակ այնպէս ջերմ կերպով ցանկանում էինք վերաշինել, կտրեց և ճիւղեց մեզ... Արդ ի՞նչ անել: Փորձենք, դուրէ մտայածինը և երևակայութիւնը կ'օգնեն մարդուն բարձրանալ ոչ երկար ժամանակով երկրի վրայ և նորից նշմարել նրա վրայ իր տեղը, որ կորցրել էր: Կորցրածը, ուղիղ չէ? Ախր մարդը այժմ երկրի թագաւորը չէ, այլ կեանքի ստրուկը, նա կորցրել է հպարտութիւնը իր անդրանկութեամբ, ծունկ չոքելով իրողութիւնների (ֆակտերի) առաջ, այդպէս չէ? Իր ստեղծած իրողութիւնից նա եղբակցութիւններ է անում և ասում իրան. ահա անհաղթադէմի օրէնքը! Եւ ենթարկուելով այդ օրէնքին, նա չի նկատում որ ինքն իրան խոչընդոտ է դնում գէպի կեանքի աղատ ստեղծագործութիւնը տանող ճանապարհի վրայ, արդե՞ք է դնում մաքառման իր սեփական իրաւունքի համար՝ քանզի, որպէս զի յետոյ ստեղծել է նա այլ ևս չի էլ մաքառում, այլ միայն յարմարւում է... Ինչի՞ համար մաքառի նա: Ո՞ւր են նրա այն իրէպնները, որոնց համար նա պատրաստ լինէր նահատակուել: Ահա ինչու այդպէս աղքատ ու տաղտալի է կեանքը, ահա ինչու ուժասպառ եղաւ մարդու մէջ ստեղծագործութեան ոգին... Ոմանք կուրօրէն վնասում են ինչ-որ բան, որ, թեւաւորելով միտքը, վերականգնեցէր մարդկանց հաւատը գէպի իրանց անձը: Յաճախ դնում են ոչ այն կողմը, ուր պահուած է բոլոր յուստեհականը, մարդկանց միացնողը, ուր ապրում է Աստուած... Նրանք, որոնք սխալւում են գէպի ճշմարտութիւնը տանող ճանապարհների մէջ—կը կորսուեն! Թող, չը պէտք է նրանց խանգարել, չարժէ նրանց ամոքուել—մարդիկ

չատ կան! Կարևոր է ձգտումը, կարևոր է հոգու ցանկութիւնը՝ գտնել Աստուծուն, և եթէ կեանքի մէջ կը լինեն հոգիներ՝ համակուած ձգտումով առ Աստուած, Նա կը լինի նրանց հետ և կը կենդանացնի նրանց, որովհետև Նա է անվերջ ձգտում դէպի կատարելութիւն... Այդպէս չէ?

—Այո, —ասացի ևս, —այդ այդպէս է...

—Սակայն դու գիտես և համաձայնուել, —նկատեց իմ խօսակիցս, կծու քմծիծաղով: Ապա նա լսեց, նայելով դէպի հեռուն: Ինձ թուաց որ նա երկար է լռում, և ես անհամբերութեամբ հառաչեցի: Այն ժամանակ նա, չը դարձնելով ինձ վրայ հեռում թափառող իր հայեացքը, հարցրեց.

—Ո՞վ է քո Աստուածը:

Մինչ այդ հարցը նա խօսում էր մեղմ ու փաղաքշօրէն, և ինձ հաճելի էր լսել նրան. ինչպէս և բոլոր մտածող մարդիկ, նա մի քիչ տխուր էր, ինձ մօտ էր, ևս հասկանում էի նրան, և իմ երկիւղածութիւնը նրա առաջ մարում էր: Եւ ահա յանկարծ նա դնում է ճակատադրական մի հարց, որին այնքան դժուար է պատասխանել մեր ժամանակուայ մարդուն, եթէ այդ մարդը չիտակութեամբ է վերաբերւում դէպի ինքը: Ո՞վ է իմ Աստուածը: Եթէ ես գիտենայի այդ!

Ես ճշդուած էի այդ մարդու հարցից, և իսկապէս ո՞վ իմ տեղ կը պահպանէր հոգու ամփոփութիւնը: —Իսկ նա նայում էր ինձ վրայ իր սուր աչքերով, շարունակ ժպտում էր և սպասում իմ պատասխանին:

—Քո լռութիւնը շատ է երկար մի մարդու համար, որ կարողանար տալ ինձ պատասխան: Գուցէ դու ինձ մի բան կ'ասես, եթէ ես քեզից հարցնեմ ահա ինչի մասին. դու գրում ես և հազարաւոր մարդիկ կարդում են քեզ. իսկապէս ինչ ես դու քարոզումս: Եւ դու մտածել ես արդեօք ուսուցանելու իրաւունքիդ մասին?

Կեանքումս առաջին անգամ էի ես այդպէս ուշադրութեամբ նայում իմ խորքայ թող չը մտածեն, որ ես բարձրացնում կամ նուաստացնում եմ ինձ նրա համար, որպէս զի դէպի ինձ գրաւեմ մարդկանց ուշադրութիւնը, —աղքատներից ուղտրմութիւն չեն խնդրում: Ես գտայ իմ մէջ ոչ քիչ բարի զգացմունքներ և ցանկութիւններ, ոչ քիչ այն, ինչ սովորաբար լաւ են կոչում, բայց այդ բոլորը միացնող զգացմունք, կեանքի բոլոր երևոյթները պարփակող ներգաշնակ և պարզ միտք ես չը գտայ իմ մէջ: Իմ հոգում շատ կայ ատելութիւն, նա միշտ առկայծում է այնտեղ... Երբեմն բորբոքւում է բարկութեան

վառ բոցով. բայց առաւել ևս շատ են իմ հոգում տարակուսանքներ: Երբեմն դրանք այնպէս ցնցում են իմ խելքը, այնպէս ճնշում սիրտը, որ երկար ժամանակ ես ապրում եմ ներքուստ ամայացուած... Ոչինչ չի դրդում ինձ դէպի կեանքը, սիրտս սառն է, մեռածի նման, միտքս քնած, իսկ երևակայութիւնս ճնշում են կօշմարներ: Եւ այդպէս, կոյր, համր և խուլ, ապրում եմ երկար օրեր և գիշերներ, ոչինչ չը ցանկանալով, ոչինչ չը հասկանալով. ինձ թւում է այն ժամանակ, որ ես արդէն դիակ եմ և միայն ինչ-որ տարօրինակ թիւրմացութեամբ դեռ ևս թաղուած չեմ հողի մէջ: Այդպիսի գոյութեան սարսափը աւելի ևս ուժեղանում է ապրելու անհրաժեշտութեան դիտակցութեամբ, որովհետեւ մահի մէջ աւելի ևս քիչ կայ իմաստ, աւելի շատ է խաւարը... Անշուշտ մահը խլում է մինչև անգամ և ատելու հաճոյքը...

Ի՞նչ եմ, իսկապէս, ես քարոզում, ես—այնպէս, ինչպէս որ կամեւ եւ ի՞նչ կարող եմ ես ասել մարդկանց: Այն, ինչ արդէն վաղուց ասել են նրանց և միշտ ասում են, ինչ գտնում է լըսողներ, բայց չի դարձնում մարդկանց աւելի լաւ? Բայց ունեմ արդեօք իրաւունք քարոզելու այդ գաղափարները և հասկացողութիւնները, եթէ ես ինքս, նրանցով դաստիարակուած, յաճախ այնպէս չեմ վարում, ինչպէս նրանք հրամայում են? Եթէ ես գնում եմ հակառակ նրանց, արդեօք այդ նշանակում է, թէ նրանց ճշմարիտ լինելու համոզմունքը իմ անկեղծ համոզմունքն է, որ դրուած է իմ «կոս»-ի հիմքում?... Արդ ի՞նչ պէտք է պատասխանեմ ես այն մարդուն, որ նստած է իմ կողքիս: Իսկ նա արդէն յոգնել էր սպասել իմ պատասխաններին և նորից սկսեց խօսել.

—Ես չէի դնիլ քեզ այդ հարցերը, եթէ չը տեսնէի, որ քո փառասիրութիւնը դեռ ևս ժամանակ չի գտել ոչնչայնելու քո պատիւը: Դու քաջութիւն ունես լսել ինձ... դրանից ես եզրակացնում եմ, որ քո սէրը դէպի քո անձը խելացի է, որովհետեւ ուժեղացնելու համար այդ սէրը դու չես փախչում նոյն իսկ տանջանքներից: Դրա փոխարէն ես կը թեթեացնեմ իմ առաջ քո զրութեան ծանրութիւնը և կը խօսեմ քեզ հետ իրրև մեղաւորի և ոչ ոճրագործի հետ:

—Մի ժամանակ մեր մէջ ապրում էին խօսքի մեծ վարպետներ, կեանքի և մարդկային հոգու նուրբ գիտալիներ, մարդիկ, որոնք համակուած էին՝ գոյութիւնը կատարելագործելու անընկճելի ձգտումով, համակուած էին խոր հաւատով դէպի մարդը: Նրանք ստեղծում էին գրքեր, որոնց երբեք չի դիպչիլ մոռացութիւնը, որովհետեւ այն գրքերի մէջ դրօշմուած են յա-

ւիտենական ճշմարտութիւններ, նրանց էջերից բուրում է անշիջիլի գեղեցկութիւն: Այդ գրքերի մէջ գծագրուած պատկերները կենդանի են, որովհետեւ ներշնչուած են ոգևորութեան ուժով, իսկ վարմունքների և կեանքի կանոնների օրինակները յաւիտեան կը մնան անսասան: Այն գրքերում կայ և արիութիւն, և բոցավառ բարկութիւն, նրանց մէջ հնչում է և սէր անկեղծ ու ազատ, և ոչ մի աւելորդ խօսք չը կայ նրանց մէջ: Այնտեղից, գիտեմ ես, դու վերցնում էիր անունդ քո հոգու համար... Բայց, երևի, վատ էր սնւում քո հոգին, որովհետեւ քո ասածները ճշմարտութեան և սիրոյ մասին հնչում են կեղծ ու երեսպաշտ, կարծես թէ դու բռնաբարում ես քեզ, երբ խօսում ես դրա մասին: Դու, լուսնի նման, լուսաւորում ես ուրիշի լուսով, քո լոյսը տխուր-աղօտ է, նա բազմացնում է ստուերներ, բայց թոյլ է լուսաւորում և ոչ ոքի չի տաքացնում: Դու աղքատ ես որպէս զի տաս մարդկաց մի իսկապէս արժեքաւոր բան, իսկ այն, ինչ որ նրան տալիս ես, դու տալիս ես ոչ բարձր հաճոյքի համար՝ հարստացնել կեանքը մտքի և խօսքի գեղեցկութեամբ, այլ առաւել շատ նրա համար, որ քո դոյութեան պատահական իրողութիւնը բարձրացնես մինչև մարդկանց համար անհրաժեշտ և զարմանալի մի երևոյթի (ֆենօմենի) աստիճան: Դու տալիս ես նրա համար, որ աւելի վերցնես կեանքից և մարդկանցից: Դու աղքատ ես ընծաների համար, դու ուղղակի վաշխառու ես—տալիս ես քո փորձի փշրանքը՝ զէպի քեզ ուշադրութեան տոկոսներով: Քո գրիչը թոյլ կերպով բզրզում է իրականութիւնը, կամացուկ շուռ ու մոռն է անում կեանքի մանրունքները, և նկարագրելով սովորական մարդկանց սովորական զգացմունքները, դու բաց ես անում նրանց մտքին, դուցէ, և շատ ստոր ճշմարտութիւններ, սակայն կարող ես դու ստեղծել նրանց համար թէկուզ փոքրիկ, հոգին վեհացնող պատրանք?... Ոչ! դու հաւատացած ես, որ օգտակար է փորփորել սովորականութեան աղբակոյտի մէջ և չը կարողանալ դռնել այնտեղ ոչինչ, բացի տխուր, փշրաչափ ճշմարտութիւններ, որոնք միայն այն են հաստատում, որ մարդ չար է, յիմար, անաղնիւ, որ նա լիակատար կերպով և միշտ կախուած է բազմաթիւ արտաքին պայմաններից, որ նա անզօր է և ողորմելի մենակ և ինքն իրան: Գիտես, քեզ, դուցէ, արգէն աջողուեց համոզել նրան այդ բանում! Որովհետեւ նրա հոգին սառցրած է և խեղճ բութ... Ի հարկէ! Նա նայում է իր նկարագրի վրայ քո գրքերում, իսկ գրքերը, մանաւանդ եթէ նրանք դրուած են այն վստահութեամբ, որ այնքան յաճախ դուք ընդունում էք տա-

դանդի տեղ, միշտ յայտնի չափով հիպնոսում են մարդուն: Նա նայում է իր վրայ քո նկարագրութեան մէջ և, տեսնելով, որքան ինքը վատ է, չի տեսնում՝ աւելի լաւ լինելու հնարաւորութիւն: Միթէ դու կարողանում ես ցոյց տալ նրան այդ հնարաւորութիւնը: Միթէ դու կարող ես այդ անել, երբ դու ինքդ... բայց ես կը խնայեմ քեզ նրա համար, որ, խելով ինձ, դու, ես զբոսում եմ, մոռածում ես ոչ նրա մասին, թէ ինչպէս պատասխանել ինձ և արդարացնել քեզ: Այդպէս! Որովհետեւ ուսուցիչը, եթէ նա ազնիւ է, միշտ պէտք է լինի ուշադիր աշակերտ: Դուք բոլորդ, մեր օրերի կեանքի ուսուցիչներդ, աւելի շատ էք խելում մարդկանցից, քան տալիս նրանց. որովհետեւ դուք հէնց միայն պակասութիւնների մասին էք խօսում, միայն պակասութիւններն էք տեսնում: Բայց մարդու մէջ պէտք է լինեն և արժանաւորութիւններ. չէ որ ձեր մէջ կան արժանաւորութիւններ? Իսկ դուք, ինչով էք դուք զանազանում սովորական, հասարակ մարդկանցից, որոնց նկարագրում էք այնքան խստասիրտ և բժախնդիր կերպով, ինքներդ ձեզ համարելով քարոզիչներ, առաքինութեան յաղթանակի համար՝ արատներ մերկայցնողներ? Սակայն նկատում էք արդեօք, որ առաքինութիւնները և արատները՝ դրանց որոշելու համար գործ դրած ձեր ջանքերի չնորհիւ՝ միայն խճճուած են, ինչպէս թելերի երկու կծիկներ, սեւ և սպիտակ, նրանք մերձաւորութիւնից դառել են մոխրագոյն, մէկը միւսից ընդունելով նախասկզբնական գոյնի մասը? Եւ հազիւ թէ ձեզ Աստուած լինի երկիր ուղարկած... Նա կ'ընտրէր աւելի ուժեղներին, քան դուք: Նա կը վառէր նրանց սրտերը բուռն սիրոյ կրակով դէպի կեանքը, դէպի ճշմարտութիւնը, դէպի մարդիկ, և նրանք կը բոցավառէին մեր գոյութեան խաւարում, ինչպէս նրա զօրութեան և փառքի ճրագներ... Իսկ դուք մխիւսում էք, ինչպէս սատանայի յաղթանակի ջահեր, և ձեր մուխը, մտնելով խելքերի և հոգիների մէջ, թունաւորում է նրանց անվստահութեան թոյնով դէպի իրանց: Ասա. ինչ էք ուսուցանում դուք:

Ես զգում էի իմ թուշի վրայ այդ մարդու տաք շունչը և չէի նայում նրա վրայ, վախենալով հանդիպել նրա հայեացքի հետ: Նրա խօսքերը ընկնում էին իմ ուղեղս, ինչպէս հրային կաթիլներ, և դրանից ես ցաւ էի զգում... Ես սարսափով հասկանում էի թէ ինչպէս դժուար է պատասխանել հասարակ հարցերին... Եւ չը պատասխանեցի նրան:

—Ուրեմն, ես, ջանադիր ընթերցողս այն ամենի, ինչ գրւում ես դու և ինչ գրում են քեզ նմանները, հարցնում եմ. ինչի համար էք դուք գրում: Իսկ դուք շատ էք գրում... Ու-

դուժ էք դուք արդեօք արթնացնել բարի զգացմունքներ մարդկանց սրտերում! Բայց սառը և անոյժ խօսքերով դուք այդ չէք անի, ոչ! Եւ դուք ոչ միայն չէք կարող տալ կեանքին մի նոր բան, դուք նաև հինը տալիս էք կոլորոտած, ձխլոտած, կերպարանադուրկ ձեւով: Կարդալով ձեզ, ոչինչ չես ուսանում, ոչ մի բանի համար, բացի ձեր տեղ, չես ամաչում: Բոլորը սովորական բաներ, սովորական մարդիկ, սովորական մտքեր, անցքեր... Իսկ երբ կը խօսեն խռովայոյզ ոգու մասին և ոգու վերածնութեան անհրաժեշտութեան մասին: Ո՛ւր է կոչը ստեղծագործելու կեանքը, ո՛ւր են արիութեան դասերը, ո՛ւր հոգին թեւաւորող աշխոյժ խօսքերը:

... — Դու կարող ես ասել ինձ. կեանքը չի տալիս այլ պատկերներ, բացի այն, որ մենք ենք վերարտադրում: Մի խօսի՛ր այդպէս, որովհետեւ խօսքին տիրապետելու բախտ ունեցող մարդու համար ամօթալի և խայտառակ է խոստովանել սեփական անզօրութիւնը կեանքի առաջ և խոստովանուել որ ինքը չէ կարող նրանից բարձր կանգնել: Իսկ եթէ դու կանգնած ես կեանքի հետ մի մակերեւոյթի վրայ, եթէ դու անկարող ես քո երեւակայութեան ոյժով ստեղծել այնպիսի պատկերներ, որոնք չը կան կեանքում, բայց որոնք անհրաժեշտ են նրան ուսուցանելու համար—ինչ օգուտ քո աշխատանքի մէջ և ինչով կ'արգարայնես դու քո կոչումը: Կուտակելով մարդկանց յիշողութիւնը և ուշադրութիւնը նրանց կեանքից վերցրած լուսանկարչական պատկերների աւլածքով, մի կեանքի, որ աղքատ է անցքերով, մտածիր, արդեօք չես մնասում դու մարդկանց? Որովհետեւ, խոստովանուելիք, դու չես կարողանում այնպէս նկարագրել որ կեանքի քո պատկերը յարուցանէր մարդու մէջ վրէժխնդրական ամօթ և այրող ցանկութիւն ստեղծելու գոյութեան այլ ձեւեր... Կարող ես արդեօք դու արագացնել կեանքի զարկերակի բաբախումը, կարող ես դու ներշնչել նրա մէջ եռանդ, ինչպէս այդ անում էին ուրիշները:

Իմ տարօրինակ խօսակիցը մի րոպէ կանգ առաւ, իսկ ես լռելեայն մտածում էի նրա խօսքերի մասին:

— Ես իմ շուրջ տեսնում եմ շատ խելօք մարդիկ, բայց քիչ կան նրանց մէջ աղնիւ մարդիկ, սակայն նրանք էլ որ կան, ջախջախուած են և հիւանդ հոգով: Եւ չը դիտեմ ինչու միշտ այսպէս եմ դիտում ես. որքան լաւ է մարդ, որքան մաքուր և չիտակ է նրա հոգին, այնքան պակաս է նրա մէջ եռանդը, այնքան հիւանդոտ է նա, և ծանր նրա համար ապրելը: Մենակութիւնը և կարօտը—այդ տեսակ մարդկանց վիճակն է: Բայց

ինչքան և շատ լինի նրանց մէջ լաւագոյնի մասին կարօտը, նրանց մէջ չը կայ ոյժ ստեղծելու համար այդ լաւագոյնը: Արդեօք այն պատճառով չեն նրանք այնպէս ջախջախուած և ողորմելի, որ նրանց իր ժամանակին չի տուած եղել հոգին իրախուսող խօսքով՝ օգնութիւն?...

Մէկ էլ,—նորից սկսեց խօսել իմ տարօրինակ զրուցակիցը,—կարո՞ղ ես դու մարդու մէջ յարուցանել կենսութախ ծիծաղ, որ մաքրում է հոգին: Տես, ախր մարդիկ բոլորովին յետ են սովորել լաւ ծիծաղելուց: Նրանք ծիծաղում են չար կերպով, ծիծաղում են ստորաքաշ, յաճախ ծիծաղում են արտասուքի միջով, բայց երբէք չես լսի նրանց մէջ ուրախ, անկեղծ ծիծաղ, այն ծիծաղը, որ պէտք է դրդեցնէր մեծերի կուրծքը, որովհետեւ լաւ ծիծաղը առողջացնում է հոգին... Մարդու համար ծիծաղելը անհրաժեշտ է, չէ որ ծիծաղը—նրա սակաւաթիւ առաւելութիւններից մէկն է կենդանիներից: Կարո՞ղ ես դու յարուցանել մարդկանց մէջ որ և է այլ ծիծաղ բացի կշտամբանքի ծիծաղից, բացի ցածհոգի ծիծաղից քեզ, մարդուդ, վրայ, որը միայն նրանով ես ծիծաղելի, որ խղճուկ ես: Հասկացիր, քարոզելու իրաւունքդ պէտք է ունենայ բաւականաչափ հիմք քո ընդունակութեան մէջ՝ յարուցանել մարդկանց մէջ անկեղծ զգացմունքներ, որոնցով, ինչպէս մուրճերով, կեանքի որոշ ձևեր պէտք է ջախջախուեն և աւերուեն նրա համար, որ ստեղծուեն ուրիշները աւելի ազատները, անձուկների փոխարէն: Բարկութիւն, ատելութիւն, արիւթիւն, ամօթ, զղուանք և, վերջապէս, չար յուսահատութիւն—ահա լծակներ, որոնցով կարելի է քարուքանդ անել ամեն ինչ երկրի վրայ: Դու կարո՞ղ ես ստեղծել այդպիսի լծակներ: Դու կարո՞ղ ես շարժման մէջ գցել նրանց: Որպէս զի իրաւունք ունենալ ուղղել խօսքը ժողովրդին, պէտք է հոգու մէջ ունենալ կամ մեծ ատելութիւն դէպի նրա պակասութիւնները, կամ մեծ սէր դէպի ժողովուրդը՝ նրա տանջանքների համար, իսկ եթէ քո հոգում չը կան այդ զգացումները, եղի՞ր համեստ և շատ մտածիր առաջ, քան մի բան ասել...

Արդէն լուսանում էր, բայց իմ հոգու վրայ աւելի և աւելի էր թանձրանում խաւարը: Իսկ այն մարդը, որի համար իմ հոգում գաղտնիքներ չը կային, բոլորը ասում էր: Երբեմն իմ մէջ բռնկում էր մի միտք.

—Տեսնես արդեօք մարդ է նա?

Բայց, կու՞ր գնացած նրա խօսքերով, ես չէի կարող մտածել այդ հանելուկի մասին, և նորից իմ ուղեղի մէջ, ինչպէս ասեղներ, ցցւում էին նրա խօսքերը:

—Կեանքը այնուամենայնիւ աճում է թէ լայնութեամբ և թէ խորութեամբ, թէև նա աճում է դանդաղ, որովհետև ձեզ մօտ չը կայ ոյժ և կարողութիւն արագացնել նրա ընթացքը։ Աճում է կեանքը, և իւրաքանչիւր օրով մարդիկ սովորում են հարցնել, Ո՞վ է նրանց պատասխանելու։ Պէտք է որ դուք, ինքնավոչ-առաքեալներդ, այդ անէիք։ Սակայն հասկանում էք դուք կեանքը այնքան, որ բացատրէք նրան ուրիշներին։ Սակայն հասկանում էք դուք ձեր ժամանակուայ պահանջները, նախազգում էք դուք սպառնալիքները, և ի՞նչ կարող էք ասել դուք՝ յուզելու համար մարդուն, որ փչացած է կեանքի ապականութեամբ, որ լքուած է ոգով։ Նա լքուած է ոգով, նրա հետաքրքրութիւնը կեանքով դաժ է, արժանապատուութեամբ ապրելու ցանկութիւնը նրա՛մէջ հասնում է, նա ուզում է ապրել սոսկ, ինչպէս խոզը, և—դուք լսում էք.— նա արդէն լրբաբար ծիծաղում է, ևրբ արտասանում են իդէալ խօսքը. մարդ դառնում է միայն ոսկորների մի կոյտ, ծածկուած մսով և հաստ կաշով, այդ դարչելի կոյտը շարժում է ոչ ոքին, այլ ստոր կրքերը։ Նա պահանջում է ուշադրութիւն—չուտ! օգնէք նրան ապրել, քանի նա դեռ մարդ է! Սակայն ի՞նչ էք կարող դուք անել յարուցանելու համար նրա մէջ կեանքի ծարաւը, քանի որ դուք միայն մրմնջում էք, ախ ու վախ էք քաշում կամ անտարբերութեամբ նկարագրում էք, ինչպէս է նա կազմալուծուած? Կեանքի վրայ բուրում է փոման հոտը, վախկոտութիւնն ու ստրկահոգութիւնը ծծուել են սրտերի մէջ, ծուլութիւնը կաշկանդել է մտքերն ու ձեռները փափուկ կապանքներով... Ի՞նչ էք դուք մտցնում ապականութեան այդ քաօսի մէջ։ Որքան դուք բոլորդ մանր էք, որքան ողորմելի, որքան շատ էք դուք! Օ, եթէ երևար խիստ և սիրող մի մարդ բոցաւառ սրտով և հզօր, համապարունակ խելքով! Անարդ լուծեան հեղձուկի մէջ կը հնչէին մարգարէական խօսքերը, ինչպէս զանգի հարուածներ, և դուցէ, շարժուէին կենդանի մեռելների արհամարհելի հոգիները!...

Այդ խօսքերից յետոյ նա երկար լուռ էր։ Ես չէի նայում նրա վրայ։ Չեմ յիշում ի՞նչն էր աւելի իմ մէջ—ամօթը թէ զարհուրանքը?

—Ի՞նչ ես կարող ասել դու ինձ.—հնչեց անկարեկից հարցը։

—Ոչինչ...—պատասխանեցի ես։

Եւ կրկին լուծիւն էր։

—Իսկ ի՞նչպէս այժմ դու պիտի ապրես։

—Չը գիտեմ...—պատասխանեցի ես։

—Ի՞նչ ես դու խօսելու:

Ես լռութեամբ անցի:

—Ձը կայ լռութիւնից գերիվեր իմաստութիւն!...

Տաժանելի էր լռութիւնը նրա այդ խօսքերի և այն ծիծաղի արանքում, որ լսուեց լռութիւնից յետոյ: Նա ծիծաղում էր հրճուանքով, ինչպէս մի մարդ, որին վաղուց արդէն գէպք չէր պատահել այդպէս ազատ և անուշ ծիծաղելու: Իմ սիրտս արիւնով էր լաց լինում այդ անիծեալ ծիծաղից:

—Խէ, խէ, խէ! Եւ այդ դու ես—կեանքի ուսուցիչը: Դու, որին այդքան հեշտ է չփոթել? Այժմ, ես կարծում եմ, դու հասկացար թէ ո՞վ եմ ես, չէ, խէ, խէ, խէ... Եւ իւրաքանչիւրը ձեզնից, ծերունի ծնունդ պատանիներից, նոյնպէս կը չփոթուէր, եթէ ուզենար գործ ունենալ ինձ հետ: Միայն նա, ով իրան պատել է ստութեան, լրբութեան և անամօթութեան զրահով, չի դողալ իր խղճի դատաստանի առաջ... Ահա ուրեմն որքան ես դու ուժեղ, փոքրիկ հարուած և դու կ'ընկնես: Ասա ինձ, դէ ասա ինձ մի բան քեզ արդարացնելու համար, չրիւր այն, ինչ ես ասացի! Ազատիր քո սիրտը ամօթից և ցաւից: Եղիւր գէթ մի վարկեան ուժեղ և ինքնավստահ, և ես յետ կը վերցնեմ այն, ինչ որ չպրտեցի քո երեսին: Ես կը խոնարհուեմ քո առաջ... Տոյց տուր ինձ քո հոգու մէջ գէթ մի այնպիսի բան, որ օգնէր ինձ քեզ ուսուցիչ ճանաչել! Ինձ հարկաւոր է ուսուցիչ, որովհետեւ ես մարդ եմ. ես մոլորուել եմ կեանքի խաւարում և որոնում եմ հիւր գէպի լոյս, գէպի ճշմարտութիւն, գեղեցկութիւն, գէպի նոր կեանք,—ցոյց տուր ինձ ճանապարհներ! Ես մարդ եմ—Ատիւր ինձ, խփիր, բայց գէպի կեանք հանիր ինձ իմ անտարբերութեան տիղմից! Ես յանկանում եմ աւելի լաւ լինել, քան կամ.—Ի՞նչպէս այդ անել: Սովորեցրու!

Ես մտածում էի, արդեօք կարող եմ ես, կարող եմ բաւարարութիւն տալ այն պահանջներին, որ մարդ, ըստ իր իրաւունքի, դնում է իմ առաջ? Կեանքը մարում է, բիւրաւոր տարակուսանքներ աւելի և աւելի ամուր են չըջապատում մարդկանց խելքը և պէտք է ելք գտնել: Ո՞ւր է ճանապարհը: Մի բան ես գիտեմ—ոչ գէպի բախտաւորութիւնը պէտք է ձգտել, ինչի համար է բախտը: Բախտի մէջ չէ կեանքի իմաստը, և ինքնաբաւականութեամբ գոհացած չի լինի մարդ—նա այնուամենայնիւ դրանից բարձր է: Կեանքի իմաստը գէպի նպատակները մղող ձգտումների գեղեցկութեան և ոյժի մէջ է, և պէտք է, որ գոյութեան իւրաքանչիւր վարկեան ունենար իր վեհ նպատակը: Այդ հնարաւոր կը լինէր... բայց ոչ կեանքի հին չըջա-

նակներում, որոնց մէջ բոլորի համար այնքան նեղ է և ուր չը կայ մարդու ոգու համար ազատութիւն...

Եւ նա նորից ծիծաղում էր, բայց արդէն կամաց, մի մարդու ծիծաղով, որի սիրտը մաշուած է խոհերով:

— Ինչքան շատ մարդիկ են եղել երկրի վրայ, բայց ինչքան քիչ արձաններ են կանգնեցրուած նրա վրայ! Ինչո՞ւ պէտք է այդպէս լինէր: Բայց անէծքի մատնենք անցեալը— նա չափազանց շատ է յարուցանում նախանձ դէպի ինքը! Ուզովհետեւ ներկայումս բնաւ չը կան այնպիսի մարդիկ, որոնք մահից յետոյ թողնէին իրանց յետեւից որ և է հետք երկրի վրայ: Նիրհում է մարդ... և ոչ ոք չի զարթեցնում նրան, Նիրհում է նա և դառնում անասուն: Նրան հարկաւոր է մտրակ և սիրոյ հրավառ փաղաքշանք մտրակի հարուածից յետոյ: Մի վախեցիր ջաւ պատճառելու նրան. եթէ դու սիրելով ես խփում, նա կը հասկանայ քո հարուածը և կ'ընդունի նրան, ինչպէս արժանացած: Իսկ երբ նա ջաւ կը զգայ և ամօթ իր համար, դու ջերմաջերմ փաղաքշիր նրան— և նա կը վերածնուի... Մարդիկ? Դրանք դեռ ևս երեխաներ են, թէև երբեմն նրանք ապշեցնում են իրանց արարքների չարագործութեամբ և մտքի խեղաթիւրումներով: Եւ նրանք միշտ կարօտ են դաստիարակման, խնամատարութեան, սիրուելու, մշտական հոգատարութեան՝ նրանց հոգու համար թարմ և առողջ սննդի մասին... Իսկ դու գիտես սիրել մարդկանց?

— Սիրել մարդկանց?— Կրկնեցի ևս հարցը տարակուսանքով, որովհետեւ, ստոյգը, չը գիտեմ, արդեօք սիրում եմ ես մարդկանց: Պէտք է լինել անկեղծ— ես այդ չը գիտեմ: Ով կ'ասի. իր մասին ահա ես սիրում եմ մարդկանց! Ուշադրութեամբ իրան հետեւող մարդը երկար կը մտածի այդ հարցի վրայ, նախ քան կը վճռի ասել՝ սիրում եմ: Բոլորեքեան գիտեն թէ որքան հեռու է մեզ իւրաքանչիւրից մեր մերձաւորը:

— Դու լուում ես? Ողջ մէկ է— ես հասկանում եմ քեզ անգամ անխօսիդ... Եւ ես գնում եմ...

— Արդէն?— Կամաց հարցրի ես: Որովհետեւ որքան և անոնք էր նա, ես ինքս ինձ համար աւելի ևս ահռելի էի...

— Այո, ես գնում եմ... Դեռ շատ անգամ ես կը գամ քեզ մօտ: Սպասիր!

Եւ նա գնաց:

Ինչպէս գնաց: Ես այդ չը նկատեցի: Նա գնաց արագ և անշշուկ, ինչպէս որ անհետանում են ստուերները... Իսկ ես դեռ երկար մնում էի պարտիզում նստարանի վրայ, չը զգա-

լով դրսից ցուրտ և չը նկատելով, որ արդէն արեգակը բարձրացել է և վառ փայլում են նրա ճառագայթները ծառերի սառցածածք ճիւղերի վրայ: Տարօրինակ էր ինձ համար տեսնել պարզ օր և արեգակ, որ փայլում էր անտառքեր, ինչպէս միշտ, տեսնել և այդ ծեր, չարատանջ երկիրը, հագած արեգակի ճառագայթների մէջ շլացուցիչ կերպով փայլատակող ձիւնի ծածկոյթը...

Թարգմ. Ե. Ս.

ԿԵԱՆՔԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Ձմեռ էր: Թիւրքիայի է. քաղաքի յետ ընկած կեղտոտ թաղերից մէկում գտնուում էր Կորկոտենց գետնափոր խարխուլ խրճիթը, որի լուսամուտների կոտրած ապակիներից և պատանոտած ձիթոտ թղթերի ծակերից առատութեամբ ներս էին թափուում կատաղի ձմեռուայ զայրացած բուք ու բորեազները: Խրճիթի ներսը վառարան չը կար, այլ հանգած խարոյկի վրայ դրուած էր տեղական «քուրսին», ծածկուած չուլ ու փալաններով: Գիշերուայ ժամը 12-ն էր: Խրճիթում տիրում էր խորին լռութիւն: Բոլոր մանր ու խոշորները ցնցոտիների մէջ կողովուած չըջապատել էին ֆուքսին և խոմբացնում: Արթուն էր միայն Շուշան ապլան, տանտիկինը, որը, ձէթի ճրագի աղոտ լոյսի տակ ծալապատիկ նստած, կարկատում էր երեխաների չուլ ու փալանները: Քամին քանի գնում կատաղում էր և դուրսը բարձրացնում սարսափելի չըռոց, աղմուկ և թիփի:

Թէեւ Շուշան ապլան զանազան տախտակներով և փալաններով միշտ աշխատում էր ծածկել կոտրած ապակիների բազմաթիւ ծակ ու ճեղքերը, բայց կատաղի քամու ուժգին հարուածը մէկ ակնթարթում ամեն բան դէն էր չպոտում և ձիւնի ահագին փաթիլներ ներս էր թափում ուղղակի քնոտածների վրայ և արթնացնում նրանց, որ աւելի պինդ փաթաթուելով ցնցոտիների մէջ կրկին անուշ խոմբացնում էին:

Շուշան ապլայի ամուսինը, որը մի յաղթանգամ, խոշոր ու կոպիտ կերպարանքով, խոպոտ ձայնով, երկար ու կռացած հասակով տղամարդ էր և որին իր ծուռ ու մուռ կաղմուածքի համար կոչում էին «Դաւա-Պետրոս», երկու գիշեր էր տուն չէր եկել: Այդ պատճառով Շուշան ապլան սպասողական դրութեան մէջ անհամբեր սպասում էր իր ամուսնուն:

Դաւա-Պետրոսը ըստ իր սովորութեան շատ անգամ գի-

չերները բայակայ էր լինում տանից: Երբեմն չաբաթներով, ամիսներով անյայտանում էր և յանկարծ լոյս էր ընկնում: Նա որոշ պարապմունք չուներ. քաղաքի ամենաանբարոյական սրիկաների առաջնորդն էր համարւում: Հարբեցողութեամբ, թըղթախաղութեամբ և զանազան տեսակ անազնիւ միջոցներով մի հասարակ ապրուստ հաղիւ հասցնում էր իր գերդաստանին: Խաբել, կեղծել, ստել, կողոպտել, զրկել, ամենայն օր սրա նրա հետ ծեծել ու ծեծուիլը Դաւա-Պետրոսի միակ պարապմունքն էր:

Դաւա-Պետրոսի 15 տարեկան որդին, «Խելառ Աւագը» ամենայն յաջողութեամբ սովորել էր իր հօր բոլոր դործերը և շատ բաների մէջ գերազանցում էր հօրը: Իսկ «Արապ Յարութը», Դաւա-Պետրոսի փոքր և զբայրը, այդ քաղաքում պահում էր հասարակաց տուն, որտեղ անբարոյականութեանց մէջ չաղախուած ամեն տեսակ բարոյապէս փչացած մարդիկ ել ու մուտ ունէին: Իսկ Արապ Յարութի կինը այդ անբարոյական տան գլխաւոր կառավարչուհին էր համարւում:

Շուշան ապլան օգուտ քաղելով իր ամուսնու երկար բացակայութիւնից, շատ անգամ որսում էր իր սիրած տղամարդկերանց, հիւրասիրում էր նրանց, ստանում էր իր վարձատրութիւնը և հոգում իր անհրաժեշտ կարիքները: Ահա այդպիսի ազնիւ միջոցներով էր կառավարւում այդ գերդաստանը— ամբողջ քաղաքին յայտնի Կորկոտենց տունը:

Մինչդեռ Շուշան ապլան կարկատելով տրտնջում էր վատ եղանակից, յանկարծ բակի դուռը շառաչմամբ բացուեցաւ, և իսկոյն ներս մտաւ Դաւա-Պետրոսը, մի ձնակալով մարդ էլ շալակին: Շուշանը շտապեց ձէթի ճրագով լուսաւորել բակը և տեղեկանալ դռան բացուելու պատճառը, բայց Դաւա-Պետրոսը մի ակնթարթում հանգցրեց ճրագը և հրամայեց կնոջը սենեակից դուրս չը գալ, իսկ ինքը օտարականին շալակից ցած դրեց սառը գետնի վրայ և իսկոյն մտաւ սենեակ, կրկին և կրկին զգուշացնելով կնոջը ու հարկաւոր պատուէրները տալով, դուրս եկաւ բակը օտարականի մօտ: Օտարականը համարեաւ սառած էր. նրա բերանի մէջ լեզուն չորացել էր. աչքերի կրակը մարել, ձեռք ու ոտքը ցրտից սառել փետացել էին. արիւնը երակներում դադարել էր և առհասարակ կենդանութեան նշան չատքիչ էր երեւում նրա մէջ: Հարկաւոր էր անմիջական օգնութիւն, տաք տեղ, ոգելից ըմպելիք, թէյ, քրտնացնող միջոցներ, բժշկութիւն, բայց այդ բոլորից ոչ միայն ոչ մէկը չկար, այլ ընդհակառակը. անխիղճ Դաւա-Պետրոսը ողորմելի օտարականին պառկեցրել էր ցուրտ բակում սառը գետնի վրայ և ան-

համբեր սպասում էր նրա վերջին չնչին Օտարականի թանկագին հագուստը, վրայի զարդ ու զարդարանքը գրգռել էին Պետրոսի ընչաքաղցութիւնը և նա կ'ուզէր որքան կարելի է չուտ տեսնել օտարականի մահը:

Երկու ժամից յետոյ անբախտ օտարականը փչեց իր վերջին շունչը:

Ամենից առաջ Դաւա-Պետրոսը ձեռքը օտարականի գրողանը կոխեց և աջտեղից հանեց մի քսակ լի ոսկի և մի ծալք ուսական հարիւրնոց:

«Այսպէս մինչև մահ ինձ բաւական է, մտածում էր Դաւա-Պետրոսը: Բայց որպէս զի չը կարծուի թէ սրան կողոպտել են, այս վրայի զարդերը—մատանին, արծաթէ գօտին, ժամացոյցը և քսան մանէթ փող թող մնայ դիակի վրայ»:

...Այս խորամանկ վճռից յետոյ Դաւա-Պետրոսը շալակեց սառած դիակը, դուրս եկաւ խրճիթից, անցկացաւ խուլ շաւիղներից, վեր գցեց դիակը մի պատի տակ և ինքը ուրիշ ճանապարհով չնչասպառ հասաւ տուն և մի տեղ թաքցրեց քսակով ոսկիները և հարիւրանոցները:

Կատաղի քամին մինչև լոյս շարունակուեցաւ և օտարականի դիակի վրայ երեք արշին ձիւն հաւաքեց:

Սառածի սարք ու կարգից, հագուստի ձեւերից երևում էր, որ մի օտար երկրացի ճանապարհորդ էր: Բայց թէ ինչպէս էր ընկել Դաւա-Պետրոսի ճանկը, որտեղից էր գալիս, այս կէս գիշերին, ինչո՞ւ էր դուրսը մնացել՝ ոչ ոք չը գիտէր: Միայն պտտում էր մի լուր, որ Դաւա-Պետրոսը այսպիսի վատ եղանակներին սովորութիւն ունէր, քաղաքից դուրս, ճանապարհների վրայ սպասել և պատահած անփորձ և անծանօթ ճանապարհորդներին կեղծ կարեկցութիւն ցոյց տալ, առաջնորդել, տուն հրաւիրել, հիւրասիրել, կամ յարմար դէպքում «զլուխը ազել»:

Լուսացաւ: Քամին դադարեց: Թիակներով, աւելներով դուրս թափուեցին զանազան տներից մարդիկ և սկսեցին դուռ ու կտուր մաքրել, ճանապարհներ բաց անել:

Մէկ շաբաթից յետոյ, երբ ձիւնը հալուեց, բացուեցաւ օտարականի սառած դիակը և յանձնուեցաւ տեղական ոստիկանութեան, որ կազմեց հետեւալ արձանագրութիւնը. «Մի օտար ճանապարհորդ գիշերը մնացել է դուրսը և ինքն իրան սառել. մէջ տեղը մի տեսակ շարագործութիւն չի երևում, որովհետև շարագործը կը տանէր մատանին, արծաթէ գօտին, ժամացոյցը և գրպանի 20 ա.»: Բայց թէ ո՞վ էր, որտեղացի էր, ինչ մարդ

էր, ոստիկանութիւնը այդ մանրամասնութիւնները չը կարողացաւ իմանալ:

Այս անցքից երկար ժամանակ յետոյ լրագրութեան մէջ տպուեցաւ հետեւեալ յայտարարութիւնը. «Ահա մէկ տարուց աւելի է որ անյայտացել է Մ. քաղաքի հարուստ վաճառական մի հրէայ, մօտ 60 տարեկան, որի գրպանում եղել է 900 Օսմանեան ոսկի և 4000 մանէթի ոսկական թղթաղրամ: Այս մասին ճիշդ տեղեկութիւն տուողները օրինաւոր վարձատրութիւն կը ստանան»:

Է. քաղաքի ոստիկանութիւնը պատշաճաւոր տեղեկութիւնը տուեց հանգուցեալի մասին և գործը զբաղով էլ վերջացաւ:

Դաւա-Պետրոսը այժմ արդէն հարուստ է. 13 հազար մանէթ նաղդ փող ունի: Նրա համբերութիւնը այժմ հատել է. էլ չի ուզում հասարակ ապրել. կամենում է ոսկիների քսակի բերանը բաց անել, ծախսեր անել, նոր գեղեցիկ տներ շինել, բարձր շրջանների մէջ մտնել, ուտել խմել, հագնել, վերջապէս «աղայ» դառնալ: «Բայց չէ, զգո՛յ՛, մտածում էր Դաւա-Պետրոսը, յանկարծ սկսել չի կարելի, ժողովուրդը ինչ կ'ասէ: Ես անգործ մարդ, մի այդպիսի աչքի ընկնող գործ սկսեմ թէ չէ, բոլորի ուշադրութիւնը ինձ վրայ կը դառնայ և պիտի սկսեն մեղադրել ինձ քաղաքիս մէջ պատահած զանազան աւաղակութիւնների մէջ»:

Մարդ ունեւոր լինի ու աղքատի պէս ապրի, փող ունենայ ու չը կարողանայ առատ առատ ծախսել, սա զրութիւն չէր և մանաւանդ Դաւա-Պետրոսի համար բոլորովին անտանելի: Ուրիշ հնար չը կար. Դաւա-Պետրոսը վճռեց հեռանալ Թիւրքիայից, գնալ Ռուսաստան և մշտական բնակութիւն հաստատել Եւրոպայի և առատ գործադրել հրէայի ոսկիները:

Այդպէս էլ արաւ:

Բ

Անցաւ քսան տարի: Անձան վերջերումն էր: Կարկուտը տարել էր տեղական բերքերը: Տարին սարսափելի երաշտ էր. մանաւանդ երկրագործ դասը սովամահ կոտորւում էր: Ամբողջ կովկասում հացի ծայրայեղ թանգութիւն էր: Աղքատ դասակարգը ճանձերի պէս կոտորւում էր: Ցորենի սոմարը բարձրացաւ 80 ու: Գիւղացին կիսագնի վաճառում էր իր եղը, կովը, գոմէշը, իր երկրագործական գործիքները, իր հագի շորերը, «թաղայ» հարսի զարդ ու զարդարանքները և վերջապէս գրաւ էր

դնում իր անշարժ կալուածները, որպէս զի մի կտոր ցամաք հայ ճարի իր մանր ու խոշոր գերդաստանի համար:

Անդուծ վախսառուների հնձելու ամենայարմար ժամանակն էր. այս պարագիտները ամենաանխիղճ կերպով ծծում էին աղքատ գիւղացիների արիւնը: Ո՛վ որ շտեմարանում ցորեն, գարի ունէր աժան տարիներում հաւաքած, այժմ դարձնում էր տեղնուտեղ ոսկի մէկին 20—30 աշխատանքով:

Ռուսաստանի X. քաղաքի ղլխաւոր փողոցի վրայ գտնւում էր մի նշանաւոր վախսառուի գրասենեակը, որին կից էր և նրա դարու, ցորենի և կաշուի շտեմարանները:

Վախսառու աղան—այդ ոսկէ հորթը, թանկագին հագուստով, և զանազան ոսկէդէն զարդերով զուգուած բազմել էր թաւշևայ երեսով պատած բազկաթոռի վրայ, իր յատուկ գրասենեանի մօտ, որի վրայ դարսած էին բազմաթիւ հաստափոր հաշուեմատեաններ, հեռագիրներ, ցուցակներ, և առհասարակ գրասեղանի վերաբերեալ ամեն տեսակ չքեղ առարկաներ: Անկիւնում դրուած էր հարիւր փթի ծանրութեամբ շինուած երկաթէ «կասսան» զանազան տեսակ գաղտնի փականքներով: Նրկու երիտասարդ զրազիրներ, առանձին-առանձին գրասեղանների մօտ նստած, կատարում էին ընթացիկ դործերը: Ծառաները անդադար ել ու մուտ անելով, դէս ու դէն էին վաղում և աղայի զանազան հրամանները կատարում: Իսկ ինքը աղան հաշուեչոթքի հատիկները չխկչխկացնելով, իր օրական եկամուտի գումարներն էր ստուգում և զանազան հաշիւներ տեսնում:—Հազարաւոր մարդիկ ճանճերի նման ել ու մուտ էին անում աղայի գրասենեակը և հազար ու մի տեսակ հարց ու խնդիրներ առաջարկում:

«Աղա ջան, Աստծո՛ւ խաթեր, ինչ կ'ուզես, մո, մի սոմար ցորեն տո՛ւր, երեխէքս սովից կոտորւում են»:

«Աղա ջան, գլխիդ, արեիդ մատաղ, ինչքան շահ ուզում ես, կը տամ, տներս զալուգ կը դնեմ, երկու սոմար ցորեն ինձ հասցրո՛ւ»:

«Աղա ջան, Աստծո՛ւ խաթեր, ախր ես մեղք եմ, մինչև երբ չարչարես, քանի՞ տանիս և բերես, ես աղքատ մարդ եմ, քո շինութեան մէջ ամբողջ չորս ամիս քար ու հող եմ կրել, տուր իմ աշխատանքը, երեխէքս սոված կոտորւում են»:

«Աղա ջան, երկինք, գետինք, ծով, ցամաք որ չունեմ. թէկուզ խեղդես, ջէպիցս կոպէկ չես հանիլ, ինայիւր. էս երկու ամիսն էլ համբերիր, տեսնենք, Աստուած ինչ լուս ու ճար է անում, ախր ինչո՛ւ ես գանդատ արել. ինչո՛ւ ես ինձի բանտը դնել տալիս»:

«Աղա ջան, ախր փողը առար ու թամասուկս չը պատռեցիր, էդ լաւ չէ, ո՞վ գիտի, մենք մահկանացու ենք, յետոյ զընտակից մեզք չը ծնի»:

«Աղա ջան, ախր փողդ վճարեցի, իմ զաւոգները ինչո՞ւ չես վերադարձնում»:

«Աղա ջան, ախր ես իմ պարտքը բոլորովին տուել եմ ու հրամանքդ էլ ասացիր թէ թամասուկը պատռել եմ, հիմի էլ ի՞նչ գանգատ ես արել սուտը»:

Ահա այսպէս լցում էին աղայի գրասենեակը և հազար ու մի տեսակ հարցեր, առաջարկութիւններ, խնդիրներ, բողոքներ, արտունջներ, պայմաններ, գրաւականներ, մուրհակագրեր... Թափում էին աղայի գլխին և սպասում բաւարար պատասխանի: Աղայի գլուխը երկաթից էլ պինդ էր, որ այսպիսի խառնաշփոթ աղմուկների մէջ չէր տրաքւում: Նա անգլխական սառնութեամբ, առանց վրդովուելու, ամենքի հետ խօսում, ամենքին մի պատշաճաւոր պատասխան էր տալիս. որին, որպէս անկարգ մարդու դուրս վնդում, որին լոկ քաղցր խոստումով ճանապարհ քցում, որին հրէշաւոր տոկոսով փող տալիս, որին, կրկնակի գրաւական առնելուց յետոյ, օրինաւոր թղթով ցորեն կամ գարի տալիս, որին անպատում, որին քօթակ, որին սպառնալիք, որին խրատ, որի տալիքը իսպառ ուրանում, որի եղած չեղածը աճուրդով վաճառել տալիս և իր հաշիւը վերջացնում: Ամենայն օր այս միևնոյն տեսարանները աղայի գրասենեակում կրկնում էր և օրական պարապմունքը վերջանում:

Աղան, բացի նրանից որ զանազան քաղաքներում ունէր հացհատիկների հարուստ շտեմարաններ, միևնոյն ժամանակ տաւարի կաշու և զանազան թանկագին մորթիների առուտուր էլ ունէր նշանաւոր քաղաքների գործարանների հետ: Աղան նշանաւոր «փողրաղչի» էր, արքունի ամենանշանաւոր չինութիւնները աղայի ձեռքով էին վերջանում:

Աղայի սեպհական կալուածները, ջրաղացները հոյակապ տները, բազմաթիւ կրպակները, բաղնիսները և քարվանսարանները, ահագին եկամուտ էին տալիս:

«Ջանմ, զարմանալով հարցնում էին իրար տեղացիք, Կորկոտենց Դաւա-Պետրոսը Թիւրքիայից որ մեր քաղաքը եկաւ, չուլը չին էրնէկ կուտար կը, ատ ի՞նչ էղաւ օր, աս քսան տարուայ մէջ ատքան կարողութեն թոփ էրեց ու հիմա ալ Պետրոսաղա դառաւ...»

Գ.

Աղա-Պետրոսը զրասնեակի հաշիւները վերջացրեց, գրա-գիրներին, գործակատարներին, ծառաներին հարկաւոր պատուէրները տուեց, դուրս եկաւ գրասնեակից, և աչքերը դէպի արեւմուտք դարձնելուն պէս, մի կողք նոյն անկնթարթում նրա առաջը կանգնեց, Թանկագին մուշտակի մէջ փաթաթուած աղան նստեցաւ կողքը, զոռոզարար շուռ եկաւ քամակի վրայ, վիշուեցաւ, ոլորեց բխները և հրամայեց կառապանին «գնան»:

Հինգ բոպէից յետոյ որոտագին գղրղիւնով կողքը կանգնեց մի հոյակապ երկյարկանի շինութեան առաջ: Պետրոս աղան դուրս եկաւ կողքից, վարձատրեց կառապանին, ներս մտաւ և մարմարիոնէ սանդուխներով բարձրացաւ վերև, մտաւ դահլիճ:

Հրաշալի էր Պետրոս աղայի ապարանքը. կատարեալ պալատ: Բոլոր սենեակները, դահլիճը, առանձնասենեակները, ընդունարանը, ննջարանը, նախասենեակները... բոլորը, բոլորը զարդարուած էին պատշաճաւոր կահ կարասիներով, ամենաթանկագին գորգերով, մետաքսեայ վարագոյրներով:

Շուշան-ապլան այժմ դառել է մի գոռոզ և մեծամիտ խանութ: Այն ողորմելի ցնցոտիների մէջ ապրող Շուշանը այժմ Թանկագին հագուստների և հագուստներէ զարդ ու զարդարանքների մէջ լողում է:

Այդ օրը, թէ տղամարդ և թէ կինարմատ, բոլոր տանեցիք տանն էին: Երեկոյեան շուայլ ընթրիքից յետոյ, տղամարդիկ առանձնացան մի ուրիշ սենեակ իրանց օրական գործունէութեանց մասին միմեանց հաշիւ տալու:

«Խոնչ արիր, Աւագ, վերջացրիր այն անպիտան գիւղացու հետ հաշիւները: Դիմեց աղան իր որդուն:

— Ի հարկէ վերջացրի, նրա հօրն ողորմի, նա իր էշ գիւղացի տեղով ուզում է մեր փողերը ուտել: Մէկին չորս քիթից հանեցի: Ամենից առաջ, պրիստաւի հետ գնացինք դաշտը, նախրի միջից ջոկեցինք նրա կովերը, ոչխարի հօտից ջոկեցինք ոչխարները, այծերը, գութանի առաջ կտրեցինք, արձակեցինք նրա եղները: Բոլորը հաւաքեցինք, քչեցինք վիւղ: Յետոյ յանկարծ մտանք տուն: Կնանիքը փախան ամեն մի քունջ մտան, երեխէքը սկսեցին, լաց լինել, ծուալ, բոռալ, բայց ո՞վ է տկանջ էնողը. բաց արինք կանանց սնդուկները, կոտրեցինք թաղայ հարսի նախշուն սնդուկը, դուրս հանեցինք զարդեր, հագնելիք-

ներս Այս ժամանակ կանայք կատաղեցին. սկսեցին ընդգիւմութիւն յայց տալ, բայց զիժ պրիստաւի պէտքը նրանց լուցրեց: Այնքան արտասուք թափեցին, դուրս թափան հարեաններին օգնութեան կանչեցին, որ չափը անցաւ. բայց մենք մեր գործը տեսանք»:

—Միթէ այդքան հարուստ է այդ անպիտանը.

«Ի հարկէ հարուստ է. զրո՞ղ է զիպել:

—Հապա ինչո՞ւ չի տալիս իր պարտքը:

«Նազդ փող չունիմ, ասում է, ժամանակ տուէք, տարեկան երեք հարիւր մանէթ կը տամ կը վերջացնեմ երկու տարուս:

—Միթէ գրա պարտքը 600 մանէթ է. հապա ես գիտեմ թէ շատ է:

«Ինչո՞ւ պիտի շատ լինի. հաշուով չէ. ընդամենը մենք զրան տուել ենք, հինգ տարի առաջ հինգ սոմար ցորեն. սոմարը 10 մնթ. արժողութեամբ և հինգ սոմար զարի 5 մնթ. արժողութեամբ: Կը նշանակէ՞ մենք զրան տուել ենք ընդամենը 75 ու. ցորեն և զարի: Տարին երեք անգամ բաժըլը նորոգել եմ, թումանին միշտ 40 կոպ. տոկոս եմ վրայ եկել: Դէ հիմա, հաշուիւր, տես, հինգ տարին ինչ կ'անէ: Մինչև հիմա տուել ենք այդ մարդից 7 սոմար ցորեն, 5 սոմար զարի. 200 մնթ. փող, մի տարի տղէն մեր տանը ծառայել է և այժմ էլ օրինաւոր վեկսիլով պարտ է 600 ուղւրի:

—Էլի քիչ է:—Եաւ, յետոյ ինչ արիք:

—Ի՞նչ պիտի տեսնեք: Եղած չեղածը քչեցինք, բերինք քաղաք. վաղը տարդով ծախել կը տամ և մեր փողերը կը վերցնեմ, պրծաւ, զննց:

«Շատ լաւ կ'անես, աչքն էլ կը հանես, մինչև զրանց այդպէս չը խայտառակես, միւսները չեն խեղճանալ:

«Դժն ինչ արիւր, Յարութ, հարցրեց նա իր եղբորից, մշակների գործը վերջացրի՞ր: Կոխ զալմազալ խոմ չեղաւ:

—Հապա չեղաւ: Երեք հարիւր մշակ մի անգամից խօսք մէկ տրամ, գործը գաղտնեցրին և հաւաքուեցան զլիսիս: Ամենքը մի կողմից բղաւում, աղաղակում, փող են ուզում: Որը երկու ամիս է բանել, որը երկու շաբաթ, որը քսան օր, 15 օրից պակաս աշխատող չը կայ: Օրաշան իւրաքանչիւրին պիտի տանք 60 կոպէկ. բայց զեռ ոչ մէկին մի կոպէկ չենք տուել:

—Գլուխները քարն են տուել. թող ինչքան ուղում են, բղաւեն, ուր ուզում են, թող զնան, օրական 40 կոպէկից աւելի ոչ քիչ չը տատ:

—Բայց ես մի լաւ բան եմ արել. աւելի շատախօսներից

մի քսան հոգի ջոկել եմ և խոստացել եմ նրանց տալ օրական 70 կ., այն պայմանով, որ հարկը պահանջած ժամանակ, վկայեն թէ մինք բոլորս օրական 40 կողէկով ենք վարձուած:

—Շատ լաւ ես արել: Վաղը կիւրակի է, դու գրանց բուրին հաւաքիր, բեր կանտոր, ես գրանց հախից կը գամ:

Ահա, այսպէս մեր աղաները միմեանց մասնաւոր տեղեկութիւն տալուց յետոյ, երեքն էլ դուրս եկան տանից:

Պետրոսը շտապում էր կլուբ՝ թուղթ խաղալու, Յարութը հրաւիրուած էր զիշիւր քէֆ անելու, իսկ Աւագը այդ զիշեր պիտի անցկայնէր իւր տարփածուհու մօտ:

Դ.

Երեկոյեան ժամը 10-ն էր: Պ. մայրաքաղաքի սալայատակ փողոցներում անց ու դարձ անող բազմաթիւ կառքերը զորդացնում էին աջ ու ձախ կանգնած հոյակապ շինութիւնները: Փողոցներում տիրում էր ծայրայեղ կենդանութիւն. կեանքը եռում էր: Այդ ժամանակ գլխաւոր փողոցներից մէկի միջից անցնում էր սրընթաց մի շքեղ կառք, որի մէջ երկու օրիփոշաների հանդէպ նստած էր մի թխադէմ մօտ 22 տարեկան գիմնադիստ:

—«Направо» հրամայեց կառավարին, երիտասարդ գիմնադիստ և հինգ րոպէից յետոյ աւելացրեց. «Сто!»:

Կառքը կանգնեց: Գիմնադիստը վեր եկաւ կառքից և, տիրապետող մօզայի տմենանուրը ձեւերին համաձայն, բռնելով մատաղահաս օրիորդների փոքրիկ և ձիւնափայլ թաթիկներից քնքշաւոր վեր բերեց կառքից:

Մատաղահաս կոյսերը երկուսն էլ սուս էին, և մէկը միւսից գեղեցիկ ու հրապուրիչ. չէկլիկ, դանդուր մազերով, կապոյտ աչերով, սպիտակախոռոն կարմիր այտերով, բարակ նազելի հոտակով:

Գիմնադիստի աջ ու ձախ կողմերից թևանցուկ արած, օրիորդները, հանաքներ անելով, ամեղուխաներից բարձրացան վերին յարկը: Օրիորդները առաջին անգամն էին մտնում այտտեղ և առաջին անգամն էին ծանօթանում գիմնադիստի հետ: Երկու շքեղ սենեակներ, իրանց սարք ու կարգով: Ընդունարանը ջոկ, ննջարանը ջոկ, խոհանոցը ջոկ, կարգին ծառայ և տնային զանազան պարագաներ: Կարծես պսակուած մարդու բնակարան լինէր:

Երիտասարդ գիմնադիստը կովկասեցի մի հռչակաւոր հարուստի որդի էր, որին ծնողները տիրելու փոխանակ պաշտում

էին: Ամասկան հինգ հարիւր ուսուրի փող էին ուղարկում իրանց փոքրիկ, ամենասիրելի որդուն, որ իրան չը զրկի, կարգին ապրի, լաւ ուսում առնի և մարդ դառնայ:

Խորամանկ օրիորդները հասկանալով որ մի իւղալի տեղ են ընկել, կրկնապատկեցին իրանց սիրալիութիւնը, և զանազան հրապուրիչ ձևերով, ամեն ջանք էին թափում դուր գալ երիտասարդին:

— Սաշա, (այսպէս էր գիմնազիստի անունը) եթէ քո ծնողները այդքան հարուստ են, էլ ի՞նչ հարկաւոր է քեզ բարձր ուսում, պսակուիր մի սիրուն աղջկայ հետ և քեզ համար հանգիստ ապրիր:

— Չէ, Սոնիչկա, ես պսակուել չեմ սիրում և ի՞նչ հարկաւոր է կապուիլ մէկի հետ: Այսպէս ազատ աւելի լաւ է, որ ում ուզենամ, նրա հետ ժամանակ անցկացնեմ: Օրինակ. երէկ մի հրէայի գեղեցիկ աղջիկ էի ճարել, այսօր էլ դուք պատահեցաք, վաղը մի ուրիշ կը գտնեմ: Միակերպութիւնը շատ ձանձրալի է. ես սիրում եմ կեանքի զանազանակերպութիւնը և տեսարանների շուտ շուտ փոփոխութիւն:

— Սաշա, մէջ մտաւ Մաշան, հէնց այդ ազատասիրութեան պատճառով է, որ մենք էլ չենք ուզում մեր կեանքը կապել մէկի հետ: Այս տեսակ ազատութիւնը ամուսնութիւնից երջանիկ է:

— Բայց եթէ Սաշայի պէս մի կրթուած և հարուստ երիտասարդ պատահի, ես ամուսնութիւնը նախադաս կը համարեմ այս տեսակ ազատութիւնից, աւելացրեց Սոնիչկան:

«Սրանից էլ լաւ պատահել, ժպտալով պատասխանեց Սաշան. եթէ կը ցանկանաք, հէնց այսօր ամեն բան վերջացնեք. գնանք, պսակուենք... ամուսնանանք, թէկուզ երկուսիդ հետ էլ... հա, հա, հա...»

Ապա սկսուեցան կատակներ, սրախօսութիւններ, փոխադարձ համբոյրներ, զրկախառնութիւններ, սենեակի մէջ դէս ու դէն վազվզել, միմեանց քաշքշել, երգել, պարել մինչև որ ծառան ձայն տուեց. «Աղա, ընթրիքը պատրաստ է»:

— Դէ, ДУШЕНЫКИ, համեցէք սեղանատուն: Սոնիչկա, դու աջ կողմս. Մաշա, դու ձախ կողմս: Ահա այդպէս նստեցէք. մօտ, մօտ, էլի էլի, ահա այդպէս. բրաւօ, ուռն, բղաւեց ուրախութիւնից Սաշան:

Խոհարարը իր աղայի հրամանին համաձայն աջալիսի մի հարուստ սեղան էր պատրաստել, որ կարծես հրաւերք կար:

— Դէ, Սոնիչկա, Մաշինկա, էլ սպասելու ժամանակ չէ, ածեցէք բաժակներդ, առաջարկեց Սաշան. լիքը, լիքը... ահա

այդպէս. դէ մօտեցրէք բաժակներդ, խփենք իրար, չխկացնենք...
չառ լաւ. հիմա էլ նուիրենք իրար մի մի անուշ համբոյր:

Այս սիրահարական ճառից յետոյ Սաշան դարդակեց բա-
ժակը մինչ վերջին կաթիլ:

Օրիորդները նոյնպէս մի քանի պատշաճաւոր կոմպլիմենտ-
ներ ասելով, գովելով Սաշայի բնաւորութիւնն ու սովորութիւնը,
վայելեցին չնորհակալութեան բաժակները: Այնուհետև սկսուե-
ցաւ ընթրիքը, թանկագին խմիչքների կոնծարանութիւնը
և այլն:

Միւս օրը կէս օրին արթնացաւ Սաշան և նրա երկու հիւ-
րերը: Մի ամբողջ ժամ էլ զանազան անմեղ կատակներ արին,
միմեանց քաջքնեցին. և վերջապէս զանազան օյինբաղդութիւնից
յետոյ հագնուեցին, լուացուեցին: Հէնց այս ուրախալի ժամին
փոստային ծառայողը թոյլտուութիւն ստանալով ծառայից ներս
մտաւ և Սաշային տուեց 500 ռ. ծանուցագիրը ու մի հասարակ
նամակ և ստանալով իր «նավորկին» հեռացաւ: Սաշան իսկոյն
ճանաչեց հօր ձեռքը և ուրախութիւնից ձայն տուեց. «քէֆ ա-
րէք, աղաւնիներս, հայրս ինձ 500 ռ. փող է ուղարկել»: Բայց
սրեց նամակը և կարդաց հետեւեալ.

«Սիրելի որդեակս, անուշիկ Սաշա ջան, ահա սոյն նամա-
կի հետ միևնոյն փողով ուղարկում եմ քեզ 500 ռ.: Քո կարօ-
տով մենք բոլորս մաշուում ենք, մանաւանդ մայրդ գիշեր ցերեկ
քո առողջութեան վրայ է մտածում: Աշխատիր, որդեակս, աշ-
խատիր, դասերդ լաւ սովորիր, որ եկող տարի աւարտես և գաս
մեզ ուրախացնես: Աշխատիր մեր աշխատանքը զուր չկորցնես:
Ահա երկու ամսից աւելի է քեզանից նամակ չունինք. երեւի
դասերով ծանրաբեռնուած ես. նամակ գրելու ժամանակ չունիս:
Բայց այս նամակիս պատասխանը շուտ գրիր:

Մնամ քո հայր Պետրոս Կորկոտեանց:

Սաշան նամակը կարդալուց յետոյ դէն շարտեց:

«Է՛հ, սա էլ բան է գրում. «աշխատիր, աշխատիր» կար-
ծես իմ գլուխը երկաթի գլուխ է. կարծես ես զիւղացու եզ
եմ. գիշեր ցերեկ պիտի աշխատեմ, որ աւարտեմ. որ չաւար-
տեմ, կարծես սոված պիտի մեռնեմ: Լաւ, ինչ ուզում է, թող
գրէ, ես իմ բանը գիտեմ. առայժմ հարկաւոր է հագնուել և
գնալ փողերը ստանալ»:

Սաշան հագնուեցաւ և իր հրեշտակների հետ սեղան նըս-
տեցան առաւօտեան թէյը և նախաճաշիկը վայելելու:

Աղջկերքը գնացին: Սաշան միայն մնակ. մեքենայաբար
մօտեցաւ գրասեղանին, և երբ նկատեց իր դասագրքերը, գրու-
թեան տետրակները և երբ մտաբերեց ուսուցչի պատուէրները

դասի վերաբերեալ, բարկութեան հետ մի տեսակ զգուանք առաջ եկաւ նրա մէջ:

«Ա՛խ, երանի, հազար երանի այն օրը, որ ես կ'ազատուեմ այս անիծեալ զրքերից, որոնք դառել են ինձ համար կատարեալ ցեցեր և մաշում են իմ կեանքը: Ես ի՞նչ կ'ընեմ, սա պիտի արտագրեմ, նա պիտի շարադրեմ, երրորդը պիտի վճռեմ. յետոյ պատմութիւն, աշխարհագրութիւն, յունարէն, լատիներէն, աս ես ի՛նչ գիտեմ հազար ու մի տեսակ յիմարութիւններ: Դէ՛ այժմ արի, մինչև կէս գիշեր կուրծքդ դրասեղանին՝ դէմ արտ, զրբի ու կարգա, որ ի՛նչ, ինչի՞ս է պէտք: Ձէ, էլ համբերել չեմ կարող. պիտի մի հնար մտածել և ազատուել այս անիծած զրքերից»:

b

Անցկացաւ երկու տարի: Դպրոցների արձակուրդների ժամանակն էր. Սաշան արդէն վերջնականապէս արտաքսուած էր գլրոցից իր անընդունակութեան, իր ծուլութեան և իր աններելի անբարոյական վարք ու բարքի պատճառով:

Սաշան մի քանի անգամ արտաքսուած էր գլրոցից, և զանազան ընծաների շնորհիւ կրկին ընդունուած էր, բայց այս անգամ էլ ոչ մի հնար չը կար ընդունելու. մանաւանդ որ երրորդ տարին էր որ մնում էր մի և նոյն դասարանում: Ուստի պատրաստուած էր հայրենիք վերադառնալ. բայց նախ քան վերադառնալը նա դիմեց մի խորամանկութեան՝ մի բժշկից ստացաւ այնպիսի մի վկայական, որով վկայուած էր թէ Սաշայի առողջութիւնը չափազանց աշխատելուց խանդարուած է և այսուհետև մտաւոր պարսպմունքը նրան մահ կը պատճառէ. հարկաւոր է հայրենիքի օգն ու ջուրը այդ խանդարուած առողջութիւնը վերականգնելու համար:

Սաշան բժշկի վկայականի հետ ուղարկեց հօրը հետեւեալ նամակը.

«Սիրելի հայրելի, ես այս տարի յաջողութեամբ աւարտեցի ուսումս. բոլոր առարկաներից հինգ ու չորս եմ ստացել: Երբ որ վկայականս կը ստանամ, կ'ուղարկեմ քեզ տեսնելու և ուրախանալու: Բայց, ինչպէս կը տեսնիս բժշկի վկայականից, առողջութիւնս մի փոքր խանգարուած է և շատերը խորհուրդ են տալիս մի տարի հանգստանալու: Բայց ես առ հասարակ այդ բժշկների վկայականներին նշանակութիւն չեմ տալիս: Ես ցանկութիւն ունեմ նաեւ բարձր դպրոց մտնել և ուսումս շարունակել և այս ամառ չեմ ուզում հայրենիք գալ. ես կ'արժում»:

և՛ որ տկարութիւնս կ'անցնի և մի երկու ամսից յետոյ կը լաւանամ: Բայց այնուամենայնիւ, սպասում եմ քո խորհրդին:

Քո որդի Սաշա Կորկոտեանց»:

Պետրոս աղան իր «ազիզ» և պաշտելի որդու նամակը ստանալուն պէս, սաստիկ վրդովուեց և առանց մի վայրկեան կորցնելու հեռագրեց որդուն հետեւեալ բովանդակութեամբ. «Վերցրու Ա. վաճառականից ճանապարհաւոր և առանց ժամանակ կորցնելու ճանապարհ ընկիր: Բարձր դպրոց մասնաւորաւորէ՛ր չեմ տալիս, հարկաւոր չէ. շտապիր սուն, բոլորս անհանգիստ ենք: Պատասխանը վճարած է»:

Սաշային էլ այս էր հարկաւոր. նա խորամանկութեամբ հասաւ իր վաղեմի նպատակին. ուստի հեռագրեց հօրը. «գալիս եմ»:

Օգոստոսի վերջերումն էր: Պետրոս աղայի ապարանքներում սովորականից դուրս կենդանութիւն էր երևում: Կապերը դալիս ու գնում են այդ տեղ: Բաղմաթիւ բարեկամներ, ազգականներ, ծանօթներ և այլ զանազան բարձրաստիճան մարդիկ հետզհետէ լցւում են ներս և աւելի չքեղացնում հանգէսը:

Զինուորների նուազածուների խումբը, զրախտանման պարտիզում չըջան կազմած, գլորպայնում էր ամբողջ թաղը և քաղցր նուազներով գմայլեցնում հանդիսականներին:

Վիթխարի շինութեան պատուհաններում, պատշգամբներում պատերի ծայրերին վառվում են հազարաւոր գոյնգոյն ճրագներ և լապտերներ: Բոլոր սենեակներերը, սննդքերը, նախասենեակները, մանաւանդ դահլիճը, ճոխ լուսաւորուած էին:

Ընթրիքի ճոխ սեղանի շուրջը պատել են թանկագին հիւրերը:

— Սէքդ լոյս, Պետրոս աղա, շնորհաւորում եմ Սաշայի գալուստը. յոյս ունինք որ նա մեր ազգի համար մի պիտանուցու անդամ կը դառնայ, ատենաբանեց մի հայ ղինուորական և ախորժակով կուլ տուեց մի բաժակ գինի:

«Շնորհակալ եմ, շնորհակալ, վերւած պատասխանեց Պետրոս աղան, և աւելացրեց. շատ յաջողութեամբ է աւարտել Սաշաս, բոլոր առարկաներից քերականաց է ստացել: Իմ հեռագրիս պատճառով այնպէս շտապ է դուրս եկել, որ միջոց չի ունեցել ստանալու վկայականին. բայց վկայականի պատճէնը բերել է, անհ կարգա՛, տես, կը հաւանիս: Իսկական վկայականն էլ ոսկէ տառերով տպած փոշտով կ'ուղարկեն»:

Սաշան այսպէս էր հաւատացրել իր հօրը և բոլոր բարեկամներին թէ վկայականը փոշտով կ'ուղարկեն:

— Շնորհաւորում եմ Զեր գալուստը Սաշա, շատ ուրախ

եմ որ այդպէս յաջող ես աւարտել: Յոյս ունեմ որ մի սուրբ ասպարէզ կ'ընտրես քեզ համար և կը սկսես գործել յօգուտ ազգի և ընդհանուր մարդկութեան:

«Շատ շնորհակալ եմ, Գրիգոր աղա, բայց առ այժմ ես ցանկանում եմ զնալ շարունակել, կեղծեց Սաշան, կամենալով հաւատացնել թէ շատ է սիրում ուսումը:

—Ո՛հ, ո՛հ, չեչտելով միջամտեց Պետրոս աղան. էլ դրանից աւելի ուսում ոչ քեզ է հարկաւոր, և ոչ ինձ: Էլ ոչ մի տեղ չեմ թողնիլ:

Պետրոս աղայի բարեկամների և ծանօթների թիւը այնքան շատ էր, որ մի շարաթից աւելի էր որ նրանց տանը շարունակում էր «աչքալոյսի» ուրախութիւնը, ամեն օր պար ու երգ էր, քէֆ ու ուրախութիւն էր և համադամ կերակուրների հետ շապլ կոնծաքանութիւն:

Անյկացան օրեր, չաբաթներ, վերջապէս տարիներ, բայց Սաշայի ոսկետառ վկայականը դեռ չերկեցաւ: Հանդամանքները, պահանջները փոխուեցան, վկայականը այլ ևս ոչ ոքի համար նշանակութիւն չուներ:

Սաշա Պետրովիչը այժմ մտել է նոր կեանքի, նոր շրջանի մէջ: Նա այժմ որպէս տանտէր գործի զլուխ կանգնած, կնոջ ու զաւակների տէր է: Այժմ էլ Սաշա չէ, այլ «Սաշա աղա»: Այժմ նա նշանաւոր գործեր է վերցնում կապալով, ահագին գումարներ է տուն բերում:

Պետրոս աղան, որպէս հռչակաւոր կապալառու քաջ ծանօթ էր այդ գործի մանրամաս գաղտնիքների հետ: Ո՛ւմ բերանը մի ոսկոր պիտի քցել, ո՛ւմ մի թևթև ընծայով պիտի պատուել, ո՛ւմ ճաշի պիտի հրաւիրել, ո՛ւմ մի մասնաւոր բաժին պիտի հանել... այս բոլորը քաջ գիտէր Պետրոս աղան և չուտով վարժեցրեց Սաշային էլ այդ արհեստի մէջ:

Սաշան զարմանալի ընդունակ գտնուեցաւ հօր արհեստի մէջ և շատ չուտով ծանօթացաւ փող աշխատելու ամենաստոր միջոցների հետ: Հէնց այս յատկութեան և ընդունակութեան պատճառով Պետրոս աղան չափազանց սիրում էր նրան:

2

Վերջին ուստաճկական պատերազմից յետոյ Մ. քաղաքի երկրագործական թաղում իր նահապետական պարզութեամբ լարի համբաւ էր ստացել Տէր-Ղազարի տունը, որ բազկադած էր եօթը առոյգ և յաղթանդամ եղբայրներից. եօթն էլ պսակուած: Բոլորն էլ զաւակների, թոռների ու ծոռների տէր: Տէր-Ղազարը

գերդաստանի գլուխն էր: Այդ ակեղարդ ծերունին հարիւր տարեկան հասակում դեռ առողջ ու ժիր էր. դեռ գործում և իրաւունքներ էր բանեցնում տան մէջ: Բացի ծերունի քահանայից բոլորն էլ պարապում էին երկրագործութեամբ: Ամբողջ գերդաստանի թիւը 55 հոգի էր: Այս նահապետական տան մականունը «Անտէր-խան էր»: Ճշմարիտ որ անտէր խան էր, որովհետեւ զիշեր յերեկ սրանց դուռը ամենքի առաջ բաց էր: Ձմեռ, գարուն սրանց տան հիւրերը անպակաս էին. ծանօթ, անծանօթ, բարեկամ, թշնամի, քաղաք եկած ժամանակ սայլերով, ձիերով անպատճառ «անտէր խանում» պիտի վեր դային, շաբաթներով ուտէին, խմէին, և իրանց գործերը վերջացնելուց յետոյ, առանց տան տիրոջը տեսնելու, առանց մի դարդակ շնորհակալութեան գնային:

Տէր-Ղազարեանց տանը 40 կով էին կթում, 5 մատակ. մի քանի հարիւր գլուխ ոչխար: Իւզը, պանիրը, կաթը, մածունը, սէրը ըստ ամենայնի առատ էր: Բոլոր գերդաստանը իր բարոյականութեամբ, իր անկեղծ հիւրասիրութեամբ, իր օրինակելի համեստութեամբ, սիրուած ու յարգուած էր քաղաքի պատուաւոր շրջաններում:

Այդ նահապետական ջանասէր մաճկալները «քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո» ասելով, մէջք մէջքի, կուռ կուռ տուած վարում էին գետինը և նրա տուած բարիքներով կերակրւում և կերակրում իրանց հետ հարիւրաւոր որբեր ու աղքատներ, հիւրեր ու ճանապարհորդներ:

Այս նահապետական տան մէջ միայն մէկը կար, որ իր գոթութեամբ շատ անգամ անմեղ մաճկալներին փորձանքների մէջ էր գցում և վրդովում էր բոլորի խաղաղութիւնը:

Սա գիժ Սարգարն էր, Տէր-Ղազարի վերջին որդին, մօտ 45 տարեկան: Սարգարը որոշ պարապմունք չուներ. թէև շատ գործեր սկսեց, զանազան պաշտօնների մէջ մտաւ, բայց երկար չը տեւեց, յաջողութիւն չունեցաւ. որովհետեւ կեղծել, շողոթորթել, սրտի զաղտնիքը ծածկել չը գիտէր, նրա համար ամեն բան դուռ էր. հէնց այդ պատճառով էլ ոչ ոքի հետ եօլա գնալ չէր իմանում, խաղաղ ապրել չը գիտէր: Նա իր մանկութիւնը անց էր կայրել ծեծ ու քօթակների մէջ. իր ամբողջ կեանքը ճանապարհ էր դրել անթիւ փորձանքների միջից:

Ճշմարիտն ասած, Սարգարը վատ մարդ չէր, վտանգաւոր ընկեր չէր, միայն ծայրայեղ կրքոտ էր, և ամեն բան վճռում էր կրքի ազդեցութեան տակ: Ոչ մի դործ առանց աղմուկի չէր սկսի և առանց աղմուկի չէր վերջացնի: Նրա տաքարիւնու-

թիւներ, նրա կատաղի կիրքը, նրա ազատ համարձակ վարմունքը
սոմեն լսարի բան քար ու քանդ էր անում:

Տէր-Ղազարը, որպէս պապական ժառանգութիւն ունէր
և մի ջրաղաց: Չանազան հանդամանքներից ստիպուած հարկա-
ւոր համարուեցաւ ջրաղացը վաճառել: Հրապարակի վրայ երե-
ւեցան բազմաթիւ գնողներ, բայց վերջը յաղթանակը տարաւ
մեզ ծանօթ Սաշա Պետրովիչը, որ իր անձնական գործերի
պատճառով այժմ բնակւում էր այստեղ, Մ. քաղաքում:

Ջրաղացի դործը յանձնուեցաւ Սարգսրին, որ վերջացնի
Սաշա Պետրովիչի հետ. 2500 մանէթով համաձայնութիւն կայա-
ցաւ:

Սարգարը վաճառման թղթի տակ ստորագրում է թէ «Ջրա-
ղացի գին 2500 մանէթը լիովին ստացայ»: Բայց փողը ստանալու
ժամանակ, 500 մանէթ պակասում է. ուստի Սաշան խնդրում
է մի օր ժամանակ այդ պակասը լրացնելու: Սարգարը համա-
ձայնում է: Վաճառման թուղթը մնում է Սաշայի մօտ. որով-
հետեւ Սարգարը ամաչում է կասկածել այդպիսի մի հոշակաւոր
հարուստի վրայ և վաճառման թուղթը իր մօտ պահել մինչեւ
500 մանէթի ստանալը:

Լրանում է մի օրը. անցնում է մի շաբաթ. դառնում է
ամիսներ, բայց Սաշան դեռ չի վճարում մնացեալ 500 մանէթը,
մինեոյն ժամանակ տիրապետում է ջրաղացին:

Սարգարը անձամբ խնդրում է, նամակներ է գրում, միջ-
նորդներ է քցում, որ դործը խաղաղութեամբ վերջանայ, բայց
հնար չի լինում. Սաշան վճարելու միտք չունի. նա բոլորովին
ուրանում է իր պարտքը և շատ կոպիտ է վարւում Սարգա-
րի հետ:

Այսպիսի անտանկի հանդամանքների մէջ տաքաղլուիս
Սարգարը վճուեց գործը ուժով վերջացնել:

Մէկ օր լուր բերին Սարգարին թէ Սաշան ջրաղացի մէկ
պատը վերանորոգել է տալիս:

Սարգարը կայծակի արագութեամբ հասաւ ջրաղաց հէնց
այն ժամանակ, երբ Սաշան ցիլինդրը զլխին, ակնոցները աչ-
քերին, զուգուած զարդարուած կանգնել էր վարպետների վրայ
և զանազան պատուէրներ էր տալիս:

— Բարե քեզ, Սաշա-Պետրովիչ:

«Աստծու բարին, քնթի տակով պատասխանեց Սաշան:

— Այս ինչ ես չինում:

«Քո ինչ գործն է:

— Ի՞նչպէս թէ քո ինչ գործն է. հապա ում գործն է: Սա
ում ջրաղացն է:

«Առաջ քո ջրադափն էր, իսկ այժմ իմը: Ես քեզանից փողով առել եմ:

—Շատ ճշմարիտ է. բայց չէ որ 500 մանէթը մնում է, զեռ չես վճարել:

«Ոչ սուտ ես ասում, ես բոլորը վճարել եմ և ունեմ քեզանից լիակատար ստացական:

—Ուրեմն դու 500 մանէթը ուրանում ես:

«Ես չեմ ուրանում, ուրացողը դու ես, լիբբ, անզգամ. ես քեզ բանտերում փտայնել կը տամ. գիտես, ես ձկ եմ:

—Դու. ինձ բանտերում փտայնել կը տաս, դոռաց կատաղած Սարգարը և մի ակնթարթում խլեց սայլապանի ձեռքից մահակը, գազանաբար արձակուեցաւ Սաշայի վրայ, բռնեց մաղերից և մահակի ուժովն հարուածներ կարկտի պէս իրար ևստից թափեց Սաշայի գլխին, քամակին, ոտներին և ամեն տեղ: Սաշա Պետրովիչը, դռում էր արջի նման, մկրկում այծի պէս, դէս ու դէն էր փախչում, բայց կատաղած Սարգարի ձեռքից չէր ազատուում: Եթէ վարպետների միջնորդութիւնը չը լինէր, գուցէ սաղ չը մնար խեղճը: Ահագին լազմութիւն հաւաքուեցան այդ տեղ և մի կերպ Սաշային ազատեցին Սարգարի ճանկերից և համարիա ուշաթափուած գցեցին կառքի մէջ և տուն հասցրին:

Օրուայ խօսակցութիւնը Սաշայի քօթան էր: Սրճարաններում, տներում, փողոցներում, հիւրանոցներում ամենայն օր Սաշայի քօթն էին պատմում:

Այդ օրուանից կայէնի հոգին մտաւ Սաշա Պետրովիչի մէջ: Շարունակ մտածում էր սպանել Սարգարին իր վրէժը առնելու համար:

Այնուհետեւ Սարգարի թշնամիները ամենայն օր հաւաքւում էին Սաշա-Պետրովիչի տանը և զրգուում նրան, կատաղած պահում նրա կրքը, խրախուսում չարագործութեան մէջ:

—Աղա, դու այժմ կենդանի մայդ չես. դու այն օրը մեռար, երբ Սարգարը քեզ ծեծեց: Եթէ ուզում ես կենդանանալ, եթէ ուզում ես պատիւդ վերականգնել, պիտի անպատճառ սպանես՝ Սարգարին, և այն քո ձեռով, փողոցի միջին, հրապարակաւ, կատաղաբար զրգուում էր նրան մի ահհոգի ծառայող, որը նոյնպէս մի տարի առաջ մի քանի մահակ կերել էր Սարգարից և այժմ ուզում էր ուրիշի ձեռքով փուշ քաղել:

—Այո, այո, հաստատում էր սրա խօսքերը մէկ ուրիշը. պէտք է սպանել, անպատճառ սպանել: Եւ վերջապէս հարամ

լինի ձեզ ձեր անունը, ձեր հարստութիւնը, ձեր մեղուկներով փողերը, որ չը կարողանաք մի գիւղացու հախից դալ:

—Սպասեցէք, մի փոքր էլ սպասեցէք. տեսէք, ես նրան ինչպէս փողոցի միջին շան նման քօթակել տամ, այնքան խրվեմ, այնքան խփեմ, որ մի տարի տեղաշորի մէջ պառկած մնայ, պատասխանեց Սաշան:

—Ծեծել տալը զարդակ բան է, Սաշա. դրանով դու չես կենդանանալ և քո ընկած պատիւը չի վերականգնի, միջամտեց մի հայ աստիճանաւոր:

«Այո, այո, սպանել, սպանել այդ կոպիտ գիւղացու ֆոտը վերջացնել աշխարհից, շեշտելով պատասխանեց Աւագը: Սաշայի պատիւը վերականգնելու համար ոչինչ չեմ լինայի: Համ կը սպանեմ, համ կը ծախսեմ, համ կ'ազատուեմ»:

Ե

Ամբողջ 25 տարի էր այրի Հեղնարը իր մինուճար Ամբակում որդու հետ ապրում էր Տէր-Ղաղարի տանը:

Վշտալի այրին, Ամբակումի վեց ամսական եղած ժամանակ, կորցնելով իր հարազատ ամուսնուն, ապրում էր այս տան մէջ Տէր-Ղաղարի հովանաւորութեան տակ: Անբախտ Հեղնարը, իր համեստութեան, իր օրինակելի վարք ու բարքի, իր ջանասիրութեան պատճառով, ընդունուած էր այս նահապետական տան մէջ որպէս հարազատ մայր, որպէս յարգուած տան տիկին. առհասարակ սնտեսական կառավարչութեան մէջ տրուած էր սրան լիակատար իրաւունք: Այրի Հեղնարը գիշեր ցերեկ կարում էր, կարկատում, ելիում, թափում, ամենքին կերակրում, սար գնում, եղ ու պանիր պատրաստում, հաց թխում, երեխաներին պահպանում, հիւրերին հիւրասիրում և այլ տնական զանազան գործեր կատարում:

Ի՞նչ էր այս ողորմելի կնոջ վարձատրութիւնը: Ոչինչ. մի ձեռք հագնելիք և մի փոր հաց:

Ի՞նչ անէր անբախտ այրին. աշխարհի երեսին ոչ մի ազգական և պաշտպան չունէր. իսկ Ամբակումը դեռ ջահէլ և հովանաւորութեան կարօտ: Այդ պատճառով որպէս այրի կին, զանազան բամբասանքներից ազատ մնալու և իր պարկեշտութիւնը անարատ պահելու համար, մտել էր Տէր-Ղաղարի հովանաւորութեան տակ և գիշեր ցերեկ աշխատում էր, տանում էր հաղար ու մի տեսակ դժոխային չարչարանքներ և սպասում էր Ամբակումի մեծանալուն:

Ոչ մի մայր այնքան գորով ու գուժ չունէր իր որդու վրայ, որքան Հեղինարը դէպի իր Ամբակումը: Սիրում էր խելագարուածի նման. ինչ սիրել, պաշտում էր, պաշտում: Մի օր ուշ տեսնելիս խելքը թուցնում էր, խելագարուած էր:

«Ամբակում ջան, բաւայ ջան, անոռ ջան. գանս, հողիս, հրեշտակս, արեւոդ մատաղ, գլխիդ զուրպան, չարդ տանեմ...» Սիրահարուածի նման միշտ կրկնում էր խեղճ այրին, թէ Ամբակումին տեսնելիս և թէ նրա բացակայ ժամանակ: Աչքը տեսած ժամանակ, իսկոյն փաթաթւում էր, գրկում, համբուրում, զանազան քաղցր հարցեր տալիս, սիրաշահում, իր մայրական բոլոր խանդն ու գորովը չռայլում, բայց չէր կշտանում: Հեղինարի ցաւերը անթիւ էին, նրա վշտերը բազմաթիւ, նրա քաշած սև օրերը անհամար: Այժմ յոյսը զրել էր իր միակ Ամբակումի վրայ, որ մեծանայ և իր մօր վշտերը թեթեւցնէ, նրա սգի քօղը վերցնէ:

Ամբակումը արդէն 24 տարեկան էր: Երիտասարդութեան ամենածաղիկ հասակի մէջ: Դառել էր մի չինարի ծառ, մի յաղթանդամ երիտասարդ: Նա այժմ իր աշխատութեամբ կարող էր պահել իր մօրը:

«Տէր-տէր ջան, Ամբակումս այժմ հասած տղայ է, արտասուալի աչքերով ասաց Հեղինարը Տէր-Ղազարին, համբուրելով սուրը աջդ, ամենախոնարհաբար ինդրում եմ, իրաւունք տաք ինձ դուրս գալ ձեր տանից և իմ որդու հետ առանձին ապրել, բայց դարձեալ ձեր հայրական հովանաւորութեան, ձեր հսկողութեան տակ:

— Հեղինար, պատասխանեց Տէր-Ղազարը, քո առաջարկութիւնը շատ բնական է և օրինաւոր:— Թէև ձեր հեռանալը մեր տանը մեծ կորուստ է և մեզ բոլորիս համար շատ ցաւալի. բայց որովհետև քո ցանկութիւնն էլ իրաւացի է, այդ պատճառով պիտի կատարել ձեր առաջարկութիւնը: Ի հարկէ, Հեղինար անա, դու, ահա 24 տարի է որպէս հաւատարիմ տնտեսուհի ծառայեցիր մեր տան շահերին. այդ պատճառով ես արդէն մեր տղերանց հետ խօսել վճռել ենք, որ նախ Ամբակումին մեր տան մէջ նշանենք, հարսանիքը միասին վայելենք, հարսնայութիւն մի ձեռք տուն ընծայենք և ապա միայն թող տանք ձեզ բաժանուելու մեր տանից: Այս է մեր վճիռը և կարգադրութիւնը:

Հեղինարը համբուրեց Տէր-Ղազարի աջը և ուրախութիւնից լաց եղաւ:

Անցաւ մի քանի ամիս: Չմիտ էր: Տէր-Ղազարի տանը

սովորականից դուրս շարժողութիւն կար: Ասիական զուռնի կկկոցը և դաւուլի դմբդմբոցը ամբողջ քաղաքը զզրոյացնում էր: Զուռնաչի կակոսը իր սգեւորութիւնը ծայրայեղութեան էր հասցրել:

Ոմանք պարում էին, ոմանք երգում, ոմանք կոնծում: Հանդիսականների ուրախութեան չափ չը կար: Ամենից շատ ուրախ էր այդ օրը վշտալի Հեղնարը: Ա՛յնքան ուրախ էր, ա՛յնքան զուարթ, որ քիչ էր մնում, թեւ առնի, թռչի: Նրա վշտալի սգաւոր սիրտը, մօտ քսան և հինգ տարի ողբալուց յետոյ, այսօր չնծում, ուրախանում էր, որովհետեւ Ամբակումի հարսանեաց առաջին երեկոն է. թագաւորն ու թագուհին նոր ևն պոսկից եկել:

Տէր-Ղաղարը զինու բաժակը ձեռին օտի կանգնեց: Կանդնեցան և հանդիսականները:

— Լեւեցէք, հրամայեց սեղանի կառավարիչը, տէր-հայրը խօսում է:

«Ա՛չքդ լոյս, Հեղնար անա, երկու նորապսակների կենացը. անթառամ մնան այդ ծաղիկները: Աստուած նրանց միտսին խորին ծերութեան արժանացնէ: Դու, Հեղնար անա, որպէս հարազատ մայր, 24 տարի մեզ խնամեցիր, մինք բոլորս քո ձեռքի աշխատանքը վայելեցինք: Քո մայրական խնամքին արժանացանք: Ուրախութեան ժամանակ մեզ հետ ուրախակից ես եղել, ցաւերի ժամանակ մեզ հետ ցաւակից: Գիտեմ երկար ժամանակ է որ հազարաւոր վշտերի, նեղութիւնների, տառապանքների և անբախտութիւնների մէջ մահուել ես և աշխարհի զանազան տեսակ ձախորդութիւնների ու կիսանոսի կատաղի ալիքների հետ կռուելով այսօր ողջ և առողջ նաւահանգիստ ես դուրս գալիս: Ուստի օրհնում եմ քեզ և քո նորապսակ զաւակների կեանքը. յանկանում եմ ձեզ այսուհետեւ կատարեալ երջանկութիւն և անսպառ ուրախութիւն: Թէն կարճ ժամանակից յետոյ դու քո փոքրիկ գերդաստանով պիտի բաժանուես այս տանից, բայց այդ բաժանումը պիտի լինի միայն անձամբ, իսկ սրտով և հոգով մենք կը լինենք միշտ անբաժան: Դու դարձեալ այս օջախի մայրն ես և մեր բոլոր գերդաստանը քո զաւակները...»:

Վերջին խօսքերը տէր հայրը առանց արտասուքի, առանց յուզուելու չը կարողացաւ արտայայտել:

«Լեւեցէն, կեցցէն նորապսակեալները. կեցցէ՛ Տէր-Ղաղար հայրը. կեցցէ՛ Հեղնար անան, աղաղակեցին ամեն կողմից սեղանակիցները: Ուսն, ուռն, ուռն, գոռում էին ամեն կողմից և թնդացնում դահլիճը:

Դաւուլչին ու զուռնաչին կրկնապատիկ ողևորուեցին: Կրկին սխուեցաւ կենդապար, եայլի, չապանի, չորոր, լեղզին-կա, թարս պար, երգեր, զուարճախօսութիւններ, հանաքներ:

Հարսանիքը զուրս եկաւ փոշոյ: Դաւուլչին ու զուռնա-չին մի գեղեցիկ եղանակ ածելով առաջից գնում էին: Քաւորը, Սարգարը, Ամբակումը, Տէր-Դազարի եղբայրները և բարեկամ-ները գնում էին զուռնաչու ետեից ուրախութիւն անելով: Ամ-բակումը, այդ նորապսակ թագաւորը, Հեղնարի հրեշտակը, նրա անթառամ ծաղիկը դեռ պսակի նարօտը չէնքին, դեռ ձեռքերը հինարած, գնում էր բոլորի ետեից: Քաւորին ճանապարհ են գցում:

Որպէս զի նորապսակ թագաւորը չը մրսի, Սարգարը իր ետփունջին պցեց Ամբակումի վրայ:

Այս ընդհանուր ուրախութեան ժամանակ, մի չար ոգի ուրուականի նման, չար օձի պէս, ստուերների միջից, պատերի տակով, սուս, փուս սողում էր մեր ուրախ հանդիսականների ետեից, զննում էր նրանց և աչքերը չորս արած որոնում էր մէկին, և այդ մէկը, ինչպէս առաջուց տեղեկութիւն հաւաքել էր, եփուցնով պիտի լինէր: Չարագործը թագնուկ միութեան մէջ մի պատի տակ, մի նեղ անցքի մօտ, որտեղից բոլոր հան-դիսականները մի մին պիտի անցնէին: Բոլորը հարբած բղա-ւում, երգում, և զանազան ուրախութիւններ անելով գնում էին և ոչ ոք չէր նկատում թէ իրանց շուրջը ինչ չարագործու-թիւն է պտուտում: Ահա չարագործը դաւա իր որոնած ուսը և առանց վարկեան կորցնելու արձակեց ատրճանակը: Անգութ գնդակը դիպաւ Ամբակումի ուղիղ ճակատին և այդ չինարի ծառը, այդ նորապսակ թագաւորն անշունչ փռուեց դետին:

Խեղճ Ամբակում, անմեղ զոհ, Սաշա Պետրովիչը քեզ չէր որոնում, այլ Սարգարին, իր սխերիմ թշնամուն, իրան խայտա-ռակողին, բայց չփութութեան մէջ, չը կարողացաւ որոշել Ամ-բակումը Սարգարից: Չարագործին հասկացրել էին որ Սարգա-րը ետփունջով է. Սաշան էլ անկիւնից ատրճանակը ետփութովի վրայ արձակեց:

Զուռնայի ձայնը կտրուեցաւ, ուրախութիւնը սուղ դառաւ: Հարբածները սթափուեցին:

Անբախտութեան լուրը հասաւ անբախտ Հեղնարին: Ո՛վ մայր է, թող զղայ նրա ցաւը, ո՛վ ծնող է, թող հասկանայ նրա վիշտը:

Քսան և չորս ատրուայ սգի քօղը դեռ նոր էր գէն դրել, բայց այժմ աւելի խուսար աւելի թանձր սե քօղ քաշեցին նրա

գլխին: Վշտալի այրին իր այրի հարսի երեսին ամեն անգամ մտիկ անելով այրեում, խորովում, հրդեհը ընկնում էր և ամբողջ մարմինը լավում: Անբախտ այրի, մի ժամ առաջ պարում էիր և կարծում էիր թէ մի քանի օրից յետոյ առանձին տուն կը չինես և վերջին օրերդ հանդիստ կ'անցկացնես քո փոքրիկ և անուշ գերդաստանի հետ, միթէ չը գիտէիր թէ սև ճակատագիրը վճռել է, որ դու տանջանքների մէջ վերջացնես քո բազմաշարժար կեանքը...

Ը

Այս քստմնելի եղեռնագործութիւնը սաստիկ զրգոնց ժողովրդին: Բոլորը կատաղած էին, բոլորը զայրացած: Եթէ ոստիկանութեան միջամտութիւնը չը լինէր, արդար բարկութեամբ զրգուած ամբոխը տակն ու վրայ պիտի անէին Սաշայի տունը իր գլխին:

Իսկ չարագործը վստահ իր ոսկու կոյտի վրայ, փողոցի միջին, ահապին բազմութեան առաջ մարդ է սպանում իր գաղանական կրքերը յագեցնելու համար:

Հէնց այդ եղեռնագործութեան գիշերը մարդասպանի մօտ, բանտում, հաւաքուած նրա խորհրդակիցները, ծրագիր էին կազմում, թէ ինչպէս արդարացնեն մարդասպանին:

—Մի վախենար, Սաշա, քանի եղիր, ոչինչ չեն կարող անել, մենք քեզ կ'օգնենք, խրախուսում էր մարդասպանին բռնողապէս փչացած մի ծառայող:

Եւ կորկոտնաց գերդաստանը ոսկու պարկի բերանը լայն բաց արաւ և առանց աջ ու ձախ նայելու շոյլաբար սկսեց շաղ տալ և բազմութիւ մարդիկ կաշառել, սուտ վկաներ ճարել, կեղծ հանգամանքներ ստեղծել:

Անցկացաւ մի տարի: Նշանաւոր քաղաքներից մէկում, մի հոյակապ շինութեան առաջ խոնուած էր ահապին բազմութիւն: Ամենքը աշխատում էին ներս մտնել, բայց չատերին չէր յաջողւում, որովհետև շինութեան ներսը այնքան էին լցուել, որ աւելի քցելու տեղ չը կար: Այս շինութիւնը քրէական յանցանքների ամենաբարձր դատարանն էր: Այդ օրը այդտեղ քննւում էր մարդասպան Սաշայի գործը: Ամենքը անհամբեր սպասում էին գործի վախճանին:

—Ի հարկէ կ'աղատուի, պնդում էին մի քանիմաները:

«Եղբայր, կաշառքը մութ տեղը լոյս կը տայ, աւելա-

ցնում էին միւսները. 25 հազար մանէթ միայն վկաներին են տուել, հազար միւսները որքան են կերել, Աստուած գիտէ:

—Եղբայր, հրաւիրուած է Ռուսաստանի ամենահռչակաւոր փաստաբանը Սաչային պաշտպանելու համար, ասում էր միւսը:

Եւ, արդարեւ, պերճախօս փաստաբանի չնորհիւ Սաչան յաւիտենական աքսորի փոխանակ դատապարտուեց միայն մի տարի բանտարկութեան...

Բայց ի՜նչ եղաւ Հեղինարը, այն անբախտ վշտալի այրին, Ամբակումի թշուառ մայրը: Ամբողջ եօթը տարի սգի շորերի մէջ «սխ, բալա ջան» վայվույով գերեզման մտաւ...

Ս. Տ.-ՄԵԼՔԻՍԵԴԵԿԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԿՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Որքան Ատրպատականի հայերի տնտեսականը, նոյնքան էլ և նրանց կրթական գործը, լուսաւորութեան խնդիրը անմխիթար դրութեան մէջ է գտնուում:

Ատրպատականի շատ գաւառամասերում հայ ժողովուրդը այն աստիճան ձուլուել է տիրող տարրերին, որ գրեթէ մոռացել է իր մայրենի լեզուն, կորցրել է ազգայնական առանձնայատկութիւնները. շատ տեղերում խօսում են աղաւաղուած հայերէնով, իսկ մի երկու գաւառներում խօսում են թուրքերէն կամ քրդերէն: Քիչ չեն և այնպիսի գիւղերը, ուր քահանայ անգամ չը կայ, և նրանք, քահանայ պէտք լինելիս, բերում են մօտակայ գիւղերից կամ քաղաքներից:

Ամբողջ Ատրպատականում միմիայն Թաւրիզն է կրթութեան կողմից քիչ ու շատ նախանձելի վիճակ ներկայացնում: Դպրոց իր ճիշտ և իսկական նշանակութեամբ վերցրած միայն Թաւրիզումն ենք հանդիպում: Բայց միայն Թաւրիզով լինչ կարող ենք անել:

Այսպիսի անմխիթար դրութիւն է ներկայացնում ոչ միայն Ատրպատականի, այլ և ամբողջ պարսկահայերի կրթական գործը: Ժողովուրդը անտարբեր է, նա չէ հասկանում, և չի էլ կարող ըմբռնել, դպրոցի և կրթութեան իսկական նշանակութիւնը, նա, ինչպէս ամեն գործում, կրթական հիմնարկութեան մէջ էլ շահ է որոնում: Հերիք է, որ սղան սովորեց գրել-կարդալ, հօ վարդապետ չէ լինելու. մէկ-մէկ նամակ գրի, կարողանայ իր հաշիւը պահել և բաւական է. ահա այդպէս է մտածում ոչ միայն գաւառացի հայը, այլ և թաւրիզցին:

Այս բոլորի վրայ եթէ աւելացնենք և այն, որ միշտ էլ գաւառներում լաւ և ոգևորուած գործիչների զգալի բացակայութիւն է եղել, այն ժամանակ, կարծում ենք, պարզ կը լինի մեզ թէ ինչո՞ւ այսպիսի աննախանձելի և վատթար վիճակի մէջ է կրթական գործը:

Թէն պարսկահայերի կրթական գործը վերջին մի քանի տարիներս հերթական խնդիրների շարքն է մտել և իր վրայ է դարձրել որոշ ուշադրութիւն, բայց մինչև^{*)} այժմ դրական ուշինչ չէ արուած: Ծիշտ է, փքուն ծրագիրներ կազմուել են, մտքեր յուզուել, աղմուկներ բարձրացրել, բայց ի՞նչ օգուտ դժբանցից. դառն և ցաւալի իրականութիւնն էլի նոյնն է, համարեա անփոփոխ: Դրական և գործնական ձեռնարկութիւն է հարկաւոր: Գործելու ասպարէզը ընդարձակ, կարիքները շատ, տիրապետող կառավարութիւնն էլ ամեն յարմարութիւններ և լիազօրութիւն չնորհելուց զատ, ինչպէս ֆէրմանը, աջակցում էլ է. սրանից էլ աւելի ապահովութիւն և գործ? Մնում է միայն խոհեմութեամբ, առանց լուր աղմուկներ բարձրացնելու սկսել և առաջ տանել կրթական-դաստիարակչական գործը:

Ծանօթացնելու համար կրթական գործի այժմեան վիճակի հետ Ատրպատականում՝ վերջները իւրաքանչիւր գաւառը առանձին-առանձին:

Սկսենք Սալմասից, որը Ատրպատականի ամենաբերրի և հայաշատ գաւառն է: Սալմաստի հայերը^{*)} ցրուած են 28 գիւղերում. սրանցից միայն 6 գիւղերը զուտ հայաբնակ են, իսկ մնացածները խառն են թուրքերի և ասորիների հետ:

Այդ 28 գիւղերի մեծագոյն մասը զպրոցի երես չի տեսել և միշտ էլ մի քանի գիւղերի վրայ է կենտրոնացած եղել գործունէութիւնը: Առաջնորդական վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ 1898 թուին 1,569 տուն ունեցող Սալմաստը ունեցել է միմիայն 15 ուսուցիչ և մի ուսուցչուհի, իսկ 432 աշակերտ. այն ինչ 1,200-ից աւելի զպրոցական հասակի մանուկներ դուրս են մնացել, դեռ չը հաշուած 500 տուն դաղթականները, որոնք բնակութիւն են հաստատել Սալմաստում, չի հաշուած նաև աղջիկները, որոնց կրթութիւնը բարձի թող է արած: Թէն ահա 15—20 տարի է, ինչ Սալմաստում կրթութիւն է սկսուել, բայց համարեա ոչինչ աչքի ընկնող բան չէ արուած:

Եւ գիտէք ինչո՞ւ. չէ պատահել որ մի գիւղ մի քանի տարի շարունակ կանոնաւոր զպրոց ունենայ. տեսնում էք մի որ և է գիւղում այս տարի ուսումնարան բացուեց, բայց յանկարծ յաջորդ տարին փակուեց: Բացի այդ, Սալմաստը շատ քիչ եռանդոտ և պատրաստուած գործիչներ է ունեցել. սխտեմատիկ և որոշ ծրագրով դաստիարակութիւն չէ եղել, մեծ մասով տիրացուները և չարչի ուսուցիչներն են եղել կրթութեան ղեկավարները, դաստիարակները:

*) Համեմատել՝ «Մուրճ» 1901 թ. №№ 5, 6—«Սալմաստի հայերի ներկայ վիճակը»:

Այժմ *) Սալմաստի միայն Ղալասադ գիւղում փոքր ի չատէ կանոնաւոր դպրոց կայ, միգասեան և երկսեռ, մէկ էլ Համքունում, այն էլ այս տարի է միայն փոքր ինչ կանոնաւորուել. իսկ միւս բոլոր գիւղերը զրկուած են դպրոցներից: Մահլամը թէև ունի կանոնաւոր գրադարան, ունի մեծ թուով գրքեր և 800 ուսւրի, բայց բոլորովին անխնամ վիճակի մէջ է գտնուում: Այդ գրադարանը կազմել են մահլամցի մի խումբ պանդուխտներ:

Այստեղ չի կարելի չը չեշտել մի ուշադրութեան արժանի հանգամանքի վրայ: Ճիշտ է, ինչպէս տեսնում էք, Սալմաստում չը կան դպրոցներ, բայց մեծ է մասնաւոր պարապոզների թիւը, որոնք, դժբախտաբար, իրանց զարգացումով հասարակ ժողովրդից քիչ են տարբերւում: Փոքր ինչ սե ու սպիտակ ճանաչողը, գրել-կարդալ գիտցողը 3—15 աշակերտ և աշակերտուհի է հաւաքում շուրջը և պարապում նրանց հետ: Միայն Փայաջուկ գիւղը, ինչպէս ձեռքիս տակ եղած ցուցակն է ցոյց է տալիս, ունի 15 մասնաւոր դպրոցներ, եթէ կարելի է այդ անունը տալ նրանց: Նոյն այս ցաւալի վիճակն է, չատ քիչ փոփոխութեամբ, դեռ աւելի վատթար, և միւս գիւղերում: Նրանք աւելի ճշող պատկեր են ներկայացնում, քան ողորմելի Փայաջուկը, անմահ Բաֆֆու ծննդավայրը:

Ահա Սալմաստի, Ատրպատականի ամենահայտնատ և կարևոր գաւառի, ողորմելի կրթական գործը: Անցնենք միւս գաւառներին:

Ղարաղաղը բազմամարդութեան կողմից, Սալմաստից յետոյ, երկրորդ գաւառն է համարւում Ատրպատականում: Ղարաղաղը բաժանուած է 4 գաւառակների.—Դզմար, Մեչափարա, Մնջուան և Քէյվան: Այս գաւառում հայերի թիւը հաշւում են 6000, որոնք բնակւում են 28 գիւղերում: Թէև այս լեռնոտ երկիրը ունի բնական հարստութիւններ, հանքային ջրամուկներ, պղնձի և երկաթի հանքեր, ծածկուած է հարուստ անտառներով, և միևնոյն ժամանակ տուել է հարուստ վաճառականներ, նոյն իսկ միլիոնատէր, ինչպէս Թումանեանները, բայց չը նայած այս բոլորին, նա էլի տնտեսապէս ընկած է: Այս խնդրում, կարծում եմ, հարստահարութիւնների և կոդպուտների հետ միասին որոշ տեղ բոնում է և զարադաղցիների տգիտութիւնը, որը չատ լայն չափերով է տիրում այստեղ: Ղա-

*) Ինչպէս Սալմաստի, չնոյնպէս և մի քանի տեղերի ներկայ կրթական գործի մասին տեղեկութիւններ ստացել եմ հէնց այն տեղերում այժմ գործող ուսուցիչներից:

րադադրի կրթութեան խնդիրը շատ աւելի ծանրանում է Թու-
մանեանների վրայ, քան ուրիշների: Ղարադադրին չունի այն-
քան պատրաստութիւն, որ կարողանայ օգտուել ինչպէս հարկն
է իր բնական հարստութիւններից, պէտք է սովորեցնել նրան:

1898 թուին կազմած վիճակագրութիւնը ցոյց է տալիս,
որ նոյն տարում ամբողջ Ղարադադը ունեցել է միմիայն մեկ
ուսումնարան, այն էլ 16 աշակերտով: Ահա ձեզ առաջագիմու-
թիւն. 6000 բնակիչ ունեցող Ղարադադը միմիայն 16 աշակերտ
է ունեցել: Գուցէ սա ձեզ անհաւատալի թուայ, բայց ոչ, դառն
իրականութիւնն է սա, որ երբէք չի կարող պատուել բերել Ղա-
րադադի ականաւոր հարուստներին և մեղիքներին: Ի՞նչ է ներ-
կայացնում այժմ. միայն Աղադանում, Ողանում և Խանազեանում
ուսումնարաններ կան, այն էլ առանձին բան չեն ներկայացնում:
Ղարադադի քահանաները բոլորովին աղէտ են, կան այնպիսի-
ները, ինչպէս պատմում են, որ դրել-կարգալ էլ չը դիտեն:

Ուրմի գաւառն էլ համարեա նոյն պատկերն է ներկայա-
ցնում. ճիշտ է, Ուրմի գաւառի մի քանի գիւղերում կան մի-
ղասեան երկսեռ ուսումնարաններ, ինչպէս Նախջիւղան-Թափա,
Ռահվա, Իքի-աղաջ, Բաբառու, Դիզա-Թաքա, Թումաթար, և
Ուրմի քաղաքում, բայց նախանձելի զրութիւն ներկայացնելուց
շատ հեռու են: Այս ուսումնարանների մեծ մասը, ինչպէս յայտ-
նի է «Մուրճի» ընթերցողներին պ. Տ. Օտեանի գրածքից *), բաց-
ուել է Թաւրիզի կանանց բարգ. ընկերութիւնների (այժմ
միացած) ջանքերով:

Մարաղան և Արդաբիլն էլ կարելի է վերև յիշուած գա-
ւառների շարքին դասել: Արդաբիլը 30 տուն ունի. ժողովուրդը
տնտեսապէս անհամեմատ լաւ, մանաւանդ Մարաղայինը, որ ունի
մօտ 200 տուն: Սրանք ամենայն հեշտութեամբ կարող են պահել
մի մի երկդասեան երկսեռ դպրոցներ: Մարաղան այժմ ունի մի
դասեան կանոնաւոր ուսումնարան, իսկ Արդաբիլը երբեմն ու-
նենում է, երբեմն փակւում:

Գալով Խոյ գաւառին, ուր կայ մօտ 1900 բնակիչ և որոնք
սպրում են 7 գիւղերում, պէտք ասել, որ թէ տնտեսապէս և
թէ բարոյապէս բոլորովին ընկած է, իսկ մտաւոր շարժում և
կեանք միանգամայն բացակայում է: Ժողովրդի անտարբերու-
թիւնը գէպի կրթութիւնը անասնական աստիճանի է հասել:
Դպրոցի հետք անգամ չը կայ. հայերը շատ քիչ բաներով են
տարբերւում բնիկներից:

Առաջ բերած գաւառները, չը հաշուած Խոյը, և քաղաք-

*) «Կապուտանի Արեմտեան ամսագիր», 1902, №№ 1 և 2.

ները իրանց ողորմելի կրթական գործով, ողորմելի մտաւոր առաջադիմութեամբ, շատ նախանձելի վիճակ են ներկայացնում Ուրմիոյ լճի հարաւային գաւառակների հետ համեմատած: Երեւակայեցէք ուրեմն, ի՞նչ պէտք է լինեն դրանք: Ուրմիոյ լճի հարաւային կողմում գտնւում են Բարանդուզ, Սուլդուզ, Սօուշ-բուլազ և Միանդուաբ գաւառակները *): Հայերը, որ հաշւում են մօտ 500 տուն, սպրում են թուրքերի և ասորիների հետ խառն: Ժողովուրդը վերին աստիճանի աղքատ է, նա հետզհետէ ձուլւում է քրդերի և թուրքերի հետ: Շատ գիւղեր այդ գաւառներում կորցնում են իրանց մայրենի լեզուն, իսկ մնացած դրեթէ բոլոր գիւղերում խօսում են աղաւաղուած հայերէնով: Նրանք մոռանում են իրանց ազգայնութիւնը և անպայման մատնուած են կորստի: Այս գաւառների շատ գիւղերը չունեն նոյն իսկ քահանայ. մեռելները չաբաթներով անթաղ են մնում, մինչև մօտիկ քաղաքից կամ գաւառից քահանայ է գալիս: Սա առասպել չէ, այլ ցաւալի իրականութիւն: Կորստի մատնուած այս մի բուռը ժողովուրդը կարգին ուսումնարանի երես չէ տեսել, անցեալներում մի բարեգործի հաշուով Նազադէյ գիւղում դպրոց բացուել է, բայց միայն 6 ամիս է կեանք ունեցել, իսկ այժմ Դարալաք գիւղում կայ մի ողորմելի դպրոց: Ճիշտ նոյն այս պատկերն է ներկայացնում և Մակուն. չը կայ և ոչ մի դպրոց:

Մինչև այժմ հնար եղածին չափ մենք ներկայացրինք գաւառների մտաւոր զարգացման մօտաւոր պատկերը: Այժմ տեսնենք թէ ինչ վիճակի մէջ է կրթական գործը Թաւրիզում:

Ամբողջ Ատրպատականում, նոյն իսկ Պարսկաստանում, միմիայն Թաւրիզն է կրթութեան կողմից նախանձելի դրութեան մէջ, այստեղ միայն գոյութիւն ունեն եւրոպական մոդով վերցրած դպրոցներ:

Թաւրիզը իրաւամբ կազմում է Ատրպատականի զարգացման կենտրոնը: Թաւրիզը որ ունի մօտ 700 տուն հայեր, բաժանուած երկու թաղերի, ունի տղայոց հինգ դասեան (8 բաժանմունք) և օրիորդաց երկու դասեան (5 բաժանմունք) կանոնաւոր դպրոցներ:

Լիւաւա-թաղի տղայոց «Հայկազեան» դպրոցը սրանից չորս տարի առաջ երկդասեան էր, բայց հոգաբարձուների և թէ ներկայ ուսուցչական խմբի ջանքերով հասաւ ներկայ վիճակին:

Ղալա-թաղի Արամեան և ս. Աննայեան դպրոցներն էլ

*) Համեմատիր «Մուրճ» 1901 թ. № 8. «Կորուստի մատնուած հայեր Պարսկաստանում»:

վերջին երկու տարիներս առաջադիմական քայլեր են անում: Օրիորդաց դպրոցների բաժանմունքների թիւը չի բարձրանում մասամբ նրանից, որ ամուսնութիւնները վաղաժամ են լինում:

Թաւրիզի երկու թաղերում կան մանկապարտէզներ, ուր սովորում են 4—7 տարեկան երեխաներ, և արհեստանոցներ, ուր օրիորդները սովորում են կարուծել: Մանկապարտէզները առաջ են տարւում բաւականի կանոնաւոր և լաւ, մանաւանդ այս տարի. այդ դովելի է: Բայց գալով արհեստանոցներին, ցաւալով պէտք է ասենք, որ քիչ հմտութիւն են տալիս աշակերտուհիներին:

Բացի Ղալա և Լիլաւա-թաղերի ազգային դպրոցներից, Թաւրիզում ունեն դպրոցներ նաև բողոքական և կաթոլիկ միսիօնարները: Բողոքականների դպրոցը ահա մօտ 20 տարի է, որ գոյութիւն ունի, իսկ կաթոլիկները անցեալ տարւանից են բացել: Այս դպրոցներում դաստիարակութիւնը տարւում է ամերիկական քօլէջների ձևով: Տեղացիները իրանց տղաներին ուղարկում են կաթոլիկների մօտ, որպէսզի ֆրանսերէն սովորեն և իբր թէ կարողանան իրանց կեանքը ապահովել, իսկ ուղարկում են բողոքականների մօտ, որովհետև այնտեղ ձրի են ընդունում, և եթէ թոշակ էլ կայ, համեմատաբար քիչ է:

Ահա բովանդակ Ատրպատականի լուսաւորութեան ողորմելի և դառն պատկերը:

Ինչ անել ուրեմն Պէտք է նախ և առաջ օգնութեան հասնել գաւառներում: Բայց ինչպէս երևում է առաջնորդ Մուրադեանին աւելի զբաղեցնում է Թաւրիզի կենտրոնական դպրոցի խնդիրը:

Չը գիտենք, ինչո՞ւ է այդքան ձգտում նա, այն էլ շատ չուտով, հիմնել կենտրոնական դպրոց Թաւրիզում, այն էլ այնպիսի տեղում, ուր կան 5-դասեան դպրոցներ, ուր կրթութիւնը տարւում է բաւական կանոնաւոր հիմունքներով:

Կենտրոնական դպրոցը դեռ անցեալազգելի կարիք չի ներկայացնում, և Կենտրոնական դպրոցը մի քանի հազար թումաններով չի կարող կառավարուել, հարկաւոր է խոշոր գումար, դոնէ 50—100,000 ուրբի, որ դպրոցը ապահովի: Այն ինչ այժմ կանխիկ կայ Կենտր. դպրոցի անունով միմիայն 100 թուման (1800 ո.)... Աւելի լաւ է եղած դպրոցներից մէկն ու մէկը վերածեցէք Կենտրոնականի... Ինչ և իցէ, չը պէտք է շտապել, անհրաժեշտ է շատ խոհեմութեամբ, խնդիրը բազմակողմանի ուսումնասիրութիւնից յետոյ և առանց աղմուկների առաջ տանել գործը...

Առ այժմ, աչքի առաջ ունենալով գաւառների ներկայ ցա-

ւալի վիճակը, մի կողմ պէտք է թողնել վերոն ծրագիրները, Կենտրոնական դպրոցի խնդիրը. անհրաժեշտ է տալ ժողովրդին դէթ տարրական կրթութիւն: Այս բանին հասնելու համար բաւական է հէնց որոշ տեղեր միմիայն միդասեան և երգասեան դպրոցներ բանալ, իսկ մի քանի յարմար և կարևոր կենտրոններում, ինչպէս Սալմաստում, Ղարադաղում և Ուրմիայում, մի մի երեքդասեան կամ չորսդասեան դպրոցներ հիմնել: Տուէք մի շարք ստորին դպրոցներ, միայն կանոնաւոր հիմքերի վրայ զրուած. ունենանք գաւառական տարրական դպրոցների համար մի ընդհանուր տեսուչ, որ չըջի գիւղերը, հսկի դաստիարակութեան վրայ, ուղղութիւն տայ, ուսուցչական ընդհանուր ժողովներ կազմակերպի. Թաւրիզի դպրոցը ընդարձակէք, ուղում էք կենտրոնականը վերածէք. մի խօսքով՝ դիւրաւ իրականացուող ծրագիրների հետեւէք և արդիւնքը աւելի բեղմնաւոր կը լինի...

ԵՐ. ՖՐԱՆԳԵԱՆՅ

Ը Ն Կ Ա Ծ Ը

«Ով ձեզնից անմեղ է, թող առաջ նա՝
քար զցի դրա վրայ»:

Ա. Լ. Ե. Ս. Ս. Ս.

I

Աղաղակ, գոռում-գուհում... «Մահ, մահ չնայողին, քար-
լոծել, ոտի տակ տալ անբարոյականին», լսում էր այդ աղա-
ղակի միջից: Յուզում, կատաղած ամբողջ առաջն արած մի
կին փողոցից փողոց էր անցնում և իր խումբը ստուարացնում
նորանոր եկուորներով: Մարդիկ թքում, հայհոյում էին կնոջը,
իսկ կանայք, կատաղած վագրերի նման, քիչ էր մնում յար-
ձակուէին յանցաւորի վրայ և ծվիկ-ծվիկ ճղճղէին նրա հագի
գեղեցիկ շորերը: Նրանք չէին կարողանում իրանց սրտի ու-
զածը անել, բաւականանում էին միայն ձեռքերի շարժումներով
և դէմքերի արտայայտութեամբ իրանց անասելի ատելութիւնն
ու զգուանքը ցոյց տալ:

Դանձաւայապետները, փարիսեյիները, զպիւրները, դատա-
ւորները—արդարութեան երգուեալ պաշտպանները, անմեղու-
թեան ու առաքինութեան փայլով գոյն առած արցունքները
աչքներին, անհուն բարոյականութիւն արտայայտող դողդոջուն
ձեռքերը երկինք կարկառած Աստուած էին կանչում խնայել
անմեղ ժողովրդին, մեղաւորի յանցանքի համար անմեղներին
չը դատապարտել:

Ընկած կինը մէկ ժպիտը բերանին, սիրալիր կերպարանք
առած, մէկ դողդոջ չրթուէքներով, սեւորակ աչքերում արցուն-
քը շարժած, դիմում էր սրան նրան, աղատել իրան ամբոխի
ձեռքից: Բայց ոչ ոք ուշ չը դարձրեց նրա մինչև մահ անկեղծ
սիրոյ խոստման, ոչ ոք ուշ չը դարձրեց նրա աղաչանք ու պա-
ղատանք արտայայտող դէմքին:

«Մահ, մահ չնայողին», գոչեց խուռն բազմութիւնը:

Յանցաւորը գողաց, սարսռեց. ահա մի րոպէ ևս և նա

քարակոյտով կը ծածկուի: Բայց ինչո՞ւ չեն վերջացնում իրանց դատաստանը, ինչո՞ւ են երկարացնում իր տանջանքը: Նրա կապտած չրթունքները, այլայլուած, յուզուած դէմքը, ցանցրիւ թափթփուած մազերը, կարծես, անխօս ասում էին՝ «վերջացրէք, անբարոյականին քարակոյտով ծածկեցէք»:

Բայց չէ, կարծես, նրա սրտում յոյսի մի նշոյլ ծագեց. ահա նա արհամարհական ժպիտը չրթունքներին՝ հեղնական հայեացք գցեց ամբոխի վրայ, գլուխը շարժեց, երեսն ի վար թափթփած դանդուր վարսը դէս-դէն արաւ և համարձակ քայլեց. ասես, նա կախաղանի էր դիմում գաղափարի համար մարտընչողի նման:

Ինչո՞ւ նա համարձակ կերպարանք առաւ, ինչո՞ւ սկսեց ամբոխին ատել, ինչո՞ւ մինչև անգամ Խարայէլի Աստուծու արդարադատութեան վրայ կիսով չափ կասկածեց:

Միթէ չը գիտէր բարոյականութեան երդուեալ պաշտպան քահանայապետների, դպիրների, փարիսեյիների անստակ կեանքը: Միթէ չէր տեսնում անմեղութեան դիմակով պաշտպանուած նրանց վաւաչոտ արտայայտութիւնը, Իսկ ամբոխը... ամբոխին էլ լաւ էր ճանաչում. արդեօք չը գիտէր թէ ինչու կանայք թքում, անէծք-պղծք են թափում և հեռանում զայրացած, կատաղի փրփուրը բերաններին: Արդար զայրոյթ էր.— Ո՛հ, ո՛չ, նա լաւ գիտէր, որ նրանք իրանց տեղն են մաքրում, իրանց կեղծ բարոյականութեան խոնաւացած, գոյնը թռած փայլն են նորոգում: Ահա մարդիկ, նրանք, որոնք ոչինչ չէին խնայում միայն թէ նրա սիրալիր քնքոյչ ժպիտին արժանանան, այժմ Մովսէսի պատգամը՝ «Մի՛ չնար» բերաններն առած՝ անառակին, յանցաւորին քարկոծել են կամենում: Աստուած, արդարադատ Աստուածն էլ նրա աչքում, կարծես, այն չէր, ինչ որ երէկ, միւս օրը. միթէ նա, որ ձեռնհաս է անքններին քրննելու, անտեսանելին տեսնելու, այժմ պիտի աչքերը փակի ամբոխի մեղքերի, յանցանքների համար և միայն իր յանցանքը տեսնի...:

«Մահ, մահ չնայողին, քարկոծել, քարակոյտով ծածկել անառակին», դարձեալ գոչեց ամբոխը:

Կին յանցաւորը, ցնցուած յանկարծ յետ նայեց. մոռացաւ այն բոլորը, ինչ որ մի քիչ առաջ պատկերացաւ նրա մտքի առաջ, հեգնական ժպիտը մի ակնթարթում փոխուեց և սկսեց աղերսող, անհանգիստ աչքերով դէս-դէն նայել: Նա փնտռում էր մէկին. ապրելու մի աղօտ լոյս փայլեց նրա աչքերում: Ահա, ահա գտաւ, ականջներին չը հաւատաց, երբ լսեց «քարկոծել» է ձայն տալիս և իր սիրելին: Նա ձեռքերը տարածեց, նրանից

օգնութիւն ինչորեց անխօս, բայց սիրելին զղուանքով երեսը չուս տուաւ և աւելի զայրացած դէմք աւանդով գոչեց՝ «քարկոծենք անառակին, քարակոյտով ծածկենք չնայողին»:

Կինը յետ յետ քաշուեց, նրա ծնիները ծալուեցան, սեւացան աչքերը, երկիրը ոտերի տակ չարժուեց, գլուխը պտոյտ եկաւ և նա այդ ժամանակ միայն կարողացաւ իր ամբողջ էութեամբ Աստուծու լոյսը աշխարհը անիծել. թքեց ամբոխի վրայ և կերկեր, հաղիւ հաղ լսելի ձայնով ինքն էլ ասաց՝ «քարկոծեցէք անբարոյականին»:

Ո՞ւմ դիմի, ո՞ւմ օգնութեան կանչի, աղաչանք ու պաղատանքին ուշ դարձնող չը կայ, մտածում էր նա ուշի գալով, արդարադատ դատաւորներ... ներել անկարելի է: Ձը կայարդարութիւն: Յանցաւոր է... Բայց ո՞վ չի յանցաւոր: Ո՞վ սովորեցրեց իրան այդ տեսակ կեանքը... Անմեղ էր, ինչպէս աղաւանի, սիրտը մաքուր էր, ինչպէս կապոյտ երկինքը: Բայց ո՞վ հանեց իրան ճանապարհից, ո՞վ իր անմեղութիւնը, սրտի մաքրութիւնը կեղտոտեց: Ահա, ահա այն քահանայապետը, ահա այն դպիրը, ահա այն փարիսեցին և ահա վերջապէս այս զղուելի հարուստ երիտասարդը: Նրանք չէին, որ մէկ մէկուց ծածուկ տիրելին իր սրտին, քամեցին իր կենսական ոյժը, ծծեցին վարչ շրթունքների մաքրութիւնը և թողեցին իրանց գարշելի բերանների անբարոյականութեան հետքերը: Այժմ ինքը անբարոյական է, այժմ ինքը անառակ է և բռնուած այդ յանցանքի մէջ... պէտք է քարկոծել... Իսկ եթէ չը բռնուէր, իսկ եթէ այդ կեղծաւոր գարշելի ժողովրդի անաստուած դատաւորը մինակ, առանց ուրիշների ներկայութեան բռնէր յանցանքի մէջ, միթէ դեղին ոսկիները կամ մի կեղծ համբոյր չէր փրկի իրան քարկոծելուց: Իսկ այն հարուստ երիտասարդը, որի հետ բռնուել է, միթէ նա պիտի ազատ, համարձակ ապրի և ինչպէս բարոյականութեան նախանձախնդիր, պատուաւոր քաղաքացի, արդար զայրութեմ դէմքին, իրաւունքով պահանջի՝ «քարկոծենք անբարոյականին»: Միթէ երկուսի յանցանքներն էլ մէկ չէ. ինչո՞վ, ինչո՞վ է զանազանում երկու յանցանքները: Եթէ քարկոծում են իրան, պիտի քարկոծեն և նրան, պիտի քարկոծեն և այն քահանայապետին ու դատաւորին, պիտի քարկոծեն և այն դպիրին ու փարիսեցուն... Նա, ինքը կին է ստեղծուած, ահա գաղտնիքը, միայն իդական սեռն է, որ չնախալ դիտէ, միայն լուգական սեռն է, որին կպչում է անառակ անունը, իսկ արուն, իսկ այդ հրէշ աղամարդը, այդ բարոյապէս խեղաթիւրուած սեռը իրան համարում է մաքուր, մաքուր, ինչպէս հրեշտակ...:

«Ո՛հ, ատելի աշխարհ, զգուելի մարդիկ, անաստուած դատաւորներ... Ձը կայ արդարադատութիւն, չը կայ Աստուած»:

«Մեղայ քեզ Աստուած, կուրծքը ծեծելով առաջ անցաւ մի փարիսեցի. Տէր, Դու խնայիր մեզ անմեղներին: Սուրբ քաղաքի աստուածասէր ժողովուրդ, շնացողը, որ այսօր անառակութեան մէջ է բռնուել, այժմ էլ աշկարայ ուրանում է Աստուծոյ՝ մեզ ամենուս ստեղծող Աստուծոյ գոյութիւնը: Ո՛հ, այլ ես անկարելի է համբերել, ժամանակ է, քարկոծենք անառակին. թող նրա մեղսալիք, զազրելի դիակի վրայ կուտակուած քարակոյտը վկայ լինի մեր առաքի՛նի կեանքի և արդարադատ վարմունքի: Թող տեսնի մեր յետագայ սերունդը այդ քարակոյտը և հետևի իր բարոյական նախնիքների օրինակին»:

«Ինչ էք ասում, նա—շնացողը ուրաջաւ Աստուծոյ գոյութիւնը, գաւազանը ամուր բռնած մօտեցաւ քահանայապետը, աշխարհիս վերջը մօտեցնլ է. պատուիր, գետին, մեր ոտերի տակ, հուր և ծծումբ թափիր, Ստեղծողդ Ամենակարող, մեր մեղաւոր գլուխներին: Այս ի՛նչ ենք տեսնում. այս ի՛նչ օրի հասանք: Լսեցէք, բարձրաձայն աղղարարեց քահանայապետը յուզուած դէմք առնելով, շնացողը ուրաջաւ Աստուծոյ գոյութիւնը, վերջացրէք, քարակոյտով ծածկեցէք նրա դիակը. բայց թոյլ տուէք անմեղներին համար Աստուծուն աղաչեմ ծնկաչոք, որ իր երկնառաք պատուհասը մեր գլխից հեռու տանի»:

Բարոյականութեան երգուեալ պաշտպանները չըջապատեցին յանցաւորին. չը գիտէր ում պատասխանէր. նրան քաջքում էին մի կողմից դատաւորները, միւս կողմից դպիրներն ու փարիսէյիներն էին նրան ստիպում յետ առնել բոլորի առաջ իր խօսքը. երրորդ կողմից քահանայապետներն էին գաւազանները ձեռներին երկիւղ տալիս և Աստուծու անէծքը թափում նրա գլխին: Իսկ յուզուած ամբոխը, ինչպէս ժահրադոյն գիզացած ալիք, կատաղի փրփուրը բերանին «շնացողը ուրանում է Աստուծու գոյութիւնը» գոռալով, քարերը ձեռներին յարձակուեցան յանցաւորի վրայ: Այլ ես ոչ մի յոյս չը մնաց ապրելու, վճռուեցաւ. անխուսափելի է նրա քարկոծուելը: Յանցաւորը մերթ սուղւում, կուլ էր գնում կատաղի ալիքների որովայնում, մերթ աւազի ու վտոշու մէջ կորած վեր բարձրանում և իրան կորցրած խռպոտ ձայնով մաղձը թափում ամբոխի գլխին: Լըսւում էր այդ աղմուկի միջից. «չը կայ արդարադատութիւն, չը կայ Աստուած...»: Քահանայապետներից սկսած մինչև այն ստոր ծառան, աղախինը անբարոյական շնացողներ էք... դուք ապրում էք և անառակ ապրողներդ, դատաւոր դարձած գլխիս, քարերը ձեռներիդ, ինձ պիտի քարկոծէք. դէ քարկոծեցէք, այլ

ևս չեմ վախենում, քանի շունչս բերանումս է, ևս բարձրաձայն կ'ասեմ՝ չը կայ արդարադատութիւն, չը կայ Աստուած:

Քահանայապետները, զպիրները, դատաւորները, փարիսեւեցիները չնջացին իրար ականջի, նշաններով խօսեցին և համաձայնեցաւ զեռ ևս չը քարկոծել յանցաւորին: Նրանք հեռուից նշմարել էին Յիսուսին նստած տաճարի առաջ և կամենալով Նրա վրայ ամբաստանութիւն բարդել՝ յանցաւորին Նրա մօտ տարան:

II

Յիսուս նստած տաճարի առաջ քարոզում էր ժողովրդին: Քահանայապետները, դատաւորները յանցաւորին կանգնեցրին Յիսուսի առաջ և առաջին. «Վարդապետ, այս կինը յայտնի կերպով չնացել և բռնուել է: Եւ Մովսէս իր օրէնքի մէջ պատուիրել է մեզ այդպէսնորին քարկոծել, հիմա Դու ի՞նչ ևս ասում դրա համար»:

Յիսուս ոչինչ չը պատասխանեց, անվրդով, գլուխը ցած, մատով գրում էր գետնի վրայ:

Կին յանցաւորը արհամարհանքով, հեղնակոն, կծու ժպիտը բերանին կանգնեց Յիսուսի առաջ և առանց ուշադրութիւն դարձնելու ուղղում էր ասել՝ «Դէ շուտով, Դու էլ ազգաբարի՛ր՝ ճարկոծեցէք անբարոյականին», բայց յանկարծ հէնց որ աչքերին ընկաւ Նրա խոր թափանցող, վճիտ, խաղաղ աչքերի վսեմութեամբ ու վեհութեամբ համակուած անհուն բարութիւնը, երբ Նրա մարմնացեալ հեղ ու առաքինի դէմքը տեսաւ, լեզուն պսպանծուեց, հեղնակոն ժպիտը մի վայրկեանում չքացաւ, չը կարողացաւ այլ ևս Նրա ազդու, արդարադատութիւն արտայայտող հայեացքը տանել: Աչքերի առաջ պատկերացաւ իսկոյն և եթ իր անբարոյական կեանքը կենդանի գոյներով նկարուած, նա կուէ եկաւ այդ պատկերի առաջ, սարսուռ զգաց ներսը, այլայլուեց, զգուեց իրանից իր ոչնչութիւնը տեսնելով, ջուխտ ձեռքերով պինդ ծածկեց երեսը և ինչպէս կը ցանկանար այդ տեղից փախչել, սրպէս զի այլ ևս չը տեսնի այդ մաքուր հայեացքը:

Նա ոչինչ չի պատասխանում, բայց Նրա լռութիւնը, Նրա սնսպհման բարութիւնը, անհուն վեհութիւնը աւելի սարսափելի է, քան քարկոծուելը... Ախ, եթէ նա հրամայէր հէնց այս րոպէին իրան քարկոծէին... այլ ևս չէր տանջուի, այլ ևս չէր ամաչի այդ վեհ, բարի, ազնիւ, անմոռնչ Մարդուց: Կը հանգըստանար... Չէ, անտանելի է իր դրութիւնը, զգում է այդ զօ-

բութեան ծանրութիւնը, ահա արագանում է սրտի բարախը, ահա չորանում, խանձւում է շնչափողը մի ակնթարթ հս... և ինքը ուշքից կը գնայ...

Սեւացան նրա աչքերի առաջ ամեն ինչ և նա խեղդուած հազիւ հազ լսելի ձայնով դիմեց ամբոխին՝ «Քարկոծեցէք խընդ բում հմ»:

Եինը մի քանի շարժումներ գործեց. նա, կարծես, ուզում էր միննոյն ժամանակ թէ փախչել և թէ իրան խեղդել թաշկինակով. չը յաջողուեց նրան այդ փորձը. նա, անմեղ երեսայի պէս, ծնկաչոք ընկաւ Յիսուսի առաջ. զամբած աչքերը, արհեստական արտասուքի սուլոր աչքերը վաղուցուայ, անդառնալի կերպով անցած դնացած տարիների բնական դերի մէջ մտան. — անկեղծ արտասուքի աղբիւրները բացուեցան: Նրա լացը, նրա հեկեկանքը սրտի խորքիցն էր բղխում, նրա արտասուքը, նրա հառաչանքը մանկութեան անմեղ օրերն էին յիշեցնում, զլորում էին ջերմ արտասուքների խոշոր կաթիլները, կարծես զլորում էին և սրտի վրայ շերտ շերտ նստած յանցանքները:

Քահանայապետները երկրորդեցին իրանց հարցը և ստիպեցին Յիսուսին պատասխանել: Այդ ժամանակ Յիսուս գլուխը վեր բարձրացրեց և ասաց. «Ով ձեզնից անմեղ է, բող առաջ նա՛ քա՛ գցի դրա վրայ»:

Յիսուս վերջացրաւ խօսքը և առանց ուշադրութիւն դարձնելու շրջապատուած ամբոխի և կնոջ վրայ, շարունակեց անվերջով գրել գետնի վրայ մատով:

Ի՞նչ պատահեց. այս ի՞նչ մեռելային լռութիւն տիրեց չորս կողմը. ո՛ւր են բարոյականութեան երդուեալ պաշտպանները, ո՛ւր են, ի՞նչ եղան բարոյականութեան նախանձախնդիր քաղաքացիք. ինչո՞ւ են իրարից ամաչում, ինչո՞ւ, ինչո՞ւ քարերը ձեռներից վար գցեց խաժամուժ ամբոխը:

Օտարոտի, անբնական, չը տեսնուած երեոյթ... մարդիկ առաջի անդամ տեսան միմեանց իրանց սեփական պատկերներով և իրարից ամաչելով, գլխիկոր, ազուէսների նման քըստալի պատերի տակով անցան, աներեւոյթացան...

Կարծես, հերոսի հմուտ, ուժեղ ձեռքի սուրն էր շողացել կայծակի արագութեամբ նրանց հպարտ-հպարտ տնկած գլուխների վրայ. կարծես, եփուած վարպետի ձեռքն էր ընկել նրանց բարութեամբ և առաքինութեամբ ոսկեջրած դէմքերը: Կորան հպարտ գլուխները, թռաւ կեղծիքը պաշտպանող ոսկեջուրը:

«Ահա արդարադատ Դատաւորը. չէ՛, ևս սխալուած եմ, կայ աշխարհում դեռ ևս արդարադատութիւն: Այո, միայն Սա

է արդարադատ, միայն Սա է բարձր, քան իմ բոլոր համաքաղաքացիները: Սա մի պաշտելի անձնաւորութիւն է. ես կը ծառայեմ Սրան. ես հէնց այժմեանից թողնում եմ իմ զգուելի կեանքը և դառնում սարուկը այս Մեծ Մարդուն: Ի՞նչպէս թեթև եմ զգում ինքս ինձ. կարծես, անցած գնացած անմեղ օրերս նորից վերագարձած լինին և դեռ չեմ ճանաչում այդ դարչելիներին. ինչպէս քաղցր է, ինչպէս ազատ եմ շնչում. կարծես Նա իմ ամենամօտիկ անձնաւորութիւնը լինի և այժմ կարծես կարող եմ ազատ Նրա աչքերին նայել...»:

Այսպէս մտածում էր կինը, երբ Յիսուս հարցրեց.

— Կի՛ն դու, որտեղ են, քեզ ոչ ոք չը դատապարտեց:

— Ո՛չ, Տէր, պատասխանեց կինը:

— Ես էլ չեմ դատապարտում քեզ. գնա և սրանից յետոյ էլ մի մեղանչիր:

Ս. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՑ

ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ

1

Հեղեղ կը գայ—սարից է,
Սարը ժէռ-ժէռ քարից է.
Ժէռ քարի պէս դարդ ունեւ,
Դարդըս անսիրտ եարից է:

2

Ձմեռն եկաւ, բուք բերաւ,
Մեր օջախին սուգ բերաւ.
Գալըդ սենար, այ ձըմեռ,
Ախպէրս ընկաւ ու մեռաւ:

3

Ինձ զօռում են, հարս անում,
Հարսանիք է մեր տանում.
Ա՛խ, իմ սիրած, հրտեղ ես,
Ձը սիրածն է ինձ տանում:

4

Ես անունով—Անուն էմ,
 Պաշով շաքար ու նուն էմ:
 Այ տղայ, դու ինձ մի սիրի—
 Համ ծաղիկ էմ, համ փուն էմ:

5

Աղջի, գլուխդ մի կախիր,
 Սիրտ առ, խալխից մի վախիր.
 Եարըդ սև ձին թամբել է,
 Թարբին թըռիր ու փախիր:

6

Անձրև կը գայ մաղելէն,
 Զիւան սիրտըս դաղել են.
 Զօլերն ընկած բըլբուլ էմ—
 Սիրած վարդըս քաղել են:

ԱՆ, ԾԱՏՈՒՐԵԱՆ

Ա Ղ Զ Ի Կ^{*)}

(Առողջապահական եւ բարոյագիտական եփուդ):

II

ՀՆԵՐԻ ՀԱՅԵԱՑՔԸ ԱՂԶԿԱՅ ՎՐԱՅ

Հնեի տրամաբանական հայեացքը կանացի սեռի վրայ.— Կնոջ անմահութեան գաղափարը.— Աղջկայ դուքիւնը հօր սանը.— Նրա վաճառումն.— Նրա ազատութիւնը քափառական լեռնային ազգերի մէջ.— Աղջիկը Սպարսայում:

Աղջիկը, որի աշխարհ գալը, ինչպէս տեսանք, աղէտ էր համարուում, մեծանալով մնում է նոյն արհամարհանքով, նոյն թագցրած թշնամանանքով պատած. նա պահւում է իբրեւ վաճառքի ապրանք, կամ ինչպէս տան բանուոր ոյժ ու բանուորի ապագայ մայր:

Մի քանի կիսավայրենի երկրներում աղջիկը անուն անգամ չունի, նա կոչւում է քոյր, դուստր, իսկ ամուսնանալիս նա ընդունում է մի ուրիշ կոչումն, օր. այնտեղի անունը, որտեղ ամուսնացել է: Չինական երկրներում արգելուած է նրանց տղամարդկանց հետ սեղան նստել, ինչպէս և արեւելքում: Հիւսիսում կինը իրաւունք չունի այժեամի միս ուտել: Այսպիսի վերաբերումն դէպի կանացի սեռը, բացի վերեւ յիշած դիտումներից, բացատրւում է և այն կարծիքով, որ ունեն մինչև հիմի էլ անբաղաքակիրթ ազգերը կնոջ դաշտանի ու ծննդաբերութեան պրօցեսների մասին: Կնոջ օրգանիզմի այս

^{*)} Տե՛ս «Մուրճ» № 3.

Ֆիլիօլօգիական ֆունկցիաները արատաւորող ու պղծող են համարուում, ինչպէս կը տեսնենք, երբ կը խօսենք դաշտանի մասին: Հայերի մէջ ևս շատ տեղերում ծննդկանին անսուրբ են համարում: Նրա բաժակը, ամանը, չանդալ-դանակը առանձին են պահում, և թոյլ չեն տալիս որ նա իր ձեռքով բան վերցնի: Կինն ինքն էլ նոյն համոզմունքին է, թէ իրաւունք չունի, այնպէս որ ծննդկանը ամբողջ օր կարող է բաղցած մնալ, եթէ նրան հաց տուող չլինի: Մինչեւ անգամ ծննդկանի ամբողջ տունը պղծուած է համարուում և հարկ է լինում փարատել նրան, որի համար քահանայ է հրաւիրուում:

Կնոջ անմաքրութեան գաղափարը պահպանուում էր ու շահագործուում բուրմերի և նոյնիսկ աւելի ուշ քրիստոնէական պաշտօնեաների կողմից, այսպիսով տղամարդ-հոգեւորականը իր համար հոգու փրկութեան մեռնաշնորհ էր ստեղծում:

Այսպէս, կնոջը իրաւունք չէր տրուում զոհաբերութիւն անգամ անելու.—զոհը պիտի տան տղամարդը բերէր: Մահմեդական երկրներում շատերը կասկածում են, թէ կինը հոգի ունի, և համոզուած են, որ յամենայն դէպս կնոջ արքայութիւնը տղամարդու արքայութիւնից ջուկ է: Հները համոզուած էին նոյնպէս, որ կանանց սեռը հանգերձեալ կեանքում ապրում է մռայլ դժոխքում, որտեղ Բեհլեբուլի իշխանութեան ներքոյ թափառում են նրանք ուրուականների նման:

Քրիստոնէական ուսմունքը ոչնչացրեց այս անվայել հայեացքը կնոջ վրայ, մի հայեացք, որ, ինչպէս կը տեսնենք յետոյ, չեն քաշուում պաշտպանել նոյնիսկ մինչեւ մեր օրերը յայտնի խորհողներն անգամ:

Մենք շատ հեռու կը գնայինք, եթէ աշխատէինք պատկերացնել ընթերցողի առաջ այն տարօրինակ վայրենի հայեացքները աղջկայ ու կնոջ վրայ, որ տիրել է և այսօր էլ տիրում է համարեա ամեն տեղ:

Այսպիսի պայմաններում ի հարկէ դժուար է արդէն խօսել հաւասարութեան, համակրանքի ու սիրոյ

մասին: Կնոջ նսեմութեան, նրա անմաքրութեան գաղափարում խոխոմած տղամարդու ուղեղը անկարող է ըմբռնել սիրոյ «զգացմունքի» նրբութիւնը, որովհետեւ նա անկարող է տարբերել այդ զգացմունքը տուփանքի հաճոյքից:

Հարեմային սիստեմը մի զօրեղ ապացոյց է, սակայն, սէր չճանաչելով հանդերձ, արեւելեան տղամարդը լրջուած է խանգով, որ ուղղակի հիւանդութեան և մութութեան է հասնում: Այդ խանգոտութիւնն է, որ չարսաւ է գցել կնոջ երեսին, որ փակել է կնոջը կանանոցի չորս պատերի մէջ, որոնց դռների ձեւքերից անխոնջ հսկում են անսեռ ներքինիները մռայլ աչքերը *):

Մինչև որոշ հասակը աղջիկը միմիայն առանց ծածկոցի է դուրս թողնուում, իսկ 8—10 տարեկանից սկսած նա պէտք է ծածկի իր ամբողջ մարմինն ու դէմքը (բացի մի աչքից):

Եթէ կինը բաղմամբիւ աղգերի մէջ այսչափ իրաւազուրկ էր, աղջիկը միանգամայն ստրուկ էր: Եւ, յիշաւի, նա ոչ միայն իր հօր գոյքն էր, այլև կախումն ունէր իր եղբորից, այն սկզբունքի հիման վրայ, որ տղամարդն է օջախի տէրը:

Նոյնիսկ կլասիկ երկրներում (Յունաստան և Հնդկում), մինչեւ անգամ մայրը պիտի խոնարհուէր իր որդու առաջ **): Հայրը և եղբայրը իրաւունք ունեն ծա-

*) Տղամարդու այս խանգոտութիւնն է, որ առաջ է բերել աչրի կնոջ սպանութիւնը ամուսնու դիւրեղմանի վրայ: Հնդկաստանում, Պերու, Միկսիկալում, աչրի կնոջ ողջ-ողջ թաղում էին ամուսնու կողքին, կամ աչրում էին նրա դիակի հետ: Մի որեւէ ինքնակալի մահից յետոյ նրա ամբողջ հարեմը աչրում էր: Համոզուած, որ ամուսնուց լեռոյ ալլ ևս իրաւունք չունեն ապրելու, կանայք իրանք սրբազան սպարտք են համարում ոչնչանալ իրանց ամուսնու մահից յետոյ: Իսկ եթէ նրանց արդելում է ալլ հրապարակաւ կատարել, հեռանում են անտառներն ու դադարնի տեղեր և այնտեղ ինքնասպանութիւն գործում: Մի քանիսի ատելով միայն Հնդկաստանում ամեն տարի աչրում էին 30,000 աչրի կին:

**) Թելեմակն ասում է իր մօրը. «Ն'ա դարձիր կանանոցը և պարապիր քո գործերով, հսկիր ճախարակիդ վրայ և կարգադրիր աղախինների պարապմունքը, որովհետեւ այստեղ միայն տղամարդիկ իրաւունք ունեն դատողութիւն տալու, և ամենից առաջ իրաւունքն ինձ է սպառնում, քանի որ ես եմ տանտէրը»:

խել տան աղջկան, կամ նուիրել ում կամենան: Շատ տեղերում մինչեւ այժմ դեռ գոյութիւն ունի հիւրասիրութեան այն քստմենքի ձեւը, որ տանտէրը գիշերը հիւրի մօտ է զրկում իր կնոջը կամ աղջկան: Հասունացած աղջիկը այսպիսով արժէք է ստանում և եթէ նա այնքան էլ օգտաբեր չէ ընտանիքի համար, գոնէ վաճառելու ապրանք է դառնում: սակայն այս կենդանի ապրանքը աւելի էժան էր, քան շատ անկենդան իրեր: Մովսէսի օրէնքով կինը այնքան արժէք, որքան ստրուկը, իսկ զուրանը աղջկայ գինը դրել է ոչ պակաս քան 10 դիրմ (1 ու. 50 կ.): Աղջիկ գնողը իրաւունք ունէր լաւ զննելու իր ապրանքը և դրանից է մնացել շատ տեղերում նորահարսին պսակից առաջ տկորացնելու ու զննելու սովորութիւնը, որ կատարում են կանայք:

Բազմակնութիւնը, հարեմային սիստեմը, մի ահագին առեւտուր էին սահմանել վաժաշոտ արեւելքում, մանաւանդ որ բազմակնութիւնը սրբագործուած էր կրօնով *): Մահամմէդի օրինակը սուրբ էր, և Արաբստանի կիզիչ արեւի տակ կրքերը բերբոքւում էին անդիմադրելի ոյժով ու ամբողջ երկիրը դարձրել էին հեշտասիրութեան բովարան: Մինչեւ այժմ, չնայելով Եւրոպայի արգելքներին, Պաղեստինէի, Արաբստանի, Իրանի հովիտում, Փոքր-Ասիայի, Աֆրիկայի լայնատարած մահմեդական երկրներում դեռ չրջում են «կենդանի ապրանքի» վաճառականներ, որոնք ամեն հնարքով որսում են սպիտակամորթ և սեւամորթ գեղեցկուհիներին և մատակարարում նրանցով զօրեղների հարեմներին:

Առհասարակ հին քաղաքակրթուած երկրներում աղջիկը աւելի անկախութեան նշոյլներ էր վայելում, որոնք միանգամայն խեղդւում ու ջնջւում են յետոյ:

*) Հնդկական երկրներում դեռ չի վերջացել աղջկայ ընծայարարումն տաճարին, այսպիսով էր որ կազմում էին խորամանկ քուրմերի հարեմները և միջնադարեան կաթոլիկ մենաստանները, որոնք ուղղակի դառել էին գեղիսութեան և անառակութեան որջեր!

Այսպէս, Եգիպտոսում մինչև սեմիթական ցեղերի տիրապետումն, կինն ազատ էր նոյնիսկ հասարակական գործերին մասնակցելու: Հրեաների մէջ աղջիկն ու կինը (գոնէ հին դարերում) նոյն իրաւունքներն էին վայելում, ինչ որ տղամարդիկ: Արաբստանում, ընդհակառակը, դեռ մինչև Մահամէդի երևալը, միանգամայն իրաւաւորիկ էր դարձրած: Այս մարդարէի ճիղը փոքրիշատէ պաշտպան հանդիսացաւ կնոջ, սակայն նա նկատելի կերպով չբարեփոխեց նրա հաւասարակական գիւրքը:

«Մի ընդհանուր հայեացք գցելով Արեւելեան կրօնական ուսմունքների վրայ, ասում է մի հետազոտող, մենք տեսնում ենք, որ նրանք ամենքը, թէև տարբեր ճանապարհներով, հասան միևնոյն նպատակին, այն է կնոջ ստորացման և նրա իրաւազրկման»:

Միակ բացառութիւն կազմում են այս տեսակէտից մի քանի լեռնաբնակ տեղեր. այսպէս, ճանապարհորդները սքանչանում են թուրքմէն, բուրդ, բեդուին աղջիկներին ազատութեամբ: Այս ցեղերի մէջ չկայ հարեմական կազմակերպութիւն, չկայ ուրեմն փակուածութիւն և ոչ չարսաւ: Աղջիկը ազատ է, ինչպէս իր լեռան այժեամբ ու իր վրանը միշտ տատանող քամին: Իբրև թափառական, սովորած լինելով արկածալից կեանքի, միշտ դէմ առ դէմ բիւրաւոր պատահարների, պնդուած բնութեան եղանակների փոփոխման մէջ, լեռնաբնակ աղջիկը սովորել է յոյսը իր վրայ դնել և այդ պատճառով տղամարդու պէս նա քաջ է և անվախ:

Ամբողջ օրով մատաղահաս բեդուինն աղջիկը կամ քրդուհին առնում են իրանց հօտերն ու անհետանում սարերը, չվախենալով ոչնչից—նչ գայլից, ոչ անձրեւից և ոչ էլ ջահէլ հովուի հրապոյրներից, որովհետեւ նա տէր է իր գլխին և իր կամքին:

Իբրեւ ընդհանուր կանոն պէտք է ընդունել, որ նստակեաց աղգերի մէջ աղջկայ ազատութիւնը շատ աւելի է սահմանափակուած, քան թափառական ցեղերի

մէջ: Այս վերջինների կենցաղը հէնց տրամադրում է աղջկան ինքնուրոյն լինել:

Սպարտայում աղջիկը, ինչպէս և տղան, իր ծնողներինը չէր, այլ համայնքինը, հանրապետութեանը, ինչպէս կը տեսնենք յետոյ: Որքան անողորմ ու զազանային էր հանրապետութեան վերաբերումն դէպի արատաւոր աղջիկները, որոնց անգունդն էին նետում, այնքան էլ մեծ էր նրա խնամքն ու սէրը դէպի լաւ կազմուածք ունեցողներն ու առողջները: Սրանք էին ապագայ սերնդի մայրերը, սրանցից էր կախուած երկրի քաղաքական ոյժը, առողջ ու քաջ զինուորների արտագրութիւնը:

Կառավարութիւնը միշտամտում էր ընտանիքի գործերին, նոյնիսկ սահմանափակում էր որդեծնութիւնը, եթէ երեխաների թիւը բաւարար էր համարում, այսպիսով չափաւորում էր ամուսինների փոխադարձ սէրը...

Որդուն խլում էին մօր գրկից դեռ երեխայ հասակում և կրթում էին նրան հասարակական հիմնարկութիւնների մէջ, հանրապետութեան հաշուով: Շնորհիւ լաւ կրթութեան ու դաստիարակութեան, շնորհիւ մարդավայել վերաբերման, որ վայելում էր սպարտուհին, նա, ճշմարիտ է, կամաց-կամաց, բայց դարձեալ բաւական ոյժ ձեռք բերեց դարերի ընթացքում, և սկսեց ձգտել դէպի ինքնուրոյն կենցաղ:

Այսպէս, հռոմէական համայնքում, որտեղ հայրը անպայման իր ընտանիքի տէրն էր և իր զաւակների վրայ կեանքի ու մահի իրաւունք ունէր, աղջիկը կամաց-կամաց որոշ, թէև դեռ միայն ձեւական, ինքնուրոյնութիւն ձեռք բերեց: Նրան իրաւունք էր տրուած փեսայու ընտրել իր համար և կարող էր իր մասն ունենալ ընտանեկան կարողութիւնից: Հետը բերած սեփականութիւնը օրէնքը այլևս չէր խլում նրանից, որ ամուսնուն տայ. նա տէր էր մնում իր օժիտին և աղատ էր կտակելու իր զաւակներին:

Ցաւակցաբար գրուածքիս ծաւալը թոյլ չի տալիս

ինձ կանգ առնել կնոջ իրաւունքների զարգացման վրայ
կլասիկ Հռոմում, կ'ասենք միայն, որ այնտեղ կինը կա-
մաց-կամաց, անդադար բողոքի ոյժով, ձեռք բերեց մեծ
արտօնութիւններ, մրցում էր տղամարդու հետ և նոյն-
իսկ իշխում նրա վրայ այն աստիճան, որ կատունը հը-
րապարակով այս խօսքերն էր արտասանում. «Ամէն
տեղ տղամարդը իշխում է կնոջ վրայ, իսկ մենք որ
տիրել ենք բոլոր ազգերին, կնոջ իշխանութեան տակն
ենք ընկել»:

III

ԱՂՋԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Եկեղեցու մեծ հայրերի հայեացքը կնոջ վրայ. — Ամուսնութիւն եւ
կուսութիւն. — Աստուծոյն կեանքի ունայնութեան զաղափարը եւ
նրա հետեւանքները. — Հոգեւորականութեան ոյժը. — Աղջիկը միջին
դարերում. — Ասպետականութիւն եւ կնոջ պատուի բարձրանումը. —
Լիւթերը եւ բեժօրմացիայի խաղացած դերը կնոջ հարցի մէջ. —
Կանացի սեռի դիրքը նորագոյն դարերում:

Քրիստոսի վարդապետութիւնը ձգտեց բարձրա-
ցնել կնոջը իր ընկած դիրքից. կինը տղամարդու հաւա-
սարը դառաւ գոնէ հանդերձեալ կեանքում: Յիսուս
գուրթ ու ներողամտութիւն ցոյց տուեց ընկած կնոջն
անգամ և իր կենդանի օրինակով քարոզեց, որ կինը
ևս արժանի է համակրանքի և յարգանքի:

Այս ուսմունքը պիտի բարձրացնէր տղամարդու
աչքում գեղեցիկ սեռի արժէքը, սակայն ժամանակ է
հարկաւոր մի թէօրիայի կեանքի մէջ մտնելու համար, և
ճշմարիտ որ, քրիստոնեայ կինը դեռ երկար դարեր,
մնում է ստորացման վիճակի մէջ և այդ դիրքը սրբա-
զործւում է մեծ քարոզիչների կարծիքով:

Եկեղեցական մի ժողովի մէջ (6-դ դարում) եպիս-
կոպոսներէից մէկը ապացուցանում էր, թէ կինը մարդ-
չէ, և հարց յարուցեց թէ ինչ կերպարանքով պիտի
յարութիւն առնի նա, կնոջ թէ տղամարդու: Աւետա-

րանը որոշ կերպով չէր ասում, թէ կինը հաւասար է տղամարդուն և մեծ հայրերից ամեն մէկը իր մեկնութիւնն էր տալիս, բայց ամենքն էլ համամիտ էին, որ կինը պիտի հնազանդ լինի մարդուն և հետեւի, այսինքն հպատակուի նրան:

Իսկապէս կնոջ բացակայութիւնը երրորդութեան մէջ, մի զօրեղ հարուած էր նրա հաւասարութեանը: Հրեշտակների մէջ էլ կին չկար: Աղջիկը իրաւունք չունէր, «որքան էլ նա գիտուն լինի, ոչ քարոզչութիւն անելու, ոչ մկրտութիւն կատարելու, ոչ մօտենալու տաճարին, ոչ սրբազան անօթներին ձեռք տալու և ոչ էլ խնկարկելու»:

Եկեղեցին երբէք չի կարողացել ներել կնոջը նրա նախամօր Եւայի յանցանքը: Փարոզիչները մարդկութեան թշուառութիւնը նրան էին վերագրում, և սրանցից մէկը բացականչում է. «Կին, դու դժոխքի դուռն ես, դու ես, որ առաջինը ձեռք մեկնեցիր արգելուած պտուղը քաղելու և դրանով խախտեցիր Աստուծու օրէնքը. քո պատճառով էր, որ մեռաւ Աստուածորդին: Երբ դու տեսնում ես կնոջ, իմացիր, որ քո առաջ մարդ չէ կանգնած, այլ վայրի գազան, այլ սատանան անձամբ ինքն է դա, նրա ձայնը—օձի ֆշոցն է»:

Մի պատմաբան բերում է ս. Երոնիմոսի այս խօսքերը. «Կինը սատանայի դուռն է, անառակութեան ուղին, կարիճի խայթոցը»:

Ահա թէ որչափ սիրալիր էին եկեղեցու հայրերը դէպի գեղեցիկ սեռը:

Կինը, իր նախամօր աններելի մեղքով ծանրաբեռնուած, անդադար զղջումով ու ապաշխարանքով միայն կարող էր երկնքի արքայութիւն ժառանգել:

Սակայն քրիստոնէական եկեղեցին սրբագործելով պսակը, ընդունելով նրան իբրեւ ծէս, եկեղեցական ծէս, բարձրացնում էր աղջկայ դիրքը հասարակութեան մէջ: Բայց այնուամենայնիւ եկեղեցու մեծ հայրերը սկսեցին նայել ամուսնութեան վրայ, իբրեւ մի ան-

հրաժեշտ չարիքի վրայ և պսակը դարձաւ մի զիջումն մարդկային թուլութեան, իսկ իսկական քրիստոնեայի իդէալը մնաց մենակեցութիւնը, մարմնի սպանումն իբրեւ հոգու արատաւոր կաղեւի: Չէ որ ինքը Յիսուս անպսակ էր, չէ որ Նրա Մայրը, թէև ամուսնացած, բայց կոյս մնաց և կոյս ծնեց: Շատերը քարոզում էին, թէ ամուսնութիւնը չարիք է. «կնոջ սէրը, ասել է ս. Թովմասը, այդ մահուան անդունդն է. ամուսնութիւնը չի օրինաւորում սէրը, այլ հաղիւ ներելի է դարձնում նրան»: Ուստի ազնկայ իդէալն էր—հեռանալ աշխարհից. նուիրել իրան Աստուծու պաշտաման մնալ և անարատ մինչև մահ:

Կոյսը Քրիստոսի հարսնացուն էր, և Նրա առջև բաց էին արքայութեան դռները: Մարդիկ պիտի անարատ մնային թէկուզ վերջանար մարդկային ցեղը աշխարհիս երեսից: Առաքինութեան վրայ ունեցած այս հայեացքը միանգամայն պիտի յեղաշրջէր մատաղ սերնդի կրթութեան ձեւը: Աշխարհը ունայնութիւն էր, պէտք էր հեռանալ նրանից, որովհետեւ նա լի էր հրապոյրներով, և մենակեցութեան ու անամուսնութեան գաղափարը դառնում էր զեկափարող սկզբունք. կղերականութեանը մնում էր միայն շահագործել ու աւելի բոբբօքել հասարակութեան այս մոլութիւնը: Միջին դարերում մանր բռնակալների, բարօնների ու հերցօգների դղեակներին կից կամ աւելի ևս յաճախ, իբրեւ բռնակալութեան անկախ կենտրոններ, փայլում էին վանքերի ոսկեղօծ դմբէթները, այն ինչ թէ ամրոցների և թէ այս մենաստանների սուրբատում, կարծես ջընջխուած նրանց ահռելի ծանրութեան տակ, գլուխը բարձրացած ու մէջքը կտրացրած խռնուած էր հլու ամբօխը, որ մատնուած էր իր ամբողջ կեանքում իր տրիւնքրտինքով յագուրդ տալու դղեակների ու վանքերի զեղխութեան ու անառակութեան կրքին:

Հպատակ ամբօխը բարօնի սեփականութիւնն էր, ինչպէս ռուս շինականը մի ժամանակ պօմեշչիկինը.

լինքնակալը ծծում էր ոչ միայն իր հպատակների բոլոր անտեսական հիւթերը, այլ և զրկում էր նրան մարդուս ամենաթանկագին սեփականութիւնից—ընտանիքի բարօրութիւնից:

Միջնադարեան հասարակութեան մէջ աղջիկը ծընողներին չէր պատկանում և նրա կուսութիւնը բարօնի սեփականութիւնն էր. այդ ծայրայեղ բռնակալութեան դարերում նորահարսի առաջին գիշերը տիրոջն էր... Ֆէօդալը քանգում էր ընտանիքի հիմունքը, խլում էր աղջկան ու կնոջը, ծախում էր «հողիները», բաժանելով մարդուն կնոջից, աղջկան ծնողներից և ամեն տեղ տարածում էր անբարոյականութիւն: Անդադար կռիւների ու աղչաւանքների համար ժողոված զօրքերին թոյլ էր տրւում ամեն տեսակ գեղխութիւն: Զինուորը բռնաբարում էր աղջիկներին, խլում էր կնոջը ամուսնուց, պղծում էր ու քանդում երկրի բարոյական զգացմունքները և անպատիժ մնում:

Հոգեւորականն էր միայն, որ դեռ կարող էր փրկել ընտանիքը բարոյական անկումից, բայց կաթոլիկ կղերը ինքն էր պղծում ընտանիքը, ինքն էր անբարոյականութեան սաղմեր գցում ժամանակակից հասարակութեան մէջ:

Քարոզելով մենակեցութիւն և հրաժարումն երկրաւոր հաճոյքներից, նա հրապուրում էր կոյսերին դէպի մենաստանները, որոնց մէջ ազատ մուտք ունէր ինքը, և որոնք միջին դարերում կերպարանափոխուել էին անառակութեան կենտրոնների և շահագործւում էին հոգեւորականութիւնից, իբրեւ հասարակաց տներ:

Եւ այս նպատակով կղերականութիւնը իր օգտի համար միանգամայն իր ձեռքն էր առել աղջկայ կրթութիւնը և վարում էր նրան այնպէս, ինչպէս ձեռքնատու էր իրան, պատրաստելով նրանցից կամազուրկ մանւնրքէններ, հլու հպատակ իր կրքերի:

Այսպէս նիզակն ու խաչը իրար դրկած, միշտ զար-

զանդի տակ էին պահում միջնադարեան աշխարհը և ապականել էին ընտանիքը:

Իբրեւ բողոք կնոջ այս անպատուութեան և անարգական վերաբերման դէպի ֆէօդալական դարեչրջանի կինը, բարձրացաւ ասպետականութիւնը, որ քարոզեց կնոջ կուլտը, սրբագործեց սէրը և ազնուացրեց տղամարդու վերաբերումն դէպի կինը: Կինը այս շրջանում սրբացրած էր, հասցրած չաստուածուհու փառքի, ամեն ասպետ իր տիրուհին, իր դուլցիներէն ունէր, որին նուիրում էր իր կեանքը, որի մի ժպիտի համար ամենավտանգալից գործեր էր կատարում, տարիներով պատերազմներ էր վարում:

Միջնադարեան հերոսի ամենաթանկագին պարգևը իր դուլցիներէի մի համբոյրն էր: Ամեն կին իրաւունք ունէր ասպետից հովանաւորութիւն ու պաշտպանութիւն պահանջելու, ով էլ որ լինէր նա, առանց մինչեւ անգամ ստիպուած լինելու իր ով լինելը յայտնելու: Կրքերի այս բռի տիրապետութեան դարում, երբ գիւղացին, շինականը—ուչ-ազնիւը անդէն մոնչում էր անթիւ բռնակալների ու հոգեւորականների լծի տակ, բարձր իշխող դասակարգի օրիորդն ու կինը ասպետական կեանքի փարոսն էր դառել: Կնոջ այս կուլտը մի մոլութեան մանիա էր դառել այն աստիճան, որ մարդիկ անասելի տանջանքներ էին կրում, հերոսութիւններ կատարում մի տիկնոջ կամ օրիորդի համար, որին չէին տեսած, կամ նոյնիսկ որոնց ստեղծել էին իրանք իրանց երեւակայութեան մէջ: Կրկնում ենք, որ այս ասպետական վերաբերումն դէպի կանացի սեռը սահմանափակուած մնաց որոշ դասակարգի մէջ և երբէք չթափանցեց ժողովրդի խաւերը: Այնտեղ աղջիկը դեգերում էր միշտ միևնոյն ստոր վիճակից, տղամարդու բմահաճոյքին հպատակուած:

Լիւթէրը բողոք բարձրացրեց կաթօլիկութեան ֆանատիկոսութեան դէմ, մաքրեց եկեղեցիին կռապաշտանման ծէսերից, զինուեց անառակութեան դէմ և

բանդեց մենաստանները, հերքեց պատը, ամուսնացրեց հողեւորականութիւնը: Սակայն այս բեֆօրմատօրի հայեացքները չունէին մեծ յեղափոխիչներին յատուկ պարզութիւնն ու ընդարձակութիւնը, և կինը նրա աչքում մնաց նոյն ստոր արարածը, որ պիտի ամեն բանում հպատակուի իր ամուսնուն. նա պիտի հրաժարուի աշխարհային հրապոյրներից, խուսափի զուարճութիւններից և փակուի տանը: Այսպիսով նա միտք ունէր վերականգնել հին նահապետական ընտանիքը, բայց ինքը երկրպագու լինելով տղամարդու հեղինակաւորութեանը և կնոջ հպատակման տղամարդուն, նա ոչ մի նկատելի բարեխառութիւն չմտցրեց կնոջ դրութեան մէջ: Քարոզելով, թէ «ով չի սիրում՝ գինի, կնոջ և երգ, նա իր ամբողջ կեանքում տխմար կը մնայ», նա բարոզում էր տղամարդկանց նոր ձեւի էպիկուրէութիւն, այն ինչ կնոջը զրկում էր նոյնիսկ ամենաանմեղ զուարճութիւնից, ինչպէս է թատրոն, հանդէսներ այցելելը, կամ ժապաւէսներ ու զարդեր հագնելը, դաշնամուր ածելը. իսկ անբարոյականութիւնը նա ամեն յանցանքից վեր էր դասում:

«Ընտանիքի մաքրութիւնը և աղջկայ անմեղութիւնը ուղում էին պահպանել մտրակի, բանտի և իսայառաւակութեան ահով», ասում է Շաշկով: Յեղափոխուած եկեղեցին ոչ միայն չազատեց աղջկան հօր քմահաճութիւնից, այլ աւելի ևս ամրացրեց հօր իշխանութիւնը, և ամուսնութեան խնդրում հայրը մնաց նոյն լիազօր տէրը: Այսպիսով ամուսնութիւնը դառաւ մի առեւտուր և վաճառուած աղջիկը անհրաժեշտաբար պիտի հալածուած, արհամարհուած ու ճնշուած ամուսին դառնար:

Սակայն մտրակը, բանտն ու նշաւակութիւնը չէին կարող փրկել ընկած բարքերը: Եւրոպան քանի զնում, աւելի խոր էր ընկղմում զեղխութեան և անբարոյականութեան մէջ: Սնկարեւի է և տեղը չէ այստեղ նկարագրել նոր դարերում տիրող անասելի անբարոյական

կեանքը: Օրիորդը մրցում էր կանանց հետ անառակութեան մէջ: Մնանկացած արեստոկրատուհին ծախում էր իրան, իր պալատների շքեղութիւնը պահպանելու համար, վաճառում էին նոյնպէս իրանց անձը բողոքած բանուորի և անասելի թշուառութեան հասած գիւղացու կինն ու աղջիկը, բաղցից չմեռնելու համար: Եւ տղամարդը, հզօր թագաւորներից սկսած մինչեւ վերջին ղինուորը, նայում էին կնոջ վրայ, իբրեւ մի ծախուղուարճաւիքի վրայ: Նորագոյն ժամանակներու մեքենաների ահուելի ոյժը խից կնոջ ձեռքից ապրուստի աղբիւրները, չպրտեց աղջկան հրապարակի սալայտակի վրայ և մատնեց նոյնպէս զազրելի ինքնավաճառման: Ան-եւ չբաւորութեան տակ ճնշուած ծնողներն անգամ մըում են իրանց դեռահաս աղջիկներին դէպի անվայել կեանք, իսկ աւելի բարեխիղճները որոնում են մի կերպ «տեղաւորելու» իրանց աղջիկներին, ամուսնացնելով նրանց, ում հետ էլ որ պատահի, ինչպէս էլ որ պատահի, միայն թէ որքան կարելի է շուտ հեռացնեն տնից այս անպէտք ծանրոցքը:

Եւ մենք տեսնում ենք վաղաժամ ամուսնութիւնը իր կորստաբեր հետեւանքներով*):

Այսպէս, նոյնիսկ Քրիստոսի լուսամիտ կրօնը անկարող եղաւ բարձրացնել կնոջը իր միշտ հպատակ դիրքից: Եւ այդ հասկանալի է, քանի որ կնոջ ստորագրութեան պատճառները աւելի խոր էին և խրուած էին երկրի տնտեսական սնանկութեան մէջ: Ուրեմն կրօնական յեղափոխութիւնը բաւական չէր ընտանիքը փրկելու համար, հարկաւոր էր տնտեսական յեղաշրջումն, որ մի կողմից ստիպէր անբան կապիտալիստին ու արիստոկրատին աշխատելու և այդպիսով դուրս գալու զեխութեան և անառակութեան տիղմի միջից, միւս կողմից իսկական բանուորին ու գեղջուկի վաղուայ հացը ապահովացնելու:

*) Տե՛ս իմ «Ամուսնութիւն»:

Կանացի սեռը ամեն դարերում բարոյապէս տանջուել է իր անիրաւունակ գրութիւնից, և միշտ բողոքել է աղամարդու գերիշխանութեան դէմ, և դարերի ընթացքում կամաց-կամաց կինը ձեռք է բերում խոշոր իրաւունքներ, որոնք նրանց չբարձրացնելով հանդերձ մինչեւ հաւասարութիւն, այնուամենայնիւ փոքրիշատէ ապահովացնում են նրան որոշ դիրք, իբրեւ հասարակութեան անդամի, իբրեւ իրաւաբանական անհատի:

IV

Հ Ա Յ Ա Ղ Ջ Ի Կ Ը

Հայ կնոջ դիրքը հնումը. — Աղջիկը բնականի մէջ. — Ծնողների իրաւունքները. — Աղջկայ նշանդրէքը (սորորոցի խաղը և «գտակի պակ») . — Սիրոյ բացակայութիւնը ամուսնութեան մէջ. — Կովկասի «նշանական դուրեան» նոր ժամանակները եւ գիւղական երիտասարդութեան ապականութիւնը մեծ փաղափների մէջ. — Երիտասարդներն արասւտում են հայ բնականի գիւղերում. — Քաղաքացուհու կեանքը, «ուսում առած» աղջիկը եւ նրա կրթութիւնը. — «Զարգացած» հայ օրիորդի օտարանումը. — Օմիսը իբրեւ անբարոյակաճացնող միջոց. — Նոր սերնդի վաստակումը:

Մի չափազանց հետաքրքրական ուսումնասիրութիւն կը լինէր հայ աղջկայ դիրքի պատմութիւնը: Թողնելով աւելի հեղինակաւոր պատմագէտներին այս կարեւոր հարցի մշակումն, ես այստեղ առաջ կը բերեմ այն գաղափարը, որ ես դուրս եմ բերել իմ մասնաւոր հետազօտութիւններից:

Հայաստանի մէջ կանացի սեռը այնպիսի ստրուկ չի եղած, ինչպէս միւս արեւելեան ազգերի մէջ: Մի քանի թագաւորների անունների կողքին մենք գտնում ենք և նրանց կանանց ու դուստրների անունները: Հեթանոսական և նոյնիսկ պատմական շրջանում բազմակնութիւնը և հարեմը գոյութիւն չի ունեցել Հայաստանի մէջ, որ ապացոյց է մարդավայել վերաբերմանը դէպի կինը: Ընկնելով պարսիկների լծի տակ, հայերի

կեանքը ձեւակերպուելու էր տիրապետող ժողովրդի կենցաղին և հայ ընտանիքը պիտի զգար իր վրայ բըռնակալ-բարբարոսական ըեժիմի ծանրութիւնը:

Հայ կինը քրիստոնէութիւն ընդունելով չերջանկացաւ. նա մնաց փակուած յարկի տակ, նուիրելով իրան որդեծնութեան և տնարարութեան գործին: Կնոջ փակուածութիւնը գուցէ աւելի ևս ստիպողական դարձաւ, երբ մահմեդական ազգերը նուաճեցին Հայաստանը և պղծեցին հայ ընտանիքը, երբ կորաւ աղլկայ համար պատուի ապահովութիւնը: Նա փակուեց տանը, որպէս զի խուսափի առեւանդումից ու բռնաբարութիւնից:

Մեր պատմագիրներից մի քանիսը, ի միջի այլոց նաև Եղիշէն, սքանչանում են հայ կնոջ առաքլնութիւններով, նկարագրում են նրա անձնուիրութիւնը ազգայնութեան ու կրօնի դաղափարին, նրա բարոյական կեանքը:

Հայ կոյսերը ևս, ինչպէս և միւս մեծ ազգերի կանայք, Քրիստոսի ուսման առաջին աշակերտները, շատագոյնները, իրանց արեան գնով տարածողներն են եղել: Բաւական է յիշել երջանկայիշատակ կոյս Գայիանէին, Հռիփսիմէին և սւրիշներին: Կոյսերի այս բարեպաշտ գործունէութիւնը անտարակոյս պիտի աւելի մեղմացուցիչ ազդեցութիւն գործէին ժողովրդի վրայ, քան շատ քարոզիչների, կաթողիկոսների ու ճգնաւորների ջանքերը: Միևնոյն ժամանակ կնոջ համարումն պիտի ամբանար ու աճէր:

Ճիշտ տեղեկութիւններ չունենալով աղլկայ ընտանեկան և հասարակական դրութեան մասին պատմական չրջաններում, մենք պէտք է աշխատենք լուսաբանել մեզ այդ հարցը ժողովրդագրութեան տուած ցուցմունքներով, մանաւանդ որ հայ ժողովրդի ետ ընկած խաւերում երեւի պահպանուել է աւանդաբար հին ժամանակների հայեացքներն ու ընտանեկան կազմը:

Հօր իրաւունքը տան մէջ մեծ է, յաճախ անսահման. ամբողջ գերդաստանը հնազանդւում է swan մեծի,

սանուսերի հրամանին, և քանի որ հին գերդաստանը գոնէ մի քանի տասնեակ տարիներ առաջ բաղկացած էր լինում 30—50 անդամից, ուրեմն՝ սան մեծը մի ամբողջ համայնքի գլուխ էր. նա էր գերդաստանի բոլոր գոյքի անկօնտրօլ տէրը, նա էր տան գանձապահը, և անդամների բոլոր աշխատանքը՝ պիտի նրա ձեռքն անցնէին: Տանուտէրն էր նոյնպէս և տղաներին ու աղջիկներին ամուսնացնողը առանց ամուսնացողների կամքի և յաճախ հակառակ նրանց հաճութեան: Հին հայ հասարակութեան մէջ մոնոպոլիզմ աղջիկը մի անձայն և անկամ էակ է: «Նա տան սպասուհին է, նա միայն տան հասակաւոր կանանց հրամանները պիտի կատարի. «այս բեր, այն տար», իսկ միջամտել մի որեւէ գործի մէջ, առանց հարցնելու, իրաւունք չունի նա», ասում Բաֆֆին: Արդէն երեխայ հասակում, նոյնիսկ ծիծ տալու մէջ մայրը խտրութիւն է անում տղայի ու աղջկայ մէջ: Աղջիկը անխնամ է թողնուած, ենթարկուած ամեն տեսակ զրկանքների, ջնջողութեան, ծեծի ու անէծքի, որոնց մէջ պարզ արտայայտուում է արհամարհանք դէպի նրա սեռը, որոնցից աղջիկը հասկանում է, որ ինքը մի ծանրութիւն է տան համար, որ իրան կերակրելով, ծնողները մեծ զիջումն ու բարերարութիւն են անում և այս համոզմունքը, ինչպէս նկատում է նոյն հեղինակը, նրան չի վիրաւորում, նա ընտելացած է և նրա կարծիքով այլապէս չի էլ կարող լինել:

Ամուսնութիւնն առհասարակ շատ վաղ է կատարւում: 12—13 տարեկան երեխան յաճախ կին է դառնում, և կին է դառնում մի հասակաւորի: Ռուսահայտակ հայերի մէջ այս անիրաւութիւնը կարծես վերանալու վրայ է, բայց պարսկական ու տաճկական երկրներում դա առօրեայ երեւոյթ է:

Եւ տան մէջ ամենքը, նոյնիսկ հասակով փոքր տղան իրան իրաւունք է համարում աղջկան վիրաւորելու, ծեծելու, մաղերից բաշելու, լաւ բաժինը նրա

ձեռքից խլելու, և նա պիտի անձայն տանի այդ անպատուութիւնները:

Այսպէս, ճնշուած բարոյապէս, անընդհատ ֆիզիկական աշխատանքի մէջ աննպաստ հակառողջական դրութեան մէջ գտնուելով, հայ աղջիկը չի կարողանում զարգանալ ֆիզիկապէս ու մտաւորապէս:

Նրա ձեռները կոշտանում են, մէջքը կռանում, փորը դուրս ընկնում: Մի ուսը միւսից ցած (կուժ ու ծանրութիւններ կրելուց), իսկ թոնրատան այրող ծխից կոպերը հաստացած-կարմրած, երեսի գոյնը փչացած, հայ գեղջկուհին կորցրել է կանացի նրբակազմութիւնը, քնքշութիւնը, և դեռ մատաղ հասակում կորցրել է նաեւ մանկահաս հասակի թարմութիւնը: Միեւնոյն ժամանակ ֆիզիկական անկանոն ու անչափաւոր աշխատանքը նրա շարժումներին առնացի կոպտութիւն է տալիս: Սրան աւելացրէք և անշնորք հագուստը, որ տեղ-տեղ ուղղակի աղաւաղում է կազմուածքը, և դէմքի գծագրութիւնների այն բաշտող, ամաչկոտ արտայայտութիւնը, որ երբեմն անինտելիգէնտի կնիք է դրոշմում հայ աղջկայ դէմքի վրայ և դուրս կըստանաք մի անգրաւիչ էակ:

Սակայն մեզ յաջողուել է տեսնել միեւնոյն աղջկան և՛ ընկերուհիների հետ զուարճանալիս, երբ նրա դէմքի ստիպողական կնճիռները ուղղուած էին, և՛ անծանօթ աղամարդկանց շրջանում, երբ նա ստիպուած էր ամօթիածութեան և պարկեշտութեան դիմակ հագնել: Ի՞նչ մեծ տարբերութիւն. մռայլ, անշարժ և իր անշարժութեան մէջ անմիտ դէմքը յանկարծ պարզւում է աղատութեան մէջ, այտերն սկսում են կարմրել, աչքերը կենդանանում են, ժպիտը բաց է անում գեղեցիկ տառանքների շարքերը և այն մեռած դէմքի վրայ փայլում է կեանքը, պատանեկութեան թարմացնող հրապոյրը:

Հայ աղջիկը, նոյնիսկ գեղջկուհին չափազանց ուսումնասէր է: Մեծ երջանկութիւն է նրա համար գրել-կարդալ սովորելը: Յաւակցաբար նրա այդ ծարաւը յա-

գեղներու համար չկան բաւականաչափ դպրոցներ: Քաղաքներում, նախ քան մեր դպրոցների փակուելը, մի մեծ և ուրախալի շարժում էր նկատուում դէպի աղջիկներին ուսում տալը: Մի քանի տարուայ ընթացքում մեր դպրոցները արդէն գրագէտ և ուսումնաճարաւօրիորդների մի նոր սերունդ էր պատրաստել: Եւ եթէ այժմ հայ ընտանիքում լսուում է, աւաղ, երբեմն միայն հայ գրականական լեզուն, դրանով մենք պարտական ենք այդ սերունդին, որի մէջ դեռ ուսումնարանական շրջանից պահանջ է դառել մայրենի լեզուով խօսել և այդ լեզուով կրթել երեխաներին...

Աղվիայ բաղդը տնօրինում են ծնողները և մասնաւորապէս հայրը, և բոլորքելը ամենամեծ աներեսութիւն է համարուում: Դեռ ամենամատաղ հասակում նրա ապագան որոշուում է. նա նշանադրուում է, շատ տեղերում 9—10, նոյնիսկ 5—6 տարեկան հասակում աղջիկն արդէն նշանած ունի, որ նրա հետ Վեր միտքը կիսում է»: Յայտնի է նոյնպէս օրօրոցային նշանդրէրները: Այս հին սովորութիւնը մի քանի տեղերում «օրօրոց խազել» է կոչուում, որովհետեւ նշանելիս օրօրոցների վրայ խազ են անում *) և մեծ անազնութիւն է համարուում այսպիսի նշանդրէքը քանդելը, քանդողը բամբաստների և մեղադրանքի է ենթարկուում:

Հայերի մէջ «աղվկան մարդու են տալիս» և ոչ թէ աղջիկը «մարդու է գնում»: Այդ ապացոյց է, որ նրա ամուսնանալը իրանից չի կախուած:

Հայ գեղջիկուհու կեանքի պայմաններն էլ թոյլ չեն տալիս նրան իր կամքով ընտրութիւն անելու և որեւէ կերպով իր կամքը յայտնելու: Փակուած լինելով հօր տանը, իսկ դուրս գալիս, եկեղեցի գնալիս միշտ հըսկողութեան տակ գտնուելով, հասած հայ գիւղացի աղջիկը իսկի առիթ էլ չի ունենում տղային տեսնե-

*) Զգիտեմ պահպանուել է դեռ մեր մէջ այս տարօրինակ սովորութիւնը թէ ոչ, բայց պարսիկների և թուրքերի բռնակալութեան տակ, աղջիկներին առնանդումից և հարեմ տանելուց ազատելու համար պատկում էին տղայի դուռը կի հետ, եթէ տղան բաղակայ էր: (Բաֆֆի)

լու և որևէ գաղափար կաղմելու նրա «սրժանաւորութիւնների» մասին: Համակրանքն ու սէրը անծանօթ են մնում նրան, և իրապէս նրա համար միևնոյն է, թէ ո՞վ է լինելու իր ամուսինը, մանաւանդ որ «հայրը նրա վատը չի կամենայ»:

Աղջիկներն ու երիտասարդները առհասարակ իրար տեսնում են.

1. Եկեղեցիներում, ուր հաւաքւում են գիւղի բոլոր աղջիկներն ու տղաները, տարուայ մէջ մի երկու անգամ, Ծաղկաղարդին ու Զատիկին, և իրար հաւանում: Այս տօներին գեղջկուհին իր ամենալաւ շորերն է հագնում և մայրը ինչ զարդեր որ ունի, կախում է իր աղջկայ վրայ:

2. Ուխտատեղերում, գիւղից ու քաղաքից դուրս: Ճանապարհի վրայ շարւում են տղաներն ու զբնւում անցնող աղջիկներին:

3. Հարսանիքներում: 4. Աղբիւրների մօտ, քաղհանքում, այգիներում թուփ թափ տալիս և այլն: Այսպիսի ծէսերի ժամանակ աղջիկը երբեմն առաջին անգամն է աչքի նոթով նայում իր ուզողին: Առհասարակ նրա հետ գնում է տղայի աղգական աղջիկը, որ և ցոյց է տալիս տղային, երբեմն էլ խօսք ու նամակ է տանում: Պատահում է որ այցելութիւններ էլ են սարքում: Երբեմն էլ աղջկան խափելով իր ընկերուհին տանում է մի տեղ և այնտեղ, իբր թէ պատահմամբ, հանդիպում են հաւանող երիտասարդին: Այսպիսի հանդիպումներից յետոյ տղան ու աղջիկը արդէն իրար խօսք տուած են համարւում: Այսպիսի պայմաններում, ի հարկէ, իսկական սիրահարութեան մասին խօսք չէ կարող լինել *):

Աղջկայ այս ճնշուած դրութիւնը մի կողմից, մեղք անելու ահը միւս կողմից, պահպանել են դարերի ընթացքում հայ ընտանիքի մաքրութիւնը, որ ասելիք է

*) «Ազգապրական Հանդէս»:

դարձել: Սակայն վերջին կէս դարում հայի կեանքը կորցրեց իր սահմանափակումն ու միակերպութիւնը: Քաղաքակրթութեան հոսանքը, կեանքի մրցման դժուարանալը շուռ տուեցին հայի վիճակի անխը և հանեցին նրան նահապետական անչարժութիւնից ու գեցիկ կեանքի կռուի բովը:

Կովկասի տնտեսական դրութիւնը մեծ ցնցումն ստացաւ: Երկաթուղին խրուեց երկրի խորքերն ու չըլթայեց քաղաքները և հեշտացրեց նրանց մէջ յարաբերութիւնները: Միւս կողմից նաւթային դործի վիթխարի աճումն, հեշտ հարստանալու անբիմաղւորի հրապոյրը մագնիսի պէս քաշեց դէպի ինքը երիտասարդ ոյժերը, և կազմուեց մի նոր դասակարգ, որ գոյութիւն չունէր առաջ—բանուորական դասակարգ: Միևնոյն ժամանակ ազգաբնակչութեան աճումից առաջացած հողի պակասութիւնը և դրանից ծագած անտանելի չքաւորութիւնը դուրս մղեց հայ գեղջուկի նահապետական օջախից լաւագոյն մատաղ ոյժերը, որոնք հեղեղի նման լցուեցին քաղաքները աշխատանք որոնելու:

Այսպիսով սկսուեց մի մեծ հոսանք գիւղերից, մանր կենտրոններից դէպի քաղաքները, որտեղ հայ երիտասարդութիւնը ընդունեց արապետող բարքերը, շատ բան տեսաւ և զգաց, որտեղ փոխուեց նրա աշխարհայեացքը, նրբացաւ ու զարգացաւ նրա ճաշակը: Ընդունելով քաղաքից մի կտոր քաղաքակրթութիւն, հայ երիտասարդն ընդունում է նաև այնտեղի անառակութեան ամբողջ օրէնսդիրքը և վերադառնալով իր տուն, նա վարակում է իր օրինակով հայ ընտանիքը, և վարակում է ֆիզիկապէս ու բարոյապէս:

Եւ մեր աչքի առջև քանդւում է հայ օջախի ամբողջութիւնը,—ցլում են բազմանդամ ընտանիքները, կորչում է համերաշխութիւնը անդամների մէջ ու ընկնում տան մեծի հեղինակութիւնը, և, որ աւելի ևս ցաւալին է, խախտւում է ընտանիքի մաքրութիւնը... Մեր գաւառ-

ների կեանքը հետազոտողներին հարուածում է հայ կնոջ և օրիորդի բարոյական սկզբունքների խախտուելը, որ նկատուում է արդէն շատ տեղերում:

Քաղաքացի աղջկայ կեանքը բոլորովին տարբերուում է վերը նկարագրածից: Այստեղ հայ օրիորդը շատ աւելի ազատ է և համարեա անկախ: Վաճառականի, ազնուականի և համալսարանականի երեխաները միևնոյն դպրոցում կրթուելով, չեն տարբերուում միմեանցից ուսումով ու զարգացմամբ, և աշխատում են նմանուել նոյնպէս և արտաքինով: Այստեղից ծագում են և այն պահանջները, որոնք անդադար անում են աղքատ օրիորդները իրանց ծնողներից, և որոնք անդադար տարածայնութիւնների և կռիւների առիթ են տալիս:

Գիմնազիան աւարտած օրիորդը իրան այնչափ բարձր է զգում իր ծնողներից, որ արհամարհական կերպով է վերաբերում դէպի նրանց և ձգտում է բոլորովին անկախ լինել նրանցից, արհամարհելով օջախի նուիրական աւանդութիւնները: Պէտք է ասած, որ յաճախ ծնողները ընկճւում են իրանց «ուսում առած» աղջկայ պահանջների առաջ և, չկարողանալով զսպել նրան, բարձի թողի են անում...

«Ուսեալ» օրիորդի աններելի արատներից մէկն էլ նրա արհամարհանքն է դէպի մայրենի լեզուն *): Այս ախտով վարակուած են մինչեւ անգամ քաղաքային ստորակարգ դպրոցներում սովորողները, կամ հէնց ուսսերէն այբ ու բեն իմացողները, որքան էլ կոշտ ու կոպիտ, որքան էլ նոյնիսկ ծիծաղելի լինէր նրանց ուսսերէնը: Շատ ծիծաղելի է այն ֆակտը, որ այդպիսի օրիորդները ստիպում են իրանց անգրագէտ մօրն ու պառաւ մամին էլ նոյն լեզուով խօսել իրանց հետ: Ան-

*) Այս արհամարհումն մայրենի լեզուի և ազգային կեանքի այն աստիճանի է հասնում, որ կրթուած հայ օրիորդը յօժարութեամբ օտար տղայի է մարդու գնում:

կարելի է լինում սառնասիրտ կերպով լսել այդ ողորմելի պոռաւանների ուռներէն կոտրատելը: Ինչպէս, օրինակ, «Скожу тебе доваѣ, է՛, доваѣ, թէ չէ ти знаншѣ, հա՛»!...

Ուսեալ օրիորդների զարգացումն այն աստիճանի է հասնում, որ նրանք ամաչում են իրանց գլուխ կապած մօրից և նոյնիսկ իրանց բաղահնչիւն կարծուած անունից: Եւ Հականոյշը ОЛЬГА է դառնում ու Սիրանոյշը—ЛЮБОВЬ!...

Հասկանալի է, որ երբ ամուսնանան ու տուն ու տեղ դառնան այդ աղջիկները, իրանց տնից դուրս կը վաճառեն այն ամենը, ինչ որ մայրենի է, ազգային է և կը կրթեն իրանց զաւակներին նոյն օտար ուղղութեամբ...

Մեծ բաղաքների բնակչուհի մտաւոր և բարոյական կեանքը ենթարկուել է նոյն էվօլուցիային, ինչ որ միւս ազգերի կանանցը: Թիֆլիզում և Բագուում՝ դժուար է տարբերել հայ օրիորդին ռուսուհուց և հաղիւթէ Թիֆլիզի «արեստոկրատ» օրիորդը ռուսմով և սալօնական կրթութեամբ շատ ցած լինի Պետերբուրգի, հէնց նոյնիսկ Պարիզի օրիորդից: Սակայն կայ ներքին տարբերութիւն, այն է. հայուհին մեծ մասամբ դուրս եկած վաճառականական անբաղաքակիրթ շրջանից, տանը հիմնաւոր կրթութիւն չի ստացել, զուրկ է հաստատուն սկզբունքներից, զուրկ է նոյնպէս չափաճանաչութիւնից, և նրա բարոյական աշխարհը չափազանց անմշակ է մնում: Գուցէ այս է պատճառը, որ հայ օրիորդի մէջ, ցաւակցաբար, մենք չքացած ենք տեսնում ազգայնութեան գաղափարը և թուլացած բարոյական հիմունքները...

Հայ օրիորդի բաղաքակրթութիւնը, քիչ բառացութիւններով, սոսկ արտաքին է...

Ես մի ուրիշ տեղ խօսել եմ օժիտի անբարոյականացնող և ստորացնող ազդեցութեան մասին աղջկայ վրայ *), այս դրքում ևս առիթ կ'ունենանք այդ խնդրի

*) Տե՛ս իմ «Ամուսնութիւն»:

վրայ կանգ առնելու, առայժմ յիշենք միայն, որ օժիտը մեծ դեր է խաղում մեր ընտանիքի կազմի մէջ:

Այո, օժիտը առաջնակարգ դեր է խաղում ամուսնութեան խնդրի մէջ. այս պատճառով էլ ի հարկէ սէրը վանուած է: Աղջկայ սիրահարութիւնը մի անտակտ և անգործնական բան է համարւում և ծնողները ամեն կերպ արգելք են լինում, որ այդ սիրահարութիւնը բնական վախճանի հասնի, եթէ տղան լաւ «պարտիա» չի կազմում: Իսկ եթէ մի սիրահարութիւն բնական վախճան չի ստանում, հասկանալի է, թէ ինչ ուղղութիւն պիտի տայ նա աղջկայ մտքերին ու բարքին:

Ամուսնութիւնները մեր մէջ այսպիսով լինում են միմիայն որոշ դիտումներով, և մուսուսում է ամուսնացողների ֆիզիկական յատկութիւնները, նրա առողջութիւնը, ժառանգականութիւնը և այլն, այս պատճառով շատ յաճախ ենք տեսնում «բարձր» կոչուած դասակարգի մէջ ֆիզիկապէս և բարոյապէս վատասերուած սերունդ^{*)}:

ԲԺՊ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

(Իր ճարտանկութիւնը)

*) Տե՛ս նոյն գիրքը:

ՀԱՅԵՐԻ ԹԻԻԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանում առաջին, գիտնականորեն կանոնաւոր, միօրեայ ժողովրդագրութիւն կատարուեց միայն 1897 թուականի յունուարի 28-ին: Այդ ժողովրդագրութեամբ դեռ չի որոշուած բնակիչների բաժանումը ըստ դաւանութեան և ազգութեան. հետեւաբար, ճիշտ վիճակագրական տեղեկութիւններ հայերիս մասին գոյութիւն չունի: Այդ է պատճառը, որ «Кавказский Календарь»-ը տարէցտարի անփոփոխ տպում է 1886 թուին կազմուած ոչ-ճիշտ թուերը Կովկասի բնակիչների մասին՝ ըստ կրօնի և ազգութեան բաժանման:

Այդ թուերին նայած 1886 թուականին հայ-լուսաւորչականների թիւը հետեւեալն էր.

Հիւս. Կովկասում . 31,707

Անդրկովկասում . 932,275

Ընդամենը . 963,982

Իսկ հայ-կաթոլիկների թիւը Անդրկովկասում—32,692:

Նոյն «Кавк. Кал.»-ում, նոյն 1886 թուականի տեղեկութիւնների վրայ հիմնուելով, բոլոր հայերի թիւը, առանց բաժանելու դաւանութիւնների, յոյց է տուած 970,656. մինչդեռ գումարելով նոյն դրքում բերուած հէնց միայն լուսաւորչական և կաթոլիկ հայերի թիւը, առանց բողոքականների, գումարը պէտք է լինէր $963,982 + 32,692 = 996,674$: Իսկ եթէ զրան աւելայենք հայ-բողոքականների մատաւորական թիւը *) 20 հազար—ակնյայտնի կը դառնայ, որ մեծ անճշտութիւններ կան «Кавк. Календарь»-ի ջոյց տուած նաև սկզբնական թուերի մէջ:

Վերի ասածներից պարզ է, որ նոյն իսկ 1886 թուականի

*) Շնորհակալ կը լինենք, եթէ մեր բողոքական եղբայրները հաճէին մեզ տեղեկութիւն տալ այդ մասին:

տեղեկութիւնների հիման վրայ հայերի թիւը պէտք է լինէր $996,674 + 20,000$ (բողոք. հայեր) $= 1,016,674$ հոգի կամ կոլոր թուով $1,017,000$: Վիճակագրական գիտութիւնը պարզել է որ Ռուսաստանում ազգաբնակչութեան իսկական յաւելումը կամ աճողութիւնը հաւասար է $1,40/0$: Ուրեմն իւրաքանչիւր տարի եթէ հայերի յաւելումը լինէր $14,238$ հոգի, 1886 թուականից մինչև 1900 թ., այսինքն 14 տարուայ ընթացքում, պէտք է աւելանար $14,238 \times 14 = 199,332$: Աւելացնենք այդ թիւը վերև բերած մեր թուին՝ $1,017,000$ կը ստանանք կոլոր թուով $1,216,000$:

Այդ պէտք է լինի ամբողջ Կովկասի հայերի մօտաւոր թիւը, առանց դաւանանքի խտրութեան:

Այս տարուայ «Արարատի» մէջ տպուած է ներքին գործերի մինիստրին իւրաքանչիւր տարի էջմիածնի սինոդից ներկայացրուած տեղեկագրից մի քաղուածք, որից երեւում է որ 1900 թուականին էջմիածինը հաշուում էր ամբողջ Ռուսաստանում $1,131,474$ երկու սեռի հայ-լուսաւորչականներ: Եթէ այդ թուից հանենք Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի $17,660$ հոգին և Աստրախանի թեմի $12,204$ հոգին (չը հաշուած Հիւս. Կովկասում—Ստաւրօպօլի, Թերեքի, Կուբանի և Դաղստանի չրջանների վիճակների մէջ հաշուած $26,797$ հ.), այսինքն Կովկասից դուրս գտնուած ընդամենը $29,864$ լուսաւորչական հայերին, պէտք է որ, ըստ էջմիածնի տեղեկութեան, ամբողջ Կովկասում միայն հայ-լուսաւորչականները 1900 թուին լինէին $1,131,474 - 29,864 = 1,101,610$ հոգի: Մինչդեռ եթէ յաւելումը հաշուէինք միմիայն լուսաւորչականների նկատմամբ, այն ժամանակ 1886 թուականի ցոյց տուած $963,982$ թիւը պիտի դառնար 1900 թուականին (յաւելումը 14 տարուայ ընթացքում $188,930$) $1,152,912$:

Ի հարկէ, այս բոլոր հաշիւները ենթադրական են և հետո՛ւ ճշտութիւնից, սակայն, այնուամենայնիւ պարզ է, որ միայն հայ-լուսաւորչականների թիւը Կովկասում պէտք է $1,100$ հազարից մինչև $1,150$ հազար լինի. իսկ վերև հաշուելիք որ անխըտիր բոլոր հայերի թիւը Կովկասում պէտք է $1,216,000$ ի մօտ լինի:

Կովկասից դուրս, Ռուսաստանի միւս մասերում, հայ-լուսաւորչականների թիւը, ինչպէս տեսանք, էջմիածինը հաշուում է $29,964$: Այս առիթով աւելորդ չը լինի նկատել որ դեռ 1897 թ.-ին արժանահաւատ աղբիւրից ստացած տեղեկութիւններից ինձ յայտնի էր, որ միայն Բեսարաբիայի և Նոր-Նախիջևանի թեմում հայ-լուսաւորչականների թիւը համարեա այդքան էր՝

29,555: Դրան աւելացրէք Ղրիմի կաթողիկ հայերին *) և դժուար չի լինի Ռուսաստանում, Կովկասից դուրս, հայերի թիւը 50 հազարից անց համարել:

Հետեւապէս, բոլոր հայերի թիւը ամբողջ Ռուսաստանում ենթադրաբար կարելի է ընդունել $1,216,000 + 50,000 = 1,266$ հազար:

Յամենայն դէպս, նոյն իսկ չը հաշուած Թիւրքիայից Կովկաս փախած հայերին, բոլոր հայերի թիւը ամբողջ Ռուսաստանում պէտք է որ աճեալը լինի 1,200,000 և, երեւի, չափազանցութիւն չի լինի ընդունել ևս 1,300 հազար:

Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

*) Կը խնդրէինք իմացողներէից հաղորդել մեզ ճիշտ թուեր Ռուսաստանի հայ-կաթողիկներէ մասին:

Հ Ե Ն Ր Ի Կ Ի Բ Ս Է Ն *)

Սօցիալական դրամա. — Իբսենի ընտելմը. — «Հասարակութեան սիւնե-
րը» (Կօնսուլ Բէրնիկը իբրեւ զբարեգործ և անբիծ անուանա Նախանձա-
խնդիր. — Բէրնիկի բնատուրութեան չեղաշրջումը. — Սպասութիւնը և ճշմար-
տութիւնը իբրեւ հասարակութեան սիւներ. — Օր. Լօնան. — Կնոջ նշանակու-
թիւնը և Իբսենի կանացի տիպերը. — «Նօրա» (Նօրան իբրեւ «տիկնիկ». —
Նրա սէրը դէպի Հէլմէրը. — Նօրայի «իրաւագիտական» հայեացքները. — Տի-
կին Լինդէն և Գիւնթէր. — Հէլմէրի եսականութիւնը. — Նօրայի ինքնասթա-
փումը և բողոքը. — «Զարմանալին». — Իբսենի վերաբերմունքը դէպի ա-
մուսնութիւնը. — Սիրոյ էութիւնը. — «Ուրուականներ» («Ուրուականներ
իբրեւ պատասխան — դրամա. — տիկին Սլվինգ և պատուր Մանդէրս. — Օս-
վալդ. — Ճշմարտութեան արեւը. — Ժառանգականութեան օրէնքը)։

VII

Փիլիսոփայական երեք մեծ դրամաներից յետոյ՝ 1877-ին
լոյս է տեսնում Իբսենի «Հասարակութեան սիւները» («Samfun-
dets Stotter»)։ Արանով սկիզբ է դրւում Իբսենի, այսպէս կոչ-
ուած, սօցիալական դրամաների շարքին։ Նախկին դրամանե-
րում, ինչպէս ասեանք, անպակաս էին սօցիալական պրօբլէմ-
ներ, բայց այժմ Իբսեն աւելի որոշ և ինքնուրոյն գոյն է տա-
լիս իր ուղղութեանը։ Նա արդէն առնական հասակում է, բօ-
մանտիքական և միւս կողմից՝ խիստ մտրակողական հակումներից
ազատ. դիտելու և ըմբռնելու աւելի սուր ընդունակութեամբ
զինուած՝ նա այժմ վերլուծող, քննադատող է։ Եւ ահա իր հե-
ռատես և խորաթափանց հայեացքով նա քրքրում է հասարա-
կական կեանքի բազմակողմանի վերքերը, մերկայնում է բա-
ցասական երևոյթների մի ահագին շանչ։ Սակայն միաժամա-
նակ Իբսենի ուշադրութիւնից չէ վրիպում նաև մի կարևոր
պրօբլէմ — անհատների ներքին, հոգեկան աշխարհի նկարագիրը
և ընդհանրապէս մարդկային բնաւորութեան վերլուծումը։

*) Տե՛ս «Մուրճ» № 3.

Մերկացնելու, քննադատելու մէջ անխնայ՝ Իրսէն իբրև արուեստագէտ՝ բէալիստ է, երբեմն նոյն իսկ նատուրալիստ։ Բայց նա այն բիալիստներից չէ, որոնք զուրկ ինքնուրոյնութիւնից և լայն հորիզոններ ընդգրկելու ձիրքից՝ զբաղուած են միայն կեանքի և բնութեան ընդօրինակութեամբ. նա լոկ ընդօրինակող չէ, այլ ոգի տուող. Զօլայի յայտնի ասացուածին համեմատ նա իրականութիւնը իր տէմպերամէնտի շողերովն է գունաւորում։

Իբրև բէալիստ, իրականութիւն վերարտադրող՝ նա երբեմն, մանաւանդ վերջին տարիները, յոռետես տրամադրութեամբ է համակուում, բայց և այնպէս ըստ էութեան մնում է մի անդրդուելի իդէալիստ։ Սա շօշափելի կերպով կը պարզուի՝ երբ մենք յաջորդաբար կը ծանօթացնենք ընթերցողներին նրա սօցիալական դրամաների պատկանելի շարքի հետ։

Սկսենք ուրեմն «Հասարակութեան սիւներից»։

Հօր մահուանից յետոյ երիտասարդ Բէրնիկ վերադառնում է իր ծննդավայրը, նօրվէդական մի փոքրիկ քաղաք, իր ժառանգած առևտրական գործերը ղեկավարելու կամ աւելի ձիշտ՝ կարգի բերելու, անկման վտանգից ազատելու—մինչև Բէրնիկի գալը մայրն էր անցկը գործի գլուխը, որ սակայն առևտրական ընդունակութիւններից զուրկ լինելով՝ նախկին «հռչակաւոր տունը» համարեա մնանկութեան աստիճանի էր հասցրել։ Եւ Բէրնիկը այս անակնկալ դժբախտութեան առաջ կորազլուի կանգնած՝ մտածում է «փրկութեան մի միջոց» գտնել։ Փրկութեան աղբիւրը լինում է օր. Բէտտին, որ իր մօրաքրոջից մեծ հարստութիւն էր ժառանգել։ Բէրնիկը սիրում էր Լօնա Հէսսէլին, Բէտտիի խորթ քրոջը, որ զուրկ էր հարստութիւնից, բայց նրան հարկաւոր էր «փրկութեան մի միջոց»—մի փրկութիւն, որ այս դէպքում կարող էր տեղի ունենալ միայն սիրոյ զոհաբերութեամբ։ Բէրնիկը առանց տատանուելու անում է այս զոհաբերութիւնը—չէ որ հին, նշանաւոր, երեք սերունդներ շարունակ գոյութիւն ունեցող տունը» պէտք էր փրկել։

Առևտրական ասպարէզի վրայ հնարագիտութեան այս առաջին քայլն անելուց յետոյ նա իր «գործնական» փորձառութիւնների պաշարը բազմապատկած՝ ոչ միայն փրկում, այլ և հետզհետէ խոշոր բարձրութեան է հասցնում իր առևտրական տունը, որ քաղաքում առաջնակարգ հռչակ էր վայելում։ Իբրև քաղաքի առաջին վաճառական, նա իրան շատ շողորթութուած էր զգում լինել նաև առաջին բարեգործը, «հասարակութեան առաջին նեցուկը»։ Եւ նա չէ դանդաղում աչքի ընկնող բարեգործութիւններ անել, հոգատարութեամբ վերաբերուել քաղա-

քի թէ արտաքին և թէ ներքին կարիքներին—«մարդ չպէտք է ամենից առաջ իր մասին մտածէ», ասում է տնտեսական ճգնաժամի տենդից դեռ նոր սթափուած Բէրնիկը, «մենք բոլորս պէտք է մեծ կամ փոքր հասարակութեան համար գործենք. ես գոնէ այսպէս եմ վարւում»: Նրա արած բարեգործութիւնները սակայն չարունակ թմրկահարութեամբ ևն տեղի ունենում, կօնսուլ Բէրնիկի—ժամանակի ընթացքում նա դառնում է կօնսուլ—փառքի և անմահութեան անունով: Բայց և այնպէս նա ընդունակ է հմուտ կերպով սքողուել, իր իսկական բարոյական կերպարանքը թաքցնել: Երբ կօնան 15 տարույ յետոյ երեսուիւ է տալիս նրա արարմունքը, որ նա սէրը զոհեց առևարական նպատակների—այն ժամանակ Բէրնիկը՝ ըստ էութեան եսական, բայց արտաքուստ հասարակական հոգսերով տանջուողի դէմք ընդունելով՝ նկատում է—«չգիտես թէ վաճառականը ինչ մեծ պատասխանատւութեան է ենթակայ... հարիւրաւորների և հազարաւորների բախտը նրա առևտրիցն է կախուած... Եթէ Բէրնիկի տունը կործանուէր՝ այն ժամանակ հասարակութիւնն զգալի կերպով կը վնասուէր»:

Թէ Բէրնիկը ինչ միջոցով հասաւ իր անձնական բարեկեցութեանը և հասարակական փայլուն դիրքին—սա մենք մասամբ արդէն ակնարկեցինք: Այժմ անցնենք նրա միւս սխրագործութիւններին, որպէսզի պարզուի ստութեան և անբարեխղճութեան, կեղծիքի և անազնութեան այն երերուն պատուանդանը, որի վրայ յենուած նա իր վաղանցուկ փառքի զափներն էր հիւսում:

Նա իր հարազատ քրոջ՝ Մարթայի հարստութիւնը խաբէութեամբ խլում է նրա ձեռքից և իբրեւ «չնորհք» կողոպտուած զոհի ապրուստի հոգսը իր վրայ է վերցնում: Այս դեռ բաւական չէ. նա մեծ խնամք է ստանում անրիժ պահելու նաև իր անունը, բարոյական համբաւը: Նա ունէր մի ապօրինի աղջիկ՝ Դինա Դօրֆ, որ իր հետ մի և նոյն յարկի տակն էր ապրում: Ի՞նչպէս աղատուել այս ամօթաբեր արատից, ի՞նչպէս վստահայնել բամբաստէր հասարակութեանը, որ Դինայի հայրը ինքը չէ, այլ մի ուրիշ: Բէրնիկի կնոջ եղբայրը՝ Նօհան այնքան բարի է և անձնուէր, որ առանց մազաչափ անգամ մեղաւոր լինելու, յանձն է առնում Դինայի հայրը կոչուելու արտադր: Այս ակամայ յանցագործութեան կնիքը ճակատին նա իր քոյր Լօնայի հետ ճանապարհ է ընկնում դէպի Ամերիկա: Սակայն Նօհանի հեռանալուց յետոյ ապերախտ և փոքրոգի Բէրնիկը չէ քաշուում նրա անաղարատ անունը նորից իր եսական շահախնդ-

րութեան գործիք դարձնելու նա յայտարարում է, որ Եօհանը կողոպտել է իր հօր գանձարանը:

Տասնհինգամեայ բացակայութիւնից յետոյ քոյր և ևղբայրը Ամերիկայից յետ ևն գալիս: Դինան այս ժամանակաշրջանում միծայել, հասուն աղջիկ էր դարձել: Եօհան հաւանում է նրան և կամենում է ամուսնանալ նրա հետ, բայց Դինայի վրայ աչք ունէր նաև փոխքարոզիչ Րօրլանդ: Վերջինս կարծես մի չնորհք, քրիստոնէական մի բարիք էր անում խնդրելով այս կասկածելի ծաղում ունեցող աղջկայ ձեռքը, որովհետև նա ծանօթ չէր գործի բուն էութեանը՝ այդ պատճառով նրան շատ տարօրինակ և անլուր մի կրկոյթ էր թւում, որ «Դինայի հայրը» յանկարծ կամենում է ամուսնանալ իր աղջկայ հետ: Դինան համարեա խօսք էր տուել Րօրլանդին, բայց նրան չէր սիրում: Վերջը այս մրցումից Եօհանն է յաղթող դուրս գալիս:

Րօրլանդի հետ ունեցած ընդհարման ժամանակ Եօհանը տեղեկանում է այն ամբաստանութիւնների մասին, որոնք Բէրնիկը բարդել էր իր վրայ: Արդար զայրոյթով լցուած՝ նա վրձնում է բացատրութիւն պահանջել Բէրնիկից և վերջինիս ստոր արարմունքը հրապարակ հանել, բայց իր քրոջ՝ Լօնայի թախանձանքին ղիջանելով՝ համաձայնում է առժամանակ սպասել—իր նշանածին Ամերիկա տանել տեղաւորել և կրկու ամսից յետոյ գալ հաշիւ տեսնելու:

Բէրնիկը այժմ կարող էր ազատ շունչ քաշել, որովհետև հէնց այժմ «անբիծ անունը» նրան ամենից շատ էր հարկաւոր, նա սկսել էր առևտրական մի խոշոր ձեռնարկութիւն, որի յաջողութեան զլխաւոր նախապայմանը մաքուր վարքն էր:

Բայց չէ որ Եօհանը կրկու ամսից յետ էր գալու և իր դիմակը այսպէս թէ այնպէս պատռելու էր: Ահա դիմակազերծ լինելու սարսուռը նրան դրդում է փտանդից պաշտպանուելու համար աւելի արմատական միջոցների մասին մտածել:

Եօհանը մտադիր էր «Gazolle» նաւով ճանապարհ ընկնել, նաւը հին էր և անհրաժեշտ էր վերանորոգել, իսկ վերանորոգութեան գործը յանձնուած էր Բէրնիկին: Վերջինս դրդում է իր բանուորին շտապով առաջ տանել վերանորոգութիւնը, և շտապելու հետեւանքը պէտք է լինէր այն, որ նաւը փոթորկի առաջ չսլիտի կարողանար ուժեղ ընդդիմադրութիւն ցոյց տալ ու անշուշտ խորտակուելու էր:

Այն օրը երբ նաւը պէտք է ճանապարհ ընկնէր՝ մի խումբ քաղաքացիներ Բէրնիկի բնակարանի առաջ՝ ծառատանում հաւաքուած մտադիր էին մի սերկնադով պատուել «առաջին քաղաքացուն»: Այս ոգևորուած ցոյցերի հետ միասին՝ կօնսուլ Բէր-

Նիկը յանկարծ երկու անակնկալ տեղեկութիւններէց շանթահար է լինում. նա լսում է, որ Եօհանը փոխանակ «Gazelle» նաւով «Palmbaum»-ով է գնացել և որ իր միակ որդին, տասնութամեայ Օլաֆը իր բռնակալական վարմունքներին չգիմանալով՝ «Gazelle» նաւով Ամերիկա է փախել—իսկապէս Օլաֆը հասել էր մինչև նաւը, բայց մայրը վերջին րոպէին տեղեկանալով՝ յաջողեցրել էր նրան յետ բերել—ուրեմն ուրիշի համար պատրաստուած անգունդի զոհը քիչ էր մնում իր միակ որդին լինէր: Եւ մինչդեռ Բէրնիկը հոգեկան բուռն յուզմունքից տարուբերուած էր՝ հաւաքուած քաղաքացիների կողմից Բօրլանդը մի ոգևորուած ճառ է արտասանում: Նա չնորհակալութիւն է յայտնում այն հանգամանքի առիթով, որ նա հիմք դրեց, ուղղութիւն տուեց բարոյական այն ճանապարհին, որի վրայ այժմ կանգնած է իրանց հասարակութիւնը: Նա աւելորդ է համարում խօսել ոչ Բէրնիկի «օրինակելի ընտանեկան կեանքի» և ոչ նրա «բարոյական անբիծ վարքի» մասին, այլ նա ճառում է բացառապէս նրա քաղաքացիական պարտաճանաչութեան, հասարակական գործունէութեան առիթով, որին բոլորը ականատես են եղել—«Ձեր գրօշակը հեռաւոր ծովեր է չափում: Բազմաթիւ և երջանիկ բանուորների մի խումբը նայում է ձեզ վրայ իբրև մի հօր վրայ: Նոր արդիւնաբերութիւններ մտցնելով մեր կողմերը, դուք հարիւրաւոր ընտանիքների համար ապրուստ հայթայթելու ատպարէզ բաց արեք»: Ծառախօսը գովում է մանաւանդ Բէրնիկի «անշահասիրութիւնը», որով փայլում է նրա ամբողջ կեանքը և նիստ ու կացը: Մի խօսքով Բէրնիկը ըստ Բօրլանդի «բառի իսկական նշանակութեամբ հասարակութեան անկիւնաքարն է»: Միաժամանակ նա չէ զլանում գովաբանել նաև «հասարակութեան միւս սիւներին», մեծ կալուածատէր Բումմէլին, վաճառականներ Ալտշտէդին և Վիգէլանդին:

Բայց կօնսուլ Բէրնիկի մէջ յանկարծ տեղի է ունենում մի անակնկալ յեղաշրջում—նա իր հասկացողութեամբ և բարոյական հայեացքներով միանգամայն կերպարանափոխւում է:

Ահա թէ նա ինչ է պատասխանում իրան գովաբանող ճառախօսին և ներկայ եղող միւս համաքաղաքացիներին—«Ծառախօսը նկատեց թէ՛ մենք այս երեկոյ մի նոր ժամանակուայ սկզբնաւորութեան շեմքումն ենք դառնում. և ես հաստատապէս յոյս ունեմ, որ դա իրականանալու է: Բայց որպէս զի սա տեղի ունենայ, պէտք է մենք ամենից առաջ ճշմարտութիւնը իւրացնենք—ճշմարտութիւն, որ մինչև այս երեկոյ երբեք և ոչ մի դէպքում մեզանում օթեւան չէ գտել (ուսկնդիրները զարմանքի նշաններ են ցոյց տալիս):

«Ես պէտք է նրանից սկսեմ, պարոն փոխքարոզիչ, որ հրաժարուեմ այսպիսի դէպքերում ընդհանրապէս սովորական դարձած այն գովասանքից, որ դուք շռայլեցիք իմ հասցէին: Ես արժանի չեմ դրան, որովհետեւ մինչև ներկայ օրը ես անշահաւէր մարդ չեմ եղել: Եթէ ես շարունակ շօշափելի օգուտների չեմ ձգտել, այնուամենայնիւ այժմ էլ միանգամայն գիտակցում եմ, որ իմ գործունէութեան մեծագոյն մասի զրդիչը եղել է՝ ոյժ, ազդեցութիւն, զիրք ձեռք բերել»:

Այնուհետեւ նա իր պատասխանի շարունակութեան ընթացքում մի քանի անսկնկալ յայտնագործութիւններից յետոյ՝ բացարձակապէս խոստովանում է, որ Եօհանը մեծահոգութեամբ միայն յանձն է առել յանցաւորի անունը և որ իսկական յանցաւորը ինքն է եղել—«ևս դեռ ուրիշ շատ զղջումներ ունէի անելու, բայց դրանք միայն իմ խղճին ևն վերաբերում... Հեռու այս հանդիսաւոր չափըութիւնները. մենք բոլորս արդէն զգում ենք, որ զրանք այլևս անտեղի են»:

Այսպէս կերպարանափոխուած և մաքրուած՝ Լօնսու Բէրնիկը ապագայ գործունէութեան նոր ծրագրեր է պատրաստում և դիմելով իրան չըջապասող զեղեցիկ սեռի ներկայացուցիչներին՝ նկատում է—«սերտ կերպով այժմ միացէք ինձ հետ, դուք ազնիւ և ճշմարիտ կանայք: Այս օրերս ես սովորեցի նաև այն, որ կանայքն են հասարակութեան սիւները»:

—«Բայց դու մի թոյլ իմաստութիւն ես սովորել, փեսայ: Ո՛չ, ազատութիւն եւ ճշմարտութիւն—սրանք են հասարակութեան սիւները»—պատասխանում է Լօնա Հէսսէլ:

Այսպէս ուրեմն ընթերցողը տեսնում է խարդախ, անբարոյական, ոսկէհորթի սարուկ Բէրնիկի մէջ մի անսկնկալ և արմատական կերպարանափոխութիւն, որ տեղի է ունենում առանց, այսպէս ասած, փոխանցիկ շրջանների, ոչ թէ դանդաղ, յարմարաբայլ կերպով, այլ միանգամայն յանկարծակի: Պիէսի աստիճանական զարգացման ընթացքում այս անսկնկալը գուցէ մի փոքր արուեստական, հակահոգեբանական համարուի. սակայն իդէալիստ հեղինակի համար դա մի ներքին պահանջ էր—Լօնսու Բէրնիկը պէտք է կերպարանափոխուէր, ազատութեան և ճշմարտութեան սկզբունքը պէտք է յաղթանակէր: Այնպէս որ այս տեսակէտից մեզ բաւական հիմնաւոր է թւում Ա. Հանդշտայնի այն նկատողութիւնը՝ թէ Իբսէն «բնաւորութեան հետեւողականութիւնը զոհ է բերում իդէալի հետեւողականութեանը»:

Թէև Բէրնիկը ազատ, ինքնակամ կերպով գտաւ ճշմար-

ստութեան ճանապարհը՝ այնուամենայնիւ Լօնան իբրեւ ղեկավարող և դրող ոյժ այս հետեւանքի նկատմամբ շատ զօրեղ նշանակութիւն ունեցաւ:

Լօնան Իբսէնի ստեղծագործած կանացի ամենահետաքրքիր տիպերից մէկն է: Նա փայլում է ուժեղ կամքով և անհատականութեամբ, բայց որ գլխաւորն է՝ ազատ է իրանց սեռին յատուկ մանրակրկտութիւնից և վրէժխնդրութեան զգացմունքից. նա վեհանձն է, մեծահոգի և անյիշաչար: Երբ Բօրլանդ մի անգամ նրան հարցնում էր՝ թէ նա ինչ գործ ունի իրանց ընկերութեան մէջ—այն ժամանակ այս ինքնավստահ և զօրեղ կամքի տէր օրիորդը պատասխանում է—«մի փոքր օղափոխութիւն առաջացնելու»: Բարեմիտ Բօրլանդը, ի հարկէ, անընդունակ էր մեր ընդգծած խօսքի իսկական նշանակութիւնը հասկանալ:

Այս «օղափոխութեան» ազդեցութիւնը, ինչպէս տեսանք, ամենաուժեղ կերպով երեւաց հէնց Բէրնիկի վրայ: Լօնան չէր կարող հաշտուել այն տխուր իրողութեան հետ, որ իր նախկին սիրածը օրըստօրէ աւելի և աւելի թաթախւում անբարոյականութեան տիղմի մէջ: Նա իր նպատակն է դարձնում ազատել Բէրնիկին կատարեալ անկումից և բարոյապէս կերպարանափոխել: Իսկ կօնսուլը սկզբում անընդունակ էր ըմբռնելու այս ուժեղ և հետեւողական օրիորդի ազնիւ դիտաւորութիւնը:

Եւ Լօնան բաց ձակատով, առանց վերապահումների է դիմում դէպի նպատակը: Ամերիկայից վերադառնալուց յետոյ առաջին անգամ Բէրնիկին հանդիպելիս՝ նա բացարձակապէս յայտնում է, որ «առաջին քաղաքացին» 15 տարի շարունակ իր շուրջը միայն կեղծիքի և ստութեան հիւսուածք է մանում. —«Դու քաղաքի ամենահարուստ և ամենաուժեղ մարդն ես. բոլորը խոնարհւում են քո առաջ, որովհետեւ քեզ մաքուր և անբիծ են համարում. քո տունը համարում է միանգամայն օրինակելի, կեանքդ՝ նոյնպէս: Բայց այս բոլոր մեծաշուք վառքը, ինչպէս և ինքդ մի երերուն ձախճախուտի վրայ էք հիմնուած: Կարող է գալ մի այնպիսի վայրկեան, կարող է արտասանուել մի խօսք, որ դու քո ամբողջ փառքով հիմնայատակ լինես—եթէ միայն ժամանակին չաշխատես քեզ ապահովեցնելը»:

—Լօնա, ինչ ես կամենում—զայրացած հարցնում է Բէրնիկը:

—Ես ուզում եմ օգնել քեզ, Բիխարդ, ոտներիդ տակ հաստատուն հող ձեռք բերելու:

—Վրէժ, դու կամենում ես վրէժխնդիր լինել. այդ ես

ղգում էի, բայց դա քեզ չէ յաջողուելու: Այստեղ կայ միայն մէկը, որ իրաւունք ունի խօսելու և որը սակայն լուռ է:

— Եօհանն:

— Այո, Եօհաննը, յետքէ մի ուրիշ կամենայ ինձ դատապարտել՝ այն ժամանակ ես ամեն ինչ կ'ուրանամ: Եթէ մէկը կամենայ ինձ ոչնչացնել՝ այն ժամանակ ես կը պաշտպանուեմ մինչև վերջին շունչս: Բայց դա երբէք քեզ չի յաջողուիլ, ասում եմ քեզ: Նա, ով որ ինձ կործանել կարող է—լուռ է և շուտով այստեղից հեռանալու է:

Բայց մենք տեսանք թէ Բէրնիկը որքան սխալ էր իր հաշուի մէջ և թէ ինչպէս Լօնան յամառ հետևողականութեամբ իր նպատակը պահպնեց:

Իբսէն դեռ իր անդրանիկ ոտանաւորներին մէկում բարձր հողեզմայլութեամբ երգել էր կնոջ նշանակութիւնը թէ բաննաստեղծութեան և թէ կեանքի նկատմամբ: «Լոյսի աշխարհուն» էր նա տեսնում կնոջ հայրենիքը, իսկ մարդկային կեանքի ամենաբարդ առեղծուածը նա համարում էր «կարօտը դէպի լոյս»: Լօնան ահա այս տեսակ լուսատու փարոսի դեր է կատարում Բէրնիկի վերաբերմամբ:

Ընդհանուր և բաւական հիմնաւոր մի կարծիք է, որ Իբսէն առհասարակ իր դրամաներում հակուած է կանացի տիպերը աւելի զրական գոյներով նկարագրելու: Իբսէնի հերոսուհիները ընդհանրապէս փայլում են մի տեսակ ոգեշունչ, վերակենդանացնող յատկութեամբ: Կարծում ենք՝ սա մասամբ երեւաց մեզ մինչև այժմ զբեղեցնող դրամաներից և աւելի որոշ կերպով կ'երեւայ յետագայ դրամաները վերլուծելիս:

Ինչ վերաբերում է «Հասարակութեան սիւներին»՝ պէտք է նկատել, որ այնտեղ, բացի Լօնայից, կան նաև ուրիշ մի քանի հետաքրքիր կանացի դէմքեր: Այսպէս օր. Դինա Դօրֆը, այս նորափթիթ, չը հասունացած Նօրան, որ Եօհանի հետ վրձնել է կեանքի պայքարում դիմադրել հասարակական տգեղ բարքերին, կաշկանդող սովորութիւններին և որը առհասարակ ձգտում է գնալ այնպիսի մի երկիր, ուր մարդիկ «այնքան էլ բարոյական չեն» (ընդգծուած խօսքը այստեղ հեգնական մտքով պէտք է հասկանալ): Ուշագրաւ է նաև Մարթա Բէրնիկ, որ չը նայելով իր եղբոր անխիղճ վարմունքին՝ շարունակում է ապրել նրա մօտ և այդ՝ ի սէր Դինայի, որին նա մեծ խնամատարութեամբ դաստիարակում է, մանաւանդ որ նա հաւատացած էր թէ սա Եօհանի՝ իր նախկին սիրածի՝ աղջիկն է: Մարթան էլ է իր տենչանքներով սաւառնում դէպի անծանօթ երկիրը, դէպի հեռաւոր աշխարհը: Դինայից բաժանուելիս ահա թէ նա

ինչ է ասում—«Խոստացիր ինձ, Դինա, այլևս երբեք յետ չը գալու: Այժմ գնում ես դու բախտաւորուելու, սիրելի զաւակս... ծովի միւս կողմը: Ա՛խ, ես դպրոցական տարիներում ինչքան եմ կարօտել այդ աշխարհին: Այնտեղ պէտք է գեղեցիկ լինի... մի լայնարձակ երկինք... ուր ամպերը աւելի բարձր են սահում, քան թէ այստեղ և ուր մարդիկ աւելի ազատ միջնորոտով են չըջապատուած»:

«Հասարակութեան սիւների» մէջ կրկին անգամ փայլում է Իբսէնի հեգնելու, երգիծաբանելու խոշոր տաղանդը: Թէև պրօֆ. Լիցման նորերս հրատարակած իր մի ուսումնասիրութեան մէջ—«Ibsens Dramen»—նկատում է թէ՛ «Հասարակութեան սիւները սկսում է իբրև երգիծաբանութիւն և վերջանում իբրև ողբերգութիւն»—այնուամենայնիւ պէտք է նկատել, որ երգիծաբանական համեմը սկզբից մինչև վերջ անպակաս է:

VIII

1879-ին լոյս տեսաւ Իբսէնի աշխարհահռչակ դրամաներից մէկը—«Նօրա» կամ «Մի սիկնիկասուն» (Et Dukkehjem): Այս դրաման իբրև առաջնակարգ դերասանուհիների բէպէրտուարի գլխաւոր մի շարդ հեղինակին, Նորվէգիայի սահմաններից դուրս, մեծահամբաւ դրամատուրգ դարձրեց:

Փաստաբան Ռօբէրտ Հէլմէր 8 տարի է արդէն ամուսնացել է և մինչև իսկ երեք զաւակների տէր է, գեղեցիկ, բայց մի քիչ թեթեւամիտ: Այս թեթեւամտութիւնը սակայն, որ ուղղակի հետեւանք է նրա տաքարիւն, կենսուրախ բնաւորութեան, ինչպէս յետոյ կը տեսնենք, անջնջելի չէ, անյողական է: Նօրան սիրում է իր ամուսնուն անմեղ և վառվռուն սիրով, բայց միաժամանակ նա ակնածում է Հէլմէրից, պատկառանք է զգում դէպի նա: Հէլմէրը փոխադարձաբար նոյնպէս սիրում է Նօրային, բայց այս սիրոյ հիմքը միայն զգայական հաճոյքն է, ներքին, հոգեկան կապը բացակայում է: Նօրան Հէլմէրի համար մի «սարեկ» է, մի «արտոյտ», մի «թիթեռնիկ», մի «աղանձակ»—մի խօսքով նա տիկին չէ, այլ մի մեծ երեխայ, մի սիկնիկ: (Այս է պատճառը, որ Իբսէն Հէլմէրի տունը անուանում է «տիկնիկատուն»): Քանի Նօրան դեռ չէր ամուսնացել՝ հայրը նրան նոյնպէս համարում էր մի տիկնիկ. իսկ ամուսնութիւնը միայն այն հետեանքն ունեցաւ, որ «տիկնիկը» այժմ երեք «տիկնիկներ» ունի: Յիրաւի, ինչպէս Նօրան Հէլմէրի տիկնիկն է, այնպէս էլ իր երեք զաւակները՝ Էրվին, Ռօբ և Էմմա՝ Նօրայի տիկնիկներն են:

Թէ՛ սրբան սիրում էր Նօրան Հէլմէրին՝ սա երևում է այն փաստից, որ ամուսնութեան առաջին տարում երբ վերջինս ծանր կերպով հիւանդացել էր և բժիշկները յայտնել էին, որ միայն հարաւային կլիման կարող է նրա կեանքը փրկել—Նօրան միջոցներից զուրկ լինելով՝ բաւական խոշոր մի գումար է պարտք անում Հէլմէրի բարեկամ և պաշտօնակից Գիւնթէրից, որպէսզի հնարաւորութիւն ունենար իր մահամերձ ամուսնուն իտալիա տեղափոխելու, Բայց Նօրան ոչ միայն Հէլմէրից գաղտնի է անում այս քայլը, այլ և իր հօր ստորագրութիւնը կեղծում է—որովհետև առանց հօր ստորագրութեանը՝ դժուար էր գումարը ձեռք բերել և միւս կողմից հօր սեփական ստորագրութիւնն ունենալը անհնար էր՝ նա էլ մահուան անկողնումն էր գտնւում:

Նօրան հասնում է իր նպատակին—իտալական երկնքի տակ Հէլմէրը կազդուրւում է: Որովհետև Նօրան սիրում էր իր ամուսնուն՝ այդ պատճառով տարիների ընթացքում այս փոխառութեան գաղտնիքը ծածկում է նրանից, որպէսզի նրան վիշտ, մտահոգութիւն չպատճառէ. իսկ ինքը իրան զրկելով, խնայելով՝ պարտքի մեծ մասը արդէն հատուցել էր, իսկ մնացորդը պէտք է «մինչև Ծննդեան տօները» հասցնէր: Այս գաղտնապահութեան հիմնական պատճառներից մէկը այն պատկառանքն էր, որ Նօրան իբրև մի սիրող և թոյլ էակ, իբրև մի կին՝ տածում էր դէպի իր ամուսինը: «Տիկնիկ» Նօրայի զգացմունքի աշխարհը, մասամբ և նրա մտածողութեան հորիզոնը բաւական լուսաւրանած կը լինե՞ր՝ եթէ առաջ բերե՞ր այն խօսքերը, որ նա ուզողում է իր բարեկամուհի տիկին Լինդէնին՝ երբ վերջինս իր զարմանքն էր յայտնում, որ Նօրան երկար տարիների ընթացքում իրան թոյլ էր տալիս այդպիսի մի լուրջ դէպք թաղցնել իր ամուսնուց—«...Րօբէրտ իր առնական ինքնագիտակցութեամբ սրբան անախորժ և ճնշուած պիտի զգար իրան՝ եթէ իմանար, որ նա ինձ երախտապարտ է. սրանով մեր փոխադարձ յարաբերութիւնը բոլորովին կարող էր եղծուել և մեր սիրուն, բախտաւոր օջախը այլ ևս այն չէր լինի, ինչ որ այժմ է»։ Այս յարաբերութիւնը անխախտ պահելու համար՝ Նօրան զաղանիքը իր ամուսնուն յայտնելուց գերադասում է ձմեռնային երկար գիշերները նստել և անդադար աշխատել—նա վարձատրութեամբ մի վէպ էր թարգմանում մի թերթի համար: Եւ այս տենդոտ աշխատանքի մէջ նա իրան զգում է «իբրև մի տղամարդ»։ Սակայն այս բոլորը ինչո՞ւ համար—«ապրելու և բախտաւոր լինելու համար... հոգսերից ազատուելու և երեսնաների հետ խաղալու համար»:

Ընտանեկան անվրդով երջանկութեան տենչանքով վառուած՝ մեծ տիկնիկը իր փոքր տիկնիկների հետ պատրաստուում է Ծննդեան գիշերը տօնելու: Չէ որ Ծնունդը երեխաների տօնն է—մեծ թէ փոքր դա մի և նոյնն է: Իր ամուսնուն առանձին հաճոյք պատճառելու համար՝ Նօրան խոստացել էր այդ երեկոյ մի պարահանդէսում կապրիից բերած իտալական համազգեստով «տարանթէլլա» պարել: Եւ ահա մինչև այդ բոլկէն՝ մի միջադէպի պատճառով՝ վրայ է հասնում անակնկալ պատահարը և անհոգութեան ու խաղաղ զուարճութեան այս բոյնը՝ «տիկնիկատունը» դառնում է աղմկացող խռովութեան ու տխուր պառակտումների մի ասպարէզ:

Հէլմէր դարձել էր մի բաժնետիրական ընկերութեան բանկի վերատեսուչ: Այդ նոյն բանկում, իբրև Հէլմէրի ստորագրեալ, ծառայում էր Գիւնթէր, որ սակայն կարճ ժամանակից յետոյ արձակուում է իր պաշտօնից, որովհետև, մի տարօրինակ զուգատիպութեամբ, ինչ որ ստորագրութիւն էր կեղծել: Գիւնթէր ընդհանրապէս այն տիպերիցն է, որոնք առանձին հակում ունեն զանազան «մութ գործերով» զբաղուելու, այս պատճառով դժկտօր Բանկը իրաւամբ նրան անուանում է «բարոյական հիւանդանոցի անդամ»:

Գիւնթէր պահանջում է Նօրայից զրդել իր ամուսնուն, որ նա իր արձակման վճիռը յետ առնէ՝ հակառակ դէպքում սպառնում է յայտնել Հէլմէրին Նօրայի գաղտնիքը—առանց ամուսնու գիտութեան պարտք անելը և ստորագրութիւն կեղծելը: Գիւնթէրի մոտադրութիւնն սկզբում սարսափեցնում է Նօրային. վերջինիս համար չափազանց անախորժ էր ասպարէզ հանել մի այնպիսի գաղտնիք, որ իր «ուրախութիւնն էր և պարծանքը»:

Գիւնթէր սառնասիրտ և ինքնավստահ, բայց մի քիչ ցիւնիքական ոճով պարզում է Նօրայի առաջ նրա կատարած յանցանքի ծանրութիւնը—«Տիկին Հէլմէր, դուք ինչպէս երևում է ուղղակի ոչ մի գաղափար չէք ունեցել թէ ինչ յանցանք էք գործում: Բայց ես կարող եմ ձեզ հաւատացնել, որ ձեր արածը ոչ տարբեր և ոչ էլ վատթար մի բան է՝ բան թէ այն ինչ որ ես եմ գործել և որը իմ ամբողջ բաղադրական գիրքը ոչնչացրեց»:

Նօրան սակայն մխիթարւում է այն գիտակցութեամբ, որ եթէ ինքը յանցանք է գործել յամենայն դէպս դա ազնիւ, մարդասիրական շարժառիթներից դրդուած է տեղի ունեցել:

—Օրէնքները շարժառիթների մասին չեն հարցնում—նկատում է օրէնսգէտ Գիւնթէրը:

—Այն ժամանակ մենք պէտք է շատ վատ օրէնքներ ունենանք—պատասխանում է Նօրան։

—Վատ թէ լաւ—դա մի և նոյնն է. եթէ ես այս փաստաթուղթը դատաւորի առաջ դնեմ՝ այն ժամանակ դուք կը դատապարտուէք ըստ օրէնքի։

—Այդ ևս չեմ կարծում։ Միթէ աղջիկը իրաւունք չպէտք է ունենայ իր մահամերձ հօր վիշտը և հոգսերը ամոքելու։ Միթէ կինը իրաւունք չպէտք է ունենայ իր ամուսնու կեանքը փրկելու։ Ես օրէնքներին այնքան ճշգրիտ կերպով տեղեակ չեմ, բայց համոզուած եմ, որ մի տեղ գրուած պէտք է լինի՝ թէ այսպիսի բան թոյլ է տրուում։ Եւ դուք այս չգիտէք, դուք, որ մի փաստաբան էք։ Դուք, պարոն Գիւնթէր, ինչպէս երևում է, վատ իրաւաբան էք։

Ահա մի նշանակալից տրամաբանութիւն, կեանքի ամենօրեայ ողբերգութիւնից հանուած տրամաբանութիւն, որի աղբիւրը ոչ թէ բանականութիւնն է, այլ զգացմունքը և որի պատգամները բղխում են ոչ թէ մեռած տառերից, այլ հրաքորբոք սրտի հիւթից։

Նօրան ինչքան էլ ինքնազուսպ լինէր, ինչքան էլ աշխատէր իրան մխիթարել, այնուամենայնիւ տարակուսանքի ստուերը հետզհետէ խտանում էր իր շուրջը, յուղմունքի և անհանգստութեան թոյնը արդէն վարակել էր իր ներքին աշխարհը։ Այս հոգեկան պառակտման բնորոշ պատկերն է ներկայացնում երկրորդ գործողութեան վերջին տեսարանը, որ բեմական տեսակէտից դրամայի ամենափայլուն մօմէնտներից մէկն է կազմում—երբ Նօրան Հէլմէրի և դր. Բանկի ներկայութեամբ «տարանթէլլայի» փորձն է անում։ Գիւնթէրի հետ ունեցած խօսակցութեան տպաւորութեան տակ, գուցէ և իր մօտալուտ ապագայի նախազգացումով ներշնչուած՝ նա մի կատարեալ ինքնամոռացութեան մէջ է ընկել, առանց դաշնամուրի ներդաշնակութեան հետեւելու՝ արագընթաց թափով ջղաձգային պտոյտներ է դործում, գլուխը հերարձակ, աչքերը դէպի անորոշ հորիզոնը սեւեռած՝ նա կարծես «Ջարմանալին» է որոնում։

Սակայն այսպէս թէ այնպէս անհրաժեշտ էր մի գործնական ելքի մասին մտածել։ Նօրան երկու անգամ փորձում է խնդրել Հէլմէրից, որ յետ առնէ իր վճիռը Գիւնթէրի վերաբերմամբ, բայց նա ոչ միան անդրդուելի է մնում, այլ և զրաւոր կերպով արձակման թուղթ է ուղարկում նրան։ Այս հանգամանքը ի հարկէ աւելի է յուսահատեցնում Նօրային, այնպէս որ նա վճռում է զիմն զր. Բանկի օգնութեանը։ Այս բժիշկը որ Հէլմէր ամուսինների միակ մտերիմ բարեկամն էր և որի օ-

րեքը արդէն համարուած էին, որովհետեւ տառապում էր ողնուղեղի հիւծախտով՝ յանկարծ մի անակնկալ խոստովանութիւն է անում Նօրային—յայտնում է, որ սիրում է նրան: Այնուհետեւ Նօրան այնքան չրջահայեաց է լինում, որ աւելորդ է համարում զիմել նրա խորհրդակցութեանը: Բայց նա զիմում է տիկին Լինդէնին և ամբողջ իրողութիւնը նրան հաղորդում է: Տիկին Լինդէնի խորհուրդն է ճշմարտութիւնը երևան հանել—ճշմարտութիւն ոչ միայն այս մասնաւոր դէպքի, այլ և ընդհանրապէս նրանց ամուսնական կեանքի ամբողջ ընթացքի նկատմամբ:

Տիկին Լինդէն և Գիւնթէր երկու «նաւաբեկեալներ» էին, որոնք ձեռք ձեռքի առած՝ այժմ միևնոյն մակոյկովն են ընթանում: Սրանք երիտասարդ ժամանակ հանդիպել էին իրար, բայց փոխադարձ սիրոյ բացակայութեան պատճառով բաժանուել էին միմեանցից: Լինդէնի սէրը այժմ բարերար ներգործութիւն է ունենում Գիւնթէրի վրայ—նա իր խոստասրտութիւնը մեղմացնում է և վճռում է յետ վերցնել այն նամակը, որ նա ուղարկել էր Հէլմէրին՝ իբրեւ պատասխան իր արձակման թղթին և որի մէջ նա Նօրայի ամբողջ արարմունքը երևւան էր հանում—բայց տիկին Լինդէն համաձայն չէր այդ վճռին, որովհետեւ, ինչպէս նկատեցինք, նրա կարծիքով անհրաժեշտ էր, որ Նօրայի և Հէլմէրի յարաբերութիւնները հիմնովին պարզուեն:

Գիւնթէրի ուղարկած նամակի մասին Նօրան տեղեկութիւն ունէր և նամակը ժամերով նամակատուփումն էր, բայց նա մօտաւորապէս գուշակելով բովանդակութիւնը՝ խնդրել էր Հէլմէրին «տարանտէլայից» յետոյ միայն բայ անել: Իսկ մինչև «տարանտէլան» դեռ բաւական ժամանակ կար և Նօրան յայտնապէս գիտակցելով թէ ինչ է լինելու այդ ճակատագրական նամակի հետեւանքը՝ նեարդային անհամբերութեամբ ժամերն էր համարում—«Ժամը հինգն է. 7 ժամ մինչև կէս գիշերը, յետոյ 24 ժամ մինչև հետեւեալ կէս գիշերը և «տարանտէլան» արդէն վերջացել է. 24 և 7—դեռ 31 ժամ կայ ապրելու»:

Մինչ նա այս խորհրդաւոր հաշիւն է անում՝ միամիտ Հէլմէրը զուան միջից ձայն է տալիս—«ձուր է իմ փոքրիկ արտոյտը» և Նօրան մի անգամ էլ բաղկատարած զիմաւորում է իր ամուսնուն:

Ահա «տարանտէլան» վերջացաւ. Նօրան իբրեւ նէպպոլիտանական ձկնորսուհի՝ Շտայնբէրգի պարահանդէսում շատ աչքեր և սրտեր գրաւեց. սակայն ամենից շատ յափշտակուած էր

Հէլմէրը, որ «այլևս համբերել չէր կարող»: Բայց ո՞հ ճակատադէր, Գիւնթէրի նամակը ոչ միայն նրա ղգայական յափշտակութիւնների թափը պէտք է չքացնէր, այլ և նրա ընտանեկան խաղաղութիւնը պիտի վրդովէր, զուարճալի «տիկնիկատունը» պիտի ամայացնէր:

Մինչդեռ Հէլմէր իր առանձնասենեակում նամակի ընթերցանութեամբն էր զբաղուած՝ Նօրան ծանր տառապանքի և յուսահատութեան մասնուած՝ արգէն պատրաստուում էր թողնել իր ամուսնուն և կրեխաներին, բայց տհա՜ չէլմէրը նամակը ձեռքին՝ այլայլուած դէմքով դուրս է գալիս և հարցնում.

—«Ճիշտ, ճիշտ է, ինչ որ նա գրում է... սարսափելի է. ոչ, ոչ, դա չէ կարող ճշմարիտ լինել»:

—«Ճիշտ է. ես քեզ աշխարհումս ամեն բանից աւելի եմ սիրել» — պատասխանում է Նօրան:

—«Այդ յիմար պատրուակները մի կողմ դիր»:

—«Բօքէրտ»:

—«Խղճալի, դիտես թէ ինչ ես գործել»:

—«Ինձ բաց թող. դու չը պէտք է դրա համար տուժես»...:

—Ոչ մի կատակերգութիւն. դու այստեղ կը մնաս և հաշիւ կը տաս: Հասկանո՞ւմ ես թէ ի՞նչ ես գործել, պատասխանիր, հասկանո՞ւմ ես:

—Այո, այժմ սկսում եմ կատարելապէս հասկանալ:

—Օ՛, ի՞նչ սոսկալի սթափում: Այս ութ տարուայ ընթացքում նա, որ իմ ուրախութիւնն էր և պարծանքը, մի խարդախ է, մի խաբեբայ — և աւելի վատ — մի ոճրագործ...»:

Այնուհետև ուրիշ հայհոյանքների և նախաափնքի հեղեղ թափելուց յետոյ Հէլմէրը շարունակում է.

—«Դու իմ ամբողջ երջանկութիւնը ոչնչացրիր, իմ ապագան խառնակեցիր: Օ՛, սարսափելի է այն միտքը, որ ես ինձ մի անխիղճ մարդու իշխանութեան տակն եմ զգում. նա կարող է անել ինձ հետ այն, ինչ որ կամենում է, պահանջել ինձանից, ինչ որ ցանկանում է, առաջարկել և հրամայել այն, ինչ որ իրան հաճելի է — և ես լռութեամբ այս բոլորի հետ պէտք է հաշտուեմ... Այսպէս ողորմելի կերպով պէտք է ստորանամ, դոհուեմ մի թեթեւամիտ կնոջ պատճառով»:

Եւ համբերատար Նօրան, իր «այլևս չը լինելու» մէջն է տեսնում Հէլմէրի վրկութիւնը: Բայց Հէլմէրի միակ մտահոգութիւնը հասարակաց կարծիքն է: Այս պատճառով նա շատ բնորոշ և յիշիկ ոճով նկատում է — «խնդիրը պէտք է ամեն կերպ քողարկել — ինչ վերաբերում է իմ և քո յարաբերութեանը, պէտք է դա այնպէս երեւայ, ինչպէս եղել էր սուսը,

բայց ի հարկէ, միայն ուրիշների ներկայութեամբ: Դու նորից կը մնաս իմ տանը—սա ինքնըստինքեան հասկանալի է. սակայն երեխաներ դատարարակել ես քեզ թոյլ չեմ տայ, չեմ կարող քեզ վստահանալ...»:

Եւ ահա այս անխնայ յանդիմանութեան ժամանակ յանկարծ ստացուեւ է Գիւնթէրից մի նամակ, որով նա յետ էր դարձնում Նօրայի պարտամուրհակը: Հէլմէրի համար սա վերին աստիճանի բախտաւոր մի անակնկալ էր.—«Ես փրկուած եմ, Նօրա, ես փրկուած եմ» —աղաղակում է նա ցնծալի ու բախտութեամբ:

—«Իսկ Ես» —հարցնում է Նօրան խորհրդաւոր կերպով:

Ի հարկէ, Նօրան էլ էր «փրկուած». բայց այս փրկութիւն միայն Հէլմէրին կարող էր բաւականացնել և նոյն իսկ երջանկանացնել, իսկ «սթափուած» Նօրային—երբէք: Հէլմէրը ինչքան էլ ցանկանար տեսնել Նօրային «հէնց այնպէս, ինչպէս որ նա կայ» —այնուամենայնիւ նա դադարել էր այլ ևս «տիկնիկ» լինելուց, նա լրջացել, խոհուն կերպարանք էր ստացել. նրա ինքնուրոյնութեան երակը եռ էր զալիս: Նօրայի համար չափազանց ծանր է և անմարսելի այն վիրաւորանքը, որ էգօրստ Հէլմէրը պաղարիւն անտարբերութեամբ չպրտեց նրա երեսին.—«Ես փրկուած եմ» —կարծես փրկութեան կարօտ իսկական զոհը ինքն էր և ոչ թէ Նօրան—և այս խօսքերն արտասանում է այն անձնաւորութիւնը, որ Գիւնթէրի նամակը կարդալուց մի քանի րոպէ առաջ կեղծ-ասպետականութեամբ պարծենում էր.—«Գիտես Նօրա, երբեմն կը ցանկանայի, որ քեզ մի այնպիսի վտանգ սպառնար, որ ևս կարողանայի կեանքս և ամեն ինչ քեզ զոհ բերել»: Այս տեսակ սուր, խայթող հեզութեամբ լի հակապատկեր միայն Իբսէնի զօրեղ գրիչը կարող էր արտադրել:

Բայց և այնպէս Հէլմէրը բաւական «մեծահոգի» է, պարտամուրհակը յետ ստանալուց և երեխայական խնդրութեամբ այրելուց յետոյ՝ նա ներում է Նօրային.—«Այժմ պէտք է միայն ուրախանանք և կրկնենք՝ անցաւ, անցաւ Չէս լսում, Նօրա: Երևի դու դեռ քեզ չես կարող հաշիւ տալ, որ ամեն ինչ արդէն անցել է: Ի՞նչ է երեսիդ այդ սառն արտայայտութիւնը: Այո, հասկանում եմ—դու դեռ չես կարող հաւատալ, որ քեզ ներել եմ: Բայց ես քեզ հաստատապէս ներել եմ. երդում եմ քեզ՝ ամեն ինչ մոռացել եմ: Այո, հաւատացած եմ՝ ինչ որ գործել ես, իմ սիրուցս ես գործել... Դու ինձ այնպէս ես սիրել ինչպէս մի կին իր ամուսնուն պէտք է սիրէ... Բայց կարծում ես դու աւելի նուանդ թանկագին ես ինձ համար, որով-

հետև միայնակ չես կարողացել գործել... ևս տղամարդ չպէտք է լինէի՝ եթէ հէնց քո այս կանացի անօգնականութիւնը քեզ կրկնակի զրաւիչ չդարձնէր իմ առաջ»։ Եւ Հէլմէրը այն կարծիքի է, որ նա «անօգնական կնոջը», «հալածուած աղաւնուն» ազատել է «բազէի ճիրաններէն»։ Այս մեծագործութեան և «ներելու» մէջն է նա տեսնում իր «տղամարդութիւնը»։ Սակայն Նօրան պարահանգէսի շորերը փոխելուց յետոյ վճռականապէս յայտնում է, որ «այս գիշերը չէ քնելու» և եկել է հաշիւ տեսնելու Հէլմէրի հետ։ Սա մի սլարդ, սովորական հաշուետեսութիւն չէ, այլ մի մարմնացած, բարձրակոչ բողոք՝ յանուն կանացի իրաւունքների և մարդկային բռնաբարուած արժանապատուութեան—մի բողոք, որ ամբողջ մի սեռի յանկուծեան և տենչանքների արձագանք լինելով հանդերձ՝ անհատապէս մի դժբախտ էակի կրծքումն ամբարուած մաղձն է և դառնութիւնը։

—«Մենք ահա ութը տարի է, որ ամուսնացել ենք—այսպէս է սկսում Նօրան—ուշադրութեան արժանի չէ թուում քեզ այն հանգամանքը, որ մենք երկուսս՝ դու և ես, մարդ ու կին այսօր առաջին անգամ միայն իրար հետ լուրջ կերպով խօսում ենք»։

—Այո, լուրջ—ի՜նչ է նշանակում այս։

—Ամբողջ ութ տարի—նոյն իսկ աւելի երկար՝ մեր ծանօթութեան առաջին օրից սկսած մենք երբէք լուրջ խնդիրների առիթով ոչ մի լուրջ խօսք չենք փոխանակել։

—Միթէ ես քեզ պէտք է թոյլ տայի շարունակ այնպիսի հոգսեր ստանձնել, որոնք դու այսպէս թէ այնպէս անկարող կը լինէիր ինձ հետ կրել։

—Հոգսերի մասին ես չեմ խօսում, այլ պնդում եմ միայն, որ մենք երբէք որ և է հարցի մասին լուրջ կերպով իրար հետ չենք խօսել։

—Բայց, թանկագին Նօրա, մի՞թէ այդպիսի մի բան կը պատահէր քեզ։

—Այստեղից հէնց սկսում է մեր խնդիրը։ Դու ինձ երբէք չես հասկացել... Բճեկտ, իմ դէմ շատ անիրաւութիւններ են գործել—առաջ հայրս և յետոյ դու... երկուսդ էլ մի մեծ մեղք էք գործել իմ վերաբերմամբ. դուք էք մեղաւոր, որ ես մի բան չդարձայ»։

—Ի՜նչ անմիտ և ապերախտ ես դու... միթէ դու այստեղ բախտաւոր չես եղել։

—Ո՛չ, երբէք. ես կարծում էի, որ բախտաւոր եմ, բայց ամենևին չեմ եղել։

—Բախտաւոր չես եղել։

—Ո՛հ, ես միայն գուարթ եմ եղել, և ինչքան էլ դու սիրալիր լինէիր իմ վերաբերմամբ՝ այնուամենայնիւ մեր տունը ուրիշ բան չէ եղել, բայց թէ մի խաղասենեակ...

—«Ասածներդ ինչքան էլ չափազանց են և ծայրայեղ՝ այսպէս թէ այնպէս մի ճշմարտութիւն են անսխալութեամբ իրանց մէջ: Սակայն այսուհետեւ պէտք է ուրիշ կերպ լինի: Խաղի ժամանակն անցաւ, այժմ գալիս է կրթութեան շրջանը»:

—«Ո՞ւմ կրթութիւնը. իմ թէ երեխաների»:

—«Թէ քո և թէ երեխաների, իմ սիրելի Նօրա»:

—«Ա՛խ, Րօբէրտ, դու ամենին կոչուած չես ինձ իբրեւ իսկական կին կրթելու»:

—«Եւ այդ ասում ես դու»:

—«Եւ ես—ինչ նախապատրաստութիւն ունեւ երեխաներ կրթելու»:

—«Նօրա»:

—«Ինքդ իսկոյն չէիր ասում, որ այդ գործը չես վստահանայ ինձ յանձնել»:

—«Դա զայրոյթի միջոցին էր. ինչպէս կարող ես այդքան նշանակութիւն տալ դրան»:

—«Ո՛հ, դու միանգամայն իրաւացի էիր. այդ գործին ես դեռ անընդունակ եմ: Դեռ պէտք է մի ուրիշ խնդիր լուծուի— ես պէտք է աշխատեմ դեռ ինքս ինձ կրթել. իսկ դրանում դու անկարող ես ինձ օգնել, ես պէտք է միայնակ սկսեմ: Ահա սյս պատճառով էլ այժմ թողնում եմ քեզ»:

—«Ի՞նչ ես ասում... Նօրա, Նօրա»:

—«Ես իսկոյն կը թողնեմ քո բնակարանը: Քրիստինէն (տիկին Լինզէն) ինձ այս գիշեր իր մօտ կ'ընդունէ...»

—Դու խելագար ես, այդ ես քեզ չեմ թոյլ տայ, արգելում եմ»:

—«Այսուհետեւ անօգուտ է իմ դէմ որ և է արգելք բանեցնել: Ինչ որ ինձ է պատկանում՝ հետո եմ վերցնում. իսկ քեզանից ոչինչ չեմ կախնում ունենալ՝ ոչ այժմ և ոչ յետոյ»:

—«Ի՞նչ խելագարութիւն... տունդ, ամուսնուդ և զաւակներիդ թողնել: Եւ չես մտածում թէ մարդիկ ինչ կարող են ասել»:

—«Դա ինձ համար նշանակութիւն չունի. ես գիտեմ միայն որ այդ բանը անհրաժեշտ է»:

—«Օ՛, սա սոսկալի է. այդպէս ուրեմն դու կարող ես սրբազան պարտականութիւններդ ոտնակոխ անել»:

—«Ի՞նչն ես դու համարում իմ սրբազան պարտականութիւնները»:

—«Այդ բանը այժմ միայն պէտք է քեզ յայտնել. արդեօք դոքա դէպի ամուսինդ և զաւակներդ ունեցած պարտականութիւններդ չեն»:

—«Ես ունեմ ուրիշ նոյնքան սրբազան պարտականութիւններ»:

—«Այդպիսի բան չունես... ինչ է»:

—«Պարտականութիւններ իմ վերաբերմամբ»:

—Ամենից առաջ դու կին ես և մայր:

—«Ես այդ այլ ես չեմ հաւատում. ես գիտեմ միայն, որ ես ամենից առաջ մարդկային մի էակ եմ—այնպէս, ինչպէս դու—կամ թէ կը փորձեմ գոնէ այդպիսի մի էակ լինել: Ես համոզուած եմ, Բօբէրտ, որ մարդկանց մեծագոյն մասը քեզ է իրաւունք տալու և որ այդպիսի բաներ գրքերումն էլ գըրուած են: Բայց ես այլեւ չեմ կարող բաւականանալ նրանով, ինչ որ մեծամասնութիւնն է ասում և ինչ որ գրքերումն է գտնւում. ես պէտք է ինքս այս հարցերի մասին մտածեմ և աշխատեմ պարզել»:

—«... Դու խօսում ես իբրեւ մի երեխայ. դու չես ճանաչում այն հասարակութիւնը, որի շրջանում ապրում ես»:

—«Այո, ես այժմ ուզում եմ ճանաչել և տեսնել արդեօք ո՞վ իրաւունք ունի—էս թէ հասարակութիւնը»:

—«Նօրա, դու հիւանդ ես, տենդի մէջ ես, այո, կարծեմ մինչև իսկ խելքդ կորցրել ես»:

—«Երբէք ինքն այնքան պարզ չէ եղել՝ ինչպէս այս գիշեր»:

—«Եւ առողջ գիտակցութեամբ ես թողնում ամուսնուդ և զաւակներդ»:

—«Այո»:

—«Այն ժամանակ միայն մի բացատրութիւն կարելի է տալ»:

—«Ի՞նչ բացատրութիւն»:

—«Դու ինձ այլեւ չես սիրում»:

—«Այո, խնդիրն էլ հէնց զրանումն է»:

—«Նօրա, և այդ դձեռն ես ասում»:

—«Շատ ցաւում եմ, Բօբերտ... ուրիշ կերպ չի կարող լինել, ես քեզ այլեւ չեմ սիրում»:

—«... Եւ կարող ես ինձ բացատրել թէ ինչով եմ քո սէրը ծաղրել»:

—«Այո, կարող եմ: Դա հէնց այս երեկոյ էր, երբ զարմանալից տեղի չունեցաւ. որովհետեւ զրանով ես տեսայ, որ դու այն մարդը չես, ինչ որ ես կարծում էի»:

—«Աւելի որոշ կերպով արտայայտուիր, ես քեզ չեմ հասկանում»:

—«Ես ութ տարի շարունակ համբերութեամբ սպասեցի, որովհետեւ... զարմանալից ամբօրեայ մի երևոյթ չէ... այնուհետեւ վրայ հասաւ այս դժբախտութիւնը և ես հաստատապէս համոզուած էի—անա, այժմ կը գայ զարմանալից: Երբ Գիւնթէրի նամակն ստացուեց՝ ես երբէք չէի կարող մտածել, որ այդ մարդու սպառնալիքները քեզ կը վախեցնեն: Ես համոզուած էի, որ դու նրան կ'ասես.—«Յայտնեցէք այդ գործի մասին թէկուզ ամբողջ աշխարհին»։ և եթէ այդպէս լինէր...»

—«Այն ժամանակ, եթէ ես իմ սեփական կնոջ ամօթի և խայտառակութեան առարկայ դարձնէի...»

—«Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ՝ ես համոզուած էի, որ դու դուրս կը գայիր ամբողջ աշխարհի առաջ և ամեն ինչ քեզ վրայ վերցնելով՝ կ'ասէիր—«Ես եմ մեղաւորը»:

—Նօրա:

—Դու գիտես, որ մի այդպիսի զոհաբերութիւն քո կողմից ես երբէք չէի ընդունի: Ո՛չ, ի հարկէ ո՛չ... Ահա այս էր զարմանալին, որին ես սրտատրոփ սպասում էի...»:

—Նօրա, ուրախութեամբ ես քեզ համար կ'աշխատեմ՝ գիշեր և ցերեկ, կը կրեմ ամեն տեսակ տանջանք և նեղութիւն: Բայց ոչ ոք իր սիրածին չէ զոհում իր պաշտօնի:

—«Այդ արեւ ևն միլիօնաւոր կանայք»:

—Ա՛հ, դու մտածում և խօսում ես իբրեւ մի երեսայն:

—Դուրսէ. բայց դու մտածում և խօսում ես ոչ իբրեւ այն մարդը, որին ես միանալ կարող էի: Երբ քո սարսափն անցաւ—
—ոչ թէ այն սարսափը, որ ինձ էր սպառնում, այլ այն, ինչ որ քեզ էր սպառնում—այն ժամանակ քեզ այնպէս էր թւում, իբրեւ թէ ոչինչ չէ պատահել: Եւ ես նորից քո նախկին արտոյան էի, քո տիկնիկը, որին կրկնակի խնամքով պէտք է ձեռնարկող վրայ կրէիր, որովհետեւ այնպէս թոյլ էր և տկար... Բօքէրտ, անա այդ ակնթարթին պարզուեց ինձ համար, որ ես այստեղ ամբողջ ութ տարի մի օտար մարդու հետ եմ ապրել և որ ես երեք զաւակներ եմ ունեցել—օ, սա արդէն անտանելի է...»

—«Ես տեսնում եմ, որ մեր մէջ մի անդունդ է բացուել... Բայց, Նօրա, միթէ չի կարելի այդ անդունդը խափանել»:

—«Այնպէս, ինչպէս ես այժմ եմ՝ չեմ կարող կին լինել քեզ համար»:

—«Ես ոյժ ունեմ փոխուելու»:

—«Գուցէ, եթէ միայն տիկնիկը քեզանից հեռացուի»:

—«Ի՜նձ բաժանել, ինձ քեզանից բաժանել: Ո՛չ, ո՛չ, Նօրա, այդ միտքը ինձ համար անըմբռնելի է... Նօրա, Նօրա, այժմ չէ, սպասիր մինչև առաւօտ»:

—«Ես անկարող եմ գիշերը մի օտար մարդու մօտ մնալ»:

—«Բայց չե՞նք կարող այստեղ իբրև քոյր և եղբայր ապրել»:

—«Ի՞նչ շատ լաւ գիտես, որ դա չէ կարող երկար տեւել...»:

—«... Նօրա, երբէք չեմ կարող ես քեզ համար լինել աւելի քան թէ մի օտար մարդ»:

—«Ա՛խ, Րօբէրտ, այն ժամանակ պէտք է տեղի ունենար ամենազարմանալին»:

—«Ասած ինձ՝ ինչ է ամենազարմանալին»:

—«Այն ժամանակ պէտք է մենք երկուսս, թէ դու և թէ ես, այնպէս փոխուեինք, որ—այն, Րօբէրտ, ես այլևս չեմ հաւատում զարմանալիին»:

—Իսկ ես հաւատում եմ. ասած, «այնպէս փոխուէինք, որ...—որ մեր երկուսիս կենակցութիւնը կարողանար զառնալ մի ամուսնութիւն» (Նօրան դուրս է գնում):

—«Նօրա, Նօրա... զատարկութիւն... Նա այլևս այստեղ չէ... ամենազարմանալին»:

Նօրայի և Հէլմէրի այս ամիսի, բայց բազմաբովանդակ խօսակցութիւնը, որ հէնց դրամայի վերջաբանն է կազմում, մենք կարելիք համարեցինք փոքրիկ կրճատումներով առաջ բերել, որովհետև դրանով երկու գլխաւոր հերոսների բնաւորութիւնը աւելի շօշափելի կերպով է պարզւում և միւս կողմից՝ դրամայի կորիզը հէնց այս նշանակալից խօսակցութիւնն է, որին նոր լուսաբանութիւններ աւելացնել մենք անտեղի ենք համարում:

Ինչպէս կօնսուլ Բէրնիկի, այնպէս էլ Նօրայի բնաւորութեան մէջ դրամայի ընթացքում մենք տեսնում ենք մի արմատական յեղաշրջում. այնպէս որ նեկայ դէպքումն էլ կարելի է մասամբ հաշտուել Ա. Հանզտայնի այն նկատողութեանը՝ թէ «բնաւորութեան հետեւողականութիւնը զոհւում է իգէայի հետեւողականութեանը»—սակայն այն տարբերութեամբ, որ Բէրնիկի ներքին, հոգեկան աշխարհի կերպարանափոխութիւնը աւելի յախուռն, աւելի անսպասելի էր քան թէ Նօրային: Վերջինիս սիրտը վաղուց համակուած էր «զարմանալի» կարօտով, նոյն իսկ նա վաղուց մտածում էր բաժանման մասին—ապացոյց այն խօսակցութիւնը, որ նա երկրորդ գործողութեան ա-

ռաջին տեսարանում ունենում է իր զաւակների խնամատարութի Մարիանէի հետ, «Ջարմանալիի» յոյսն էր, որ միջնական բարդութիւնների վրայ հասնելը Նօրային լուել էր տալիս, իսկ երբ այս յոյսը չքայցաւ, երբ «Ջարմանալին» տեղի չունեցաւ՝ նա ստիպուած էր թողնել իր ամուսնուն և զաւակներին:

Նօրայի այս վարմունքը առիթ տուեց թէ հակաիբսէնականներին և թէ Իբսէնին թիւր հասկացողներին ծայրայեղ մոլորութիւնների մէջ ընկնել, — նրան յայտարարեցին ամուսնական նուիրագործուած պարտականութիւնների հակառակորդ: Սակայն իրողութիւնն այն է, որ ամենասրբագործուած օրէնքն անգամ երբ ձեւականութեան նեղ պատեանունն է միայն ամփոփում՝ կորցնում է իր ներքին արժանիքը, դառնում է ոչ միայն դատարկ, անբովանդակ, այլ և այդ նոյն օրէնքին հպատակուող անհատների կեանքի և երջանկութեան տեսակէտից միանգամայն բացասական, վնասակար: Իբսէն իբրև խոր ըմբռնուած անհատականութեան կողմնակից՝ ներկայ դէպքում ահա այս տեսակ ձեւական, անբովանդակ ամուսնութեան դէմն է բողոքում: Իսկ ամուսնութեան սկզբունքը նա մաղաչափ անգամ չէ խախտում: Ընդհակառակը՝ Նօրայի բերանով որոտացող բողոքի շեշտը ամփոփում է իր մէջ խորին յարգանք և պատկառանք դէպի ամուսնութեան սկզբունքը: Նա զգալով թէ իր և թէ Հէլմերի անպատշաճութիւնը իսկական ամուսնութեան համար՝ վճռում է բաժանուել: Որ Իբսէն դէմ չէ ամուսնութեան՝ դրա ապացոյցը դրամայի միւս երկու հերոսների՝ Գիւնթէրի և տիկին Լինդէնի ճակատագիրը, որոնք իբրև ճաւաքեկեալներ իրար ձեռք են մեկնում և ամուսնութեան մէջ գտնում իրանց երջանկութիւնը:

Իբսէնի նախկին դրամաներում մի քանի անգամ առիթ ունեցանք տեսնել և շեշտել այն հանգամանքը, որ սէրն է ամուսնութեան հիմքը: «Նօրայում» այս ճշմարտութիւնը նորից մատնանիչ անելով՝ նա միաժամանակ ցոյց է տալիս, որ սիրոյ բովանդակութիւնը միայն զգայական հաճոյքը չէ, այլ հոգեկան ներդաշնակութիւն — սա է այն ցանկալի, բարեխառնող տարրը, որի մէջ պէտք է փնտռել ամուսնական երջանկութեան յարատեւութիւնը: Իսկ «տիկնիկատան» մէջ մտածելի էր այս տեսակ մի սէր:

IX

«Նօրայի» առիթով բազմացած իր հակառակորդների և

սխալ հասկացողները դէմ Իբսէն մի շատ գործնական և ազդու զէնք բանեցրեց—երկու տարուց յետոյ՝ 1881-ին նա ապարէզ դուրս եկաւ մի նոր դրամայով—«Ուրուականներ» («Gjengangerne»), որ իր բեմական փայլուն արժանաւորութեամբ, ուժեղ և սրտածուլիկ դրամատիզմով դարձեալ հեղինակի լաւագոյն և հանրածանօթ ստեղծագործութիւններից մէկն է. և ինչպէս Նօրան գրաւում է առաջնակարգ դերասանուհիների, այնպէս էլ Օսվալդը առաջնակարգ դերասանները:

Իբսէն իր նախազերջին դրամայում նկարագրել էր մի տիկնիկատուն, որի ութամեայ գոյութիւնը վերջ է տալիս Նօրան զօրեղ ինքնաաթափումով և կանացի անհատական արժանաւորութեան զգացմունքով: Բաժանուելով Հէլմէրից՝ նա հեռանում է նաև այն անդունդից, որ սպառնում էր թէ իրան և թէ իր զաւակներին «Ուրուականներում» հեղինակը «օրէնքի» և «պարտականութեան» անունով երդուող ձեռաշտններին սոսկալի գոյներով ցոյց է տալիս այն դժոխքը, որի անունն է կօնվէնցիօնէլ օրինապահութիւն, ողբերգական, բայց անխնայ ճշգրտութեամբ մերկացնում է ընտանեկան այն ահարկու դժբախտութիւնը, որ կոչւում է ձեւական կենակցութիւն, ամուսնութիւն առանց փոխադարձ սիրոյ և հաւատարմութեան,—մի խօսքով նա բաց է անում վարագոյրի միւս երեսը—եթէ Նօրան ինքնաաթափումից յետոյ շարունակէր կենակցել Հէլմէրի հետ՝ ինչ կերպարանք պէտք է ստանար «տիկնիկատունը»:

Օրիորդ Հէլէնէն սիրում էր երիտասարդ պաստօր Մանդէսին, բայց մայրը և մի քանի մօտիկ ազգականներ թոյլ չեն տալիս նրան կապուել իր սիրածի հետ, որ մի հասարակ և պարզ մարդ էր, իսկ իրանք հարուստ լինելով՝ կամենում էին աւելի բարձր դիրք ունեցող, աչքի ընկնող, մի խօսքով *chic* փեսայ ունենալ. և ընդունում են լէյտէնանտ Ալվինգին: Երիտասարդ ղինուորականը իր անվայել և անբարոյական կեանքով այնպէս է զգուցնում իր նորապսակ կնոջը, որ վերջինս հէնց ամուսնութեան առաջին տարում ստիպուած է լինում հեռանալ նրանից: Անբախտ կինը գիմում է իր նախկին սիրածի՝ պաստօրի օգնութեանը և յայտնում է, որ վճռել է այլ ևս չվերադառնալ իր անարժան ամուսնու մօտ—«Այստեղ եմ. վերցրու ինձ»—անմող պարզասրտութեամբ նկատում է նա: Մատաղահաս Հէլէնէն բնակամեքար կեանքի և հրջանկութեան ծարաւ էր զգում. նա չէր կամենում լիովին դառնութեան բաժակը միայն դատարկել, այլ բախտաւորուել՝ դոնէ իր ամուսնուց փախուստ տալով: Սակայն «Չոր Աստուած զուգեաց» մարդ մի մեկնեացէ—ի մոլեռանդ և

ստրկամիտ հետևողը սարսափում է Հելենէի այս վճիռը լսելիս. մի կողմից ասկէտական, միւս կողմից օրինապահական հայեացքներով կաշկանդուած է նրա միտքը. կեանքի մէջ բախտաւորութիւն որոնելու ձգտումը նա համարում է «ըմբոստ ոգու» մի արտայայտութիւն—«Ինչ իրաւունք ունենք մենք մարդիկս բախտաւորութեան ձգտելու: Ո՛չ, մենք պէտք է մեր պարսակաւորութիւնը կատարենք, տիկին Ալվինգ. և ձեռ պարտականութիւնն էր անխախտ կերպով կապուել այն մարդու հետ, որին դուք մի անգամ ընտրել էք և որի հետ միացել էք մի սրբազան կապով»:

Եւ միամիտ, անփորձ Հելենէն հնթարկուելով պատուօրի ազդեցութեանը՝ նորից յետ է գնում Ալվինգի մօտ: Վերջինս ի հարկէ չէ հրաժարուում իր կեանքի նախկին եղանակից, միայն Օսվալդի ծնունդից յետոյ մի փոքր զգաստանում է, սակայն շատ կարճատև կերպով: Ժամանակի ընթացքում, երբ նա արդէն «սենեկապետի» տիտղոս էր ձեռք բերել, նրա սանձարձակութիւնը մինչև այն աստիճանի է հասնում, որ իր սեփական յարկի տակն անգամ անբարոյական արարքներով է զբաղւում՝ տան աղախնի Եօհաննայի յետեւիցն է ընկնում—տիկին Ալվինգը անձամբ լսում է մի օր՝ թէ ինչպէս ճաշարանում սեղան պտրաստելիս Եօհաննան արտասանում էր—«բաց թողէք ինձ, պարոն սենեկապետ, հանգիստ թողէք ինձ»: Սակայն սենեկապետը «բաց չէ թողնում» աղախնուն և հետևանքն այն է լինում, որ նա մի աղջիկ է ծնում՝ Բէզինէ, որը ինչպէս յետոյ կը տեսնենք, դառնում է իր մօր յաջորդը Ալվինգի տան մէջ: Իսկ Եօհաննան մութ կերպով ձեռք բերած 300 քրօնի չնորհիւ ամուսնանում է մի արհեստաւորի՝ Էնգշտրանդի հետ և այսպիսով սենեկապետի արարքը ծածուկ է մնում: Բայց այս պատմութիւնը շատ լաւ յայտնի էր տիկին Ալվինգին, հետևաբար պարզ է թէ հոգեկան ինչպիսի ծանր մաքառումով նա պէտք է շարունակէր ապրել իր ամուսնու հետ. չէ որ «սրբազան կապը» հարկաւոր էր անխախտ պահել:

Տիկին Ալվինգը այս բոլոր տանջանքը և վիշտը կրում էր յատկապէս իր միակ որդի Օսվալդի համար. քնքոյշ հոգատարութեամբ նա իր որդուն եօթը տարեկան հասակում հեռացնում է տնից, ուր և երկար ժամանակ նա այլ ևս ոտք չէ կոխում, որպէս զի ազատ մնայ չըջապատող մթնոլորտի թոյնից: Սակայն տարաբախտ կիներ դեռ անտեղեակ է, որ այս թոյնի ազդեցութիւնը Օսվալդի ծնունդից առաջ էր արդէն ներգործել:

Օտարութեան մէջ Օսվալդը լաւ կրթութիւն էր ձեռք բերել: Նա պարագլու էր նկարչութեամբ և Հռոմում ու Պարիզում կատարելագործուելով՝ յայտնի համբաւ էր վայելում: Օսվալդը

չառ քիչ էր տեսել իր հօր երեսը և ամենևին չէր ճանաչում նրան, իսկ մայրը իր նամակներում առհասարակ փայլուն գոյ-ներով էր նկարագրում Ալվինգին՝ այնպէս որ Օսվալդը նրա իսկական էութեան անգիտակից՝ նրան համարում էր մի իդէալական հայր և ամուսին։ Հօր մահուանից տասն տարի յետոյ միայն նա վերադառնում է հայրենիք իր «վշտացած» մօրը մխիթարելու համար, և յիրաւի այս վերադարձը տիկին Ալվինգին չափողանց ուրախացնում է։ Սակայն Օսվալդի յետ գալու պատճառներից մէկը մի ուրիշ ծանրակշիռ հանգամանք էր։ Դեռ Պարիզ եղած ժամանակ նա արդէն «յոգնածութիւն» էր զգում և «աշխատելու անընդունակութիւն», նրա նեարդային համակարգութիւնը համարեա քայքայուել և բոլորովին կազմալուծուելու վրայ էր—մի հարուած արդէն ստացել էր, իսկ երկրորդ հարուածը վրայ համեմելիս՝ բժշկի ազդարարութեան համաձայն՝ նրա դրութիւնը «անյուսալի էր դառնալու»։ Եւ ահա մօտալուտ ծանր ճգնաժամի սարսափով սլաշարուած՝ նա շտապում է իր վերջին օրերը մօր մօտն անցկացնելու։

Սակայն Օսվալդի սիրտը տալիս ու վրայ էր լինում ոչ միայն ֆիզիքական անբուժելի հիւանդութիւնից, այլ մի ուրիշ՝ հոգեկան տանջանքից։ Պարիզի նշանաւոր բժիշկներից մէկը նրան յայտնապէս նկատել էր թէ «հայրերի մեղքերի վրեժը լուծում ե ողիկներից»։ Իր «իդէալական» հօր յիշատակին նախանձախնդիր Օսվալդը կատաղի յուզմունքից հազիւ կարողանում է իրան զսպել—«Քիչ էր մնում նրան գետին փռէի»։ Այն ժամանակ ուրիշ բացատրութիւն չէր մնում, բայց եթէ ընդունել, որ Օսվալդի դրութիւնը իր սեփական մեղքերի հետեանքն է։ Սակայն այս միտքը նոյնքան ծանր էր երիտասարդ նկարչի համար, որովհետեւ նա իրան հեռու էր պահել այլ և այլ զեղխութիւններից և չափաւոր կեանք էր վարել։

Տիկին Ալվինգը «իդէալական հօր» յիշատակը յաւերժացնելու համար մի խոշոր բարեգործութիւն էր արել—«երեխաների ապաստարան» էր հիմնել, որի հանգիստւոր բացումը Օսվալդի վերադարձից յետոյ պէտք է տեղի ունենար։ Ապաստարանի համար ծախսուած ամբողջ գումարը Ալվինգի թողած ժառանգութիւնն էր, որի ամենաջնշին մասն ունդամ մայրը չէր ուզում իր որդուն թողնել—և հասկանալի է թէ ինչ պատճառով։ Սակայն մի խորհրդաւոր զուգադիպութեամբ՝ բացման նախընթաց օրը «ապաստարանը» ամբողջովին այրւում է։

Օսվալդի հոգեկան աշխարհը հետզհետէ մոայլւում էր։ Կարելի է ասել, որ նրա հիւանդութեան աստիճանական դարգացման արտայայտութիւններից մէկը այն վերաբերմունքն էր,

որ նա ցոյց է տալիս դէպի իրանց աղախին՝ Բէդինէն։ Ճիշտ մի և նոյն սեղանատանը, ուր մի ժամանակ սենեկապետի որդին հետևում էր Եօհաննայի աղջկան, տիկին Ալվինզը կողքի սենեակից դարձեալ մի ձայն է լսում—«Օսվալդ, Օսվալդ, յիմար ես ինչ է. թող ինձ»։

—«Ուրուական»—խորհրդաւոր կերպով մըմնջում է տիկին Ալվինզ։

Օսվալդը իր մօրը չանհանստացնելու համար սկզբում ամեն կերպ աշխատում էր թագոյնել իր հիւանդութիւնը, բայց ոչինչ չյայտնելը արդէն անկարելի էր, որովհետև իւրաքանչիւր բոսէ վրայ համեմելիք վտանգի սարսափը անաբեկում էր նրան։ Հիւանդութիւնը թագոյնելու գլխաւոր արգելաօրէթներից մէկը հիւանդութեան պատճառն էր։ Օսվալդի համար չափազանց ծանր էր յայտնել իր մօրը թէ իր հիւանդութիւնը անկանոն կեանքի հետևանք է։

Սակայն ճշնաժամն արդէն մօտենում էր, այլ ես անհնար էր գաղտնապահ լինել։ Օսվալդը, որ սկզբում իր «յոզնածութիւնը» բացատրում էր ճանապարհորդութեամբ—այժմ մանրամասն կերպով յայտնում է մօրը իր կրիտիքական վիճակի մասին։ Մայրը սարսափում է, նրա աչքին այժմ աւելի մուսլ «ուրուականներ» են երեւում, նա իսկոյն հասկանում է, որ իր որդին հօր մեղքերի մարմնացած զոհն է—բայց մայրական սիրտը նրան հարկադրում է ինքնազուսպ լինել և հանգստացնել, մխիթարել իր դժբախտ որդուն։

Ինչպէս Օսվալդի, այնպէս էլ տիկին Ալվինզի հոգեկան տառապանքը կրկնակի էր։ Առաջինին տանջում էր մի կողմից որդիական զգացմունքը, միւս կողմից ինքնասիրութիւնը, իսկ երկրորդին՝ մայրական զգացմունքը և խզճի սոսկալի խայթը։ Մայրը չափազանց մեղաւոր էր իր որդու առաջ, որովհետև թագոյրել էր նրանից հօր իսկական էութիւնը—չէ որ Օսվալդը ճանաչում էր նրան իբրև «իդէալական» հայր—սակայն այժմ իրան միանգամայն պարզ էր, որ այդ նոյն «իդէալական» հայրն է իր միակ որդու սղբալի կորստեան պատճառը։ Այն ինչ Օսվալդի մտքովն անդամ չէր կարող անցնել այս բանը և նա դեռ տանջւում էր այն պիտակցութեամբ՝ թէ միայն ինքն է պատասխանատու իր դժբախտութեան համար—այս երկուստեք մաքառումը, հոգեկան այս բարդ ելեջները հիւսուածքը զրամայի ամենակաշկանդող և ողբերգական կէտերից մէկն է կազմում։

Տիկին Ալվինզ տեսնելով իր տարաբախտ որդու վիճակը, նոյնպէս անկարող է համբերել. նա էլ պէտք է յայտնէր ճշմարտութիւնը, և սա աւելի քան անհրաժեշտ էր, որովհետև դրա-

նով Օսվալդի դրուժիւնը գոնէ հոգեպէս ամոքուած կը լինէր:

—«Դու պէտք է հօրդ ճանաչէիր», նկատում է տիկին Ալվինգը, «եւր նա դեռ երիտասարդ լէյտէնանտ էր: Նրանում կար կենսութախութիւն—կարող եմ քեզ հաւատացնել... Նա դարնանային կղանակի էր նմանում և վայլում էր այնպիսի անզուսպ ոյժով, այնպիսի կենդանութեամբ... Եւ ահա այս կենսութախ կրեխան—որովհետեւ այն ժամանակ նա ուրիշ բան չէր, բայց լիքէ կրեխայ—պէտք է թափառէր այս կիսամեծ քաղաքում, որը ոչ մի անուանանող ուրախութիւն չէ ներկայացնում, այլ միայն զուարճութիւններ: Այստեղ պէտք է նա մնար՝ տռանց որեւէ կենսական նպատակի—նա միայն մի պատճառով եկել էր: Նա ոչ մի տեղ չէր տեսնում մի աշխատանք, որին իր բոլոր ոյժերով նուիրուել կարողանար—նա միայն մի գրադմունք ունէր: Նա ընկերներ չուներ... այլ միայն կոնժաբանող եղբայրներ, նա ճանաչում էր միայն դատարկակեացներին...»:

—«Մայր իմ»—աղաղակում է շուարած Օսվալդը:

—«Եւ ահա վրայ հասաւ այն՝ ինչ որ պէտք է վրայ հասնէր»:

Տիկին Ալվինգը այնուհետեւ յայտնում է Օսվալդին, որ նրա ծնունդից առաջ հօր առողջութիւնն արդէն քայքայուած էր: Եւ ամեն ինչ արդէն պարզուում է Օսվալդի համար:

Սակայն «որդնահար» ուղեղը—«vermoulu»՝ այսպէս էր Պարիզի բժշկի կարճ դիագնոզը—այլեւ կորցրել էր իր գիմնակահաւութիւնը: «Երկրորդ հարուածը» վրայ է հասնում և դժբախտ Օսվալդը մօր գրկում անզգայացած և հայեացքը դէպի նորաբայ արշալոյսի վարդապոյն շողերը յառած՝ մրմնջում է վերջին անգամ—«արեգակը, արեգակը»:

Այս արեւը ճշմարտութեան սիմբօլն է և Օսվալդը գոնէ այնքան բախտաւոր է լինում, որ ճակատագրական հարուածից առաջ տեսնում է արեւի շողերը, ճշմարտութեան լոյսը:

Այսպէս ուրեմն ճշմարտութեան պաշտամունքը, որին մինք հանդիպեցինք «Հասարակութեան սիւներում», այստեղ նորից երեւան է գալիս: Տիկին Ալվինգը Օսվալդին ճշմարտութիւնը տեղեկայնելուց առաջ մի ուրիշ անձնաւորութեան ներկայութեամբ նոյնպէս յայտնել էր ճշմարտութիւնը, բայց աւելի ազդու և բողոքող չէլտով: Նա զգում էր, որ ինքը իր կեանքում երկու խոշոր սխալ է գործել և այսպիսով թէ իր և թէ Օսվալդի դժբախտութեան ճանապարհը հարթել—առաջին՝ որ նա չամուսնացաւ իր սիրածի հետ, երկրորդ՝ որ կնիքարկուեց նրա «օրինապահական» քարոզներին և նորից վերադարձաւ Ալվինգի մօտ: Երբ Հէլէնէն արդար և յանդիմանախառն զայրոյթով նկա-

րագրում է այն սոսկալի վիճը՝ դէպի ուր առաջնորդուեց նա ձեւապաշտ պատօրի յորդորներից զրդուած՝ այն ժամանակ վերջինս յուզուած կերպով պատասխանում է.

—«Այս պէտք է լինէր կեանքիս ամենագոյնաւոր կռուի վարձատրութիւնը»:

—«Աւելի լաւ կ'անէք, եթէ անուանէք՝ ձեր կեանքի ամենատխուր պարտութիւնը»:

Պատօր Մանդէրսը պարծենում է, որ նա փոխանակ օգտուելու Հէլէնէի վերադարձից, փոխանակ նրան ձեռք տալու՝ յանուն օրէնքի և պարտականութեան նրան նորից իր ամուսնու մօտն է ուղարկում:

—«Սա կեանքիս ամենամեծ յաղթութիւնն էր, Հէլէնէ, մի ինքնայաղթութիւն»:

—«Դա մի ոճիր էր մեր երկուսիս դէմ»—խորտա շեշտով պատասխանում է տիկին Ալվինգը:

Պատօրը «ոճրագործ» էր—ծիշտ այնպէս ինչպէս Զիգուրդը և ինչպէս յետոյ կը տեսնենք՝ Բօրկման, Բուբէկ Լայն—որովհետեւ «սէրը» զոհեց ուրիշ պարտականութիւնների: Վերջը սակայն երբ իր նախկին սիրուհուց տեղեկանում է թէ ով է եղել լէյտէնանտ Ալվինգը՝ այն ժամանակ շուարում է և չէ կարող իրան հաշիւ տալ թէ ինչպէս նրանց ամուսնութիւնը, բազմամեայ կենակցութիւնը «մի քօղարկուած անդունդ» է եղել: Բայց և այնպէս այս սոսկալի յայտնագործութիւնից յետոյ անգամ նա մնում է նոյն աւանդապահ հայեացքներով խմորուած: Հէլէնի լուսամտութիւնը, որ կեանքի դառն վորձերի հետեւանք էր, նրան շատ անախորժ էր թւում, նա չէր կարող հաշտուել մինչև իսկ եթէ Հէլէնէի սեղանի վրայ տեսնէր բնագիտական կամ ուրիշ ազատամիտ մի գիրք, որոնց վերնագիրն էր միայն իրան ծանօթ, իսկ բովանդակութիւնը—երբէք:

Այս է պատճառը, որ նա տիկին Ալվինգին հրաժեշտ տալիս բարեմաղթում է, որ «կարգի և օրինապահութեան ոգին» մուտք գործէ նրա տունը:

Դրամայի միւս հերոսներից ուշադրութեան արժանի է Բէգինէն: Սա էլ է կենսուրախ և սկզբում յոյս ունէր Օսվալդի հետ գնալ Պարիզ և այնտեղ վայելել իր կեանքը: Դժբախտ Օսվալդը իր միակ փրկութիւնը Բէգինէի սիրոյ մէջ էր որոնում, բայց երբ այս թեթեւամիտ աղջիկը տեղեկանում է թէ Օսվալդը հիւանդ է՝ այն ժամանակ բնորոշ պարզասրտութեամբ յայտնում է, որ այլևս չէ կարող մնալ տիկին Ալվինգի մօտ և նրա որդու հիւանդապահը լինել:—«Մի երիտասարդ աղջիկ ինչու չը պէտք է իր երիտասարդութիւնը վայելի...»:

«Ուրուականներում» վերոյիշեալ պրօբլէմների հետ միասին Դարվինիզմի ազդեցութեան տակ լուրջ կերպով շօշափուում է նաև ժառանգականութեան օրէնքը: Այնպէս որ առանձնապէս Օսվալդը հետաքրքիր է ոչ միայն հոգեբանական, այլ և բնախօսական տեսակէտից և այս ուղղութեամբ արդէն շատերին ուսումնասիրութեան նիւթ է մատակարարել:

Հասկանալի է, որ «Ուրուականները» նոյնպէս մեծ ազմուկ պէտք է բարձրացնէր թէ Նորվեգիայում և թէ Նորվեգիայից դուրս: Բայց Իբսէն այս աղմուկների դէմ պատրաստում էր մի նոր պատասխան:

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Կը ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

14) ԳԷՕԹԷ, «Պատուս», ողբերգութիւն, առաջին մաս, թարգմ. գերմ. Գ. Բարխուդարեանց: Հեղինակի սրտակերով և կարեւոր ծանօթութիւններով: Հրատարակութիւն Ա. Բարեանի: Քիֆիս, 1902 թ., գիւնն է 2 ու:

Առհասարակ դժուար է այնպէս թարգմանել ամեն մի գեղարուեստական գրուածք, որ բնագրի ճշտութեան հետ պահպանուի և նրա ոճի գեղեցկութիւնը: Եթէ հեղինակը հարկ է համարել այս կամ այն խօսքը գործածել կամ հակիրճ և ուժեղ չեղտով արտայայտել մի բան կամ դիտմամբ լակոնիկ լինել—իրաւունք չունի թարգմանիչը իր սեփական խօսքերով միայն մօտաւոր դադարաւոր տալ հեղինակի ասածի մասին, հակիրճ ոճի տեղ գործածել ճապաղ շատախօսութիւն, ուժեղ արտայայտութիւնը տափալացնել, ժողովրդական կենդանի ոճի տեղ գործածել չինծու դարաբանութիւններ: Այս այլուբենական ճշմարտութիւնները չեն հասկանում մեր թարգմանիչներէն շատերը և կարծում են թէ «հայացնում են», երբ եւրոպական բնագիրների հակիրճ, կորովի և ճիշտ լեզուն զրաբառախառն կոնսիտորիական լեզուի են վերածում և անհամ, ճապաղ կերպով «սեփական խօսքերով» են աշխատում արտայայտել հանճարների մտքերը...

Եթէ դժուար է առհասարակ լաւ թարգմանել արձակ գրուած գեղարուեստական երկերը, հասկանալի է թէ ինչ մեծ ջանքեր և ստեղծագործական ոյժ է պահանջւում թարգմանչից, երբ սա ստանձնում է ամենամեծ բանաստեղծ-մտածողի, Գէօթի «Պատուսը» թարգմանել, այն էլ հանգաւոր ոտանաւորով: «Պատուսի» մէջ պօէզիան և փիլոսոփայութիւնը միախառնուած են և մի ամբողջութիւն են կազմում. Գէօթէի իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր դարձուածքը չափուած ու կշռուած է, և հազիւ թէ այլանդակութիւն չը լինի՝ սեփական խօսքերով նրա մտքերը արտայայտելու ամեն մի փորձ:

Գնահատելով հանդերձ պ. Գ. Բարխուդարեանի թէ նախկին թարգմանական աշխատութիւնները և թէ այժմեան փորձը, պէտք է շնորհակալ լինել յարգելի թարգմանչից, որ նա աւել է, ինչ կարողացել է: Բայց միևնոյն ժամանակ չէ կարելի չը խոստովանել որ մեծ բանաստեղծ-մտածողներէ երկերը հանգաւոր ոտանաւորով ճիշտ և բանաստեղծօրէն թարգմանելու համար պահանջուած է չափազանց խոշոր բանաստեղծական տաղանդ, ինչպէս և հայոց նաև կենդանի, ժողովրդական լեզուի կատարեալ տիրապետութիւն. իսկ փոքրիկ բանաստեղծական ձիրքով և գրական չինծու լեզուի հմտութեամբ կատարած զործը հազիւ թէ կարելի լինի գոհացուցիչ համարել:

Այդ հաստատուած է և «Յառուտի» թարգմանութեամբ:

Մի կողմ թողնելով առանձին խօսքերի և զարձուածքների անճշտութիւնը, օրինակ Knecht (кнѣчѣ, ծառայ)՝ ստրուկ, Lustige Person (шутѣ, ծաղրածու)՝ կատակերգու, Mein Kind—(զաւակ)՝ «հրեշտակ իմ սիրուն» խօսքերով թարգմանելը, որ, յամենայն դէպս, հեշտ խոռոսիւրի անճշտութիւն էր, մի կողմն թողնելով «աստ», «անդ» և այլ դրաբառ ձևերի զարձածուութիւնը, մնում են անհասկանալի, օրինակ, այսպիսի չեղումներ.

Drum hab'ich mich der Magie ergeben
(Այդ պատճառով ես ինձ մոգութեան նուիրեցի)

Պ. Գ. Բարխուդարեանը թարգմանում է.

Եւ մոգութեան ինձ կը տամ:

Zur Messe, zur Beichte bist du lange nicht gegangen
(Պատարապի, խոստովանութեան վաղուց է չես դնացել)

Դառել է՝

Ժամ չեա ման գալիս (եր. 153):

Բայց ընթերցողին զաղստիար տալու համար գերմանական բնագրի և պ. Բարխուդարեանի թարգմանութեան մէջ եղած տարբերութեան մասին մենք աւելի լսել է առաջ բերենք մի փոքրիկ կտոր, համեմատութեան համար դնելով վաղագծում և մեր բառացի թարգմանութիւնը:

Վերցնենք առաջին պատահած կտորը: Յառուտը կանչում է Երկրի Ոգուն:

Enthülle dich!

(Յայտնուիր!)

Ha, wie's in meinem Herzen reiszt!

(Ոհ, ինչպէս պատառ պատառ է լինում սիրտս!)

Zu neuen Gefühlen

(Նոր զգացմունքների համար)

All' meine Sinnen sich erwählen!

(Բոլոր իմ մտածմունքը ելք է որոնում!)

Ich fühle ganz mein Herz dir hingeben!

(Ես զգում եմ որ ամբողջ սիրտս քեզ է նուիրում!)

Du muszt! du muszt! und kostet es mein Lehen!

(Դու պետք է, պետք է երևաս! Թէկուզ այդ լինի իմ կեանքի գնով!)

Ահա ինչպէս է թարգմանել այդ կտորը պ. Գ. Բարխուդարեանը.

Ցոյց տուր ինձ դէմքդ,

Սիրտս գողում է,

Նոր զգացմունքներով

Ալէկոծվում է:

Քեզ բոլոր սրտով անձնատուր եմ ես:

Թէ մեռնեմ անգամ, սիրտի տեսնեմ քեզ:

Իմաստը նոյնն է, իսկ արտայայտութիւնը աւելի թոյլ: Բնագրի բանաստեղծական շատ կտորներ հայերէնում ոտանաւորով գրած պրօզայի են նմանում: Օրինակ.

Թողի դաշտերը և արօտները,

Որոնց ծածկում է խորը զիշերը,

Երկիւղածութեամբ լի է իմ անձը,

Ջարթեց սլտիս մէջ բարի նախանձը:

Ել չեն չուղում ինձ կատաղի կրքեր,

Հոգուս մէջ տիրում է խաղաղութիւն.

Սրտումս վառուեց սէր դէպի ընկեր,

Եւ նորից պաշտում եմ աստուածութիւն:

Աւելի ևս շինծու են այն կտորները, ուր ժողովրդական կենդանի ոճ, հումոր և սրախօսութիւն է գործ ածել Գէօթէն. բայց դրա պատճառը արդէն սկզբում բացատրել ենք...

Ձը նայած մեր բոլոր ասածներին, պ. Գ. Բարխուդարեանի այս թարգմանութիւնն էլ, ինչպէս և նրա նախորդ թարգմանութիւններն Շիլլէրից, Լեսսինգից, Շէքսպիրից եւայլն, շատ օգտակար են, որովհետեւ մտցնում են եւրոպական հանճարեղ բանաստեղծ-մտածողների վեհ գաղափարներն ու մտքերը մեր ազգատիկ գրականութեան մէջ և՛ այդպիսով առողջ մնունք են մատակարարում հայ ընթերցողի հոգուն և որտին:

Լ. Ս.

15) Բժկ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ. Վարակիչ հիւանդութիւնները եւ նրանց բոյնը, պատկերազարդ. (Բժշկի զրոյցներ № 3), Թիֆլիս, 1902 թ. զինն է 15 կ.:

Կարելի է ասել որ շատ քիչերն են մեղանում կարողանում ժողովրդի հետ այնպէս պարզ, այնպէս հետաքրքիր ձևով խօսել գիտական հարցերի մասին, ինչպէս յարգելի հեղինակը, որ ընտրում է իր «Զրոյցները» համար միշտ ամենակարեւոր հարցեր և առանց կողմնակի շեղումների, առանց աւելորդ շատախօսութիւնների կենտրոնացնում է ընթերցողի ուշադրութիւնը բուն առարկայի վրայ:

Ներկայ գրքոյկի մէջ նա աշխատել է ժողովրդականացնել վարակման գաղափարը: Աւելի պարզ և ամփոփ առաջաբան, վարակիչ հիւանդութիւնները հասկանալու համար, դժուար է երեւակայել:

Գաղափար տալու համար գրքի մատչելիութեան և բաղմակողմանի բովանդակութեան մասին՝ մենք առաջ կը բերենք բոլոր գլուխների վերնագիրները.

Վարակիչ հիւանդութիւնները ինչպէս են սկսւում ու տարածւում.—Վարակիչ հիւանդութիւնների պատճառը.—Ինչից են բաղկացած միկրօբները.—Ո՞րտեղ են ապրում բակտերիաները.—Բակտերիաների կեանքը.—Ի՞նչպէս են բաղմանում բակտերիաները.—Բակտերիաների կատարած հրաշքները.—Վնասակար կամ հիւանդաբեր բակտերիաները.—Ի՞նչպէս են մտնում մեր մէջ այդ սարսափելի թշնամիները և հիւանդացնում մեզ.—Ի՞նչն է ոչնչացնում բակտերիաներին.—Ի՞նչ է դառնում մանրիկը, երբ ներս է մտնում մեր թոքերը, ստամոքսը կամ վերքերի մէջ.—Ի՞նչպէս են բակտերիաները հիւանդացնում ու մահացնում մարդկանց.—Ի՞նչպէս պէտք է կռուել վարակման դէմ.—Ի՞նչ է անում կառավարութիւնը վարակիչ հիւանդութիւնների դէմ.—Ի՞նչ պէտք է անենք, երբ հիւանդութիւնը տուն է ընկել.—Ի՞նչ պէտք է անել, եթէ հիւանդանոց չկայ.—Ի՞նչ է ախտահանութիւնը և ինչպէս պէտք է ախտահանել հիւանդի սենեակը և միջի իրեղէնները.—Ի՞նչպէս պէտք է խնամել հիւանդին:

Ծանկալի է որ, մանաւանդ մեր գիւղերում, ամենալայն տարածում ստանայ այս գրքոյկը: Ժողովրդական խաւերին մօտ կանգնած ամեն մի հասկացող մարդ պէտք է յանձնարարի այս գրքոյկի ընթերցումը:

Լ. Ս.

16) Սահակ Պարբեւ, մի պատկերով, կազմեց Ն. Թ., հրատարակութիւն
3. Նրամեանցի, 24 եր. գինը 5 կոպէկ, Պետերբուրգ, 1902:

«Մուրճի» անցեալ համարներից մէկում մենք խօսեցինք պ. Ն. Թ.-ի կազմած Մեսրոպ Մաշտոցի կենսագրութեան մասին: Սահակ Պարբեւի անունը կապուած է Մեսրոպի հետ. զրանք մի և նոյն մտքի, մի և նոյն գաղափարի ներկայացուցիչներն են, երկու լծակիցներ մտաւոր յեղափոխութեան այն ահապին դործում, որ սկսուեց Հայաստանում հինգերորդ դարի սկզբից: Ուստի այն պակասութիւնները, որ մենք նկատել ենք Մեսրոպի կենսագրութեան մէջ, նկատելի են և այստեղ, Սահակ Պարբեւի կենսագրութեան մէջ: Կազմողը տուել է Գրիգոր Լուսաւորչի հոգևոր զինատիրայի այս վերջին ներկայացուցիչի կենսագրական փաստերը: Բայց մենք կը կամենայինք, որ Սահակ-Մեսրոպեան գալոցի նշանակութիւնը աւելի լաւ պարզարանում լինէր: Կենսագրութիւնից մենք իմանում ենք որ Սահակ Պարբեւը գրական գործիչ էլ է եղել, բայց սա քիչ է. գրական գործիչներ շատ կան, բայց Սահակ Պարբեւը բոլորովին ուրիշ բան է: Եթէ նրա հոգևոր գրուածքները մենք համեմատենք Ներսէս Շնորհալու գրուածքների հետ, կը տեսնենք որ վերջինս բարձր է առաջինից թէ իր տուածի քանակութեան և թէ իր տաղանդի կողմից: Բայց ինչո՞ւ Սահակ Պարբեւը Շնորհալուց անհամեմատ բարձր է կանգնած:—Որովհետև նա սկզբնաւորութիւն է, գալոցի հիմնադիր է, ազգի կեսնայի մէջ մեծ յեղափոխութիւն կատարող է: Այս հանգամանքները չը կան կենսագրութեան մէջ:

Պէտք էր սպասել որ Սահակի կենսագրութեան մէջ յիշուած կը լինէին մեր առաջին թարգմանիչները, յունական կրթութեան մուտքը Հայաստան, այդ կրթութեան առաջացրած քաղաքական և կուլտուրական հետեանքները: Տարաբախտաբար սրանց մասին էլ ոչինչ չը կայ կենսագրութեան մէջ: Մենք, սակայն, դժուարանում ենք մեղադրել պ. Ն. Թ.-ին. կենսագրութիւնները չափազանց համոռօտ են, գրքոյկների ծաւալը չափազանց փոքրիկ է և այսպիսի կարևոր հանգամանքների վրայ ուշադրութիւն դարձնել այդ փոքրիկ գրուածքներում անկարելի է: Շատ լաւ կ'անէր հրատարակիչը, եթէ մի քիչ ընդարձակէր գրքոյկների ծաւալը:

Մի ուրիշ հանգամանք էլ կայ, որի մասին աւելորդ չէր լինի երկու խօսք ասել: Սահակի կենսագրութիւնը կարդացողը զարմացած է մնում մի բանի վրայ. հայ նախարարները պար-

սից կառավարութեան միջոցով դահընկէց են անում իրանց թագաւորներին, Սահակ կաթողիկոսին, ապա ցոյց են տալիս ջանքեր, որոնցից մենք այն ենք հասկանում, որ նախարարները չէին ուզում որ բոլորովին ջնջուի թագաւորութիւնը, իսկ կաթողիկոսութիւնը դուրս գայ Գրիգոր Լուսաւորչի տոհմի ձեռքից: Այս քանդող և պահպանող ձգտումները անհասկանալի են մնում ընթերցողներին. հակասութիւններ են դրանք, որոնք զարմանալի են թւում մեզ և մենք ստիպուած ենք լինում ենթադրելու, որ նախարարները քմահաճութիւն ունէին մերթ այսպէս, մերթ այնպէս լինելու:

Մեղադրել այդ բանի համար պ. Ե. Թ.-ին չէ կարելի: Սկսած Չամչեանից ամենքն են այդպէս ներկայացնում մեզ այդ ժամանակների պատմութիւնը. կամեցան նախարարները, գահընկէց արին Սահակ Պարթևին. կամեցան նախարարները, և նորից նրան կաթողիկոսական գահի վրայ դրին: Բայց քմահաճութիւններով չէ կառավարում քաղաքական կեանքը մի երկրի մէջ: Որքան էլ հայ նախարարական տոհմերը անմիաբան, ինքնազուլու լինէին, նրանց էլ ղեկավարում էին յայտնի օրէնքներ. դրանք այն ձգտումները, այն հոսանքներն էին, որոնք ժամանակի հարցեր էին: Պատմական կեանքը մեզ թողել է հակասական երևոյթներ, բայց մենք չենք կարողանում պարզաբանել այդ երևոյթները և միամտաբար քմահաճութիւններին ենք վերագրում այն խոշոր դէպքերը, որոնք այնքան ահազին դեր կատարեցին մեր անցեալում:

Մեր կարծիքով, այդ հակասութիւնները հասկանալու և պարզաբանելու համար հարկաւոր է լաւ վերլուծել և քննել Հայաստանի քաղաքական կեանքը քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ: Մենք կարծում ենք որ շատ հեշտ է գտնել Հայաստանում երկու ուժեղ կուսակցութիւններ, որոնք առաջ են դալիս քրիստոնէութիւնից յետոյ—պարսկաւէր և յունաւէր: Ամբողջ չորրորդ դարը այդ հզօր կուսակցութիւնների պայքարի ժամանակն է, մի պայքար, որ ծայրացեղ լարման հասաւ. Ներսէս Մեծի ժամանակ: Ներսէսը յունական ազդեցութեան կոտորելով յաղթանակը մոցրեց Հայաստան և անհաշտութեան ծայրագոյն աստիճանին հասցրեց պարսկական ազդեցութեան կողմնակիցներին (Մահրուժան): Երկար խօսել այդ մասին, չենք կարող. միայն բաւական է մատնանիշ անել այդ հանգամանքը, որ շատ կարևոր է նախարարական տոհմերի բռնած գիրքը հասկանալու համար: Քմահաճութիւնների գործ չը կայ մէջտեղ, գործում է այն իրողութիւնը, որ մերթ պարսկական կուսակցութիւնն էր ուժեղանում, մերթ յունականը: Վերջինս կապուած էր Գրիգոր

Լուսաւորչի տոհմի հետ, իսկ այդ տոհմին, սեփական գինաստիայի տեսակէտից, ձեռնտու էր պահպանել Արշակունիների տոհմը թագաւորական գահի վրայ: Ներսէս Մեծի պատմութիւնը այս բանը հաստատում է առատ փաստերով:—Ներսէսի ժամանակ պարսկասէր Կուսակցութիւնը Մհրութան առաջացրեց, իսկ երբ Սահակը վերջնականապէս հաստատեց Հայաստանում յունական ազդեցութիւնը կրթութեան միջոցով, նոյն պարսկական Կուսակցութիւնը տապալեց Արշակունիների գահը և առաջ բերեց մի շարժում, որի գլուխն էր Վասակ Սիւնեցին:

Լ.

17) ՀԷՆՐԻԷՏԱ ՎԻՏՃՈՅ, Թմփիկը, Թարգմ. օր. Շ. Տ-ն: Թիֆլիս, 1902 թ., գինն է 12 կոպէկ:

Մեզանում լաւ մանկական գրքեր այնքան քիչ են, որ ներանց մատով կարելի է համարել: Զուտ մանկական գրողներ համարեալ չունենք. եղածներն էլ շատ քիչ բան են արտադրել: Այդ է պատճառը, որ մեր մանկական գրականութեան մէջ շատ քիչ յայտնի գրքոյկները թարգմանական են:

Մանուկի հասկացողութեան յարմար, հետաքրքրական ձեւով գրած և միաժամանակ լաւ բարոյական ազդեցութիւն թողնող գրքոյկներից մէկը անշուշտ լինելու է և «Թմփիկը»: Այդ գրքոյկի հերոս՝ փոքրիկ Օննիկի ալտրուիստական քայլը պատմուած է այնքան գրաւիչ և մանկական հասկացողութեան մատչելի ձեւով, որ անկասկած «Թմփիկը» մանուկներին սիրած գրքերից մէկն է դառնալու:

Գրքոյկը պատկերազարդ է. այդ էլ նրա գրաւիչ կողմերից մէկն է: Գինը շատ մատչելի է: Աւիսոս որ գրքի սրբագրութիւնը չափազանց անփոյթ կերպով է կատարուած: Մանուկների ընթերցանութեան համար յատկապրած գրքոյկներում կարելի չէ թողնել այդքան սրբագրական սխալներ: Լաւ կը լինէր մանկական գրքերը աւելի խոշոր տառերով տպագրել:

Լ. Ս.

18) DR. P. ROHRBACH "In Turan und Armenien auf den Pfaden russischer Weltpolitik". — Դ-ր Բորբախ. «Տուրանում և Հայաստանում — ռուսաց համաշխարհային քաղաքականութեան հետքով»:

Գերմանացի ճանապարհորդների շարքում վերջին տարիներս մի պատկանելի տեղ է զբաղել աստուածաբանութեան դոկտոր Բորբախը: Նա իր ճանապարհորդութիւնների ասպարէզ է ընտրել առաջաւոր Ասիան և միշտ էլ կտրողանում է տալ ընթերցողներին հետաքրքրաշարժ նկարագրութիւններ, քաղաքական դիտողութիւններով համեմուած:

Այսօրքբի մէջ նա նկարագրում է իր ճանապարհորդութիւնը դէպի Կովկաս, Անդրկասպեան երկիրը՝ Սամարկանդ, Բուխարա և Մերվ: Նա հակիրճ կերպով պատկերացնում է իւրաքանչիւր երկրի և ազգաբնակչութեան առանձնայատկութիւնները, տեղ-տեղ կանգ առնելով քաղաքական-սոցիալական հանգամանքների վրայ:

Նրա կարծիքով ռուսաց ազդեցութիւնն ու իշխանութիւնը աւելի ուժեղ է Անդրկասպեան երկրում, քան թէ Կովկասում, քան թէ վրացիների ու հայերի մէջ: Այդ աջողութեան պատճառը ռուսների չափաւոր քաղաքականութիւնն է մահմեդականների վերաբերմամբ: Ռուսաստանը միշտ աշխատել է չգրգռել հպատակ մահմեդականների մոլեռանդութիւնն ու ատելութիւնը իր դէմ, միշտ խոյս է տուել անհամբերատարութիւնից ու խիստ միջոցներից:

Այդպիսի քաղաքականութիւնն ունի իր հեռււոր նպատակները: Ռուսաստանը ձգտում է դէպի Հնդկաստան, դէպի օվկիանոս և հէնց զրա համար էլ նա նախապատրաստում է իր ճանապարհը: Այդ ճանապարհի վրայ ընկած է մահմեդական ազգաբնակչութիւնը, ուրեմն խեղացիութիւն չէ նրա հետ թըշնամիանալը, նրա կրօնական դայրոյթը զրգռելը:

Այդ հեռււոր նպատակը բաւական խոշոր դեր է խաղում նաև ռուս-թրքական յարաբերութիւնների մէջ: Սակայն այդ դեռ բոլորը չէ: Ռուսաստանի տնտեսական կեանքը օրէցօր զարգանում է: Նրա արդիւնադործութիւնը կարիք է զգում նորանոր շուկաների: Ահա այդ կարիքն է, որ մղում է Ռուսաստանին դէպի հարաւ ու արեւելք, դէպի Պարսկաստան, Չինաստան ու նոյն իսկ Թիւրքիա:

Այդպիսի պայմաններում նա չի կարող թեթեւ պատճառով թշնամանալ սուլթանի հետ, որովհետև այդ դէպքում առաջ կը գայ միւս պետութիւնների միջամտութիւնը, ասպարէզի վրայ

կը դրուի չարաքաստիկ «արեւելեան հարցը», որոնք և վնաս կը հասցնեն վերոյիշեալ խաղաղ՝ ձգտումներին:

Այդքանը ուստայ քաղաքականութեան մասին: Գալով նկարագրութեան միւս նիւթերին, պէտք է ասել, որ զլխաւոր տեղը բռնում են հայերը:

Յարգելի հեղինակը համառօտակի պատկերացնում է հայերի վիճակը Կովկասում, նրանց կատարած անտեսական դերը, նրանց կուլտուրական առաջադիմութիւնը և այլն:

Ներկան աւելի պարզելու համար նա անցնում է անցեալին, առաջ է քաշում Հայոց հին պատմութիւնը և շեշտում է, թէ հայերը ամբողջ դարերի ընթացքում դիմացել են անվերջ հալածանքների, ունեցել են մարտիրոսական կեանք, բայց իբրև «մի կղզի բռնութեան մեծ ովկիանոսում» մնացել են «կենսունակ, քաղաքակիրթ և քրիստոնեայ ազգ»:

Պ. Բօրբախ առաջ է բերում իր տեսակցութիւնը Կաթողիկոսի հետ: Նօրբախը մի տեղ նկատում է.

—Հայերին նմանեցնում են հրէաներին: Ասում են, որ հայ ազգը խաբերայ վաճառական է... բայց սխալ է: Հայը զուտ երկրագործ ժողովուրդ է, որ ապրում է իր արտերի, այգիների և հօտերի արդիւնքով... Շատ քիչ են այն քաղաքները, որտեղ հայ աղգաբնակութիւնը մի մեծ թիւ է կազմում... Հայը զիւղումն է: Գիւղ պէտք է գնալ նրան տեսնելու համար...

Հեղինակը խօսում է նաև հայ հոգեւորականութեան մասին ընդհանրապէս և յայտնում է, որ նրա մէջ կան շատերը եւրոպական հիմնաւոր կրթութեամբ:

Վերջում նա տալիս է Անիի աւերակների նկարագրութիւնն ու չարաքախտ պատմութիւնը, աւելացնելով.

—Անիի կործանման հետ մայր մտաւ. հայի արեւը: Ամբողջ երկրում թագաւորեց խաւարը, որը մնում է մինչև այժմ:

Ե. Թ.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

† Քրիստափոր Կարա-Մուրզա.— «Արարատի» մի սովորութիւնը.— Գ. Բաշինջաղեանի պատկերահանդէսը.— Քատրօնական գործը աշխարհում և տասը տարի առաջ.— «Հայոց դրամատիկական ընկերութեան» հաստատութիւնը:

Հայերիս մէջ դեռ ես ոչ այնքան յարգուած ու զարգացած գեղարուեստի երեք ճիւղերում՝ երաժշտութեան, նկարչութեան և բեմական գործի մէջ, վերջերումս տեղի ունեցան մի քանի աչքի ընկնող փոփոխութիւններ. Հայկական երաժշտութիւնը յանձին Քր. Կարա-Մուրզայի կորցրեց իր անձնուէր գործիչին: Մարտի 30-ին համակրողների խումբն ընդունութիւն դէպի յաւիտենական հանգիստ էր յուղարկաւորում յայտնի երաժշտագէտ և հայոց երգերի եռանդուն ժողովրդականացնող Ք. Կարա-Մուրզային: Պատկերով զարգարուած նրա դադաղը, կարծես օրօրուելով երաժշտական հրաժեշտի թախծայոյզ ալիքների մէջ, բաղմամբիւ բաց գլուխների մակերևոյթից բարձր, հանդարտ ընթանում էր դէպի կաթօլիկաց Պօղոս-Պետրոս եկեղեցին և այնտեղից Կուկիայի կաթօլիկաց գերեզմանատունը: Շատ սրտաշարժ խօսքեր տօնեցին հանգուցեալի դադաղի վրայ: Այդ ճշգրիտ դրուատումներից պարզ էր Կարա-Մուրզայի կատարած մեծ գերը մեր կեանքում:

Մենք յաճախ կրկնել ենք, որ հայը ընդհանրապէս զուրկ է կազմակերպական ընդունակութիւնից. սակայն Քրիստափոր Կարա-Մուրզան այդ կողմից մի փառաւոր բացառութիւն էր կազմում. նա ունէր մի զարմանալի տաղանդ՝ կարճ մեջոցում երգեցիկ խումբ կազմակերպելու նոյն իսկ հայութիւնից օտարացած վայրերում: Իր անսպառ եռանդի մի մասը, իր ջերմ ոգևորութիւնը և անձնուէր սէրը դէպի հայկական երգերը նա

հաղորդում էր իր շուրջը. նա իր անօրինակ աշխոյժով ցնցում էր զանազաշարժ և անտարբեր հայերին և հայուհիներին: Իր կազմակերպական տաղանդի, անհուն եռանդի և ոգևորութեան շնորհիւ, Կարա-Մուրզան, սկսած 1885 թուականից, բազմաթիւ քաղաքներում տուեց հայոց երգերից 250 համերգ: Այն ինչ որ մինչև այդ զարմանալի գործիչը աներևակայելի էր համարւում մեզմանում, նրանից յետոյ դառաւ իրագործելի նոյն իսկ աւելի միջակ ոյժերի համար: Գործը սկսուած էր ևւ ուղիղ ճանապարհի վրայ դրուած. մնում էր միայն ընդօրինակել և շարունակել... Այդպէս ահա Ք. Կարա-Մուրզան հայոց խմբական երգեցողութեան գործում առաջին ճանապարհ բացողն էր, առաջին ռահվիրան էր (պիօներ): Կարող են նրանից տեսականապէս աւելի հմուտ երաժշտագէտներ լինել, սակայն նրա մեծութիւնը կայանում է՝ մեր մասսայի մէջ հնչական ներգաշնակութեան գաղափարը ևւ ժողովրդական երգերի սէրը արծարծելու և տարածելու մէջ:

Կարա-Մուրզայի թաղումը, Այիշանից յետոյ, առաջին դէպքն էր, երբ հայ ազգը կորցնում էր իր ոչ-լուսաւորչական նշանաւոր զաւակներից մէկը: Նւ զարմանալին այն է, որ լուսաւորչական ծխականները, կարծես, հաշտուեցին իրանց դարևոր իրաւունքից—հոգեհանգիստ կատարելու իրանց կկեղեցիներում ում համար իրանք հարկաւոր են դատում: Այդպիսով լուելայն վճռուեց ի վնաս ծխականների մի հարց, որ սկզբունքի մեծ նշանակութիւն ունի: Այս առիթով չենք կարող չը յիշատակել Էջմիածնի մի բնորոշ գիծը: Շատ բնական և օրինական պէտք է լինէր սպասել, որ Էջմիածնի պաշտօնական օրգան «Արարատը», այսպէս թէ այնպէս, իր տեսակէտը յայտնի այդ «հոգեհանգստի» ինդրի մասին, ինչպէս և առհասարակ այն բոլոր ազգային-եկեղեցական հարցերի մասին, որոնք ժամանակ առ ժամանակ յարուցւում են մեր մամուլի մէջ: Սակայն Էջմիածնի օրգանը, նոյն իսկ նոր խմբագրութեամբ, ինչպէս երևում է, մտադիր չէ շեղուել իր հին սովորութիւնից... Ի հարկէ, շատ լաւ է և՛ «անցեալ դարերի յիշատակից» խօսել, աւելորդ չէ և՛ մի քանի հազար տարի մեզնից առաջ ապրող «հաթերի լեզուի» մասին գրել, «Առօմեանց նահատակութիւնն» էլ երգել, բայց այդ բոլորը չը պէտք է մոռացնէր և ներկան, կեանքի դրած հարցերը: Ինչու պէտք է «Արարատը» իր պարտքը չը համարի պարզել բարձր հոգևոր իշխանութեան տեսակէտը այն ինդիւրների մասին, որոնք արեւոծում են հասարակական միտքը, քննուում մամուլի մէջ, եթէ այդ ինդիւրները

կապուած են մեր եկեղեցական-վարչական գործերի հետ: Ինչու «Արարատը» Զաքարիայի սլապանձում է պահպանում, երբ ծխականների և հոգաբարձուների իրաւունքն է բռնաբարւում այս կամ այն պաշտօնեայի քմահաճոյքով, երբ սկզբունքի հարցեր են ծագում: Յանկալի է, որ ազգային-եկեղեցական հարցերի մէջ մեր էջմիածնի օրդանը միայն հնախոյզի դեր չը կատարի, այլ և ժամանակի պահանջներին գոհացում տար: Վատ չէր լինի, եթէ էջմիածնի օրդանի մօտ 1600 քահանայ և մօտ 80 կուսակիցն բաժանորդները կարողանային «Արարատի» շնորհիւ իրանց համար պարզ, ճիշտ հասկացողութիւն կազմել զանազան ազգային-եկեղեցական խնդիրների մասին, իմանալ իրանց պատականութիւնների և իրաւունքների չափն ու սահմանը, ժողովրդական եկեղեցու ոգին և «բանաւոր հօտի» արդարացի պահանջները... Այն ժամանակ մենք դուրսէ ականատես չէինք լինի այն քստմնելի գործերին, որոնցով այնքան հարուստ են մեր կօնախօտօրիւնները, իրանց անդամներով և նախագահներով հանդերձ...

Այդ ակամայ շեղումից դառնանք զեղարուեստի մի այլ ճիւղին, ուր ստեղծագործութեան համար մարդ ոչ մի ձայն, ոչ մի ծպուտ չի հանում, և հանդիսատեսի մէջ՝ միաք, զաղափար, արամադրութիւն յարուցանելու համար՝ բաւականանում է միայն գծերով ու ներկերով: Այդ ճիւղը նկարչութիւնն է, որի մէջ հայը տուեց մի այնպիսի համամարդկային հանճար, ինչպիսին էր Այվազովսկին...

Այժմ, Թիֆլիսում, մի այլ հայ նկարիչ, պ. Գ. Բաշինջաղեան, որ վաղուց շնորհալի պէյզաժիստի համբաւ է ստացել, բացել է Փառքի Տաճարում իր նկարած պատկերների մի հանդէս: Այդ պատկերահանդէսում հաւաքուած են մեր տաղանդաւոր նկարչի ստեղծագործական ուրոյն արտայայտութիւնները բնորոշող նրա բոլոր նկարները:

Ուշի ուշով նայելով այդ պատկերահանդէսը չի կարելի պ. Գ. Բաշինջաղեանին չանուանել՝ գլխաւորապէս բնութեան խաղաղ տեսարանների, լուսնի մեղմ շողքերի բանաստեղծ: Գ. Բաշինջաղեանը չի սիրում ոչ մարդկային հասարակական կեանքից պատկերներ, ոչ էլ բնութեան խռովայոյզ, անկղ տեսարաններ. նրա վրձինը առանձին սիրով ու քնքշութեամբ նկարում է բնութիւնը, որ, լուսաւորութեան տարբեր պայմաններում, տարբեր տաւորութիւններ է թողնում մարդու վրայ:

Կանգ առէք, օրինակ նրա № 20 պատկերի առաջ: Այդ անտառիկի ծառերը, նրա դեռնի դալարը, օդի տաքածութիւն

նը և լուսաւորութիւնը այնքան բնական են, որ դուք քիչ է մնում հաւատար, որ չըջանալի միւս կողմում իսկապէս բնութեան մի պատառիկ է. ձեր կուրծքը ուզում է չնչել անտառների կարօտած թարմ, մաքուր օդը՝ Ուզում էք հեռանալ քաղաքի փողոց, ճնշող հեղձուկից, գրգռող աղմուկից և պառկել այդ դալար գետնի վրայ, նայել ծառերի միջով այն կապուտակ երկնքին, որտեղից փայլում է պայծառ արեւը, որի շողքերը ողողում են այդ ծառերի տերեւները, ճիւղերը և հաստ բուները՝ Պատրանքը կատարեալ է...

Գուցէ դուք սիրում էք աւելի խորիմ տեսարաններ, ժայռեր, կիրճեր և քարերի վրայով վազող փրփրուն գետեր, լուսնի արծաթափայլ ճառագայթներով լուսաւորուած ալիքներ։ Այդ գէպքում նայեցէք № 40 (Դարիալի կիրճը) պատկերը... Բայց կարելի է կիրճը ճնշում է ձեր հոգին. դուք ցանկանում էք աւելի լայն հօրիզօն, ուզում էք շունչ քաշել ծովի զով օդը, այն էլ մի խաղաղ լուսնեակ գիշեր ժամանակ, երբ ալիքների մէջ բէկբէկող լուսինը կարծես արծաթաջրում լինի ծովի մակերևոյթը։ Ձեր այդ տենչը ևս կ'իրագործի Բաշինջաղեանի վրձինը. դիտէք № 58 պատկերը (Գիշեր ծովի վրայ) և մոռացէք մի րօպէ ձեր չըջապատը։

Եւ եթէ կարօտում էք հայրենիքի տեսարաններին՝ դուք կը գտնէք «Արարատը», «Սեանայ լիճը» և «Անին», լուսաւորութեան տարբեր պայմաններում։ Իսկ եթէ կամենում էք դադար փար կազմել նկարչի տեխնիկայի կատարելագործութեան մասին, տեսնել թէ ինչ նրբութեամբ է նա վերագտնողձում կտաւի վրայ գիշերի մթութիւնը, հեռաւոր պապղուն կարմիր ճրագները և լուսնի արծաթագոյն շողերի խաղը հանգարտ հոսող գետի ալիքներում—բաւական է, որ երկար կանգ առնէք № 26 պատկերի առաջ (Թիֆլիսի գիշերը)։ Տեսէք թէ ինչպէս է նկարիչը ահագին հեռաւորութիւնը, տարածութիւնը, ներկայացնում մի փոքրիկ կտաւի վրայ, օրինակի համար, այս փոքրիկ պատկերում, № 44, Avenue de l'Observatoire (Պարիզ). կարծես ձեր առաջ է մի քանի վերստ տարածութիւն ունեցող ծառուղին, որ հրաւիրում է ձեզ ձեմելու իր շարան-շարան ծառերի հովանու տակ։

Մարդ, պ. Բաշինջաղեանի պատկերներին նայելիս, գէթ մի քանի րօպէ մոռանում է Թիֆլիսի այլանդակ իրականութիւնը և հոգով սլանում է դէպի բնութեան ծոցը. լեռների սպիտակափառ, վահապանձ զազալթների առաջ, այդ դալար լայն դաշտերում, այդ զով անտառների անուշաբոյր օդում, այդ խաղաղ

ծովերի վրայ և լուսնի մեղմ շողերի տակ թարմանում ես և ափսոսում, որ մարդիկ այլանդակել են իրանց կեանքը և հոտած ու փոշոտ փողոցներում են անցկացնում յաւիտենականութիւնից միայն մի անգամ իւրաքանչիւրին տուած՝ լինելու երջանկութիւնը...

Մեծ քաղաքներում ապրողներս բաւականանում ենք միայն բնութեան այն կեղծ տեսարաններով, որ թատրոնական բեմի դեկորացիաներն են ներկայացնում: Մանաւանդ ասիացիներս չենք կարողանում մեր քաղաքներում պահպանել նաև իսկական բնութեան գեղեցկութիւնը, ինչպէս այդ անում են, օրինակ, անգլիացիք. նրանց վիթխարի խնդոնում դուք կարող էք մտնել Հայդ-Պարկը և մոռանալ, որ դուք աշխարհիս ամենամեծ քաղաքումն եք. այնքան ընդարձակ են նրա մարգագետինները, երկար նրա ճամելիքները ու բաղմաթիւ նրա հաստաբուն, ստուերախիտ ծառերը և գողարիկ նրա լճերը...

Բայց թողնենք Հայդ-Պարկն էլ, բնութեան գեղեցկութիւններն էլ մի կողմ և դառնանք բեմին ու տեսնենք թէ ինչ նշանաւոր նորութիւններով կարող է պարծենալ հայոց թատրոնը, որ վերջին տարուայ ընթացքում (1901—1902) մի ինչ-որ արտակարգ (հայերիս չափով) կենդանութիւն է ցոյց տալիս... Յիշում եմ որ ուղիղ տասը տարի առաջ (1891—1892) Թիֆլիսի թատերասէր հայերի մէջ նկատելի էր նմանօրինակ կենդանութիւն. Թիֆլիսի ժողովարանի դահլիճում հաւաքուել էր բաւական մեծ հասարակութիւն: Շատ խօսուեց զեռ՝ հէնց ծնուած ժամանակը մեռած «Ակումբի», մշտական խումբ կազմելու, Պօլսից ղերասաններ և գերասաններ հրաւիրելու մասին, ընտրուեց թատրոնական կոմիտեա, եայլ, եայլն: Այդ ընդհանուր ողորութիւնը այն ժամանակ ազդել էր և մեր գրողների վրայ. պ. Շիրվանզադէն, ինչպէս յայտնի է, գրեց իր «Իշխանուհին», Ա. Նրիցեանը և պ. Զմէկեանը ևս մի մի պիես գրեցին...

Այժմ տասը տարի անց կրկնւում է նոյն կենդանութիւնը, բայց մի քանի նոր գծերով: Եւ ուրախալի է արձանագրել որ այդ գծերը յամենայն դէպս առաջադիմութեան ապացոյցներ են... Համեմատեցէք ինքներդ. ոչ մի օր չապրած արիստօկրատ-բուրժուա «Ակումբի» փոխարէն այժմ ունենք աւելի դեմօկրատիկական ոգով կազմուած «Հայոց դրամատիկական ընկերութիւն»: Այլ ևս գերասանների հրաւիրելու համար արգօնութների արչաւանք չենք ուղարկում Պօլիս. նոր գերասանները իրանք են գալիս մեզ մօտ, փորձում են իրանց ոյժերը հասարակութեան առաջ և դրանով ապացուցանում, որ ոյժերը կը

լինեն—միայն հարկաւոր է թատրոնական գործի խելացի, հաստատ կազմակերպութիւն ստեղծել: Այդպիսի նոր ոյժերից էին, օրինակ, պ. Արմէնեանը և տիկին Սպենդիարեանը, որոնք իրանց մտածած խաղով և վարելուչ բեմական ձևերով գրաւեցին հասարակութեան համակրանքը: Ինչպէս տասը տարի առաջ, նոյնպէս և այժմ, պ. Շիրվանզադէն տուաւ մի նոր թատրոնական գրուածք: Եւ ընդհանուր կարծիքով նրա վերջին բեմական երկը, «Նւգինէն», շատ աւելի աջող էր, քան տաս տարի առաջ ներկայացրած «Իշխանուհին»...

Իսկ մեր թատրոնական գործի կազմակերպութեան մասին մենք խօսել էինք դեռ անցեալ տարի №№ 4 և 10-ում: Քանի որ «Հայոց դրամատիկական ընկերութեան» հաստատութեամբ մասամբ իրագործուում են և մեր բաղձանքները, ուստի սպասենք այդ նոր հիմնարկութեան գործունէութեան արդասիքներին և, առ այժմ, բաւականոնանք առաջ բերել նրա «Կանոնադրութիւնից» մի քանի կարևոր կէտեր, որոնք գաղափար կը տան ընթերցողին այդ նոր հասարակական մարմնի նպատակի և կազմութեան մասին: Հետեւալ կէտերը արժանի են առանձին ուշադրութեան.

§ 1. Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը հիմնուում է Թիֆլիսում՝ նպաստելու դրամատիկական արուեստի զարգացման իր անդամների մէջ, և կազմակերպելու մշտական և պատահական հայկական ներկայացումներ Թիֆլիս քաղաքում և նրա նահանգի միւս տեղերում, որի սահմաններում սահմանափակուում է Ընկերութեան գործունէութեան շրջանը:

§ 2. Յիշեալ նպատակին հասնելու համար Ընկերութիւնը իրաւունք ունի.

ա) Ընդհանուր օրէնքների հիման վրայ ձեռք բերել իբր սեպհականութիւն և կամ վարձել թէ դահլիճներ՝ ներկայացումների համար և թէ բնակարան՝ Ընկերութեան գոյքերը պահելու, ինչպէս և բեմական ամեն տեսակ պիտոյքներ:

բ) Իւր գոյքը փոխ տալ մշտական և սիրողների խումբերին:

գ) Հրատարակել, զրաքննական կանոններն պահպանելով, հայերէն ինքնուրոյն և թարգմանական դրամատիկական երկեր:

դ) Մրցանակներ նշանակել հայերէն լեզուով դրամատիկական ամենալաւ երկերի համար:

և հ) կազմել, իւրաքանչիւր անդամին պատշաճաւոր իշխանութեան թոյլատուութեամբ, թատերական դասարաններ (классы) և ժամանակաւոր դասընթացներ թիֆլիսում՝ ղերասանների պատրաստութեան և զարգացման համար:

§ 6. Ընկերութիւնը կազմում են.

Պատուաւոր, գործադիր, հիմնադիր և նպաստող անդամները: Ընկերութեան անդամ կարող են լինել երկու սեռի անձինք, առանց կոչման խտրութեան:

§ 19. Ընկերութեան գործերը վարելու և կատարելու համար Ընդհանուր ժողովը Ընկերութեան անդամների միջից ընտրում է Վարչութիւն, բաղկացած նոթ անդամից և երեք փոխանգամից:

§ 22. Վարչութեան պարագլման խնդիրներն են.

ա) Ընդհանուր ժողովների բոլոր օրինաւոր վճիռներին կատարումը:

բ) Պահել ինվենտարը, երեմտից մատենաները, Ընկերութեան գոյքի, գործերի և գումարների հաշիւները, ինչպէս և Ընկերութեան անդամների անուանացուցակը:

գ) Բանակցել, պայմաններ կապել և հաշիւներ մաքրել խմբերի, անտրպրինէօրների և սիրողների հետ:

դ) Կառավարել Ընկերութեան բոլոր գոյքերը և գործերը, պատասխանատու լինելով Ընդհանուր ժողովի առաջ և հաշիւ տալով:

ե) Ընձեռել խմբերին և սիրողներին ակոսեւտարներ և ուրիշ պարագաներ՝ ներկայացումներ կազմելու:

զ) Ընդհանուր ժողովին առաջարկութիւններ և զեկուցումներ անել այն միջոցների մասին, որոնք կարող են նպաստել Ընկերութեան նպատակներին հասնելու և աւելի զարգացնել նրա միջոցները ու գործունէութիւնը:

է) Վարել ընդհանրապէս Ընկերութեան բոլոր կատարողական և վարչական գործերը:

Յանոթ. Ընկերութեան գումարների և գոյքի ամբողջութեան համար պատասխանատու են Վարչութեան բոլոր անդամները, բացի այն ղէպքից, երբ ղեղծումը կատարել է Վարչութեան մի անդամը, առանց միանների գիտութեան:

§ 27. Ընդհանուր ժողովները ներկայացման կամ մրցանակաբաշխութեան ներկայացրած երկերը քննելու և գնահատելու համար, կամ առանձին խնդիրները քննելու և կամ առանձին յանձնարարութիւններ կատարելու հա-

մար կարող են ընտրել Ընկերութեան անդամներից մաս-
նա ժողովներ, որոնց կազմը և գործառնութեան շրջա-
նը որոշում է ինքը՝ Ընդհանուր ժողովը:

Ի վերջոյ, ցանկանք այդ նոր ընկերութեան հռանդուն և
գործը սիրող մարդկանց բուռն աջակցութիւնը: Եթէ մի ան-
հատ, մի Կարա-Մուրզա, կարողացաւ ինքը մին-մենակ կազմա-
կերպել երգեցիկ խմբեր, համերգներ, միթէ դժուար պէտք է
լինի կանօնաւոր դերասանական խմբերի և հարուստ բեպեր-
տուարի գլուխ բերելը մի ամբողջ հիմնարկութեան համար:
Հարկաւոր է միայն սիրով նուիրուել գաղափարին...

Լ. Ս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

† Գլէբ Ուսպենսկիյ. — Գիւղացիների ազատութեան 41-դ տարեդարձը. — Բարձրագոյն հաստատուած առանձին խորհրդակցութիւն զիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքների մասին. — Տնայնագործական համաժողովի առիթով. — Մասնաւոր լաբորութեան հիմնաքարերը. — Զինաստանից ստացուելիք տուգանքի վերածումը դրամի կամ նոր 4% վոխառութիւնի և Ա. Աղապեան:

Պաշտօնակա՞ն հաղորդագրութիւններ. — Փոփոխութիւններ ներքին գործերի և լուստարութեան միջնատրութիւնների մէջ. — „KAB-KAB“ — ի լուրը Բագուից. — Անկարգութիւններ Պալտաւայի և Քարկովի նահանգներում:

Մարտի 24-ին, Պետերբուրգից մօտ մի հիւանդանոցում, վախճանուեց ուսուսց յայտնի ժողովրդասէր-գրող Գլէբ Իվանովիչ Ուսպենսկին, մօտ 62 տարեկան հասակում:

Մանր հոգեկան հիւանդութեան պատճառով, հանդուցեալը զրկուել էր իր մտաւոր ընդունակութիւններից և մեռել դրականութեան համար դեռ մի քանի տարի առաջ: Ռուսաց «Գրականական Ֆոնդը» էր նիւթապէս խնամում այդ նշանաւոր հրապարակախօս-գեղարուեստագէտին:

Գլէբ Ուսպենսկին այն տիպի գրողներից էր, որոնք իրանց ամբողջ էութեամբ նուիրւում են մի սիրած գաղափարի ծառայութեան և այնքան ինքնուրոյն են, մտածմունքով անկախ, որ պատրաստի մտքեր ու շարժումական թէօրիաներ չեն ընդունում, այլ ձգտում են իրանց լայն աշխարհայեցողութեամբ, իրանց ստեղծագործական կորովի ամբողջ թափով ըմբռնել հարցը իր արմատով: Անհուն սիրելով ժողովրդի բարօրութեան գաղափարը, Գլէբ Ուսպենսկին չէր ընդունում ժողովրդի ներկայ կացութիւնը իդէալականացնող մակերևոյթային դատողութիւնները, այլ ուղղակի այրւում էր, իր ջղերի ամբողջ էնէրգիան լարւում էր՝ խոր թափանցելու, հասկանալու համար ժողովուրդը այնպէս, ինչպէս որ նա կայ: Եւ դեռ ոչ ոք այնպէս ուժեղ և ճշգրիտ կերպով և այնպիսի ցնցող հումօրով չէր պատկերացրել ուսու հասարակ ժողովրդի կացութիւնը և աշխարհայեցողութիւնը, ինչպէս այդ արաւ Գլէբ Ուսպենսկին:

Գաւառական չքաւոր ծառայողի ընտանիքում ծնուած այդ սաղանդը դեռ իր մանկութեան և պատանեկութեան օրերում անձամբ փորձեց այն սոսկալի ճահճի առանձնայատկութիւնները, որի մէջ գտնուում էր բոլոր ժողովուրդը մեծ վերանորոգումներից առաջ: Իր անդրանիկ գրուածքում Ուսպենսկին գուրս բերաւ հէնց այդ ճահճը՝ «Բաստերեակեան փողոցի բարձրը» պատմութեանը: Այնքան տիպիկական և ուժեղ էին նկարագրուած պատկերները, որ այնուհետեւ ուսաց դրականութեան մէջ «բաստերեակեան» խօսքը դառաւ մի հասկացական անուն, հասարակական կենցաղի որոշ տիպը բնորոշող մի հասկացութիւն:

Ինչպէս Շչեգրինը իր անխնայ գրչով նկարագրում էր բարձր գաւառիկներին, խոշոր դիրքի մարդկանց ճահճացած շրջանները, այնպէս և Ուսպենսկին առատ լոյս էր սփռում մանր-մունր մարդկանց—արհեստաւորների, բանուորների, մեշխանների, աննշան աստիճանաւորների ապա և գիւղացիների—կենցաղը, որ զուրկ էր լոյսից և հոգին ու միտքը զարթեցնող գաղափարներից և մատնուած էր թշուառութեան, կամայականութեան ու բթացնող անշարժութեան: Այդ նկիւնում ճահճը իր արանցման մէջ ընկաւ ճորտերի ազատութեան հռչակաւոր հրովարտելով «Բաստերեակեան» սկսեց կամայ-կամայ կերպարանափոխուել: Դրին և նոր հասկացողութիւնները իրար խառնուեցին, ստեղծուեց անցողական գրութիւն իր նոր տիպերով: Պարզ չէր թէ ինչ գուրս կը գար ժողովրդական նոր կեանքիցը: Նա նկատում էր թէ «губоводникъ капиталъ»-ի ազդեցութեան տակ անհետանում են բոլոր գիւղացու մէջ նահապետական երկրագործութեան ստեղծած մի քանի լաւ գծերը: Նա տեսնում էր, որ արեւմտեան կապիտալիզմը գլխաւորապէս իր մութ կողմերով է մուտք գործում ժողովրդի խաւերում և բուսական իրականութիւնը գուրկ է անգամ այն համագամանքներից, որոնք արեւմտեան Եւրոպայում մեղմայնում են «կուլտուրի» դերիչիւնութեան վնասակար արտայայտութիւնները:

Մինչև ոսկրների ծուծը ժողովրդատէր, անսահման չիտակ ու բարի Գլէբ Ուսպենսկին միանգամայն գուրկ էր չօվինիզմից: «Նամակներ Սերբիայից» իր գրուածքում նա խիստ քննադատում էր բուսական յետամնացութիւնը և անչափահասութիւնը, համեմատած արեւմտաքի հետ: Իր ամբողջ էութեամբ ձգտելով ճշմարտութեան ակունքին, նա կանխակալ կարծիքներով չէր ղեկավարուում, իր հոգեկան ամբողջ կարողութեամբ աշխատում էր ուսումնասիրել իրականութիւնը այնպէս, ինչպէս որ նա

կայ, առանց իդէալացնելու. կամ ոսկեջրելու այլանդակութիւնները:

Դօրրօշիւքօվի և Պետարևիի աշալուրջ րէալականութեամբ տողորուած նա, բնականաբար, չէր կարող ընդունել «արուեստը արուեստի համար» սկզբունքը: Իրականութեան անմիջական տպաւորութեան տակ նա ստեղծագործում էր այնպէս, ինչպէս որ, առանց կեղծիքի ու հնարագիտութեան, թելադրում էր նրան իր լայն աշխարհացողութիւնը, շիտակ միտքը և ջերմ սէրը դէպի ժողովրդի իսկական բարօրութիւնը: Եւ իսկապէս նա ժամանակ էլ չունէր իր գրուածքները գեղարուեստօրէն կեցելու և չտկելու համար, բայց չը նայած դրան, նրա գեղարուեստական մեծ ապշանքը, այնուամենայնիւ, փայլում էր և նրա կցկաւոր, շտապով գրուած պատմութեանքներում:

Նրան աւելի հետաքրքրում էր ճշմարտութիւնը, երևոյթի միտքը, քան գրելու ձեւը: Այդ է պատճառը, որ նրա պատմութեանքները աւելի հրապարակաստութիւններ են, քան բելլետրիստիկա: Գեղարուեստական տարրը, կարծես, միայն հեղինակի ասածները պարզաբանող վառ պատկերներ լինէին, լուսաբանութիւններ: Այդքան լրջօրէն ու արբութեամբ վերաբերուելով դէպի գրական խօսքը, այդքան գնահատելով ճշմարտութիւնը, նա, իբրև ժողովրդական կեանքը լաւ ուսումնասիրած հեղինակ, չէր կարող պատկանել այն «ժողովրդասէրների» տիպին, որոնք մի քանի ընդհանուր, տեսական գաղափարներից առաջնորդուելով, առանց ճանաչելու իրականութիւնը, սիրում են իդէալականացնել, չեղածը եղած ցոյց տալ, այլանդակը՝ զեղեքիկ: Ուսպենսկին աւելի նման էր այն բժշկին, որ ջերմ սիրելով հիւանդին, իր ամբողջ մտաւոր կարողութիւնը և ստեղծագործական տաղանդը զործ է գնում ուսումնասիրելու համար՝ նրա ցաւերը, հիւանդութեան բուն պատճառները, որպէս զի բուժումը հիմնաւոր լինի:

Ուսպենսկու սուր զիտողութիւններից չը խաւսափեց և ինտելիգէնցիայի մի մասի հոգու. երկուորութեան, թախիծի սկզբնապատճառը: Հասարակ ժողովրդից դուրս ելած այդ ինտելիգէնտներից շատերը, կրթութեան չնորհիւ, հեշտութեամբ կարողանում էին լաւ պաշտօններ գտնել, ծառայելով գանապան հիմնարկութիւններում՝ նրանք միաժամանակ զգում էին որ իսկապէս չեն հաւատում այդ հիմնարկութիւնների մէջ իրանց գործունէութեան օգտակարութեան և նպատակայարմարութեան, այլ մի կտոր հաց ձարելու համար զոհում են իրանց զարգացումը, ոյժերը, որոնց կտրելի էր աւելի լաւ գործադրութիւն տալ: Այստեղից ծագում է ինտելիգէնցիայի «հիւանդ խիղճը» կամ

անգոհութիւնը իրանից: Բայց շատ քիչները կամք են ունենում լսել այդ «հիւանդ խղճի» թելադրութեան և մտնել ժողովրդի մէջ, ձուլուել նրա հետ, ապրել նրա կեանքով, դործել նրա համար: Այդ սովաւներից էլ շատերը այնքան քիչ են ճանաչում ողու գիւղացուն, այնքան անգործնական են, որ յաճախ ծիծաղելի են դառնում դրանց աչքում և հարստահարում իդէալականացրուած գիւղացիներից: Տես, օրինակ, նրա «Чудакъ-баринъ», «Овца безъ стада» պատմուածքները: Գիւղացու նահապետական երկրագործական կեանքը ամբողջապէս արդիւնք էր նրա յարմարուելուն բնութեան պահանջներին («Власть земли»): Ճորտերի ազատութիւնից յետոյ կապիտալիզմը մուտք է գործում սոսական կեանքի բոլոր խաւերում, հարուստների և աղքատների է բաժանում և գիւղական երկրագործ դասակարգը, լայնացնում վիհը չքաւորի և հարստի, ճնշողի և ճնշուածի մէջ: Այդ փոփոխութիւններն էր նկարագրում Ուսպենսկին:

Իր շուրջը կատարուող կեանքի երեւոյթների սառնարին զիտող չէր Գլէր Ուսպենսկին, նա իրան տուած աստուածային կայծը բորբոքում էր դարձնում մի բողբոջաւ խարոյկ, որ լափում էր նրա ջրային ահագին էներգիան: Եւ տենդային, չափազանց լարուած աշխատութիւնը վերջ էր վերջոյ սպառնց նրա ամբողջ մտաւոր կորովը, հոգեկան ոյժերը...

Հետաքրքրական է թէ ինչ կ'ասէր Ուսպենսկին, եթէ նա իմանար թէ ինչ է կատարւում նրա շուրջը վերջին տարիներս, եթէ տեսնէր թէ ինչպէս կերպարանափոխուած «բաստերեակովչինան» ինքը, իր սեփական նախաձեռնութեամբ, փետրուարի 19-ին, առաջին անգամ հանգիստւոր կերպով, տօնեց մեծ բեֆօրմների 41-րդ տարեդարձը Մոսկուայի Կրեմլի մէջ, իշխանութեան թոյլտուութեամբ աշխատող դասակարգի ահագին ամբոխը ինքը իր ձեռքով պսակեց Ազատարար Կայսրի արձանը, դրանով յայտնելով թէ իր անկեղծ երախտագիտութիւնը և թէ հասունութիւնը...

Գաղաքների աշխատող դասակարգի մէջ այդպիսով ներկատելի է մտքի որոշ սթափում, մինչդեռ գիւղը օրէցօր աղքատանում է, ընկնում, նրա տնտեսականը տարէց տարի քայքայւում է: Փայլուն դրութեան մէջ չէ առհասարակ և ինչո՞ր գիւղատնտեսական արդիւնաբերութեան վիճակը: Եւ ահա «գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքները ցոյց տալու և այդ արդիւնաբերութեան և նրա հետ կապուած ժողովրդական աշխատանքի ճիւղերը բարձրացնելու միջոցներ գտնելու համար» Բարձրագոյն հաստատուած է, ֆինանսների միմիստրի նախագահութեամբ, առանձին խորհրդակցութիւն,

որ իր պարապմունքները սկսեց Պետերբուրգում դեռ փետրուարի 2-ին: Գործին հմուտ մարդիկ ցանկութիւն են յայտնում որ այդ խորհրդածութիւններին հրաւիրուեն և նահանգական զեմսովոներից ընտրուած ներկայացուցիչներն: Իսկ այնտեղ, ուր չը կայ զեմսովո, օրինակ, Կովկասում, ի հարկէ, ցանկալի է, որ այդ խորհրդակցութեան մասնակցելու համար Գիւղատնտեսական ընկերութիւնները իրանք ընտրէին ներկայորոշ մասնայի գրութեանը լաւ ծանօթ անձանց...

Պետերբուրգում վերջերս տեղի ունեցաւ նաև տնայնագործական գործիչների Ս. համաժողովը, որ բացայայտ կերպով ապացուցեց թէ և՛ տնայնագործական զարգացումն ու արգասաւորութիւնը կախուած է ժողովրդի լուսաւորութեան չափից և տեղական ինքնավարութիւնների կողմից հասարակ տնայնագործներին ցոյց տուած աջակցութիւնից: Տնայնագործական ցուցահանդէսում պարզ երևում էր, որ իրերի արժանաւորութիւնը ուղիղ յարաբերական են որոշ գաւառների մէջ կղած լուսաւորութեան մակերեւոյթին և ինքնավարական չափերին: Հասկանալի է թէ ինչու առաջին տեղը բռնում էին Ֆինլանդական իրերը, ապա այն զեմսովոնների գործուածքները, ուր տեղական ինքնավարութիւնը առանձին ուշադրութիւն է դարձրել տնայնագործութեան վրայ: Մեղինից չատ և չատ աւելի զարգացած խոշոր արդիւնագործական երկրներում, տնայնագործական որոշ ճիւղեր դեռ ևս չարունակում են մրցել և իրանց գիրքը պահպանել գոյութեան կռուում: Մեր երկրում դեռ աւելի չատ են տնայնագործական կենսունակ ճիւղերը, միայն հարկաւոր է տընայնագործների մօքի և ճաշակի զարգացում, որպէս զի նրանց պատրաստած իրերը չուկայում կարողանան դոհանել սպառողներին...

Յայտնի է որ Ֆինլանդների ներկայ մինիստրի ջանքերով Ռուսաստանի արդիւնագործութիւնը տարէցատրի խոշոր ծաւալ է ստանում, կապիտալիզմը իսր արմատներ է դրում երկրի մէջ, միևնոյն ժամանակ Ֆինլանդների մինիստրը, առանձին ուշադրութիւն է դարձնում տեխնիկական և առևտրական դպրոցների թիւը բարձրացնելու, երկիրը երկաթուղային խիտ ցանցով ծածկելու մասին: Այդ վերջին նպատակին է ծառայելու և Չինաստանից ստացուելիք տուգանքի՝ այժմ և թէ դրամի վերածումը, փոխառութեան միջոցով, իրան հասանելիք ամբողջ առգանքը, 181,959,000 ռուբլին մաս-մաս և երկար տարիներին ընթացքում ստանալու փոխարէն, Ռուսաստանը 4⁰/₀ փոխառութեամբ միանգամից կը ստանայ այդ գումարը գլխաւորապէս Գերմանիայից: Դրա մի մասով ոլէտը է գոհացում տրուի պատերազմի

պատճառով մնաստուած մասնաւոր տնձոնց և մասնաւոր հիւնարկութիւններին, իսկ մնացածը յատկացնուելու է իբրև նպաստ մասնաւոր երկաթուղային ընկերութիւններին:

Մենք ստացանք համակրողների մի խմբից ծանուցում, որ նա մտադիր է այս տարուայ գարնանը, Մայիսի 10-ին, ընտանեկան կերպով տօնել Ղազարոս Աղայեանի գրական գործունէութեան քառասնամեակը:

Ղազարոս Աղայեանը մեր գիւղական միջնոլորտից դուրս եկած մի ինքնուրոյն տաղանդ է: Իր կամքի ուժով և բնածիր փայլուն ընդունակութիւններով նա ձգտեց՝ ինքնակրթութեամբ բարձրանալ իրան ծնող ժողովրդի մտաւոր մակերեւոյթից: Բայց հասնելով իր նպատակին, նա չը մոռացաւ այդ ժողովուրդը և աւրողջապէս իրան նուիրեց նրա լուսաւորութեան գործին:

Ժողովրդական լեզուի համն ու հոտը պահպանելով, նա իր գրական ստեղծագործութիւնների մէջ ձգտեց առաջ յառնել մատաղ սերնդին ազնիւ քաջասրտութեան և հոգու արիւթեան դասեր: Իբրև պատանեկական հասակի բանաստեղծ-գրող նա չունեցաւ իր նման ուրիշը մեր գրականութեան մէջ: Նրա բանաստեղծական տաղանդը երևում է նոյն իսկ նրա թարգմանութիւնների մէջ, որովհետեւ ոչ-բանաստեղծը չէր կարող այնպիսի հրաշալի լեզուով թարգմանել, օրինակ, Պուշկինի «Ոսկէ Զինիկը», Ինչպէս այդ կատարել է Ղ. Աղայեանը:

Իբրև մանկավարժ Ղ. Աղայեանը ցոյց տուեց իր ինքնուրոյն թարմ մտածողութիւնը: Առողջ միտքը և բնածին տաղանդը նրան տալիս էին շատ աւելի, քան ինչ ունեն մեր մի քանի դիպլոմաւոր «մանկավարժները», իրանց չը մարսած գերմանական «սիստեմներով»: Աղայեանի կազմած դասադրքերը, նրա բազմաթիւ յօդուածները «Աղբիւրում», որ մի ժամանակ դուրս էր գալիս de facto նրա խմբագրութեամբ, և նրա գործունէութիւնը ուսուցչական ասպարէզում՝ չեն կարող մոռացուել պարտաճանաչ հասարակութիւնից:

Իր երիտասարդութեան և առնական հասակում Ղ. Աղայեանը իր ոյժերը ամբողջապէս նուիրեց իր ազգին, երբեք չը մոռնելով իր անձնական ապահովութեան մասին, իր ընտանիքի ապագայի մասին: Նա աշխատեց հասարակութեան համար, այժմ հասարակութեան պարսպն է վարձատրել նրան, ցոյց տալ իր երախտազիւտութիւնը:

Ի սրտէ ցանկանք, որ մեր ալեղարդ գրող-մանկավարժը և հասարակական գործիչը ըստ արժանւոյն գնահատուի հայ հա-

սարակութիւնից, որ վայելել է և զեռ երկար ժամանակ կը վայելի նրա բազմակողմանի գործունէութեան արգասիքները:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Правительственный Вѣстникъ» լրագրում տպուած է. Այն անձանց մեծամասնութիւնը, որոնք յանցաւոր էին լիեւորութարի 9-ին և 17-ին անկարգութիւններ նախապատրաստելու և մասնակցելու մէջ, Բարձրագոյն հրամանով բանտարկութեան ենթարկուեցին, և այդ բանի համար նշանակուած էր Արխանգելսկի բանար: Մինչև Արխանգելսկի ուղարկելը բռնուածները մնում են Մոսկուայի բանտերից մէկում, և նրանց ընթացքը, որ արտայայտուած է նրանով, որ նրանք անկարգութիւններ են անում, չեն ենթարկուած բանտային կանոններին և կարգապահութիւնը խախտում են, այն կզրակացութեան է բերում, որ համեմատաբար երկար ժամանակով այդքան անձանց կուտակումը մէկ բանտում կարող է չափազանց ոչ ցանկալի հետեւեցներ ունենալ, որոնք, նոյնպէս, կարող են անհրաժեշտ դարձնել արտակարգ միջոցներին զիմելը: Թէ այդ պատճառով և թէ պահպանելու համար ընկերների հնարաւոր վատ ազդեցութիւնից առանձին կալանաւորներին և սոսնաարակ բանտային կարգը, Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել, որ նախկին ենթադրութիւնը՝ բանտարկութեան դատապարտուած վերոյիշեալ անձանց Արխանգելսկի բանտում կենտրոնացնելու մասին լիովնել և բաժան-բաժան տեղաւորել նրոնց, պատիժը կրելու համար, փոքրաթիւ խմբերով Կայսրութեան զանազան բանտերում:

Ապրիլի 2-ին, ցերեկուայ մօտ 2 ժամին, երբ ներքին գործերի մինիստրը մտնում էր մինիստրների կօմիտէտի շինութիւնը Մարիինսկի Պալատում, դրանից մի քանի բուլէ տուաջ կառքով եկած և ղոնապանի սենեակում մինիստրին սպասող անյայտ մարդը, զինուորական օֆիցէրական համազգեստով, մատուցանելով կնքած ծրար, չորս անգամ բէվօլվէր արձակեց մինիստրի վրայ, այնպէս որ երկու գնդակով ծանր վիրաւորեց եզերմէյատէր Սիպեազինին՝ Վիրաւորուածին, Մաքսիմիլիանօվսկայա բուժարանը տեղափոխելուց յետոյ, բժշկական օգնութիւն հասցրին բժշկապետներ Վիլեամինով և Տրօյանով, բայց չը նայելով դրան, եզերմէյատէր Սիպեազին մէկ ժամից յետոյ վախճանուեց: Ստուգուած է, որ բռնուած յանցաւորը, զինուորական չը լի-

ներով, հազել էր աղիւտանտի համազգեստ, որպէս զի զիւրու-
թիւն ունենայ մինիստրին մօտենալ:

Պետական քարտուղար, մինիստր, Ֆինլանդական Մեծ Իշ-
խանութեան ստատս-սեկրետար, սենատոր, ներգործական ներ-
քին խորհրդական Փօն-Պլէվէ նշանակուած է ներքին գործերի
մինիստր, թողնուելով ստատս-սեկրետարի և սենատորի կոչում-
ների մէջ:

Ներքին գործերի մինիստրը, պետական կարգը և հասարա-
կական հանգստութիւնը պաշտպանելու համար միջոցների Բար-
ձրագոյն հաստատուած կանոնադրութեան 17-ն յօդուածի 1-ին
կէտի հիման վրայ, անհրաժեշտ համարեց ներկայ ապրիլի 2-ին
ներքին գործերի նախկին մինիստր եղերմէյսաէր Ալպեագինի
սպանութեան գործը յանձնել զինուորական դատարանի քննու-
թեանը, գործադրելով պատերազմական ժամանակուայ օրէնք-
ները:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր ինֆանտէ-
րիայի գնհերալ Վաննօվսկի արձակուած է, իր խնդիրքի համա-
ձայն, խանդարուած առողջութեան պատճառով, ժողովրդական
լուսաւորութեան մինիստրի պաշտօնից, թողնելով նրան գնհե-
րալ-աղիւտանտ և Պետական Խորհրդի անդամի կոչումը: Ժողո-
վրդական լուսաւորութեան մինիստրի օգնական սենատոր
զաղանի խորհրդական Մէչչանինով արձակուած է, իր խնդիր-
քի համաձայն, մինիստրի օգնականի պաշտօնից, թողնելով նրան
սենատորի կոչումը:—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի
օգնական իսկական պետական խորհրդական Ջէնգէր նշանակ-
ւում է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կա-
ռավարիչ:

«Правительственный Вѣстникъ» լրագրում հրատա-
րակուած է հետեւեալ Բարձրագոյն ըէսկրիպտը ինֆանտէ-
րիայի գնհերալ Վաննօվսկու անուան. «Պետր Սեմեօնովիչ,
կանչելով ձեզ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը
կառավարելու համար, ես ղեկավարւում էի այն համոզմունքով,
որ այն փորձը և հմտութիւնը պատանեկութեան դատաւարակու-
թեան ասպարէզում, որ մանուկ էր ձեր զինուորական և պե-
տական բազմամեայ գործունէութեան շրջանում, կ'օգնեն ձեզ
իրագործելու իմ ձեզ վստահացած գիտաւորութիւնը: Այժմ,
սատեիկ աշխատանքներից խանդարուած առողջութեան պատ-
ճառով դուք զիմեցիք ինձ խնդրելով արձակիլ ձեզ իմ ձեզ յանձ-

նաժ ալաշտօնից: Յաւակցութեամբ դիմանելով ձեր ինքիբերին
 և արձակելով ձեզ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի
 պաշտօնից, պահպանելով ձեր մնացած պաշտօնները և կոչումը:
 Ես մի և նոյն ժամանակ յայտնում եմ ձեզ իմ անկեղծ չնորհա-
 կալութիւնը Ձեր դէպի ինձ ունեցած հաւատարմութեան հա-
 մար, որ դրդեց ձեզ, չը նայելով ձեր ծեր հասակին, յանձն առ-
 նել մի այդքան դժուար գործունէութիւն: Մնում եմ դէպի ձեզ
 միշտ բարեհաճ, իսկականի վրայ Նորին կայսերական Մեծու-
 թեան ձեռքով գրուած է. «և ձեզ խորին կերպով յարգող
 ՆԻԿՈԼԱՅ»:

«КАВКАЗЪ» լրագիրը հաղորդում է, թէ «Ապրիլի 21-ին, ա-
 ռաւօտեան 11 ժամին, Բագում, հայոց եկեղեցու մօտ դռնուող
 հրապարակի վրայ, հաւաքուեց մի քանի հարիւր մարդուց բաղ-
 կացած ժողովրդի խումբ բաղմութիւն: Ամբոխը բարձրացրեց
 կարմիր դրօշակ, սկսեց աղմուկ հանել և այս ու այն կողմը նե-
 տել յեղափոխական բովանդակութիւն ունեցող թերթիկներ:
 Ոստիկանութեան կողմից ձեռք առնուած միջոցներով և կօշակ-
 ների աջակցութեամբ կարգը վերահաստատուեց: Բռնութիւն-
 ներ տեղի չունեցան: Ձերբակալուած են երկու հոգի»:

Մինիստրութեան պաշտօնեաներին ընդունելով, ժո-
 ղովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ
 Ջէնդէր սրտասանեց մի երկար ճառ: Սկզբում մասնա-
 ցոյց անելով աշխատանքի ընթացքի վրայ իր նախորդների ժա-
 մանակ, մինիստրութեան կառավարիչը նկատեց, որ միջնակարգ
 դպրոցը վերակազմելու վերաբերեալ բոլոր նախագծերը, Բար-
 ձրագոյն հրամանով, կ'ենթարկուեն ժողովրդական լուսաւորու-
 թեան մինիստրութեան գիտնական կօմիտէտի և խորհրդի քըն-
 նութեանը, որոնց մօտ կ'ուղարկուեն նոյնպէս ի եզրակացու-
 թիւն միջնակարգ դպրոցների մանկավարժական խորհուրդների
 և հոգաբարձական խորհուրդների կարծիքները այս տարուայ
 կատարուած փորձի հետևանքների մասին. 1901 թուի յունիսի
 11-ի Բարձրագոյն հրամանի գործողութեան ժամանակամիջոցի
 շարունակութիւնը եկող տարուայ համար անխուսափելի է դառ-
 նում, նրա ժամանակաւոր կազմութիւնը պէտք է իրագործուի
 առանց նախաձեռնելու միջնակարգ դպրոցի բէֆօրմի հետևանք-
 ները: Բարձրագոյն հրամանի համաձայն, կազմուած է յանձնա-
 ժողով իւրաքանչիւր շրջանի գիմնազիայի դիրեկտօրից և բէա-
 լական դպրոցի դիրեկտօրից՝ այդ առարկայի վերաբերմամբ ա-

մենից աւելի նպատակայարմար ձեռնարկութիւնները քննելու համար: Յանձնաժողովի ենթադրութիւնները նոյնպէս կ'ենթարկուեն գիտնական կօմիտէտի և մինիստրի խորհրդի քննութեանը, որովհետև անհնարին է առաջարկել նրանց Պետական Խորհրդի հաւանութեանը, այն հաշուով, որ նրանք կարողանան իրագործուել եկող տարուայ սկզբից: Այդ ենթադրութիւնները կ'ենթարկուեն Բարձարագոյն բարեհայեցողութեանը: Վերջում մինիստրութեան կառավարիչը յոյս յայտնեց, որ անաշատութեամբ կը քննուեն նշանաւոր հարցերը, այն պայմանով, որ յարգուեն ուրիշների կարծիքները: Մասնացոյց անելով մինիստրութեան հոգածութեան վրայ՝ բարձր արդիւնաբերական և սկզբնական կրթութիւնը զարգացնելու մասին և անդադար աշխատելու անհրաժեշտութեան վրայ այդ շրջաններում, Զէնգէր աւարտեց իր ճառը հետեւեալ խօսքերով. «Թող պահպանէ մեզ Աստուած մեծամտութիւնից և միակողմանիութիւնից, թող պահպանէ Նա մեզ ազմկալի խրոխտութեան և թեթեամտութեան հաճոյանալուց: Մեր գործն է հանգիստ և առանց փոքրոգութեան յայտնել հասուն մտածուած համոզմունք խղճով ըստ մեր ձեռնհասութեան. Տէր Աստուածը—Աղբիւր ամեն իմաստութեան և Դատաւոր մեր խճղի—թող օգնէ մեզ հասնելու այն նպատակին, որը մասնացոյց է անում մեզ՝ ամենքիս համար միատեսակ սիրոյ վրայ դէպի լուսաւորութիւնը, հայրենիքը և մեր Թագաւորը»:

Վերջին ժամանակներս Պօլտավայի եւ Խարկովի նահանգներում տեղի ունեցած հասարակական կարգի լուրջ խախտումներ, Տեղի ունեցած դէպքերի էութիւնը հետեւեալն է: Անցեալ մարտ ամսի մօտ կէսին Պօլտավայի գաւառին հարեւան Կօնոտանտինօգրադի գաւառամասում, Պօլտավայի նահանգում, կալուածատիրոջ ազարակն սկսեցին գալ համախմբուած հարեւան գիւղացիները եւ, պատճառ բերելով, որ ուտեստի պաշարի պակասութիւն ունեն, խնդրում էին տալ իրանց ձրի հաց եւ անասունների համար ուտելիք. միննոյն ժամանակ նոյն տեղում սկսեց աճել ցորենի, գետնախնձորի եւ խոտի գողութիւնների քանակութիւնը: Ծուտով գիւղացիները խնդիրքից անցան դէպի պահանջներ, որոնք ուղեկցւում էին հետեւեալ բացականչութիւններով. «Մի եւ նոյն է, շուտով բոլորը մերը կը լինի», ապա սպառնալիքներին, որ մերժման դէպքում բոլորը ուժով կը վերցնեն: Այդ բոլոր երեւոյթները նկատւում էին համեմատաբար փոքր տարածութեան վրայ, Կօնոտանտինօգրադի գաւառի Մակսիմովկա, Վարվարովկա, Ֆէդօրովկա և Լիսիչիէ գիւղերի մօտ եղած ազարակների շրջանում, որոնցից վերջինը, ինչպէս երեւում է,

յանցաւոր պրօպագանդայով պարապող անձերից մի քանիսի ապրելու տեղն էր Յուզմունքը ազգաբնակութեան մէջ աստիճանաբար սաստկանում էր եւ վերջապէս, մարտի 28-ին, Մակսիմովկա գիւղի գիւղացիների եւ մասամբ հարեւան գիւղերի բնակիչների մեծ ամբոխ եկաւ սայլերով Նորին Բարձրութիւն Դուքս Մէկլէնբուրգ Ստրէլիցկու կալուածքի «Կարլովկա» խուտօրներից մէկը սպառնալիքներով, խլեց կառավարչից ամբարների բանալիները, դուրս տարաւ մի քանի հազար պուդ գետնախնձոր, եւ դրա հետ միասին Պօլտավայի եւ Կօնստանտինօպրադի գաւառներում սկսուեցին ակնյայտնի անկարգութիւններ. գիւղացիները, աչկարայ, ամբողջ սայլախմբերով, բաղկացած երեքմի մինչեւ երեք-չորս հարիւր սայլերից, յարձակուում էին կալուածատէրերի եւ հարուստ կազակների ազարակների վրայ, կոտորում էին մանուկների, սարայների եւ ներքնատների կողպէքները եւ տանում էին ցորեն և անասունների ուտելիք ու գիւղատնտեսական գործիքներ, երեքմի էլ ըլում էին տաւարը Մի քանի ղէպքերում կողոպտիչների այդ խմբում լուում էին հետեւեալ աղաղակները. «Վերցրէք, դուք պէտք է այնպէս վարուէք, ինչպէս գրքումն է գրուած, այդ բոլորը մերն է»։—Մարտի 30-ին Պօլտավայի նահանգապետը, անհրաժեշտ համարելով հանգստութիւնը վերականգնելու համար արտակարգ միջոցներ ձեռք առնել, հետեւեալ զօրքի երեք բատալիօններով գնաց անկարգութիւնների տեղը եւ 31-ին սկսեց նրանց դադարեցնելու գործը, կողոպտիչների հետքերով գնալով, Զօրքերի երեւալը, պատշաճաւոր տպաւորութիւն թողնելով այն գիւղերում, որոնց այդ զօրքերը գրաւել էին, չէր կարող միանգամից վերականգնել կարգը մնացած տեղերում. եւ Պօլտավայի նահանգի երկու գաւառներում եւս կողոպտումները շարունակվում էին եւ մարտի 31-ին ուրիշների թւում Կօնստանտինօպրադի գաւառում կողոպտվեց վաճառական Վօլիկի խոշոր ազարակը, որտեղից տարան մօտ 20,000 պուդ ցորեն։ Ապա յուզմունքն սկսվեց մօտենալ Պօլտավային։ Ապրիլի 1-ին գիւղացիների ամբոխը յարձակումն գործեց կալուածատէր Տրէպկէի քաղաքից տասը վերստ հեռու գտնվող ջրաղացը Կօվալէվկա գիւղի մօտ։ Պօլտավայի փոխ-նահանգապետի հրամանով այնտեղ ուղարկուած հետեւակ զօրքի երկու պէխօտաները եկան այդ տեղը արդէն այն ժամանակ, երբ գիւղացիները արդէն վերադառնում էին Տրէպկէի կալուածքից՝ կողոպտւած անելուց յետոյ։ Զէմակի հրամանատարը, որ ուղեկցում էր զօրքին, կալանաւորեց քսան մարդ եւ սկսեց քննութիւն կատարել, այդ ժամանակ ձողերով եւ եղանակներով զինաւորուած սմբոխը սկսեց յարձակուել եւ հրամանատար շտաբ-օֆիցէրի նախադրուշութեանը այն բանի մաս-

ին, թէ ինքն ստիպուած կը լինի հրացաններ արձակել, պատասխանեցին քարերով եւ ծաղրով: Դրանից յետոյ ամբողջի վրայ հրացաններ դատարկուեցին, որոնցից երկու կողոպտիչներ սպանուեցին եւ եօթը վիրաւորուեցին, վիրաւորուածներից մէկը մեռաւ: մնացածների վէրքերը վտանգաւոր չեն: Ապրիլի 2-ին անկարգութիւնները Կօնստանտինօքրադի գաւառում, չնորհիւ զօրքերի անցուղարձի, որ զօրեղացրած էին կրկին Պօլտավայից ուղարկուած չորրորդ բաւալիօնով, սկսեցին խաղաղվել, թէպէտ եւ մի քանի ագարակներ հէնց Պօլտավայի մօտ էլի կողոպտուեցին: Ապրիլի 3-ին խռովութիւնների նոր բռնկումն տեղի ունեցաւ Կօնստանտինօքրադի գաւառում, որը ընթացք չունեցաւ եւ ապա անկարգութիւններ Պօլտավայի նահանգում վերջնականապէս դադարեցրուեցին: Ընդամենը այդ նահանգում կողոպտուեցին 54 ագարակներ: Մարտի 31-ին խռովութիւններն անցան Խարկովի նահանգը, բռնելով Վալկովսկի գաւառը եւ Բօգոդուխովի գաւառի աննշան մասը: Երեք օրվայ զարգացումից յետոյ Պօլտավայի նահանգում, անցնելով Խարկովի նահանգը, անկարգութիւնները այստեղ երեւան եկան աւելի սանձարձակ ձեւով: գիւղացիները արդէն չէին բաւականանում ցորեն, գետնախնձոր եւ խոտ յափշտակելով, այլ կողոպտում էին ինվենտարը, քշում էին տաւարը, երբեմն տանում էին ընտանեկան սարք ու կարգը: աւերեցին մի քանի ագարակներ եւ նրանցից երկուսը այրեցին: Վալկիի գաւառում կողոպտիչների երեւալու մասին զեկուցումներ ստացաւ Խարկովի նահանգապետ Իշխան Օբօլէնսկի, որը զրանից մի փոքր առաջ ստանձնել էր նահանգի կառավարութիւնը, երեկոյեան մարտի 31-ին: Նոյն գիշերը եւ եթ նա ճանապարհ ընկաւ դէպի անկարգութիւնների տեղը, վերցնելով իր հետ հետեւակ գնդի մի բաւալիօն եւ հարիւր կօզակներ: Ապրիլի 1-ին, առաւօտեան, զօրքերը վրայ հասան կողոպտիչներին ինֆանտէրիայի գեներալ Պէրլիկի կալուածքում, խլեցին նրանցից կողոպտուած գոյքը, պատժեցին մեղաւորներին եւ ձերբակալեցին մօտ 20 մարդիկ: ապա կողոպտելու ժամանակ բռնելով գիւղացիներին Պօլտավայի նահանգի երկու հարեւան ագարակներում, Իշխան Օբօլէնսկի իմացաւ, որ կողոպտուում է վաճառական Մօլդավսկու մեծ չաքարագործարանը Վալկի գաւառի Նօվօ-Իվանօվսկ գիւղում, բայց կարողացաւ զօրքերով գալ միայն այն ժամանակ, երբ յարձակումը վերջացել էր: Այդ գործարանից յափշտակված է մինչեւ 30,000 պուդ չաքար եւ ամեն տեսակ սարք ու կարգ, մաս-մաս քանդված եւ տարուած են մեքենաները եւ քչել տարել են 150 զոյգ եզներ: Ամբողջն այստեղ հասաւ այնպիսի կատաղութեան, որ յարձակվեց գործարանական հիւանդանոցի վրայ, յափշտակեց

բոլոր դեղերը դեղատներից և հիւանդների տակից դուրս էր քաշում ու տանում էր դռակները: Այդ ժամանակ հասաւ նահանգապետը մի փոքրիկ բուռ կողակների հետ եւ ձերբակալեց կողոպտողների մի նշանաւոր քանակութիւն ու ենթարկելով նրանց պատժի՝ վերականգնեց կարգը: Թէեւ ապրիլի 1-ին եւ 2-ին զանազան տեղերում խարկովից ուղարկած օգնական զօրքերը ժամանակին վրայ հասան եւ կանգնեցրին յարձակումների մեծ մասը, բայց եւ այնպէս ամեն տեղ չէր աջողում կողոպտումների առաջն առնել: Ամսի 1-ին ամբողջ կողոպտեց կալուածատիրուհի Գաւիսկայայի կալուածքը եւ կրակ տուեց նրա շինութիւնները: Նոյն օրը յարձակման ենթարկւեց Կանտակուզովկա հարուստ կալուածատիրական ագարակը, նրա մէջ կողոպտուած են ամբարները, քչել տարել են անասունները եւ թալանված է տան բոլոր հարուստ սարք ու կարգը եւ գրադարանը: Կալուածատէր Դուխանիսկոյի Օսինով կալուածքում գիւղացիները, թալանելով բոլոր չարժեքեղ կայքերը, քանդեցին տան գերանները եւ տարան իրանց հետ: Ապրիլի մէկի իրիկնադէմին կողոպտողների խումբը մօտենում էր Վալկի քաղաքին, ապրիլի երկուսին այդ քաղաքի փողոցներում երեւացին զիւղացիների առաջապահ խմբերը, որոնք գնում էին կողոպտելու, բայց, նահանգապետը տեղ հասնելուց յետոյ ամսի երկուսի երեկոյեան կարգը վերահաստատւեց եւ անկարգութիւններ անողները պատժւեցան: Սրանով վերջացան անկարգութիւնները Վալկի գաւառում, ընդամենը այդ գաւառում կողոպտուած են 25 կալուածատիրական կալուածքներ, մօտաւորապէս այնքան կողոպտւածներ էլ զօրքի միջոցով չեն թոյլ տուել, որ կատարուեն: Բացի դրանից, Վալկի գաւառի սահմանակից Բօգոդուխովի գաւառում կողոպտուած են երկու կալուածքներ, որոնք գտնւում են Բեադկովկա գիւղի եւ Բլազօդատնի ագարակի մօտ, իսկ Միրնիյ ագարակը ենթարկւեց յարձակման, բայց ժամանակին ազատուեց: Խարկովի նահանգապետի եռանդուն գործունէութիւնը եւ նրա յայտարարելը ժողովրդին, թէ թալանած իրերը յօժարակամ վերադարձնողների վիճակը կը թեթեւացնուի, հարկադրեցին կողոպտւածների մէջ մասնակցող գիւղացիներին խեղճալ եւ անկարգութիւնների դադարելուն հետեւած օրերում գիւղացիները սկսեցին ներկայացնել չինական կառավարութիւններին, վնասուածներին վերադարձնելու համար, կողոպտած գոյքը եւ զղջման թղթեր տուին կազմելով համախօսականներ: Հէնց որ կողոպտւածները սկսուեցին Պօլտավայի, ինչպէս նաեւ խարկովի նահանգներում, իսկոյն անկարգութիւնների տեղը հասան դատաստանական իշխանութեան ներկայացուցիչները եւ սկսեցին

Նախնական քննութիւններ կատարել Մի եւ նոյն ժամանակ սկսուեցին քննութիւններ ժանդարմների օֆիցէրների ձեռքով եւ այդ քննութիւններով պարզուել է, որ Պօլտավայի եւ Կոստանտինօպոլիսի գաւառների սահմանակից մասերում, ուր գիւղացիների տնտեսական դրութիւնը, որոնք վերջին տարիները մի քանի անգամ անբերրիութեան զոհ դարձան, կատարելապէս գոհացուցիչ չէ,—բուն զրեց իր համար հակակառավարչական բրօշուրների եւ հրատարակութիւնների պրօպագանդան մօլօքօսիական լեզուով: Այդ հրատարակութիւնների մէջ գիւղական ազգաբնակչութիւնը հրաւիրվում էր ապստամբուել իշխանութիւնների դէմ եւ իրանց ձեռքը գցել կալուածատէրերի գոյքերը: Վերոյիշեալի վրայ անհրաժեշտ է աւելացնել, որ ճիշդ չեն հասարակութեան մէջ տարածված այն լուրերը, որ իբր թէ կան անձինք, որոնց վրայ գիւղացիները բռնութիւններ են կատարել, նոյնպէս թէ եղել են գիւղացիներ, որոնց բանտարկել են իշխանութիւնները: Վերջին տեսակ լուրերի տարածման առիթ տուել է ակներեւ այն հանգամանքը, որ կողոպտումները դադարեցնելու համար իշխանութիւնները ստիպուած էին մարմնական պատժի ենթարկել ապստամբութեան պարագլուխներին եւ նրա աւելի յամառ մասնակցողներին: Այդ պատիժները, պատշաճաւոր ներգործութիւն անելով գիւղացիների վրայ, վերացրեց աւելի խիստ միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտութիւնը, նման այն միջոցների, որոնց ստիպված եղան դիմել Կօլալէվկա գիւղում: Անկարգութիւնները ճնշելու ժամանակ կողոպտիչների առանձին խմբերին զեկավարող անձինք եւ վերջինների շրջանից ամենից աւելի յանցաւորները բռնվեցին: Նոյնպէս կալանաւորված են եւ մի քանի անձինք գիւղացիների միջեւ յանցաւոր պրօպագանդային մասնակցողներ թւից: Ներկայումս հասարակական հանգստութիւնը Պօլտավայի եւ Խարկովի նահանգներում վերականգնված է: Պէտք է կարծել, որ այդ տեղերում ոստիկանական պաշտպան ոյժերի զօրեղացնելու ձեռք առած միջոցները կ'ապահովեն այնտեղ կարգի պահպանումը այսուհետեւ եւս:

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Համատարած աղէտ.—Տնտեսական դրութեան յարուցած կեանքի և մահ-
ուան խնդիրը.—Մեր պատրաստականութիւնը.—Երկիրը չէ ուսումնասիր-
ուած.—Փաստեր Բագուի Մարգարտական Ընկերութեան կեանքից:

Դեռ հազիւ էր լուսանում տնտեսական տարին, երբ յայտ-
նի դարձաւ, որ 1902 թուականին էլ մեր երկրի աշխատող աղ-
ղաբնակութիւնը դարձեալ պիտի կարօտութիւն զգայ: Այս տա-
րի մենք ունեցանք մի շատ տարօրինակ ձմեռ. ձիւն շատ քիչ
եկաւ բուն ձմեռնային ամիսներում, նոյն իսկ լեռնային բար-
ձրութիւնների վրայ էլ տաք օրեր ու չարաթներ էին անցնում:
Անսովոր տաք եղանակի պատճառով ծառերը ժամանակից շատ
առաջ ըստուեցան, ծաղկեցին: Եւ ահա այդ միջոցին վրայ հա-
սան յանկարծակի սառնամանիքներ, եկաւ անժամանակ ձիւն,
ահազին աւերմունքներ դործելով մեր այգիներում: Գիւղացու
տնտեսութեան ամենագլխաւոր ճիւղերից մէկը—այգեգործու-
թիւնը համարեա բոլորովին ոչնչացել է և այս տարի գիւղացու
առանց այդ էլ աղքատիկ բիւջէտից պէտք է ջնջել այն, ինչ
տալիս է այգին:

Աղէտը խիստ զգալի է մանաւանդ այն պատճառով, որ
նա համատարած է: Արտաքսի ասիերից մինչև հիւսիսային Կով-
կաս լարձրացել է այգեգործների հեծեծանքը: Դղլարը, որ հա-
մարեա միայն իր այգիներով է ապրում, մնացել է միանգամայն
անօգնական. Արարատեան դաշտը ահազին վեառներ է կրել,
մի քանի տեղերից հաղորդում են որ նոյն իսկ ծառապտուղները
«խոնձուկ են» ցրտերից: Եւ այս աւերանքը մեր լայնատարած
երկրի համար բոլոր անկիւններում տեղի ունեցաւ յանկարծա-
կի, երկու երեք զիչերուայ ընթացքում:

Եւ այսպէս, տարիները միմեանց կտնից բարդում են պա-
կասութիւններ պակասութիւնների վրայ, կարօտութիւն կարօ-
տութեան վրայ: Անցեալ տարուայ կարկուտից, դաշտային մկնե-

րից աղքատացած օրուայ հացին կարօտ մնացած գիւղերին պակասում էր այգեգործական այս աղէտը: Եւ դեռ մենք զարնան սկզբունքն ենք, դեռ մինչև հունձ ով գիտէ էլ ինչ հարուածներ են սպասում:

Արձանագրել տնտեսական դժբախտութիւնները բաւական չէ: Սոված գիւղերի համար ոչինչ թիթիութիւն չէ որ նրանց մարտիրոսագործութիւնները տպուած պահուած են մամուլի էջերում: Պէտք է իրական օգնութիւն: Իսկ ռրտեղից և ինչպէս պէտք է գայ օգնութիւնը: Վերջենք հէնց այս ապրիլի աղէտը: Նրա չափերը, բնաւորութիւնը այնպէս են, որ ոչ մի կերպով չէ կարելի այնպէս օգնել աղղաբնակութեան, որ նա մոռանայ իր կրած վնասները: Աշխարհի վրայ չէ կարող լինել մի բարեգործութիւն, որ փոխարինէ այդքան վնասները, պետութիւնն էլ չէ կարող օգնել: Ի՞նչ է մնում անել:

Ներկայիս համար համարեա ոչինչ: Բայց գոնէ ապագայի, նոյն իսկ հեռուոր ապագայի համար մի բան ստեղծուէր: Որքան մտածում էք թէ ինչ է կտրելի ստեղծել, տեսնում էք որ միջոցը միայն մի հատ է և դա այն է, որ աշխատաւոր, երկրագործ գոտակարգը սովորէ ինքնօգնութեան, սովորէ բնութեան ձեռքից իր խելացի ջանքերով ապրուստ խելու քաջութեան: Ուրեմն, դարձեալ այն, ինչ կրկնուած է հարիւրաւոր անգամ, այն, որ պէտք է աղղաբնակութեան ձեռքը տալ զիտութեան զէնքը, հանել նրան դարաւոր անհասկացողութեան ճիրաններից և սովորեցնել նրան մրցելու կարկուտի, միկների, անժամանակ սառնամանիքների, մորելսի և այլ թշնամիների դէմ: Աղէտաւոր տարիներ են դալիս, խլում են մեր ձեռքից մեր բարեկեցութիւնը և կեանքի ու մահուան ինդիք են դարձնում մեր կերպարանափոխութիւնը, մեր առաջադիմութիւնը: Կամ սթափուել, սովորել, կատարելագործուել, կամ ոչնչանալ մշտական, երկարատև աղքատութեան ճանկերում:

Ուրիշ ելք, այո՛, չը կայ: Բայց հասկանում ենք մենք այս բանը: Ամեն անգամ, երբ բնութեան հարուածը դալիս է մեզ չլմեցնելու իր անողորմ դառնութեամբ, մենք ամենքս ամեն կողմերից աղաղակ ենք բարձրացնում թէ պէտք է անել, պէտք է սթափուել ու օգնել փորձով, գիտութեամբ: Բայց այդ համատարած ձայները մնում են ձայներ: Գործ չէ կրկնում: Ինչպէս կրկնում է, դեռ պէտք է շատ ու շատ պատժուենք բնութեան ձեռքով, որպէս ղի կարողանանք ընդունել մեր մէջ գոնէ մի չնչին մաս այն յատկութիւններից, որոնք հօլլանդացուն թեւ ու թիկունք են տալիս կռուելու ծովի և դաժան բնու-

թեան գէմ, խլելու իր հացը ժլատ ու անհրաժեշտ կալ բնութեան կրօնքից:

Առայժմ մենք դեռ նոյն իսկ չենք էլ ճանաչում մեր երկիրը, ինչպէս կարող ենք ճանաչել նրա ցաւերը:—Մենք մեր կեանքը չենք ուսումնասիրում: Եւ հէնց այդ է պատճառը, որ երբ մէկը պատահաբար մի որ և է նկարագրութիւն է տալիս մեր գաւառների մի որ և է անկիւնի կեանքից, մեզ այնպէս է թւում թէ կարգում ենք մի շատ հեռաւոր, շատ անյայտ ու խորհրդաւոր երկրի դրութիւնը: Եւ մեղմանում կան ամբողջ գաւառամասեր, որոնք նոյն իսկ այնքան էլ հեռու չեն գաւառական կենտրոններից, մեծ ճանապարհներից, բայց ներկայացնում են մի մի «խաւարային Աֆրիկա»: Պէտք է ուսումնասիրել մեր գիւղական կեանքը, պէտք է լոյս հանել նրա երեւոյթները: Առանց այդ ուսումնասիրութիւնների մենք միշտ կը խարխուլենք մթութեան մէջ և չենք իմանայ թէ ինչ ենք և ինչ պիտի լինենք:—Թող ձեռնհաս մարդիկ յանձն առնեն իրանց ծանօթ գաւառամասերի տնտեսական նկարագրութիւնը, հաւաքելով դրա համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկութիւնները, չը մոռանալով գիւղացու մտաւոր աշխարհն էլ: «Մուրճի մէջ վերջերումս երևացին մի քանի այդպիսի նկարագրութիւններ, որոնք շատ հետաքրքրական էին, նորութիւններ շատ հազարդեցին: Բայց եղածը դեռ քիչ է. պէտք է շատ աշխատել այս ուղղութեամբ, պէտք է մեր երկրի՝ որքան կարելի է շատ տեղերը ննթարկել լուսաբանող, մերկայցնող ուսումնասիրութեան: Ահա այս բանի վրայ ենք հրաւիրում մեր գաւառական ինտելիգենցիայի ուշադրութիւնը:

* * *

Այս էջերում մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսելու Բագուի Հայոց Մարզասիրական Ընկերութեան մասին: Այժմ ուրախութեամբ տալիս ենք մեր ընթերցողներին մի քանի փաստեր այդ համակրելի հիմնարկութեան կեանքից, քաղելով այդ փաստերը Ընկերութեան նոր հրատարակած մանրամասն «Տեղեկագրից», որի մէջ դրուած է անցեալ 1901 թուականի հաշիւը:

«Հաշուեաւութեան տարում ընկերութեան պատուաւոր և մշտական անդամ եղել են 395 հոգի, իսկ տարեկան անդամները 111:

1901 թ. դեկտեմբերի 31-ն ընկերութեան գոյքը կազմում են՝

Ա. Կ. Ի. Վ.

1. Կանխիկ դրամ	.	.	.	1,341	ռ.	60	կ.
2. Տոկոսաբեր թղթեր	.	.	.	105,375	»	40	»
3. Ընդունական թղթեր	.	.	.	25,110	»	—	»
4. Շարժական կապ	.	.	.	24,848	»	18	»
5. Անշարժ կապ	.	.	.	115,581	»	31	»
6. Տոկոսներ	.	.	.	1,666	»	67	»
7. Կատարուած ծախքեր 1902 թ.	.	.	.	2,926	»	80	»
				Գումար	276,849	»	97 կ.

Պ ա ս ս ի վ

1. Գրաւականներ Գրադար. ընթերցողներից	1,840	ռ.	60	կ.
2. Ժամանակաւոր պահելու տրուած գումարներ	7,575	»	—	»
3. Դրամագլուխներ	267,434	»	37	»
	276,849	ռ.	97	կ.

Յիշատակուած անշարժ կապը 115,581 ռ. 31 կ. արժու-
ղութեամբ կազմում է ընկերութեան հոյարկանի տունը, որ
ներկայումս գտնւում է Բագուի նահանգի ժողովրդական դըպ-
րոցների տեսչութեան իրաւասութեան ներքոյ: Ինչպէս յայտնի
է, այդ մասին դատ է սկսուել և այժմ դործը Թիֆլիսի դա-
տաստանական պալատումն է:

Վարչութիւնը յաջող կերպով մաքառելու համար օրէցօր
աճող կարիքի դէմ ձեռնարկել է եկամուտի նորանոր միջոցնե-
րի: Բացի սովորական «Հայկական երեկոյթ» կազմելուց, որ
տուել է զուտ եկամուտ 4,037 ռ. 36 կ., նա դիմել է և Նաւթ-
արդիւնաբերողների Խորհրդին և ստացել օժանդակութիւն յօ-
ղուտ Աշխատանքի Տան 3,000 ռուբլի:

Խ ե դ ճ ե Ր Ի Ն օ գ ն ե լ ու գ ո Ր Ժ Ը

1901 թ. ընթացքում տրուել են 1,047 խնդիր, որոնք բա-
ժանւում են այսպէս.

Ամսական նպաստ խնդրւում է	217
Միանուագ » »	240
Ճանապարհածախք »	216
Օժիտ »	21
Բժշկուելու համար »	107
Թաղման » »	18
Նիւթեր՝ աշխատելու համար	56
Բնակարանի նպաստ »	20

Ճաշի	»	»	66
Պաշտօնի համար	»	»	86

Բացի այս խնդիրներից տրուել են և ուրիշ շատ խնդիրներ, որոնք մատեան չեն մտցրուած. դրանք գլխաւորապէս բժշկական օգնութիւն և պաշտօն խնդրողներն են, որոնց հերթական անդամը ըստ կարելոյն բաւարարութիւն է տուել՝ առանձին յանձնարարականներով հիւանդներին ուղղելով բժշկների մօտ, իսկ անդործներին՝ կամ Աշխատանքի Տուն կամ ծախօթ առատականների կառավարիչների մօտ—գործի դնելու համար:

Տարուայ ընթացքում տրուած է մշտական նպաստ բնակարանի և անունդի համար, 801 խնդրագրով 4,722 ո. 50 կ.:

Միջին թուով մշտական ամեն մի նպաստ ամսական նըստում է 5 ո. 94 կոպ.:

1. Մնունդի համար	.	.	82	նպաստ.
2. Բնակար. վարձ	.	.	31	»
3. Ճանապարհածախք	.	.	114	»
4. Բժշկութիւն	.	.	95	»
5. Թաղման	.	.	28	»
6. Հանդերձեղէն	.	.	17	»
7. Դասակ. պիտոյք	.	.	5	»
8. Նիւթեր՝ աշխատելու համար	.	.	53	»
9. Բնակարանի նորոգման	.	.	1	»

396 նպաստ:

Բացի վերոյիշեալներից միանուադ բաժանուած է Զորահանայ տօնին 120 ո. 40 կ.—իսկ Զատկին՝ 1369 ո. 08 կ.:

Փողերը բաժանել են վարչութեան անդամները—գլխաւորապէս աներում նախօրէն ժողովելով անհրաժեշտ անդեղեղութիւններ այդ ընտանիքների մասին: Բաժանած գումարի անշան մասը միայն թաթախման օրը՝ 50 կոպէկից սկսած մինչև 2—3 ո. իւրաքանչիւրին բաժանուել է վարչութեան խորհրդարանում և եկեղեցու դաւթում:

Չը նայելով որ վարչութիւնը միանգամայն դէմ է եղել կարօտեալներին փողով օգնելու եղանակին, այնուամենայնիւ—չունենալով օգնութեան մի ուրիշ աւելի յարմար եղանակ—հարկադրուած է եղել այս տարի ևս նոյն եղանակին դիմելու: Դրամական նպաստ նշանակուել է գլխաւորապէս հիւանդների, զառամեալների, որբնայրիների, աշխատանքի անընդունակների և մանր երեխաներով ծանրաբեռնուած ընտանիքների համար:

Ծննդավայր վեռադառնալու համար տրուող ճանապարհա-
ծախքը համեմատաբար կրճատուած է, որովհետեւ նկատուած է,
որ խնդրատուները յաճախ ի չարն են գործ դնում: Ձը նայելով,
որ վարչութիւնը այդպիսիներին ճանապարհելուց միշտ նախա-
զգուշացուցիչ միջոցներ չէ դիմել, անդամների կամ ծառայող-
ների ձեռքով տոմսակներ է գնել ու այնպէս ճանապարհ դրել՝
առանց անմիջապէս փողը իրանց ձեռքը տալու, այնուամենայ-
նիւ նրանցից շատերը կրկին վերադարձել են Բագու, այն էլ
շատ կարճ միջոցից յետոյ:

Այժմ ճանապարհածախք տրվում է բացառիկ պարագանե-
րում և գլխաւորապէս ամառուայ ամիսներին, երբ անտանելի
չոքը, հակաառողջապահական պայմանները և տարափոխիկ հի-
ւանդութիւնները անխուսափելի մահ են սպառնում:

Ընկերութիւնն ունի Աշխատանքի Տուն և Ճաշարան: Աշ-
խատանքի Տան բացումով վարչութիւնը հնաւորութիւն է ձեռք
բերել աշխատանքի ընդունակ խնդրատուներին գործ, աշխա-
տանք ներկայացնել ու այդպիսով օգնութիւն հասցրած լինել,
մի ցանկանալի միջոց, որով օգնութիւնը նպատակայարմար կեր-
պարանք է ստանում:

Տարուայ ընթացքում ճաշարանը աղքատանոցից փոխադրու-
եւել է Շրէյգէրի տունը, ուր զետեղուած է Աշխատանքի Տու-
նը, Ճաշարանից ամենայն օր ճաշ է բաց թողնուում Աշխատան-
քի Տան աշխատողներին, ոմանց ձրի, ոմանց աժան գնով: Բա-
ցի դրանից ձրի ճաշ է տրվում և ճաշարանից դուրս շատ չքա-
ւոր ընտանիքներին:

Առաւել օգտակար և նպատակայարմար դարձնելու համար
ճաշով հասցրած օգնութիւնը, վարչութիւնը անհրաժեշտ է հա-
մարում ճաշարանի մի բաժանմունք բաց անել Շամախի կոչուած
թաղում, ուր կան բազմաթիւ կարօտ ընտանիքներ, որոնց
ճաշարանը մեծ ծառայութիւն կարող էր մատուցանել:

Ձրի և էժանագին բնակարանների վերաբերեալ, որոնց պա-
հանջը նոյնպէս անհրաժեշտութիւն է ներկայացնում՝ շատ-շա-
տերին ազատելու համար խոնաւ, մութ և հակաառողջապահա-
կան բնակարանների քայքայիչ աղդեցութիւնից, վարչութիւնը,
համաձայն վերջին ընդհանուր ժողովի որոշման, դիմել է Բագուի
քաղաքային վարչութեանը, խնդրելով որ տայ մէկ հողաբաժին
կապալով, այդտեղ շինելու է էժանագին և ձրի բնակարաններ
չքաւոր հայերի համար յանուն հանգուցեալ Գրիգոր Թումա-
նեանի, որի յիշատակի համար այդ նպատակով ժառանգնե-
րը նուիրել են երեսուն հազար ռուբլի: Մինչև այդ հողաբաժ-
նի ձեռք բերելը—քաղաքային վարչութիւնը հաղորդում է, թէ

նորին Պայծառափալլ Իշխան կարավարչապետը արդէն թոյլատրել է յատկացնել Մարդասիրական Ընկերութեան ձրիաբար № 238 հողաբաժինը նոյն այդ նպատակի համար—համաձայն Բազուի դումայի 1900 թ. յունիսի 6-ին կայացրած որոշման: Այդ հողաբաժինը 1400 քառ. սաժ. տարածութեամբ արդէն ձևակերպուած և ձեռք է բերուած. իսկ շինութեան նախագիծը ներկայումս մշակուած է մասնագէտ տեխնիկներից կազմուած մասնաժողովից, այնպէս որ ամենայն հաւանականութեամբ պէտք է յուսալ, որ շատ մօտիկ ապագայում ընկերութիւնը կը ձեռնարկէ շինութեան:

Բժշկական օգնութեան գործը կանոնաւորելու և լուրջ կերպարանք տալու համար—վարչութիւնը կազմել է խառն ժողով վարչութեան անդամներից և Բազուի հայ բժիշկներից: Ժողովը ընտրում է մասնաժողով՝ խնդիրը մանրամասն մշակելու համար: Մասնաժողովը աչքի առաջ ունենալով տեղական հանգամանքները և պահանջը գալիս է այն եղբակացութեան, թէ անհրաժեշտ է հիմնարկել ընկերութեան ձեռնարկութիւններին կից փոքրիկ հիւանդանոց 15 մահճակալով, որտեղ բժիշկները իրանք պատրաստականութիւն են յայտնում մշտապէս հերթապահութիւն ունենալ ձրիաբար և ընդունել հիւանդներ: Յարմար բնակարան չունենալու պատճառով վարչութիւնը սեպհական հիւանդանոց ունենալու միտքը առ այժմ թողնում է, որոշելով ընկերութեանը դիմող հիւանդներին ուղարկել բժիշկների մօտ, իսկ ծանր հիւանդներին բժշկական օգնութիւն հասցնել տներում: այդ նպատակի համար տրուած է ձրի բժշկելու ցանկութիւն յայտնող բժշկներին տասնական ուրբի կառքի փող, որ կարևոր դէպքում այցելեն տները՝ չքաւոր հիւանդներին բժշկելու համար:

Իսկ Աշխատանքի Տան աշխատողների և ճաշարանում ճաշողների համար յատկացրուած է նոյն Աշխատանքի Տանը երկու սենեակ, որպէս ժամանակաւոր հիւանդանոց—սկզբնական օգնութիւն հասցնելու համար:

Աշխատանքի Տունը իրապէս բացուեց 15-ին յուլիսի 1901 թուի: Աշխատանքի Տան գործերի անմիջական վերահսկողութեան համար վարչութիւնը կազմակերպեց մի առանձին յանձնաժողով, որի մէջ մտան վարչութեան նախագահ պ. Յարութիւնեան, վարչութեան անդամ տիկ. Ե. Սարգսեան և վարչութեան կողմից հրաւիրուած ընկերութեան անդամներից տիկիններ. Ե. Կրասիլնիկեան, Ե. Իւղբաչեան, Ա. Ղուկեան, Մ. Յարութիւնեան, Ն. Սարումեան, Մ. Արեշեան, և պ.պ. Ա. Սեբերեանեան, Մ. Բոստոմեան և Հ. Տէր-Միքայէլեան. վերջին

երկուսը Աշխատանքի Տան բացելուց փոքր ինչ յետոյ դադարեցին գործերի մէջ մասնակցելուց: Բայի վերոյիշեալ անձերից Աշխատանքի Տան գործերի մէջ մօտ մասնակցութիւն ունէր և վարչութեան անդամ պ. Ա. Քալանթարը:

Աշխատանքի Տան անմիջական կառավարութեան և յանձնաժողովի որոշումները ի կատար ածելու համար Աշխատանքի Տան կառավարիչ նշանակուեց պ. Սարգսեան, իսկ կանանց բաժնում տեխնիքական մասի հսկողութիւնը յանձնուեց տ. Քալանթարեանին: 1901 թուի Յուլիսի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ը յանձնաժողովը ունեցել է 19 նիստ: Մանրամասն քննութեան առնելով բազմաթիւ առաջարկութիւններ զանազան տեսակ աշխատանքների մասին, յանձնաժողովը վճռեց սկզբում մտնել հետեւեալ աշխատանքները. տղամարդկանց բաժնում. կեղտոտած պակլեա հաւաքելը, մաքրելը և քրքրելը, հիւանդութիւն. կանանց բաժնում—զանազան տեսակի կար, վերմակներ պատրաստելը, երեխաների բաժնում—արկղիկներ, տոպրակներ և այլ իրեղէններ պատրաստելը: 1901 թուի յունի 22-ին բացուեցին կանանց և երեխաների բաժանմունքները և սկսուեց բանուորների ընդունելութիւնը: Սկզբում գործի համար Աշխատանքի Տունը դիմողների թիւը մեծ չէր, մի հանգամանք, որը բացատրուում է ի միջի այլոց նրանով, որ Աշխատանքի Տունը նոր և անծանօթ հիմնարկութիւն է, ազնիւ աշխատանքի կարեւորութեան գիտակցութիւնը բաւականաչափ զարգացած չէ այն անձանց մէջ, որոնց համար գլխաւորապէս նշանակուած է Աշխատանքի Տունը, և այդ պատճառով աղքատների մի մասը ազնիւ աշխատանքին գերադասում է ողորմութիւն խնդրելը:

Բայց չնորհիւ թէ այն հանգամանքի, որ ոստիկանութիւնը սկսեց արգելել փողոցներում ողորմութիւն խնդրելը, և թէ նրան, որ գործադատներում և նախաձեռններում բազմաթիւ մշակներ ճգնաժամի պատճառով զրկուեցին իրանց գործերից՝ բանուորների թիւը սկսեց ստուարանալ:

Աշխատանքի Տան մէջ ընդունւում էին երկու սեւի անձինք 7 տարեկանից մինչև 75—80, ընդունւում էին ոչ միայն աշխատելու ընդունակները, այլ և այս կամ այն ֆիզիկական արատ ունեցողները, որոնց նոյնպէս տրւում էր աշխատանք իրանց ոյժերի և ընդունակութիւնների համեմատ: Աշխատանքի Տան բացելու օրից մինչև 1902 թուի յունուարի 1-ը եղել են աշխատողներ. կանանց բաժնում 121 հոգի, որոնք բանել են 1350 օր. տղամարդկանց բաժնում 60 հոգի, որոնք բանել են 916 օր. մանկանց բաժնում 169 հոգի, որոնք բանել են 2536 օր: Այսպիսով ընդամենը եղել են 356 հոգի, որոնք բանել են

4623 օր: Այդ թվում տղամարդիկ կաղմում են 18,50/0, կանայք 340/0, իսկ երեխաները 47,50/0:

Աշխատանքի Տունը մտնողների թվում առանձին ուշադրութեան արժանի են դեռահասները (подростки): Դրանք իրանց անցողական հասակի շնորհիւ հնարաւորութիւն չունենալով աշակերտութեան մտնել կամ օրուայ աշխատանքով պարապել՝ ուրիշ բանուորների նման դատապարտուած են անգործ կեանք վարելու: Յանձնաժողովը, ընդունելով դրանց Աշխատանքի Տան մէջ, առանձին խումբ կազմեց, և դրանք հմուտ վարպետների ղեկավարութեամբ սովորում են կազմարարութիւն, հիւսնութիւն և չեմօդաններ շինելու արհեստը: Ըստ դասակարգի բանուորներին կարելի է բաժանել հետևեալ կերպով. գիւղացիները կազմում են 500/0, արհեստաւորները 180/0, այլ դասակարգեր 320/0. Ընտանեկան դրութեան համեմատ, ամուսնացած կանայք 30,30/0, այրիներ 41,50/0, և աղջիկներ 28,20/0. Ըստ պարապմունքների՝ 1 երկաթագործ, 1 ձուլիչ, 1 ներկարար, 1 դերձակ, 1 խոհարար, 1 ոսկերիչ, 8 գիւղացիք, մնացածները առանց որոշ պարապմունքի:

Տղամարդկանց համար Աշխատանքի Տունը ժամանակաւոր ապաստարանի դեր է կատարում, որովհետև հէնց որ նրանց յաջողում է մի մշտական և աւելի ապահով գործ գտնել, նրանք թողնում են Աշխատանքի Տունը և հեռանում:

Պարապմունքները Աշխատանքի Տան մէջ սկսում են. առաջը առաւօտեան ժամի 6-ից և չարունակւում մինչև երեկոյեան ժամի 6-ը, իսկ ձմեռը ժամի 7-ից մինչև երեկոյեան 5-ը: Պարապմունքները ընդհատուում են 8-ից մինչև 8¹/₂ առաւօտեան թէյի համար և 12-ից մինչև 1¹/₂ ճաշի և հանգստանալու համար: Առաւօտեան թէյը հացի հետ Աշխատանքի Տան մէջ բանողներին բոլորին էլ տրւում է ձրիաբար, իսկ ճաշը տալիս են Մարդասիրական Ընկերութեան ձրի ճաշարանից, որը գտնւում է Աշխատանքի Տան շինութեան մէջ, ըստ որում երեխաները ստանում են ճաշ ձրիաբար, իսկ մեծերը նոյեմբերի մէկից սկսած էժան դնով, վճարելով ճաշի համար 5 կոպէկ: Առաջին չորս ամիսները բոլոր աշխատողները ստանում էին ձրի ճաշ, որովհետև նրանց օրուայ վաստակը շատ քիչ էր:

Հաշուետարուայ ընթացքում Աշխատանքի Տան մէջ գործադրւում էին հետևեալ պարապմունքները.

Կանանց բաժնում. 1) Պատրաստւում էին մեծ քանակութեամբ ամենայն տեսակի հագուստեղէն բանուոր դասի համար, ընդամենը 2831 կտոր. 2) ընդունւում էին սպիտակեղէնի պատուէրներ զանազան հիմնարկութիւններից, ինչպէս. 1. Նաւթ-

արդիւնաբերողների խորհրդի Բալխանիի հիւանդանոցից, 2. Միքայէլեան հիւանդանոցից, 3. Երեխաների հոգատարութեան ընկերութիւնից (3135 կտոր): 3. Ընդունւում էին պատուէրներ մասնաւոր անձերից (112 կտոր), ընդամենը պատրաստուած է 7078 կտոր զանազան հագուստեղէն և սպիտակեղէն: Ինչ վերաբերում է աշխատող կանանց վարձատրութեանը, այդ ամբողջ աշխատանքի համար նրանք ստացել են 535 ռ. 12 կ. և ճաշեր, ինչպէս վերև յիշած էր: Միջին թուով զուտ օրավարձը կազմում է 36,3 կոպ., այն ինչ նա տատանւում էր 10—50 կոպէկի մէջ:

Տղամարդկանց բաժնում պարապում էին պակշեա լուսլով և մաքրելով. աշխատանքի համար վարձ տրուած է 386 ռ. 90 կ.: Օրավարձը տատանւում էր 15—35 մէջ:

Երեխաների բաժնում պարապում էին պատրաստելով կարտօնից արկղիկներ (коробки), թղթէ տոպրակներ և օղակներ խանութների համար: Երեխաները պատրաստել են 39¹/₂ փութ տոպրակներ, 1142 կօրօրկաններ և 14 հազար օղակներ (ручки): Վարձատրութիւն տրուած է երեխաներին 338 ռ. 50 կ. նրանց միջին օրավարձը հաւասար է 10 կ., իսկ սովորաբար տատանւում է 2 կ. և 30 կ. մէջ: Բոլոր բաժանմունքներում պատրաստուած ապրանքների մեծ մասը ժամանակի ընթացքում վաճառուել է:

Դեկտեմբերի երկրորդ կիսին մտցրած են նոր արհեստներ. կազմարարութիւն, չեմօզան շինելու արհեստը, հիւանութիւն և ձկնորսական ուռկաններ գործելը. սկիզբ է դրուած և ձուլելու արհեստին:

Յանձնաժողովը ապրանքներ պատրաստելով՝ միևնոյն ժամանակը հոգ էր տանում և նրանց վաճառելու մասին: Այդ նըպատակով կազմակերպուած էր կիւրակի օրերը վաճառումը Բագուում Սօլդատսկի բազարում, իսկ ուրբաթ օրերը Բալխանում: Դրանից դուրս միջոցներ էին ձեռնարկւում և Բագուից դուրս ապրանք տարածելու համար: Այսպէս, իբրև փորձ, պատրաստի չորեր և սպիտակեղէն ուղարկելու են Թիֆլիզ, Ջեվադի գաւառը պ. Մայիլեանի ձկնորսարանները և Ղուբայի գաւառը, որտեղ կան առևտրական-գործարանական ձեռնարկութիւններ, ուրեմն յայտնի թուով բանուորներու Հանքերում և գործարաններում ապրանքների վաճառման փորձը հիմք է տալիս կարծելու, որ նրանք կարող են ծառայել շատ նպատակայարմար հրապարակներ բանուորների հագուստեղէն, սպիտակեղէն և տեղաշոր վաճառելու համար:

Ապրանքների յաջող վաճառմանը արգելք էր հանդիսու-

նում որոշ չափով այն հանգամանքը, որ Աշխատանքի Տունը և նրա գործերը զեռ ծանօթ չեն հասարակութեանը:

Աշխատանքի Տան վրայ եղած ծախսերը.

Բնակարանի վարձ կէս տարուայ	800	ռ.
Գործիքներ, կահկարասիք, կարի մեքենաներ	575	» 55 կ.
Վարչական ծախք (ռոճ. կառավարչի, դռնապանին)	512	» 97 »
Լուսավորութիւն, վառելիքայտ և մանր նորոգութիւններ	232	» 5 »

Ծախսեր կարի բաժանմունքում.

Ջանադան տեսակ կտորների	1,667	ռ. 61 կ.
Աստառի համար	287	» 67 »
Աշխատողների վարձատրութիւն	575	» 55 »
		6,530 ռ. 83 կ.

Պակեանքի բաժանմունք.

Սօղա	56	ռ. 98 կ.
Պօռաչ և պակեա բերելու	53	» —
Աշխատանքի վարձ	222	» 58 »
		337 ռ. 56 կ.

Մանկանց բաժանմունքի ծախս.

Թուղթ և կարտօն	245	ռ. 91 կ.
Աշխատողների վարձ	338	» 50 »
Ծախքեր չեմօդանի, հիւանդութեան և կաղմարարական բաժանմունքներում	150	» 01 »
Առաւօտեան թէյ և հաց	57	» 31 »
		Ընդամենը . 5,890 ռ. 77 կ.

Աշխատանքի տան մուտք.

Ստացուած է պատրաստի հագուստ վաճառելուց	358	ռ. 52 կ.
» պակեայի	32	» — »
» օղակների	25	» 08 »
» թղթէ տոպրակների	41	» 80 »
» կարտօնի արկղիկների	9	» — »
» սպիտակեղէնի պատուէրը կատարելու համար	406	» 17 »
		Ընդամենը . 872 ռ. 57 կ.

Քանի որ Աշխատանքի Տունը նոր հիմնարկութիւն է, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ չի կարելի նրա գործունէութեան

Թիւնը խիստ քննադատութեան ենթարկելու Բայց և այնպէս, ի նկատի առնելով այն արդիւնքները, որոնց յաջողուել է հասնել այդ հիմնարկութեան կարծատն զոյութեան ընթացքում, կարելի է լիայոյս լինել, որ Աշխատանքի Տունը շնորհիւ վարիչների եռանդուն ջանքերի և հասարակութեան համակրութեան, քաղաքիս չքաւոր և անգործ զաւակարգի համար կը հանդիսանայ մի բարերար հիմնարկութիւն թէ բարոյական-կրթական և թէ բուն նիւթական տեսակէտից:

Ի վերջոյ Վարչութիւնը իր պարտքն է համարում շնորհակալութիւն յայտնել այն բոլոր անձանց, որոնք Վարչութեան հրաւերով ստանձնել էին Մասնաժողովի անդամների պարտականութիւնները:

Ճ ա ռ ա ր ա ն .

Արդիւնաբերական այնպիսի կենտրոնում, ինչպիսին ներկայանում է Բագուն, դէպի ուր ձգտում են գաւառներից հաղարաւոր անհոգ, անվաստակ մարդիկ, ամեն մէկը մտածում է օգնել մուրացկանութեան դռան մօտեցող թշուառին, բարեկաւել նրա վիճակը:

Այս գրամական տաղնապին բարեգործական ընկերութիւնները աւելի ուժեղ են լարում իրանց ճիգերը, թոյլ չը տալու ծարայեղ աղքատանալուն և հասարակական ներկայ կազմի քայքայման:

Մարդասիրական Ընկերութիւնը իր համեստ քայլը ուղղեց աղքատին տաք կերակրով և հացով օգնելու կողմը:

Ընկերութիւնը անցեալ տարուանից բացել է ճաշարան, որ առաջ դանւում էր եկեղեցւոյատեան Աղքատանոցին կից, իսկ այժմս Ընկերութեան Աշխատանքի Տան բնակարանում: Գաշարանում 1901 թուին բաժանուած է 54,318 ճաշ, միջին թուով օրական 151 ճաշ:

Գաշարանը ղեկավարւում է կանանցից և օրիորդներից կազմուած մասնաժողովի աջակցութեամբ, յանձին տիկնանց՝ Թ. Կաճկաճեանի, Ս. Արտեմեանի Ե. Իւղըաշեանի, Մ. Նաբաթեանի, Եղ. Նաբաթեանի, Մ. Յարութիւնեանի, Օր. Ե. Բէկ-Յովսէփեանի, Աշ. Գրիգորեանի, Թ. Մամիկոնեանի, Մ. Սահակեանի, Նատ. Սարումեանի և Ա. Փուղլինեանի: Մասնաժողովի նախագահ ընտրուած է տ. Թամար Կաճկաճեան, իսկ քարտուղար և գանձապահ տ. Սաթենիկ Արտեմեան: Վարչութեանս կողմից իբր ներկայացուցիչ անմիջական մասնակցել է պ. Անուշ. Բալանթարը:

Տարուայ սկզբից մասնաժողովը հերթապահութիւն նշա-

նակելով, իր վրայ առած պարտականութիւնը կատարել է բարեխղճութեամբ:

Ճաշարանի վրայ մսխուել է այս 1901 թ. 4488 ո. 47 կ. որից 820 ո. 44 կ. ստացուած են թաթախման և հոգեհացերի համար:—Ընկերութեան գանձարանից մսխուած է եկուոր և Աշխատանքի Տան 49,424 ճաշողների վրայ 3,668 ո. 03 կ. 1 ճաշը նստում է Ընկերութեանը 7,6 կոպ.—հաշուելով դրա մէջ բոլոր ծախքերը, ծառայողների ոռճիկը, վառելիքը, ջուրը և այլն:

Ճաշ ասելով հասկացվում է $\frac{1}{3}$ ֆ. միս և 1 ֆ. հաց, աւելացրած մնացած անհրաժեշտ համեմունքներ:

Ճաշարանից օգտուել են զործի անընդունակ, հիւանդ, յետին աղքատ և անպաշտօն մնացած մարդիկ, թէ մեծ, թէ փոքր, թէ կին և թէ տղամարդ:

Հասարակութեան զգայուն մասը համակրանքով վերաբերուելով Ընկերութեան ձեռնարկութեանը, բերել է իր յօժարակամ նուէրները՝ թէ փողով և թէ մթերքով:

Այս մթերքները զգալի կերպով աժանացնելով ճաշադիրներ, թեթեւութիւն են հղել Ընկերութեան գանձարանի համար, առանց որի նօրմալ ճաշագին պիտի հաշուել 8,2 կ., որը ի նկատի է առնուում Ընկերութեան նախահաշիւը կազմելու ժամանակ:

Շնորհակալութեան արժանի են Բագուայ բոլոր հայ բժիշկները, իսկ առաւելապէս բժ. բժ. Սարգսեան, Օհանեան, և Արամեան, որ չեն խնայել իրանց ջանքը և ժամանակը օգնութիւն հասնելու ճաշարանի աղքատ հիւանդներին:

Գ ր ա դ ա ր ա ն .

Առ 1-ն յունուարի 1902 թ. մայր մատեանի մէջ նշանակուած է գրադարանի գոյքը հետեւեալ կերպով.

Ընդամենը 8,756 անուն կամ 13,639 հատոր—22,537 ո. 08 կ., որից՝ Հայերէն գրքեր—2,454 հ.— 2,826 ո. 41 կ.
 Ռուսերէն » — 7,425 հ.— 12,375 » 81 »
 Օտար լեզ. » — 49 հ.— 104 » 14 »

Իսկ ամսագիրներ և շաբաթաթերթեր՝

Հայերէն	378 հ.—	1,725 ո. 22 կ.
Ռուսերէն	3,204 հ.—	5,346 » 70 »
Օտար լեզ.	129 հ.—	158 » 80 »
	13,639 հ.	22,537 ո. 08 կ.

Գրադարանի վիճակագրությունը.

Հաշուետվածության տարեշրջանում գրադարանը ունեցել է, բացի նախորդ տարիների բաժանորդներից, ընդամենը 1,013 նոր բաժանորդ, որոնցից տղամարդ 764.

կին . . . 249.

Իսկ ըստ ազգություն՝ Ռուս . . . 396.

Հայ . . . 368.

Այլազգի . . . 249.

1901 թ. ընթացքում գրադարանից բաց է թողնուած ընդամենը 26,158 գիրք, որից 21,896 ուսերէն և 2,262 հայերէն:

Ռուսաց բաժնից.

I. Աստուածաբանական	.	38
II. Փիլիսոփայական	.	457
III. Տնտեսական և այլն	.	193
IV. Պատմ. աշխարհագր.	.	816
V. Բնագիտական	.	304
VI. Բեղերիստիկա	.	17,938
VII. Ամսագիրներ	.	2,074
VIII. Կովկասագիտութիւն	.	41
IX. Տեղեկագիր	.	2

Հայոց բաժնից.

Ա. Աստուածաբանական	.	7
Բ. Փիլիսոփայական	.	31
Գ. Պատմական աշխարհ.	.	184
Դ. Տնտեսական	.	18
Ե. Բնագիտական	.	55
Զ. Գեղեցիկ դպրութիւն	.	1,863
Է. Ամսագիրներ	.	103
Ը. Տեղեկագիր	.	1

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ֆրանս-ուսական համաձայնութիւնը Հեռաւոր Արեւելքում.—Մերձաւոր Արեւելքի վիճակը վերջին քսանհինգամեակում.—Ընդհանուր ընտրողական պաշարը Ֆրանսիայում.—Թ. Կլեմանսօն՝ Մերակոյտի անդամ.—Ընդհանուր և հաւասար ընտրողական իրաւունքի հարցը Բելգիայում:

Իբրև հակակշիռ անգլո-եապօնական համաձայնութեան յայտարարուեց Ֆրանս-ուսական համաձայնութիւնը, որ Հեռաւոր Արեւելքում նոյն նպատակը ունի, ինչ և անգլո-եապօնականը: Այդ համաձայնութիւնների չնորհիւ իրերի դրութիւնը, status quo-ն, Հեռաւոր Արեւելքում, այսինքն՝ Զինաստանի «ամբողջութիւնը» և «բաց դռների» քաղաքականութիւնը, ապահովւում են:

Քսան և հինգ տարի առաջ էլ Թիւրքիայի «ամբողջութիւնն» էին ապահովում Բերլինում ժողոված մեծ պետութիւնների ներկայացուցիչները, բայց այդ չը խանգարեց Արեւելեան Ռումելիային միանալ Բուլղարիայի հետ, Կրետէին անջատել Թիւրքիայից, Բօսնա-Հերցեգովինային դարձնել Աւստրո-Ունգարիայի նահանգներից մէկը, Կիպրոսը՝ Անգլիայի գաղութը: Եւ դեռ յայտնի չէ թէ ինչով կը վերջանայ Թիւրքիայի «ամբողջութիւնը» պահպանելու հարցը, եթէ Մակեդոնիան և Ալբանիան շարունակուեն «կառավարուել» օսմանեան անիրաւութեան ձեռքով:

Եթէ անցեալ դարերի դասերը մոռացուել են, պէտք է դէթ վերջին ոուս-թրքական պատերազմի քսանհինգամեակի պատճառով Եւրոպան լուրջ քննէր Թիւրքիայում status-quo-ի պահպանութեան խեղացիութիւնը, էլ չենք ասում արդարութիւնը...

Աւստրո-ուսական համաձայնութիւնը բալկանեան քաղաքականութեան նկատմամբ պէտք է որ մտածել տար սուլթա-

նին—պահանջուած և խոստացուած բեֆօրմները վերջապէս մոյ՞նել գոնէ իր եւրոպական նահանգներում: Բայց եղև է արդեօք մազաչափ բարեփոխութիւն Մակեդոնիայում և Ալբանիայում: Ել չենք խօսում իսպառ քայքայուած ասիական նահանգների մասին: Եթէ մէկը բան չտեսց իրերի այդ խայտառակ դրութիւնը անփոփոխ պահելուց—այդ մի քանի մեծ պետութիւններն էին և խոշոր կապիտալիստները, բայց ոչ Թիւրքիայի հպատակները...

Կար մի մօմենտ, երբ Եւրոպան կարող էր Թիւրքիայի քրիստոնեաների նկատմամբ այն դերը կատարել, ինչ որ իրագործեց Ալէքսանդր Երկրորդը: Սասունի կոտորածից յետոյ, մանաւանդ Անգլիան և Ֆրանսիան, տրամադրուած էին շատ բան անել, բայց երբ հարցը վճռական քայլին հասաւ, Սօլսբրին ցաւելով յայտնեց թէ բրիտանական նաւատորմից անկարող է լեռներով արշաւել, իսկ Ֆրանսիան խոհեմութիւն համարեց համակերպուել հանգամանքներին, «անգործնական» համարելով հետեւել հանրապետութիւնը ստեղծող մեծ յեղափոխութեան սկզբունքներին, որոնք բղխում էին «մարդկային անբռնաբարելի իրաւունքների» գաղափարներից: Օպպօրտիւնիզմը այդ ժամանակ իր յաղթութիւնն էր տօնում Ֆրանսիայում: Բնորոշ է որ արմատական գաղափարների անվահեր պաշտպաններից մէկը, մեծ յեղափոխութեան ոգին իր մէջ կրող Ժօրժ Կլեմանսօն, այդ ժամանակ պատգամաւորների ժողովի անդամ չէր ընտրուած և նրա ահարկու, չանթահարող խօսքերը չէին լսում ֆրանսիական պարլամենտում: «մինիստրների» հռչակաւոր «տապալողը» (tombeur des ministères) հեռացած էր քաղաքական ասպարէզից և լոկ մամուլի մէջ, իր գրչի ոյժով, պէտք է շարունակէր մաքսուել ոտնակոխ արուած արդարութեան համար, լինէր այդ ֆրանսիացու, հայի, կրետացու, թէ մի հրէայ Դրէյֆուսի նկատմամբ...

Սակայն մենք առաջներում տեսանք թէ նոյն իսկ աւելի առաջադէմ վերջին ֆրանսիական մինիստրութիւնը, Վալդեկ-Բուսսօյի կաբինետը, ինչ դիրք բռնեց ֆրանս-թրքական ընդհարման մէջ:

Տեսնենք ինչ կը լինի մօտ ապագայում:

Այժմ Ֆրանսիան ընդհանուր ընտրողական պայքարի մէջ է: պէտք է ամբողջապէս նորոգուի պատգամաւորական ժողովը և, հետեւաբար, մինիստրութիւնը: 39 միլիօն ֆրանսիացիներից 11,216,757 հոգի ընտրողական ձայն են վայելում: Ապրիլի 14-ին տուած ձայների ընդհանուր թիւը միայն 8,863,727 էր:

Այդ թուից հալամինիստրական կուսակցութեան թեկնածուները (գրանց մէջ և անհաշտ սօցիալիստներ կամ դեդիստներ 144,738 ձայնը) ընդհանուր առմամբ ստացան 3,352,895 ձայն, իսկ մինիստրութեան բարեացակամ թեկնածուները ստացան 5,198,193 ձայն: Այդ վերջին թուից 2,029,874 պատկանում են չափաւոր հանրապետականներին, իսկ մնացածը՝ ձախակողմեան աւելի ծայրայեղ կուսակցութիւններին: Այդպիսով արմատականները և սօցիալիստները բաւական պատկառելի թիւ են կազմում ներկայ Ֆրանսիայում:

Արմատականների ամենաաչքի ընկնող պարագլուխ Ժօրժ Կլեմանսօն այս անգամ էլ չի ընտրուի պատգամաւորների ժողովում, որովհետեւ նա նորերս ընտրուեց ֆրանսիական Ծերակոյտի, (սենատ) անգամ: Ութ տարի քաղաքական ասպարէզից հեռացած, դեմօկրատիական վսեմ դադափարների այդ անշեղ պաշտպանը կրկին սկսում է իր քաղաքական գործունէութիւնը, բայց նոր պայմաններում: Հետաքրքրական է այդ առիթով հռչակաւոր Ժօրէսի ասածները.—«Երբ Կլեմանսօն յայտնեց իր բարեկամներին Ծերակոյտում դրած իր թեկնածութեան մասին,—դրում է Ժօրէսը մի թերթում,—նա աւելացրեց Ժպտալով. «Գէթ այնտեղ ես չեմ տապալի մինիստրներին»: Դրա մէջ չի կարելի վստահ լինել, որովհետեւ Ծերակոյտի զիրքը առանց ազդեցութեան չէ մնում մինիստրութիւնների երկարատեւութեան վրայ: Անտարակոյս է, որ Կլեմանսօն Ծերակոյտում կը գտնի իր գործունէութեան համար այլ պայմաններ և ձեւեր, քան պատգամաւորների պալատում: Չը նայած իր բոլոր հանրապետականութեան Ծերակոյտը բռնուած է դաւալի մտաւախութեամբ այն ամենի նկատմամբ, ինչ վերաբերում է քանուորական օրէնսդրութեան. չափազանց յաճախ իրաւաբանական ձեւակաւութիւնը Ծերակոյտի մէջ միանում է բուրժուազական պահպանողականութեան հետ, նպատակ դնելով՝ ձգձգել աշխատանքի պահպանութեան և կազմակերպութեան համար անհրաժեշտ օրէնքները: Այդ անշարժութիւնը կորստաբեր է, և ֆրանսիական դեմօկրատիան չի կարող յուսալ անընդհատ առաջադիմութեան, մինչև որ Ծերակոյտը չի սկսի ընթանալ հասարակական օրէնսդրութեան ճանապարհով: Կլեմանսօն կը մատուցանի երկրին անչափելի ծառայութիւն, եթէ իր խօսքի և իր լայն գադափարների ոյժով կը յարուցանի Ծերակոյտի մեծամասնութեան մէջ նրա քաղաքական և սօցիալական պատասխանատուութեան գիտակցութիւնը»:

Եւ եթէ մենք յիշենք Կլեմանսօնի անցեալը, նրա՝ «Ազա-

տութիւն, կատարեալ ազատութիւն բոլորի համար, թէ բարեկամների և թէ թշնամիների»։ Դեպիզը և նրա այս նշանաւոր խօսքերը Դրէյֆուսական շարժման ժամանակ, թէ «Ես պահանջում եմ նրա համար արդարութիւն, արդարութիւն, ինչ գնով և լինի, թէկուզ զբանից կործանուի աշխարհը», մենք կը տեսնենք որ ֆրանսիական սենատը այսուհետեւ առանձին հետաքրքրութիւն պէտք է ներկայացնի...

Մինչ Ֆրանսիայում ընտրողական իրաւունքը վաղուց իր այժմեան լուծումն է ստացել, նրա հարեան Բելգիայում ահա 40 տարի է չի վերջանում իշխող կղերական կուսակցութեան ընդգիմադրութիւնը՝ ազատականների արդարացի պահանջներին ընդհանուր և հաւասար ընտրողական սկզբունքի նկատմամբ։ Ժիշտ է, 1893 թուականին (տես Սենեորօս), Բրիւսելի փողոցներում տեղի ունեցած խռնոր սակարգութիւններից յետոյ, ընդունուեց այժմ գործադրուող ընտրողական օրէնքը, որ աւելի ընդարձակում է ընտրողների թիւը, սակայն այդ օրէնքով մտցրուած էր յոգնակի ձայնաւութեան (vote plurale) սխաւմը, որ հակասում է հաւասարութեան գաղափարին։ Այդ օրէնքով իւրաքանչիւր բելգիացի տղամարդ, որ ունի 25 տարեկան հասակ և մի տարուց պակաս չէ ապրել միեւնոյն համայնքում, վայելում է մի ձայն։ Բայց ընտանիքի իւրաքանչիւր գլուխ, որ տարեկան վճարում է ուղղակի տուրք ոչ պակաս 5 ֆրանկից և այն ընտրողները, որոնք ունեն 2 հազար ֆրանկից աւելի կարողութիւն՝ ստանում են և մի-մի լրացուցիչ ձայն։ Իսկ այն անձինք, որոնք ունեն միջնակարգ և բարձրագոյն դպրոցների—պետական և մասնաւոր—վկայականներ կամ որոնք այնպիսի պետական պաշտօններում են, ուր ենթադրում է համապատասխան կրթական ցենզ, ունեն 2 լրացուցիչ ձայնի իրաւունք։ Այնպէս որ մի անձ կարող է ունենալ մինչև 3 ձայն։ Եթէ ի նկատի ունենանք որ Բելգիայում հոգեւորականութիւնը իր ձեռքում ունի բազմաթիւ դպրոցներ, որ այժմեան կառավարութիւնը կղերականների ձեռքում է, որ ունեւոր դասակարգերը միշտ արմատական ծրագրների հակառակ են—հասկանալի կը լինի թէ ինչո՞ւ այժմեան, կղերական մինիստրութիւնը ուզում է պահպանած լինի 1893 թուականի օրէնքը անփոփոխ... Ժողովրդի մեծամասնութիւնը, ի հարկէ, պահանջում է ընդհանուր և հաւասար ընտրողական իրաւունք։ Բրիւսելում նոյն իսկ տեղի ունեցան արիւնահեղ ընդհարումներ ժողովրդի և պօլիցիայի մէջ։ Թագաւորը, ինչպէս երեւում է, մինիստրութեան կողմնակից է։ Այդպիսով կղերականները Բելգիայում այժմ այն-

պիսի դեր են կատարում, որ կարելի է կրկնել նրանց նկատմամբ Լէօն Գամբետայի խօսքերը. «Le clericalisme, voilà l'ennemi»: Ի հարկէ, կղերականներն էլ պատասխանում են զրան. «L'ennemi est à gauche». (Թշնամին ձախակողմումն է), այսինքն վտանգը՝ ազատամտութեան մէջ է...

Լ. Ս.

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ց

Ծ Խ Ա Խ Ո Տ

Ն Ր Ա Վ Ն Ա Ս Ն Ե Ր Ը Ե Ի Օ Գ Ո Ի Տ Ն Ե Ր Ը

Շատեր ծխախոտի վնասների մասին խօսելիս, չափազանցութեան են դիմում և նրա վնասները համեմատում են ալկոլի յառաջացրած վնասների հետ: Այս չափ սխալ է. ճիշտ է, որ ծխախոտի չափազանց գործածութիւնը անհատին վնասներ տալիս է, սակայն այդ վնասները չէ կարելի համեմատել ալկոլի պատճառած վնասների հետ, որովհետեւ, ինչպէս յայտնեցինք, ծխախոտի վնասակար հետեանքը տեսնուում է միմիայն անհատին վրայ, ալկոլի նման սերունդների վրայ չէ ազդում, նա չէ մղում մարդասպանութեան, յիմարութեան, թշուառութեան, բարոյական անկման և քնաւորութեան ստորնայման: Վերջապէս, ծխախոտը վնասում է ծխողին ֆիզիկականը միայն, ծխողը ուրիշներին չարիք չէ պատճառում. ծխախոտից առաջացած չարիքները մասնաւոր են, իսկ ալկոլից առաջացածները ընդհանուր, համայնական:

Ծխախոտի և ալկոլի մէջ մի ուրիշ տարբերութիւն էլ կայ. այն է, որ ծխախոտի չափաւոր գործածութիւնից վնասներ առաջ չեն գալիս, իսկ ալկոլի չափաւոր գործածութիւնից միշտ վնասներ առաջ գալիս են—ալկոլականութիւն...

Լաւ է, որ մարդս երբէք չը սովորի ծխել. բայց ծխողներին էլ խստիւ արգելելու չենք, միայն խրատելու ենք, որ չափաւորութիւնից չի հեռանան: 20-րդ դարում ապրող մարդը, քաղաքակրթուած մարդը՝ գոյութեան կռուում՝ տենդային գործնէութեան հետեանքով լարուած և գրգռուած նեարդներ ունի, նեարդային այդ գրգռուած դրութիւնը կարող է ինքն ըստ ինքեան ծանր հետեանքներ առաջ բերել. ուստի պէտք ունի, կարիք է զգուծ մի այնպիսի բանի, որը կարողանայ հանդարտե-

ցնել և ամոքել այդ զրույթիւնը. և այդ մոքական ոյժը գտնուած է կաֆէի, թէյի, ծխախոտի, ալկոլի, մօրֆինի, աֆիոնի, և այլնի մէջ:

Ուրեմն, այս պարագայում, հարկաւոր է երկու չարիքնւորից փոքրագոյնը ընտրել, — այն է ընտրել կաֆէն, թէյը կամ ծխախոտը, և մերժել ալկոլը, մօրֆինը և աֆիոնը, որոնց բացարձակ վնասները գիտնականօրէն և փորձառական կերպով հաստատուած են:

Ինչպէս «Մուրն» № 2-ում (էջ 242) գրուած էր, ծխախոտը սուսջին անգամ երևում է Սպանիայում. ծխախոտի բուն հայրենիքը հարաւային Ամերիկան է. երբոր ևսրոպացիք Ամերիկան գտան, հնդիկները (բնիկ) արդէն ծխախոտ գործ էին ածում: Կօրտէջ 1518 թուին ծխախոտի սերմեր ուղարկած է Կարոլոս հինգերորդին. Սպանիացիք առաջին անգամ ծխախոտը գտան Մէքսիքայի ծոցում Տաբազօ կոչուած կղզու վրայ, և եւրոպացիք այդ կղզու անունով մկրտեցին այդ բոցը՝ տաբակօ կամ տաբա: 1860 թուին Պօրտուգալի ֆրանսական ժան Նիկօտ դեպանի միջոցով Ֆրանսա ներմուծուեց, որտեղ մօլա գարածաւ Ֆրանսայի կաթէրին զը Մէդիչի թագուհու և ֆրանսական առաջիկայ ապետ Ֆրանսուա զը Լօրէնի շնորհիւ. այն ժամանակ ի պատիւ գտիչին Նիկոտիանա, դեպանի խոտ և ի պատիւ թագուհուն նուիրական կամ քաղուհու խոտ անուանեցին:

1624 թուին կարգինալ Բիշլիէօի նախարարութեան օրով ծխախոտի մշակութիւնը Ֆրանսա մտաւ և Լուի ԺԳ. բոլոր ղեղավաճառներին արտօնեց ծախել. իսկ ընդհակառակն Անգլիոյ ժակ Ա. թագաւորը 1604 թուին նրա գործածութիւնը իր երկրի սահմաններում արգելած էր, ծխախոտը զարչահոտ և անմաքուր համարելով: Եղիաքէթ թագուհին նրա մշակութիւնը արգելեց, յամառ ծխողների դէմ ծանր պատիժներ դրեց և վաճառողների գոյքերը տէրութեան գրաւեց: 1624 թուին Իւրէն Ը. պապը պաշտամունքի միջոցում քթախոտ քաշող քահանաներին բանադրեց: Պարսկաստանում հալածումը աւելի խիստ էր. Ամիրատ Դ. քթախոտ քաշողների քիթը և չրթունքները կտրում էր: 1674 թուին ֆրանսիական կառավարութիւնը արգելի հեռատես, մոտակեց ծխախոտի և կամուտը տէրութեան յատկացնել, նրա վաճառումը տէրութեան սեփականացնելով. այս մտածումը 1810 թուին մենաշնորհի (րէժի) սկզբնաւորութիւնն եղաւ, կառավարութեան տարեկան 25 միլիօն ֆրանկ հասոյթ գոյացնելով. ծխախոտը այսօր ֆրանսական գանձին տարեկան 400 միլիօն ֆրանկ զուտ հասոյթ է բերում:

Ծխախոտի մշակումը և վաճառումը բոլոր երկիրներում ազատ է, բացի Անգլիայից, որտեղ մշակումը արգելուած է, իսկ վաճառումը և պատրաստելը ազատ է:

Գրեթէ 50 տեսակ ծխախոտի տունկ կայ, սակայն զլխաւորաբար երկու տեսակներն են մշակում. առաջինը հասարակ տեսակն է, 60—90 սանտիմէտր բարձրութեամբ, հաւկթաձև, կոթնաւոր և ծայրը բութ տերևներով, որոնց գոյնը մութ կանաչ է և երկայնութիւնը 25—30 սանտիմէտր. ծաղիկները կանաչկեկ դեղին գոյնի են: Երկրորդ տեսակը աւելի աղնիւ և ընտիր է, 1—2 մէտր բարձրութեամբ, ունի երկայնաձև, ծայրը սուր և միւսից աւելի երկայն գեղեցիկ դեղնօրակ կանաչագոյն տերևներ, ծաղիկները մեծիակ և վարդագոյն են:

Ծխախոտը երեք կերպ են գործածում՝ ծամելով, քթախոտ քաշելով և ծխելով:

1.—Ծամել. — Ծխախոտի այս կերպ գործածութիւնը եւրոպացիների և արաբացիների մէջ ընդհանրացած է. ծխախոտի տերևների կտորները բերանում ծամելով ջուրը կուլ են տալիս, այս միջոցով են զգում և վայելում ծխախոտից ակնկալուած հաճոյքը: Ծխախոտի այս կերպ գործածութիւնը զինուորներին, մանաւանդ ծովային զինուորներին յատուկ է, սակայն նոյնպէս երեւելի անձնաւորութիւններ յամառ ծամողներ են հղած, Ստրազրուրգի պրոֆէսէօր Ֆօրժէն և հռչակաւոր Մալբուրգ ծամում էին. մի կին, եթէ կը հաճիք մի իշխանուհի՝ արուեստի և գիտութեան պաշտան Անգլիոյ Կարօլինը՝ ծխախոտը ծամելով մեծ հաճոյք էր զգում:

Ծխախոտը ծամելու անպատեհ վարժութիւնը բերնին մի խիստ անախորժ հոտ է տալիս, ատամները լինդերից բաժանում է, դեղնեցնում և փտտեցնում: Մարսիլիացի դօկտ. Փանտօնի հետ աւելացնենք նաև, որ ծխախոտ ծամելը բերնի և կոկորդի բորբոքում է պատճառում, այս բորբոքումը յաճախ նշագեղձի և քմբի թաղանթի վրայ է տարածուած, սրանք ուռչելով կարող են լսողութեան վնասել: Ծամելու չափազանցութիւնը աղիքի, բերնի, կոկորդի, աչքի և ականջի հիւանդութեանց պատճառ է դառնում:

2.—Քթախոտ. — Քթախոտը, ասում է պրոֆէսօր Գիւբլէր, քթի վրայ երկու կերպ զգայնութիւն է պատճառում, հոտառական և չօշափական. այս զգայնութիւնը քթի ներքին մասը ծածկող Շնայդերի թաղանթը գրգռելով, փունդաւոր և չափազանց խնկր յառաջ է բերում: Քթախոտը՝ քթի ծակերի մէջ մնալով, ապշութեան, քնասիրութեան և նոյն իսկ ամենածանր դէպքերի տեղիք է տալիս. քթախոտի վնասակարութիւնը աւե-

լի է շեշտուում, եթէ փոշին անցնում է կոկորդը և կուլ է տըր-
ւում: Փոքր չափով քաշուած քթախոտը՝ ուղեղը զրգռելով
մտային կարողութիւնը աւելի է փայլեցնում և սրում:

Քթախոտի գործածութիւնը մի անախորժ գարշահոտու-
թիւն է տալիս, գործածողները եթէ ընականից անմաքուր և
անհոգ լինեն, բացի զղուելի հոտից, մի անտանելի տեսք են
ունենում. այսու հանգերձ բազմաթիւ քթախոտ քաշողներ կան,
բաւականանաք միայն յիշելով Մեծն Ֆրիդէրիքը և Նապօլէօն
Առաջինը, որոնք քթախոտ քաշողներ էին:

3. — Ծխել. — Ծխելու սովորութիւնը աւելի է ընդհանրացած,
իսկ ծամելը պակասած է և քթախոտ քաշելը զրեթէ մոռաց-
ուելու վրայ է: Ծխելու չափազանցութիւնը առաջ է բերում
մի յամրագլուկի թունաւորութիւն, մարսողութեան խանգա-
րում, ստամոքսի հիւանդութիւն, սիրտխառնուք, անախորժա-
կութիւն, նիհարութիւն, սրտի անկանոն բաբախում, դժուա-
րաշնչութիւն, մաքի թմրութիւն, յիշողութեան նուաղում, տե-
սողութեան տկարացում, առնական կարողութեան մի զգալի
պակսութիւն:

Կատաղի ծխողները ունեն սև ատամներ, զրգռուած լեն-
դեր, խոչափողի բարբաբում, որ կոչւում է ծխողների խոչափո-
ղատապ. վերջապէս չթունքների վրայ տեսնուած վնասակար
ուռոյցները (կանկրօխ) վերադրւում են ծխելու սովորութեան.
Թէև դօկտ. Պիէարա Սանտա չը ծխող կանանց և մանուկների
չթունքների վրայ էլ նկատած է:

Ծխախոտի վնասակար յատկութիւնը առաջ է գալիս նրա
պարունակած և ցիկոսին կոչուած խիստ աղղու սոսկալի թոյ-
նից, եթէ այս թոյնից 5—6 կաթիլ լեղուի վրայ դրուի, մահը
անմիջական է լինում: 1851 թուին Բօկարմէ կոմսը իր քեռայր
Գիւստավ Ֆունին նիկոտինով է թունաւորած: Նոյնպէս, 1861
թուին Շէրբուրգի զինուորական հիւանդանոցում պատահած
անձնասպանութեան մասին դօկտ. Ֆօնսագրիֆի և Բէսնուի
կողմից գրուած տեղեկագիրը, ինքնասպանութեան ցիկոսինով
տեղի ունեցած լինելն է հաստատում. ինքնասպանի դրպանում
մի քանի կաթիլ ցիկոսին պարունակող մի փոքրիկ սրուակ է
զտնուած:

Պարզ ծխախոտը մորթի վրայ դնելիս ծանր վտանգներ ա-
ռաջ եկած լինելը յիշում է դօկտ. Գալափարէն Գագեհ դէ Գ'օ-
պիսօյի մէջ:

Վերջապէս, ծխախոտի պարունակած ցիկոսին նիւթին
մի սարսափելի և մահացնող աղղուկի թոյն լինելը դօկտ. Բա-

ըէլի կաղմից կատարելապէս ուսումնասիրուած և ամենալուրջ փորձերով ստուգուած է:

Ծխախոտը, ուրիշ թոյների նման, երեխաների վրայ աւելի է ազդում, որովհետեւ նրանց նեարգային սխտեմը շատ փափուկ, շատ դիւրագրգիռ և տկար է:

Մի ամերիկացի բժիշկ դպրոցական երեխաների վրայ երկար փորձեր կատարելով մի կատարեալ վիճակադրութիւն էր կազմած, ափսոս որ այդ գրուածքը կորցրած լինելով, համոզիչ թուանշաններ չը պիտի կարողանանք մէջ բերել, միայն շատ լաւ կերպով յիշում ենք, այդ բժիշկը հաստատած էր իր փորձերով, որ ծխող աշակերտների կուրծքի տարածութեան չափերը պակասում են, հասակի բարձրութիւնից կորցնում են և նրանց ֆիզիկական աճումը և զարգացումը յետ է մնում:

Դօկտ. Մանդէլզոն ծխախոտի մարսողական և չնչառական գործարանների վրայ ունեցած ազդեցութիւնը գիտնալու համար, Պետերբուրգի «Ջինուորական բժշկական ակադէմիայի» և «Արուեստագիտական դպրոցի» ուսանողների վրայ փորձեր է կատարած:

Ուսանողներին հինգ հարցեր է առաջարկած. 1—Տարեք: 2—Ո՞րքան ժամանակից ի վեր ծխում էք: 3—Օրական որքան սիգար կամ սիգարնիկներ: 4—Ծուխը կուլ տալիս էք: 5—Յաճախ նեղւում էք մարսողական կամ չնչառական խանդարումներից:

1071 ուսանողներ՝ 556-ը Բժշկական ակադէմիայից և 515-ը Արուեստագիտական դպրոցից՝ պատասխանած են: Առաջինները յալիս էին 104-ին 54,66 տոկոս ծխողներ և երկրորդները 47,18:

Ուրեմն առաջին նշանակելիք կէտը այն է, որ ծխողների թիւը շատ աւելի մեծ է բժշկական ուսանողների մէջ քան արուեստագիտական դպրոցի աշակերտների մէջ:

Սակայն, ընդհակառակը, արուեստագիտական դպրոցի աշակերտը բժշկական ուսանողից աւելի է ծխում: Առաջինը օրական միջին չափով 22, 28 սիգարնիկներ է ծխում, իսկ վերջինը 19, 64 սիգարնիկ:

Ծխողներից 100-ին 16,09 տոկոսը չնչառական գործարանների հիւանդութիւններով էին տառապում. չը ծխողների մէջ այդ տոկոսը 10,69 էր: Մարսողական գործարանների խանդարումներում համեմատութիւնը՝ առաջինների համար 11,88 է, իսկ վերջինների համար 9,92:

Ընդհանուր կերպով խօսելով, հիւանդների թիւը ծխող-

ների համար 100-ին 36,74 է, իսկ չը ծխողների համար 100-ին 23,83:

Ծխողների մի երրորդ մասը 16 տարեկանից առաջ ծխել են սկսել, միւս երկու երրորդ մասը 16 տարեկանից յետոյ: Առաջինները երկրորդներից աւելի շատ հիւանդներ են տալիս, 100-ին 45,83, ընդդէմ 32,71-ի:

Մանգէլլօհն «Ծխախոտի չափազանցութեան դէմ ընկերութեան» կողմից պատուոյ մեղալի է արժանացած, իր այս աշխատութեան համար, որի համառօտութիւնը ներկայացրինք մեր ընթերցողներին:

Նմանօրինակ մի փորձ 1893 թուին Բօքրիցնի կատարած է «Սարքօֆի բժշկական ֆակուլտէի» ուսանողների շրջանում. նրա փորձերից հետեւում է, որ ծխախոտի գործածութիւնը միշտ աւելի տարածուած է ուսանողների մէջ, 100-ին 66,40 համեմատութեամբ: Ստուգուած է, որ ծխախոտը շատ աւելի մեծ ծաւալ է գտած անտոմիական աշխատութիւններին հետեւող ուսանողների մէջ. սրա պատճառը յայտնի է, եթէ նկատի ունենանք այդ աշխատութեան ծանրութիւնը և դիակների զարշահոտութիւնը:

Մեծագոյն մասը սկսել են ծխել 16—18 տարեկանից. 12 տարեկանից առաջ և 20 տարեկանից յետոյ ծխողների թիւը շատ քիչ է: Փոքրիկ մի հաշիւ անելով, ծխախոտի համար այդ ուսանողների վատնած գումարը 12,000 ուրլի է գտել. պէտք է նկատի ունենալ մանաւանդ, որ Ռուսաստանի ուսանողները մեծ մասամբ, մանաւանդ բժշկական ուսանողները, չքաւորի զաւակներ են և մի սիգար ունենալու համար յաճախ հաջից են զրկւում...

Այս թուերը՝ Ռուսաստանում ընդհանուր գործածուած ծխախոտի հետ համեմատելով կը գտնենք, որ ուսանողները՝ մնացեալ ուղղաբնակութիւնից միջին կերպով տասն անգամ աւելի ծխախոտ են գործածում. պէտք է յիշել, որ Ռուսաստանի ժողովուրդը, ուրիշ եւրոպական տէրութիւնների հետ բաղդատած, աւելի քիչ ծխախոտ է գործածում. այս տեսակէտից Ռուսաստանը վերջին տեղն է բռնում:

547 ուսանողներից միայն 39 ծուխը կուլ չէին տալիս, սրանց մարտողական կամ շնչառական գործարանների խանգարումները չը ծխողների նման շատ հազուադէպ է եղած, 100-ին 1,8: Ուրեմն, ծխախոտի գործածութեան մէջ եթէ ծուխը կուլ չի տրւում, համեմատաբար շատ անվտանգ է լինում:

Հեղինակը՝ այս քննութիւնների արդիւնքը՝ «Ռուսական հանրային առողջապահական ընկերութեան» նիստերից մէկում

հաղորդելով, ընկերութիւնից խնդրած է ընդունել հետեւեալ առաջարկները, ծխախոտի չափազանց տարածման դէմ հակադէմոս և մանաւանդ չը ծխողներին պահպանելու համար:

1) Յանկալի էր, որ դպրոցների աշակերտներին հասկացնէին ծխախոտի վտանգները, մանաւանդ անձնական օրինակով:

2) Ծխախոտի գործածութեան տարածմանը նպաստող բոլոր հանգամանքները պէտք է հարուածել:

3) Յանկալի էր, որ ծխելը արգելուէր բոլոր հասարակական հաւաքման վայրերում:

Նորվեգիայում մի օրինագիծ է ներկայացուած, 16 տարեկանից վար եղող բոլոր անձերին բացարձակապէս ծխախոտ չը վաճառել: 16 տարեկանից նուազ եղողներին չը պիտի կարողանան աշխատեցնել ծխախոտի գործարաններում: Պոլիցիոն իրաւունք պիտի ունենայ հասարակութեան մէջ երիտասարդ ծխողների ձեռքից խել սիգարը, ծխախոտը: Այս օրէնքի հակառակ վարուողները պատժոււմ են 100-ին 200 կուրան տուգանք վճարելով:

Նմանօրինակ միջոցների են դիմած նաև Միացեալ-Նահանգների չառերը: Երիտասարդ սերնդին ծխախոտ վաճառելու արգելքը 33 նահանգներում գոյութիւն ունի: Նահանգների մեծ մասամբ տարիքի սահմանը 16 տարեկան է որոշուած, մի երկուսում 14, իսկ մի քանիսում մինչև անգամ 21:

Արգելումը հիմնուած է այն նկատողութեան վրայ, որ երիտասարդ սերնդի համար ծխախոտի գործածութիւնը բաւականին աղէտաբեր է, հետեւաբար, այս արգելումը, ոչ միայն անհատին, այլ և տէրութեան շահն էլ է պահանջում:

Նիւ Եօրքում այս օրէնքի հակառակ վարուող ծխավաճառները 50 դոլար տուգանքի են դատապարտուում. ծխավաճառները միևնոյն ժամանակ դպրոցից կամ եկեղեցուց 250 քայլ հեռու միայն իրաւունք ունեն ծխախոտ վաճառելու:

Իսկ Չիկագոյում հակառակ ընթացք ունեցողները պատժուում են 50-ից 200 դոլար տուգանք վճարելով, կրկնողութեան դէպքում, իւրաքանչիւր օրուայ համար պարտաւոր են վճարել 25 դոլար աւելի:

Ուրեմն, ինչպէս երևում է, ընդհանուր կարծիքը այն է, որ ծխախոտը անչափահասներին չափազանցօրէն վնասում է, նրանց բացարձակապէս արգելել է հարկաւոր: Նոյն չափով չէ վնասում չափահասներին, օրսնք էլ են վնասում, եթէ չափազանց ծխում են, բայց ոչ այնքան խորին կերպով, որքան վնասում են անչափահասները, իրանց օրգանիզմի կատարելապէս չի կատարելագործուած լինելուն պատճառով:

Եթէ ստույգ է, որ չափազանց ծխելը առողջութեան չափ է մնասակար, սակայն սրա փոխարէն պրօֆէսէօր Փէրմէն-Սէի հետ կրկնում ենք թէ՝ «չափաւոր ծխելը առաջ է բերում մի ուղեղային գործնէութիւն և դւրացնում է աշխատութիւնը» և դօկտ. Վիրու հետ կ'սսենք թէ՝ «Ուղեղի գործնէութիւնը բազմապատկւում է, ձանձրոյթը փարատում և երևակայութիւնը սրում»։ Առողջաբանական կարևոր գրուածքների հեղինակ Միչէլ Լէվի ասում է. «Այսպէս ծխախոտը բարոյական նորոգիչ պատուոյն է բարձրանում, այդ պատճառով պէտք է յարգել այն, ոչ միայն քիմիական հիմնակէտով, այլ բարոյական տեսակէտով, որ մարդկային առողջապահութեան մէջ մի կարևոր դեր է կատարում»։

Հռչակաւոր առողջաբան պրօֆէսէօր Բուշարգայի հետ եզրակայնում ենք. «Ծխախոտը բացարձակ քննադատող չը լինենք, որովհետև այսպիսի վիճակներում նրա չափաւոր գործածութիւնը ոչ ոք կը պարսաւէ. գործաւորը օրուայ ծանր աշխատանքներից յետոյ մէկ երկու սիգար ծխելու համար իր բնականը մոտենով մեծ երջանկութիւն է զգում. ծխախոտը բացօդիկ և նաւային զօրքերին արգելել չը պիտի համարձակւում, ձանձրոյթը մի այնպիսի չարիք է, որ ծովային և ցամաքային զօրքը հայրենակարօտութեան (nostalgie) կարող է առաջնորդել. այս պարագայում՝ ծխախոտը մի կարևոր դարման է, որի բարերար ազդեցութիւնը ոչ ոք կ'ուրանայ։ Ծերունին, որ ծերութեան ձանձրոյթը բուցած է, իր մոխրութիւնը սիգարին մէջ է գտնում, քաղցր և հաճելի մի սովորութիւն, որի զրկումը կ'երակուրների զրկանքից աւելի ծանր է նստում. մի հիւանդի համար կ'ուսնի միացնող կապն է, ապաքինման մէջ առաջին հաճոյքը ծխելն է»։

Մտաւորական ծանր աշխատութիւն ունեցողների համար սիգարը իրանց յոգնածութիւնը անցունելու միակ միջոցն է, ամեն գրող և կարդացող ծխախոտի այս ամոքիչ և սփոփիչ ազդեցութիւնը վայելած են և վայելում են, մանաւանդ իրանց մտքի յոգնածութիւնը էլ աւելի կը փարատեն, եթէ սիգարին միացնեն մի բաժակ թէյ կամ սուրճ... թէյը կամ սուրճը ծխախոտի թմրեցնող ներգործութիւնը անհետացնում է։

Աւելացնենք նաև, որ եթէ Գէօթէ չէ ընդունում հանճարեղ մարդկանց ծխելը, ընդհակառակը Բակօն, Լօի, Քանա, Նէվտօն, Միլտօն, Էդիսըն, Վուօլգր Սկօտ, Բայրըն, Ժիւլ Ֆաւր, Գամբէտա, Էմիլ Օթիէ, Ժիւլ Սիմօն, Կարօ, Օկտավ Ֆէօյէ, Սարգու, զը Լէսէպս, Դիւկան, Կարօ, Գարնիէ և սրանց հետ ուրիշ ֆրան-

սխալի գրագէտներ, հռչակաւոր նկարիչներ, ճարտար արձանագործներ, առանց հաշուելու գրեթէ բոլոր համբաւաւոր բժիշկները, ինչպէս, Րօբէն, Գաւարէ, Բէկլար, Վիւլպիտն, Շարկօ, Րիկօր, Սէ, Տրէլա և այլք ծխողներ էին և են:

Ծխողների համար մի քանի խորհուրդներ տալ աւելորդ չենք համարում, թէ ծխելու հաճոյքից չի զրկելու և թէ նրա վնասակար ներգործութիւնը մեղմացնելու համար:

Ծխողները պարտաւոր են ծխափողով ծխել, ծխափողը յաճախ փոխել կամ մաքրել, քիչ, աղնիւ և չոր տնտակից ծխել, ծուխը ներս չի քաշել ու կուլ չի տալ, յաճախ թքնել և ջրով բերանը լուալ. ննջասենեակում և լազմամարդ խուցերում երբեք չը ծխել, վերջապէս ընդարձակ և բացօդեայ տեղերում ծխել, բամբակով լցուած ծուխքաշներ գործածել և բամբակը չուտ չուտ փոխել:

Դօկտ. Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆՑ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հանդէս Հայագիտութեան» — «Zeitschrift für armenische Philologie» — Այս նոր մասնագիտական հանդէսի առաջին տետրի մասին մենք խօսել ենք «Մուրճի» անցեալ տարուայ վերջին համարում: Ներկայ տետրի մէջ պ. Ֆինկը իր յօդուածի շարունակութեան ընթացքում «հասագական ձեռագրից» լիշատակում է դարձեալ 31 վերնագիրներ, որոնցից ի միջի այլոց ուշադրութեան արժանի է ներդաս **Պոփասաբառի «Նարգազուրի»** պոետիկաբանական արձույտը (հայերէն և լատինէն հրատարակեց Ֆ. Ն. Ֆինկ, Ս. Ելմիածին, 1902):

Հեղինակը իր յօդուածին կցել է Երաստղէմի և Կիպրոսի թագաւորների, ինչպէս և Անտիոքիայի իշխանների ծննդաբանական ցուցակը, որ ամփոփումն է նախկին տետրում լիշատակուած «Ազգաբանութիւն թագաւորացի Երաստղէմի և թագաւորացի Կիպրոսի» և «Ազգաբանութիւն Բրնձոյն Անտիոք»-ի:

Պ. Աջարեանը իր «Վանի բարբառի հնչիւնաբանութիւն» յօդուածի մէջ խօսում է «ա», «այ», «եա», «եայ», «եառ», «եա», «իւ», «ոյ» և այլ «կրկնաձայնների ու բոլոր բաղաձայնների փոփոխութիւնների մասին, որոնք առաջ են դալիս Վանի բարբառում»:

Միւս յօդուածներից առանձին ուշադրութեան արժանի է Էնայի համալսարանի պրոֆէսոր Հ. Գէլցէրի «Նգնիկ և պարսկական կրօնի սխառմի զարգացումը» վիեճակ:

Միսիթարիան հայերից Գր. Վալամկարը պատրաստում է Նգնիկ Աղբաջու յայտնի գրուածքի («Ննդդէմ ազանդոց») քննական հրատարակութիւնը: Հայր Վալամկարի զրգմամբ և օգնութեամբ Յ. Մ. Շմիդ թարգմանել է այդ գրուածքը ղերմաներէն, որ և լոյս է տեսել 1890-ին իբրև Վիեննայի Միսիթարիան միաբանութեան գերմաներէն լեզուով հրատարակելիք «Հայկական մատենադարանի» առաջին հատոր: Պրոֆ. Գէլցէրն ահա Նգնիկի այս հրատարակութիւնն ունի ի նկատի և շեշտում է այս նոր հրատարակութեան առաւելութիւնները — Նգնիկի անձնաւորութեան ո՛վ լինելը, նրա գրուածքի ազդեցիկը և այլն: Հեղինակի կարծիքով Նգնիկը «մի շատ հետաքրքիր և օտարոտի մարդ է» և նրա յայտնած մտքերի մէջ Գէլցէրը երբեմն տեսնում է ոչ թէ «բրիտանացի կայսերական», այլ «հին հեթանոս հային»: Կրօնների պատմութեան տեսակէտից նա Նգնիկի գրուածքի երկրորդ մասը ամփոփում է համարում, որովհետեւ զաւանդակաւ կրօնի հիմնական վարդապետութիւնները և որի վրայ էլ յարգելի հեղինակը բաւական երկար է կանգ առնում:

Արարատ, յունուար, փետրուար: Այս տարւանից, ինչպէս յայտնի է «Արարատը» լանձնուած է նոր խմբագրութեան, որ արդէն լոյս է հանել երկու համար: Նոր մարդիկ,

նոր ուղղութիւն—այս սպասելի էր, մանաւանդ որ նոր խմբագրութեան անունով տրուած կաթողիկոսական կոնդակի մէջ պարզ ասուած է որ Եջմիածնի ամսագիրը պիտի մատչելի լինի ժողովրդին: Զէ կարելի, ի հարկէ, ասել թէ Եջմիածնում չեն լինում և բարի մտքեր. բայց հաստատապէս կարելի է ասել որ Եջմիածնում բարի մտքեր գործադրելու հող չը կայ: Դեռ նոր «Արարատը» յոյս չը տեսած, արդէն ըսկըսեցին ինտրիգներ նոր խմբագրութեան գէմ. շտապեցին, ով կարող էր, խոչընդոտներ յարուցանել, դժուարութիւններ սարքել, որպէս զի նոր մարդկանց արգել են և, եթէ կարելի է, փախցնեն: Հապիւ թէ այս հանգամանքների մէջ որ և է գործ կարողանայ կատարել «Արարատը» վերաբերմամբ ծագած բարի միտքը, թէ և այդ միտքը ամենայն հայոց կաթողիկոսի ցանկութիւնն էլ լինի: Այսպէս է Եջմիածնի ճակատագիրը:

Մենք չենք ուղում մտնել այդ հանգամանքի մանրամասնութիւնների մէջ, որոնք բաւական չափն են լրագիրներից: Կ'ասենք միայն այսքանը, որ նոր «Արարատը» դեռ չէ կարողացել իր այդ երկու համարներով ցոյց տալ թէ ձգտում է մատչելի լինել ժողովրդին. նա դեռ շարունակում է դատողութիւնների ամսագիր լինել: Ինչ կը լինի ապագայում, — մենք չը գիտենք, բայց գիտենք որ շատ բան սպասել է կարելի նոր խմբագրութիւնից, քանի որ նրա ձեռքը միջոցներ չեն տալիս: Որքան գիտենք, «Արարատը» 2000 բաժանորդ ունի: Ենթադրելով որ այդ բաժանորդները վճարում են տարեկան 4 աւրի բաժանորդագրինը, մենք պիտի ընդունենք, որ ամսագիրն ունի տարեկան 8 հազար ռուբլի եկամուտ. պակասեցնենք այդ գումարը Նոյն իսկ մի հազար ռուբլով, դարձնալ կը

ստանանք մի լաւ գումար՝ «Արարատը» պէս մի բարակ ամսագիրը լաւ տանելու համար: Բայց խմբագրութիւնը միջոց չունի վարձատրելու աշխատակիցներին, նրան միջոցներ չեն տալիս, բաւական համարելով յոյս դնել «ազգասիրարար» աջակցութեան վրայ: Ահա մի հանգամանք, որ պիտի ջլատէ գործը և անպտուղ դարձնէ ամեն մի բարի միտք...

Փետրուարի համարում խմբագրութիւնը ուշադրութիւն է հրաւիրում կաթողիկոսական այն կոնդակների վրայ, որոնք ապուլեցին յանուարի համարում և նրանց մէջ պարզ ու զբաղան ցումանքներ կան չհաստատեան մասին: Այդ կոնդակներով ամենայն հայոց կաթողիկոսը սահմանում է որ կոնսիստորիաները, առանց Սինոդին դիմելու, թոյլ տան ամուսնութիւններ խնամէական հինգերորդ աստիճանում: Այդ թոյլտուութիւնը առաջնորդում չէ եղած, առաջին անգամ տեղապահութեան ժամանակ որոշ կանոնի ձև ստացաւ և այժմ կաթողիկոսական սանկցիացին ենթարկուելով, դառնում է հաստատուն օրէնք: Գալով ազգակցական ամուսնութիւններին, մինչև տեղապահութեան ժամանակը չէր թոյլատրում ամուսնութիւն տողակցական կամ արեւակցական եօթներորդ աստիճանում: Այժմ կաթողիկոսական կոնդակը օրինակաւնայնում է տեղապահութեան ժամանակ միայն ձայների առաւելութեամբ մերժուած այդ աստիճանը, հրամայելով Սինոդին թոյլ տալ եօթներորդ աստիճանի ամուսնութիւնները, զորովհետև այդպէս է ժամանակի պահանջը: Շատ ուրախ ենք որ «ժամանակի պահանջը» կամայ-կամայ իր իրաւունքներն է ստանում Եջմիածնի գործերում: Մի այլ կոնդակով Վեհափառ Վաթիկանը բացատրել է թէ ո՛ր պատկերն են անվաւեր և ո՛րոնք են ան-

թոյլատրելի Մի խօսքով, այժմ, ղէթ թղթի վրայ, կայ ամուսնական հարցերի կարգաւորում և «Դարաւոր» ասում է թէ սրանով «շատ մեծ չափով թեթեւանում է ժողովրդի վրայ ծանրացած լուծը, պակասում են ապօրինի կենսակցութեանց և ապօրինի դատկների թիւը, և վերագտնում ենք երկար խորհարկումներից լեսող մեր եկեղեցական կանոնադրութեան վերջին վճիռների ուղիղ զործադրութեանը»։ Այո՛, դա մի շատ ուրախալի երևույթ է, բայց մենք այժմից իսկ ուշախառն չենք կարող Օրէնքներ հաստատելը գեռ բաւական չէ. ամենազիջատորը օրէնքների գործադրութիւնն է։ Թիւրքիստում պաշտօնապէս ընտրւած է Նապօլեօնի կողմէսը, բայց ի՞նչ օգտաւ, երբ այդ օրէնքի գործադրութիւն չը կայ։ Տարիների փորձը անթիւ օրինակներով ցոյց է տուել, որ եթէ մեր եկեղեցական վարչութեան մէջ տիրում է անկարգութիւն, խառնաշփոթութիւն, սրա մի գլխատը պատճառն էլ այն է, որ հոգևոր իշխանութիւնը ինքը չէ չարգել իւր հրատարակած օրէնքները, ինքն է ոտնակոխ արել իւր սահմանադրութիւնները։ Ամենալաւ ապացոյց — թեմական դպրոցների սահմանադրութիւնը, որ ամեն տարի նոր տեսակ փորձանքի է ենթարկւում այն իսկ իշխանութեան կողմից, որ վաւերացրել ու հրատարակել է նրան, որ այժմ էլ դեռ չէ փոփոխել այդ սահմանադրութեան ծրարիլը, բայց բոլորովին անտես է անում նրանց։ Օրինականութիւնը, այո՛, առաջին և անհրաժեշտ պայմանն է. առանց այդ պայմանի չէ կարող պահուել մեր եկեղեցին, նրա գոյութիւնը վտանգուած կը լինի։ Բայց ի՞նչ է օրինականութիւնը, երբ նա թղթի վրայ միայն գոյութիւն ունի։ Միահեծան կառավարութիւնը այն ժամանակ չէ միայն

բռնակալական, վայրենի, երբ ունի հաստատ օրէնքներ, որոնց ամենից առաջ ինքը, այդ կառավարութիւնն է չարկում և պաշտպանում։ Ամբողջ սրտով կը ցանկայինք որ մեր եկեղեցական վարչութեան մէջ հաստատ լինէր օրինականութիւնը, Հաւատա՞նք որ դոնէ ամուսնական հարցերի մէջ տանջանքները, դժգոհութիւնները ընդ միշտ վերացուած են դրական օրէնքների ոյժով։ Չը կայ երաշխաւորութիւն մի աչդալիս հաւատ կազմելու համար։ Ուստի մենք առ այժմ, ողջունելով օրինականութիւնը թղթի վրայ, դեռ չենք կարող ուրախ լինել, քանի որ չը դիտենք թէ ինչպէս կը լինի նրա գործադրութիւնը։

Հետաքրքրութիւն է ներկայացնում այ. Մանանդեանի «Մի դատութիւն հայոց ներքին կեանքի ուսումնասիրութեան վրայ» չօգուածը։ Այդտեղ այն՝ միանգամայն արդարացի միտքն է յայտնուում, որ մեր պատմութեան մէջ չը կայ ժողովրդի ներքին կեանքը, որ հայոց պատմութիւնը, արտաքին անցքերի պատմագրական ժողովածու է։ Միանգամայն ճիշտ է։ Միայն այժմ մենք չունենք իսկական պատմութիւն. եկեղեցական պատմութիւն, վարդապետների, ժողովների, կրօնական վեճերի, պատմութիւն մենք ունենք և նա շատ ճոխ է, բայց խեղճ ժողովուրդը անչափ է մնացել, նա չը կայ մեր անցեալի տարեգրութիւնների էջերում։ Ո՞վ պիտի նիւթեր մշակէ ժողովրդի պատմութեան համար — բանասիրութիւնը, պատասխանում է չօգուածագիրը։ Այո՛, բանասիրութիւնը։ Բայց մենք, ինչպէս երևում է, դեռ երկար և երկար ժամանակ չը պիտի մի գրական գործ ստանանք մեր բանասիրութիւնից։ Հայ բանասէրները այժմ կորած են լեզուաբանական և մատենագրական հարցերի լարելիւթոսում. ձեռնում են

մանր-մունր խնդիրներ, որոնք զուցէ միայն գրականութեան պատմութեան համար արժէք ունենան: Բայց մենք միայն գրականութեան պատմութիւն չը պիտի ունենանք, այլ և կուտորական պատմութիւն, ժողովրդի պատմութիւն: Հատորներ են գրուել այն իսկապէս երկրորդական խնդիրը պարզելու համար, թէ արդեօք Փաւստոսը հա՛յ էր թէ՛ յոյն, բայց ոչ ոք չաւտանասիրեց, չը պարզարանեց Փաւստոսի գիրքը զոտ ժողովրդի նիստ ու կացի, նրա հասարակական և քաղաքական կեցութեան տեսակէտից: Եւ սակայն Փաւստոսը, իբրև ազգային ուսումնասիրութեան աղբիւր, ելակի է: Մեր բանասիրութիւնը քարացած է չորրորդ և հինգերորդ դարերի շրջանում. ազդեցիկ զուրա չը կայ նրա համար աշխարհ և կարծես XIII կամ XV դարերը այնքան լաւ ուսումնասիրուած են մեզանում, որ նրանց մասին այլ ևս որևէ նոր բան ասել չէ կարելի: Այո՛, բաւական խեղճ է մեր բանասիրական ուսումնասիրութիւնը, և ի՞նչ կը լինէր մեր զրութիւնը, եթէ եւրոպացի հայագէտներ չը լինէին: Մենք առ ալժամ չենք պարճենում որ բանասիրական գիտութիւն ունենք մեր մէջ և նրանով զբաղուողների թիւը մէկ չէ, երկու չէ:—Որ բանասիրութիւնը շատ է կղզիացած, շատ է միամիտ իր մասնագիտութեան մէջ, զրա մի ապացոյց հէնց ինքը, պ. յօդուածածիրը: Նա վրդովուած է, օրինակ, այն բանի դէմ, որ համարեա ամեն մի գրքում, ամեն մի յօդուածում կարելի է «կարգալ այսպիսի մի կարծիք, իբր թէ հայոց նախարարների անմիաբանութիւնն է Հայաստանի կործանման պատճառը»: Արեւմտեան ազգայէն չէ: Յօդուածագիրը չէ կարողանում զանաղանել, որ այլ է փաստը, երեւթը, այլ է նրա պատճառը: Նա ասում է թէ՛ նախարարական—Ֆէօդալական

«կազմակերպութիւնը ոչ մի ազգութեան մէջ մոգական դասազանի շարժումով չէ փոխուել, այլ բարոյական, իրաւական և տնտեսական որոշ զարգացման շրջանում և աշխարհագրական ու քաղաքական որոշ պայմաններում անխտաւելի անհրաժեշտութիւն է եղել»: Յետոյ: Միթէ՛ այդ անհրաժեշտութիւնից այն է զուրա գալիս, թէ չէ կարելի ասել որ նախարարները անմիաբան էին, թէ՛ այդ անմիաբանութիւնը կործանման պատճառ էր: Երբ դուք կարդում էք Վահան Մամիկոնեանի հերոսական պատերազմների պատմութիւնը և երբ տեսնում էք որ նրա դէմ կռուողների թիւում է Սիւնեաց նախարարը, միթէ՛ դուք չէք ասում որ այդ կռիւները չէին լինի, եթէ՛ այդ երկու նախարարները միաբան լինէին: Սա փաստն է, պատերազմի դաշտի իրականութիւնն է. մենք նրան կարծանազրենք առանց վրդովուելու և ապա երբ աւերող սիստեմի էութիւնը կը սկսենք պարզել, երբ կը քննենք պատճառները, այն ժամանակ, ի հարկէ, կ'ասենք որ Ֆէօդալական սիստեմը ուրիշ դրութիւն չէր էլ կարող ստեղծել մեր երկրում:—Պ. Մանանդեանի բերած այդ օրինակը անաջող է: Այնուհետև նա մի քանի ակնարկներ էլ է անում, օրինակ, ասում է. «Մայր Աթոռի դործունէութեանը և մեր եկեղեցու այժմեան դրութեանը մի փոքր ծանօթ լինելով, խօս լաւնկատում ենք թէ եւրպեմն մեր հասարակային գործիչները որքան անտեղեակ են եկեղեցական երեւոյթիւնների լաւ ու վատ կողմերին, և ո՛րքան կիսատ և թիւր հասկացողութիւններ են ունենում ազգային եկեղեցու իրական բարիքների և պահանջների նկատմամբ»: Մենք կը կամենայինք իմանալ թէ ինքը, պ. Մանանդեան որքան լաւ տեղեակ է այդ կարիքներին և զրութեան, բայց, տարաբախտաբար,

նա ոչ մի փաստ չէ բերում, ոչ մի օրինակ չէ չիշատակում իսկ բառերին, իսկ բառերի դէմ միայն բառեր կարելի է հանել, մի բան, որ մենք չենք կարող անել: Շատ գեղեցիկ կը լինէր, եթէ «Արարատը» խոյս տար անորոշ բառերից, վերացական գատողութիւններից և միշտ խօսէր փաստերի ու իրողութիւնների լեզուով: Ոչ մի ուրիշ լեզու սրա պէս ազդու և հասկանալի չէ լինում:

—

Քաղաքովէլ, ապրիլ: Հետաքրքրութեամբ կարդայում է «Մի՛ վհատիր» խմբագրականը, որի մէջ արտուայտում մտքերը համակրելի են Այս համարում գտնում ենք երկու գրական կենսագրութիւն — Քերտովի Պատկանեան և Նազար Գորոխեան: «Կարին և Երկրաշարժը» յօդուածում նկարագրում է Երդրումը: Անցեալ տարուայ երկրաշարժի հետեանքները նկարագրում են հետեան տողերը. «Հաղարատը տուներ դէպի գիւղեր կ'առաքուին, որ արկածն քիչ ըրեր է իր աւերներն, և կը հալթաթուր յանձնաժողովներով իրանց կենսական փոքրիկ ոգեպահիկն՝ մի անհատի համար միայն կէս չափ հոց ամբողջ օրուան մը համար: Հաղարատը տուներ ալ որ հարթ լատակ դարձեր են, կ'որոշուի անոնց տեղ զրեթէ 2500 կանգուն երկանթութեամբ տեղւոյ վրայ տախտակէ տնակներ բարձրացնել ամփոփելու համար մէջտեղ մնացածներն: Ինքնագնութիւնը աստիճան մը դարման կը մատուցանէ. բարեբար և աղին հողիներ կ'երազեն կ'երեակալեն Կարոյ սատակ ձմեռը և խեղճութեան անհունութիւնը և բաւ չեն համարիր միանգամ ողորմելը, ալ կրկին և կրկին չեն խնայիր իրանց փողերը: ... Այս օրերուս մէջ յօդուած նումակ մը կ'ըսէ, որ զեռ սասանութիւնք բողբոլին չեն դադրած,

լայց առաջուան սաստկութիւնը և աւերածը չկայ: Աղքատութեանց, հիւանդութեանց հետեութիւնք աննկարագրելի են՝ Վ. Փափաղեանի «Հայ բոշաներ» փոքրիկ յօդուածի մէջ մեղուր չեկաւ հեղինակի ինքնագրութիւնը, կարելի է 10 տարի ուսումնասիրել բոշաների կեանքը, կարելի է գրել ուսումնասիրութիւն, ներկայացնել Պատկուայի աղագրական ընկերութեան և ստանալ նրա հաւանութիւնը, լայց ի՞նչ կարիք կայ ալ ամենը պատմել հինգ եւրեթից լողկացած մի յօդուածում: «Գիտնական սիտեմ», «կատարեալ» գործ — այդ անունները աւելի քան աւելորդ ինքնագրութիւններ են մի ալիպիս փոքրիկ աշխատութեան մէջ: Յիշենք և «Հայկական հին սովորութիւն մը» յօդուածը, որի մէջ յայտնում է ալ միտքը, թէ մեր «մատուղը» հին հեթանոսական մի սովորութիւն է, «այլ յետոյ նուիրագործած, քրիստոնէացած է քրիստոնէական կրօնից օժմամբ»:

—

Հանդէս մարտի, ապրիլ: Եարունակում է զօկտոր Նախապետ Ռուսինեանի հետաքրքրական կենսագրութիւնը: Այս համարում ալ պում մանրամասնութիւններից մենք իմանում ենք որ Ռուսինեան մի խիզախ վերանորոգիչ էր, մի ինքնատիպ լինաւորութիւն, որ տողորում լինելով Քրանսիական լեղափոխութեան զաղափարներով, ամեն կերպ աշխատում էր մի նորութիւն մտցնել հայ ազգի ճահճացած կեանքի մէջ: Աղքատական բուրժուաթեան մասին անցեալ անգամ գրեցինք: Այժմ աւելի մանրամասն կերպով է խօսում կենսագրողը այդ գործի մասին, բերելով կըտորներ Ռուսինեանի «Աղղախօսութիւն արդի հայ լեզուին» գրքից, որ իր ժամանակին մեծ ազդու է յարուցել: Բնորոշ է, որ այդ համարձակ բէթորմատորի դէմ ղինուց

հալ հոգեորականութիւնը. «Հայ կրդեական դասը, Պատրիարքը, հոգևոր ժողովը ու Գերագոյն ժողովը ստեղծում առանկեցան, ահաբեկելով ահաբեկեցան և սկսան «Ուղղախօսութեան» գէմ պարսաւանքներ կարգալ ու մինչև անգամ պայն բանադրելու պատրաստուիլ: Եւ սակայն Ռուսինեանի գործը լսկ մի առաջարկութիւն էր, որի ընդունելը կամ չընդունելը զիտնական քննադատութիւնից էր կախուած: Նոյն տեսակ ընդունելութիւն գտաւ և Ռուսինեանի առաջարկած բէֆօրմը օրացոյցի մէջ: Հետեւելով Ֆրանսիական լեզուիտութեան ժամանակ գոյութիւն ունեցած տօմարին, Ռուսինեանը առաջարկում էր տարեգլուխը սկսել մայրի 21-ից (հ. տ. 9-ից), երբ զարնանային գիշերահաւատարութիւն է լինում. ամիսների անունները նա փոխում էր այսպէս. «Միամիս, երկամիս, եռամիս, Գառամիս, Հնգամիս, Վեցամիս, Յօթամիս, Ութամիս, Իննամիս, Տասամիս, Տասմիամիս, Տասերկամիս». բացի զբանից, նա իւրաքանչիւր տմաի համար հնարել էր հալերէն անուններ, հետեւելով չեղափոխութեան ժամանակ ընդունուած ամսանուններին: Այսպէս, զարնանային ամիսների համար նա հնարել էր շուաին, Մաղկին, Մարդին, ամառային ամիսների համար՝ «Հնձար, Տօթար, Պտղոտ», աշնանային ամիսների համար՝ «Կթօն, Թափօն, Միգօն», իսկ ձմեռային ամիսների համար՝ «Զիններ, Սառներ, Մրկեր»: Այս բէֆօրմը, ի հարկէ, չընդունուեց, բայց հարցը այնքան ընդունելութեան չէ վերաբերում, որքան բնորոշում է վերանորոգումների տենչանքներով ստեղծուած այդ գործիչին: Յիսուսական թուականների վերջերում եթէ չը լինէին աշպլաի խիզախ և համարձակ վերանորոգիչներ, թիւրքահալերի մէջ, ի հարկէ, չէր ըս-

կաւի այն հակադէմոս մրցումը, որի արդիւնքն էր 1860-ի ազգային սահմանադրութիւնը: Թաթուլ Վանանդեցու այս անգամաւ Վարական թղթակցութիւնը մերկացնում է Վ. Պօլսի հայոց մամուլի մի զարհուրելի ախտը—զրական կեղծիքը: Այդ չօգուածը, ինչպէս և միւս թղթակցութիւնները, կարգացում է հետաքրքրութեամբ:—Այլեցիկը, կարգալով մասնախօսական բաժնի մէջ ահալին ներքողներ, նուիրում ըծիշի Շահ-նազարեանից: Բանից գուրս է զալիս որ երևանում մի քանի ամիս տեւալութիւն արած այդ պարունը «մանկավարժական շրջանակներու մէջ՝ ծանօթ գէմք» է, որ նա, ազգայնի անդու ու անխռն վաստակաւոր է «տարիներէ ի վեր» և այլն և այլն: Ի՞նչ մեծ զիտեր անել զիտեն Միթիարեան վարդապետները: Այսպիսի ծիւղաշարժ զիտերի արժէքը Թաթուլ Վանանդեցու վերալիշեալ զրական թղթակցութեան մէջ կարելի է գտնել, որովհետեւ նրանք պարզապէս են «զովաւանականներու շարք մը՝ լսիրացնելու չափ»: Ինքն իրան ծեծում է «Հանդէս Ամսօրեան»:

«Кавказский Вѣстникъ», ապրիլի. Սէզալ պատմում է իր տպատրութիւնները և լիշողութիւնները Դանձակի նահանգում կատարած իր ճանապարհորդութիւններից: Այս անգամ նա խօսում է Շուշու մաթին և բաւական ճիշտ գոյնեկով նկարում է կեանքը այդ զաւառական խոշոր կենտրոնում: Հետաքրքրական է մանաւանդ թուրք աղանդականութեան կենցաղի նկարագրութիւնը: Թուրք աղանդականութիւնը (բէկերը) շատ բաղմաթիւ է նախկին Ղարաբաղի լսանութեան մարաքաղաքում: Հեղինակը մի պատմական հալեացք է գցում այդ դաստիարակի անցեալի վրայ, լիշատակում է թէ ինչպէս

Փանահ խանը հողեր և բէկական տիրոջութներ էր բաժանում թուրքերին, բայց մոռանում է չիշատակել, որ Ասորադղի հողերը հայերին էին պատկանում և առաջակապետութիւնից խանութեան հասած Փանահը, և մանաւանդ նրա որդի Երբաշիմը, խլում էին հողերը հայ մելիքներից և տալիս էին իրանց ծառաներին և ջորեպաններին: Թէև հայ մելիքները Պաւլէ կապիւրի հրովարտակով ճանաչուած էին երկրի իսկական տէրեր, բայց երբ Ասորադղը անցաւ առաջ տիրապետութեան տակ, կալուածատիրական իրաւունք ստացան միայն նրանք, որոնք խաներից թողլիք ունէին: Այդպիսի թղթեր համարեա միայն թուրքերն ունէին, այդ պատճառով էլ նրանք զարձան սեփանառէրներ, իսկ մելիքների ժառանգները կամ շատ աննշան հողաբաժիններ ստացան կամ հարկատուների կարգում գրուեցան: Մեծ չարիքներ պատճառեց այդ գործում յայտնի հերոս իշխան Մաղաթօվը, որ Ասորադղի կառավարիչն էր և Մէհաթի-խանից զիւղեր ու մեծամեծ կալուածներ առնելու համար ոչ թէ տալիս խանական իղթիւրին, իսկ ժառանգական իշխող մելիքների որդիներն ու թոռները զուր տեղից գանդատներ էին տալիս կառավարութեան: Ահա այդպիսով է առաջացել այն դրութիւնը, որ մի քանի բէկեր ունեն այնքան շարժական կալուածներ, որքան չունեն նոյն-իսկ ղերմանական մի քանի դքսութիւնները — Բէկական դասակարգը ներկայումս մի անշարժ պահպանողական տարր է, որ սովորել է ձրկակերութեան, չէ աշխատում, կալուածական առաջադիմութեան չէ ձգտում, այլ միայն անց է կացնում իր կեանքը ծուլութեան և պարսպալսութեան մէջ: Բոլորովին այլ սկստարան է ներկայացնում հայ ժողովուրդը. նրա

նոր սերունդը, մանաւանդ քաղաքում, ամեն կերպ աշխատում է կերպարանափոխել իր կեանքը նոր ժամանակի պահանջներին համեմատ և նմանութիւն գտնել այդ երկու դասի ժողովուրդների մէջ շատ զժուար է — ձիշատակէնք պրօֆեսոր Մաթի յօդուածը «Մնացորդաց Գրքի» նուագիտ մի օրինակի մասին և անցնէնք մի փոքր՝ Լեկոտոդութեան «Մուրճին» նուիրում մի փոքրիկ յօդուածի մէջ գտնում ենք հետեւեալ իրողութիւնը: Խօսելով Տուրքենիւմի «Թրամուտին» վէպի թարգմանութեան մասին, յօդուածագիրը բերում է սխալ թարգմանութեան մի օրինակ և շտապում է այն եղանակացութիւնն անել, որ թարգմանիչը լաւ չէ իմանում ռուսերէն: Բայց ցաւն այն է, որ ցոյց տուած օրինակը արդենք է մի տպագրական սխալի ճշուած է. «նա հազամ էր» չընաղ վարդապետ զգեստ, որ ունէր կուսփիւր...», բայց պէտք է լինէր «և ունէր»: Գուցէ այդ տպագրական սխալը յուսածագրի համար մի մեծ ապացոյց է, որ թարգմանիչը չը գիտէ ռուսերէն, բայց մեզ համար և իրաքանիչիւր տնկողնուստահ ընթերցողի համար էլ այն է պարզ, որ յօդուածագիրը այդտեղ իրան թոյլ է տուել մի անտեղի բժատողութիւն: Մենք պէտք է խոստովանենք, որ «Մուրճի» սրբագրութիւնը, չը նայած մեր գործ դրած բոլոր ջանքերին, շատ հեռու է կոտարեալ լինելուց, բայց շահագործել այդ տպագրական սխալները արդէն բժախնդրութիւն է...

„Вѣстникъ Всемірной Исторіи“ մարտ Թուս յայտնի գիտնական Մակիմ Կովալեւսկի տարգրել է մի հետաքրքրական յօդուած՝ „Նախնիքներին երկրպագելը կովկասեան աղբերի մէջ“: Խօսքը զխառնրապէս կովկասեան լեռնաբնակների

մասին էլ Պ. Վովալեվսկի անձամբ հետազոտել է մի քանի ցեղերի սովորութիւնները և գալիս է այն եզրակացութեան, որ զրանց մէջ մինչև այժմ էլ մնացել է նախնիքների հին պաշտամունքը Քրիստոնէութիւնը չը կարողացաւ արմատախիւ անել այդ հին սովորութիւնը, ուստի և հարկադրուած եղաւ ընդունել նրան, քրիստոնէացիները Յարգելի զրտնականը նկարագրում է և օջախի պաշտամունքը, որ, ինչպէս լատինի է, սերտ կապուած է նախնիքներին պաշտելու սովորութեան հետ։ Հին արիական ազգերը, ինչպէս զեղեցիկ կերպով պատկերացրել է Ֆիտտէլ դը-Վուլանժը, հաւատում էին, որ մեռելը շարունակում է ապրել և գերեզմանի մէջ, և կենդանի մնացողների պարտքն էր այնպէս անել, որ գերեզման մոտ մարդը քաղցած չը մնայ, իսկ այդպիսի գրութիւնից մեռելներին աղատելու համար պէտք էր զոհաբերութիւններ անել մեռածների գերեզմանների վրայ։ Ձոհաբերութիւն անելը կենդանի մնացող ժառանգների պարտքն էր։ Այս պատճառով ամեն մէկը, հանդերձեալ աշխարհում զրկուած ու մոռացուած չը մնալու պատճառով, պիտի իր սեփական օջախը հիմնէր։ Ոջախի պաշտամունքը—դա կրօնական, իրաւական և հասարակական հասկացողութիւնների մի ամբողջ օրինագիրք էր։ Եւ հետազոտելով ժողովրդի այժմեան սովորութիւններն ու աւանդութիւնները, շատ կարելի է գտնել հին պաշտամունքի հետքեր։ Պ. Վովալեվսկի ասում է, որ կովկասեան լեռնականները նախնիքների և օջախի պաշտամունքը իւրացրել են Զենդ-Վալեստայի ազգեցութեան տակ։ Եւ որովհետեւ հին պարսկական կրօնի բոլոր էութիւնը գեռ բաւականաչափ պարզուած չէ, ուստի ժողովրդը

զական այժմեան սովորութիւնները կարող են հարուստ նիւթեր տալ Զենդ-Վալեստայի սահմանած աշխարհայեացքներն ու օրէնքները բացատրելու համար։

Հայ ժողովրդի մէջ էլ կան բազմաթիւ սովորութիւններ, որոնք ապացուցանում են անհնրեղի կերպով թէ նոյն օջախի, նախնիքների պաշտամունքն էլ մեր հին կեանքի հիմքն են կազմել։ Եթէ ընդունենք, որ Զենդ-Վալեստան է մեզ այդ պաշտամունքը սովորեցրել, այն ժամանակ կարող կը լինենք ոչ միայն հայոց հին հաւատի մասին աւելի լայն ու պարզ հասկացողութիւններ կազմել, այլ և կ'որոշենք այն ազգեցութեան չափը, որ ունեցել է պարսկական կուլտուրան հայերի վրայ։ Սակայն Ֆիտտէլ դը-Վուլանժը ապացուցել է, որ նախնիքների, օջախի պաշտամունքը դոշութիւն ունէր և լոյսների ու հոգեւորների մէջ, նա գտնում է, որ այդ պաշտամունքը արիական ազգերի նախնական կրօնն է։ Եթէ այդպէս է, ուրեմն պ. Վովալեվսկու ցուցմունքները մի նոր հետաքրքրութիւն են տալիս Զենդ-Վալեստային. դուրս կը գաւ, որ պարսկական մազդեականութիւնը այն ընդհանուր արիական հաւատալիքների և դադարների ժողովածուն է, որոնք դոշութիւն ունէին արիական ցեղերի մէջ նախքան նրանց զանազան կողմեր ցրուելը։ Այս դէպքում, ի հարկէ, հարց չի լինի այն մասին թէ կրօնական հաւատալիքները այս կամ այն արիական ցեղը փոխ է առել պարսկներից, այլ պէտք կը լինի ստել, որ իւրաքանչիւր ազգ պահպանել է ընդհանուր տեղական պաշտամունքը իր նախնական ձևի մէջ, առանց նորից սովորելու այս կամ այն ցեղակից ազգից։ Յամենայն դէպս, այս գիտնական հետազոտութիւնները պիտի պայծառ

լոյս սփռեն մեր անցեալի վրայ, պարզելով մեր կրօնական և համայնական պատկերը հին դարերում: Ուստի ևս առանձին անհրաժեշտութիւն կայ ուսումնասիրելու, հաւաքելու մեր ժողովրդական սովորութիւնները:

„Миръ Божій“, ապրիլի ֆետրուարի 20-ին վախճանուեց այս ամսագրի հրատարակչուհի Սլէքսանդրա Դավիդովան: Երեք յօդուած կան նուիրում հանգուցեալի չիշատակին, որոնք ցոյց են տալիս թէ որքան հազուագիւտ, որքան համակրելի գործիչ էր նա: Մեղանում, հաւերի մէջ, հրատարակական գործը չունի մի անձնուէր, եռանդոտ աշխատող և այդ պատճառով էլ մեղանում առաջ չէ գնում զրականութիւնը: Ուստի մանաւանդ մեզ համար հարկաւոր է ծանօթանալ հանգուցեալ Դավիդովայի հետ: Դա, այո՛, մի վարմանալի աշխատատեղ էր. մի մարդ էր, որ իր սրտի ու հոգու ամբողջ կարողութեամբ ներփռուած էր իր ամսագրին և ոչինչ չէր խնայում նրան առաջ տանելու, զարգացնելու համար: Ամսագիրը հիմնուած է 1891 թուականին. նրա նպատակն էր ինքնակրթութեան նիւթ տալ միջին ընթերցողին: Ռուսաց զրաւանութիւնը մի ծով է, որի մէջ հարիւրաւոր այդպիսի ձեռնարկութիւններ են սկըսում, բայց շատով կամ կորչում են, կամ մի ողորմելի դոյութիւն են պահպանում: Այդպէս չէր Դավիդովայի սկսած գործը: Ամենքին յայտնի է թէ որքան համակրելի, գեղեցիկ ամսագիր է „Миръ Божій“-ն: Տասը տարուայ ընթացքում անդադար կատարելագործուելով, ամսագիրը այնքան համակրութիւն գրաւեց, այնքան հռչակ տոացաւ, որ այսօր ոչ մի ուսերէն ամսագիր նրա չափ չէ տարածուած: Եւ այդ ահագին աջողութեան գլխաւոր պատճառը

հանգուցեալ Դավիդովան էր, աննկատելի մի հերոս, որ թէև մի տող անգամ չէ գրել ամսագրի մէջ, բայց օր ու գիշեր մտածել և զործել է նրա համար: Դա մի վարմանալի աշխատատեղ էր: Դրանք աշխատակիցներ, ուղղութիւն տալ ամսագրին, մի խօսքով ղեկավարել գործը, ոգևորել աշխատողներին իր քաղցր վերաբերմունքով— ահա ինչպէս նա անուն ստեղծեց իր և իր ամսագրի համար: Իսկ և կրթութեւ, զարգացած կին, նա կարգում էր բոլոր յօդուածները, կարգում էր օտար լեզուներով գործա եկող հրատարակութիւնները, որոշում էր թէ ինչը պէտք է թարգմանել և լատին նրա գիտութեան, առանց նրա համաձայնութեան մի տող անգամ չէր տպագրւում ամսագրի մէջ: Վհատել, թույլանալ անաջող հանգամանքներին նա չը գիտէր: Հաւատարիմ մնալով մի անգամ ընտրած ուղղութեան, նա չէր թող տալիս որ ամսագիրը մազի չափ շեղուի այդ ուղղութիւնից և միշտ ասում էր թէ պատրաստ է իր ձեռքով սպանել ամսագիրը. քան զաւանանել որոշ ու յայտնի ընդունուած ուղղութեան: Մի կնաջ մէջ այդպիսի երկաթէ կամքը, այդպիսի գիտակցական գործունէութիւնը ապշեցնող, հիացնող տպաւորութիւն է թողնում: Մանրամասն նկարագրուած է նրա գործունէութիւնը և մենք տեսնում ենք, թէ որքան համեստ էր այդ մարդը, որպիսի գեղեցիկ գաղափարներով տոգորուած: Հաւատալով իր զործին, նա կանգ չառաւ ոչ մի դժուարութեան առաջ, նրան չը վախեցրին այն հարիւրաւոր խոչընդոտներն ու խտրելը, որոնցով լի է ամսագրի հրատարակութեան գործը: Ամեն տեղ յաջողւում էր նրա սուրբ, վստփառն սէրը, ամեն տեղ նա իր չարչարանքների գնով ոչնչացնում էր անաջող հանգա-

մանքները և իբրև սիրավառ մարդ՝ առաջ էր տանում իր զառակը, զարգացնում, մեծացնում էր նրան։ Այսպես կարող են գործել միայն զառակարի զինուորները, միայն նրանք, որոնք անուան, վառքի, նիւթական աջողութիւնների ետեւից չեն վազում, այլ իրանց կեանքի նշանաբանն են համարում ծառայել զառակարին, զոհուել նրա համար խնուն հասարակաց բարիքի։ «Թող կորչի անունը, բայց մնայ զործը», զրում էր մի ֆրանսիացի հեղինակը շանգուցեալ Դափղօվան այս դաւանութեան էր ծառայում իր հոգու ամբողջ ուժով։ Նա մեռաւ 53 տարեկան հասակում։ Նա ամուսնացած էր յայտնի երաժշտադէտ Դափղօվի հետ և շատ լաւ յայտնի էր Պետերբուրգի արտիստական և գրական աշխարհին։ Նրա սաղօնում հաւաքւում էին ռուսաց գրականութեան սիւները—Տուրգենեւ, Գոնչարով, Գարշին և ուրիշները։ Այդ շրջանների մէջ ամբաջնդուեց նրա վառ սէրը գէպի գրականութիւնը։ Այդ, միայն սէր է հարկաւոր. եթէ կայ այդ սատուածային պարգեւը, կը լինի և կենդանի, զեղեցիկ զործը, թէ և սիրահարուածը գրող էլ չը լինի։ Դրականութեան զարգացման համար միայն զրոյներ չեն հարկաւոր, անհրաժեշտ են և այսպիսի վառվառ զործիչներ, որոնք զործ ստեղծէին զրոյների համար, ծառայէին նրանց հետ միասին հասարակական բարիքին։ «Սորա կէսը, կէսի կէսը գէթ երեւար մեր ազգում», լիշեցինք մենք բանաստեղծի այս խօսքերը, կարողով հանգուցեալ Դափղօվայի համակրելի զործունէութեան նկարագրութիւնը։

Русское Богатство, մարտ Գլէր Ուսպենսկուն նուիրում բազմաթիւ իշխողութիւնների մէջ ուշադրութիւն է գրաւում յայտնի ռուս քննա-

դատ Ն. Միխայլօվսկու չօդուածը, որ անուանուած է «Նիւթեր Գ. Ի. Ուսպենսկու կենսագրութեան համար»։ Ուսպենսկին շատ մօտիկ էր Միխայլօվսկուն։ Օգտուելով հանգուցեալի նամակներից, յարգելի քննադատը տալիս է մի քանի գծեր, որոնք նկարում են Ուսպենսկու բարոյական զեղեցիկ դէմքը։ Նա շարունակ թափառում էր, շարունակ ճանապարհորդում էր՝ մարդիկ, կեանք, տիպեր տեսնելու համար. նա վերին աստիճանի համեստ էր, սաստիկ վրդովում էր, երբ իրան պատիւներ էին անում իբրև յայտնի, տաղանդաւոր գրողի։ Ուրիշի զարդը, ուրիշի ցաւը Ուսպենսկին իր սրտին շատ մօտ էր ընդունում, աշխատում էր ամեն կերպով ուշադրութիւն դարձնել ժողովրդի զրութեան վրայ, օգնել նրան։ Պ. Միխայլօվսկու բերած նամակներից երեւում է թէ որքան վառ սէր ունէր նա՝ ղէպի ժողովուրդը. այդ, այդ ժողովրդի ցաւերը, նրա կեանքի մէջ զործող երեւոյթները այն ազդրւն էին, որտեղից այդ մաքուր, մարդասէր հոգին քաղում էր անսպառ ոգևորութիւն իր գեղեցիկ գրուածքների համար, որոնք այնքան լաւ յայտնի են ամբողջ ընթերցող Ռուսաստանին և դեռ երկար չեն մոռացուի։

Պ. Միխայլօվսկի խօսում է և հանգուցեալ Դափղօվայի մասին և իր յարգանքն է մատուցանում այդ նշանաւոր զործիչ կնոջ յիշատակին։

Մեակ, №№ 79, 79։ Պ. 8. Սպենդիարեան «Նախնայեցական ծովի իրաւասութեան խնդիրը» ուսումնասիրութիւնը վերջացնում է հետեւեալ ընդհանուր եզրակացութիւնով.

«Մեր բոլոր առածի համառօտ résumé-ն, որ բղիթում է վերս լիշում օրինական հիմունքներից, հետեւալն է. ա) եկեղեցական-ծխա-

կան համայնքը մի իրաւասու մարմին է, որին պատկանում է եկեղեցւոյ տնտեսական վարչական գործերի կառավարութիւնը, բ) երէցփոխը, իրրեւ ծխական համայնքի ընտրեալ և լիազօր հաւատարմատար, գործում է ծուխի անունից և նրա հաւանութեամբ, գ) փրճակալին աւտեանը, որի հսկողութեան տակ է գտնւում փրճակի եկեղեցական սեփականութիւնը, հսկում է և ոչ անմիջապէս կառավարում, նա իրաւունք ունի միջամտել եկեղեցական-ծխական գործերին միայն այն դէպքում, երբ նկատուի է որ և է ապօրինի գործողութիւն երէցփոխի կողմից, դ) երէցփոխը իրաւունք չունի առանց ծուխի գիտութեան և հաւանութեան կատարել հոգևոր խշխանութեան պաշտօնական առաջարկները, եթէ ծագի որ և է անհամաձայնութիւն ծուխի և կօնսիսատօրիայի մէջ, գործը լանձնում է եջմիսածնի սինօդի հայեցողութեան և կարող է համեմել մինչև Կառավարչական Սենատ, եթէ գործից Օրէնքի մեկնութեան խնդիր է չարուցում, ե) հսկողութիւնը երէցփոխի պաշտօնավարութեան վրայ պէտք է լինի ոչ ձեական, այլ իրական, ուստի հոգևոր ատեանը պարտաւոր է ունենալ մի մասնագէտ հաշուապահ

և նրա միջոցով կատարել երէցփոխական հաշիւների քննութիւնը, իսկ ծուխը իր միջից ընտրում է հաշուետեսների մասնաժողով, որ քննում է երէցփոխի տարեկան հաշիւը և ապա ներկայացնում արտահաշուքանեալ զեկուցում ծխականների ընդհանուր ժողովին և զ, երէցփոխը պարբերաբար ծխականներին ժողովի է հրաիրում ընթացիկ նշանաւոր խնդիրները կարգաւորելու համար Այդ խնդիրների շարքում կան այնպիսիները, որոնք հէնց՝ այժմ կարօտ են ծուխի շուտափութ լուծման, իբրև ընթացիկ կեանքի անողոք պահանջներ, ինչպէս, օրինակ, միաբան-քահանաների նիւթական ապահովութեան խընդիրը, ներդաշնակ երգեցիկ խումբ և հմուտ խմբապետ ունենալը, ծուխի շրջանում գտնուած անկեանքներին և աղքատներին խնամելը, կըրթուած քարովիչներ հրաիրելը, եկեղեցական կարգապահութիւն մըտցնելը, եկեղեցում թաբախ ման ածելու տղեղ սովորութեան վերացումը, եկեղեցական արխիվ հիմնելը և այլն. ո՛րքան այդպիսի հանրօգուտ գործեր ունի անելու ծուխը, եթէ նրա առաջ ձեական պատենչներ չը դնենք...

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Genève. Mr. Henri Stapelmohr.—Տիկին Փափազեանի անունով ձեր նամակը և հաշիւը մնում է խմբագրատան մէջ, որովհետեւ չէր պիտինք հասցէն:

Թիֆլիս. պ. Ա. Օ.—Շնորհակալ ենք ձեր բարեմաղթութիւնների համար: Էջմիածին. պ. Ռ. Ք.—Կարդացէք մեր «Խմբագրական կանոնների» 2-րդ լոգոսածի վերջը:

Պետերբուրգ. պ. Հ. Ա.—Դեռ չենք ստացել ապրիլի 10 ից ձեր ուղարկածը:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» № 1-ում (Յաւելուածում).

Երես	տող	սպում է	պէտք է լինի
12	30	որ ունէր	և ունէր
14	23	շատ էր	շատ էր ջախջախել:

«ԳՈՒՏՏԵՆԵՐԷՐԳ» գրավանառանցում վաճառուում են
Ա. Պօղոսեանի գումարով հրատարակուած հետեւեալ
գրքերը.

Եօրն ագուա.	$\left\{ \begin{array}{l} \text{Պատկերազարդ} \\ \text{մանկական} \\ \text{հէքիաթներ} \end{array} \right\}$	$\left\{ \begin{array}{l} \text{Փոխադրեց} \\ \text{Լեոն Մելիք-} \\ \text{Ազամեան:} \end{array} \right\}$	$\left. \begin{array}{l} \text{Կ-} \\ \text{40-ական} \end{array} \right\}$
Կարեկն ու Մանեկը կամ			
Քոյր եւ եղբայր.			
Պսիկ ու ճօսիկ.			
Անդադդ Համեսը.			
Ի՞նչ է ստում սենեակը, թարգմ. Զ. Տէր-Գրիգորեան			10 կ.
Եասի արկածները, թարգմ. Պ. Պօղոսեան			40 »
Պառաւ ծիսը, թարգմ. Կիւ. Եղիս. Սարգսեան			3 »
Խղճով դասասան, թարգմ. Ստ. Մալխասեան			5 »
Արդար ծերունի, թարգմ. Ա. Մխիթարեան			15 »
Մախիմկա, » » »			15 »
Իւլիանկա, թարգմ. Պ. Հովսեան			10 »

Գումարով առնողներին գիշումն կը լինի.

Դիմել. — Тифлисъ, Книжный магаз. „Гуттенбергъ“,
Лорисъ-Меликовская, 11. Г. Галустинъ. 4—1

Մոսկուայի Արեւելեան լեզուաց Լազարեան Ճեմարանի կողմից

Սարգիս արքեպիս. Հասան-Ջալալեանի դրամագլխի

Հ Ա Ջ Ի Ի Ը

1901 ամի.

Մ Ո Ւ Տ Ք

0/0 թղթեր. Առձեռն դրամ.

Մնում էր ցմէկն յունուարի 1901 թ.	81,250 ա.	790 ա. 63 կ.
Մուտք է եղել յընթացս 1901 թ.	3,300 »	3,269 » 53 »
	84,550 ա.	4,060 ա. 18 կ.

Ե Լ Ք

Ծախուած է 0/0 թղթեր գնելու

համար 3,187 ա. 83 կ.

և 1900 թուի հաշիւ ապագրելու

համար 19 » 92 »

Ընդամենը 3,207 ա. 75 կ.

ցմէկն յունուարի 1901 ամի առ-

ձեռն կայ 84,550 » — » 852 » 43 »

Ծանօթութիւն. Ամբողջ դրամադրութիւն գտնուած է Մոսկուայի
նահանգական գանձարանում և սկսած 1883 թուից 125 տարուով
ընթացքում պէտք է աճի մինչև 12 միլիոն ռուբլի դրամարի. յետոյ
պէտք է գործադրուի կտակազի անունով ուսումնարաններ և թո-
շակներ հիմնելու համար:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հ Ի Ն Ց Ա Ի

(Հրապարակախօսական խոհեր)

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԵԿ

Ծախուում է Թիֆլիսում, «Գուտտենբերգի» գրավաճառանոցում:

Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

Հասար երկուրդ. — XVIII դար

Ա ռ ա ջ ի ն մ ա ռ

ԳԻՆՆ Է 1 Ռ. 50 Կ.

Ծախուում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը եւ «Գուտտենբերգ» գրավաճառանոցում:

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

կրսեւ դասարանների համար

Համառօտ բառգրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ ԵՒ Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԵԿ

Դիմել՝ Թիֆլիս, «Կենտրոնական» և «Գուտտենբերգ» գրավաճառանոցները:

- Պաշտօնական հաղորդագրություններ.—Փոփոխություններ ներքին գործերի և լուստորութեան մինիստրությունների մէջ.—»КВВКАЗЪ«-ի լուրը Բազուլց.—Անկարգություններ Պալատայի և Խարկովի հասանդներում 195
16. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ.—Համատարած աղետ.—Տնտեսական դրութեան չարացած կեանքի և մահուան խնդիրը.—Մեր պատրաստականութիւնը.—Երկիրը չէ ուսումնասիրուած.—Փաստեր Մարդասիրական Ընկերութեան կեանքից, Ա. 203
17. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ֆրանսոսական համաձայնութիւնը Հեռաւոր Արեւելքում.—Մերձաւոր Արեւելքի վիճակը վերջին քսանհինգ ամեակում.—Ընդհանուր ընտրողական պայքարը Ֆրանսիայում.—Ժ. Կլեմանսօն՝ Խերակոյտի անդամ.—Ընդհանուր և հաւասար ընտրողական իրաւունքի հարցը Բելլիայում, Լ. Ա. 217
18. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ, Ծխախոտի մասին, Կ. Փաշայեանի 222
19. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 231
20. ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 243
21. ԹԱԻԵԼՈՒԱԾ. «ՕՐԱՄՈՒՏԻՆ», Վէպ Ի. Ս. Տուրգենեվի 64—80

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է 1902 Թ. ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(Նոր շրջան, II-րդ տարի)

Խմբագրութեան անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԷՅՕ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐԻՆԸ

Ռուսաստանում տարեկան 10 անգամ. Արաստահմանում՝ 12 անգամ.
" կէս տարին 6 " " 7 "
" 1 ամսուան 1 " " 1 " 20 Կ.
«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել Թիֆլիսում—խմբագրատանը
(Գանձակալա փողոց, № 21, տ. Ջանջուղազովի):
Խաչատրեան ալ թղերից պէտք է գրուել՝ Тифлисъ, въ редакцію
журнала „Мурчъ“.
Արաստահմանից՝ Tiflis, Rédaction de la revue „Mouritch“.
Ծանօթութիւն. Ով դժուարանում է Ռուսաստանում տարեկան բա-
ժանորդագրութիւնը (10 ա.) վճարել միանուաղ, կարող է տալ մաս-մաս
(սկզբում 5 ա., մայիսի 1-ին 3 ա. և յուլիսի 1-ին 2 ա.):
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 Կ. (մարկաներով):

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ զետեղելու համար պէտք է վճարել.

Մի երես բոլոր լայտարարութեան համար	. 10 ա.
1/2 " " " " "	. 5 "
1/4 " " " " "	. 2 "

Ա.ԳԱՌԻԿԻ կամ ՁԲԻ ոչ ոքի «Մուրճ» չէ ուղարկելու:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը չափով խնդրում է յօդուածագիրներին՝ գրել պարզ, մանաւանդ թուերը, չափով անուններն ու օտար բառերը, և թեր-թի միայն մի երեսի վրայ:
2. Ձեռնդրուած մեծ յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերա-դարձնում: Ձեռագիրը չիտ ստանալու համար պէտք է ուղարկել ճանա-պարհածախսը:
3. Գրուածքների վարձատրութեան համար որոշում է Խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուրճի» համարը չի ստացուելու ղէպերում պէտք է Խմբագրու-թեան տեղեկութիւն տալ մինչև լաջոդդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղե-կութեան անհրաժեշտ է կցել տեղական պատասխին գրասենեակի հասցեա-ղիրը (установлѣннѣ), որ ամագրի համարը չի լանձնուած գանդատարին:

Խմբագիր-հրատարակիչ՝ Կ. ԿՐԱՍԻՆԻԿԵԱՆ







